Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН

В. Е. ХОДЖАБЕКЯН

ПРОБЛЕМЫ ЗАНЯТОСТИ В АРМЕНИИ В ПЕРЕХОДНЫЙ ПЕРИОД

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1998

331.5(479.25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ-

Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ա 11
84813

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1998

ԳՏԶ 331
ԳՄԴ 65.9(2Հ)—6
Խ 751

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.

Խ 751 Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում /ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ. —Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 239 էջ:

Մենագրությունը նվիրված է անցման շրջանում Հայաստանում աշխատանքի շուկան կարգավորող տնտեսական մեխանիզմներ և զբաղվածության բանական քաղաքականություն մշակելու միջոցով հասարակության գլխավոր հարստությունը՝ աշխատանքային ռեսուրսները ակտիվացնելու, դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, ուստի և երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու ուղիների բացահայտմանը:

Գրքում առաջին անգամ ամբողջական տեսքով վերլուծվում և ընդհանրացվում է Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման իրավիճակը, առաջ քաշվում անցման շրջանում շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունը:

Շարադրանքում մինչև օրս կիրառվող տնտեսական քաղաքականության քննական վերլուծությունը ընդգրկվում է հիշտ լուծումներ գտնելու ակնկալությամբ:

Խ $\frac{0703000000}{703(02)-98}$ ԳՄԴ 65.9(2Հ)—6

ISBN 5—8080—0046—7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը ձեռնարկելու միտքը հղացել է հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականության հետևանքների քննական վերլուծության շարժառիթով: Խնդիրը միայն օրենքներով ու հրամանագրերով կյանք մտնող վերափոխումների տնտեսագիտական գնահատումը չէ, այլև իրականացվող ժամանակավրեպ միջոցառումների հետևանքները բացահայտելու, տնտեսությունը ճգնաժամից ինչ-որ չափով դուրս բերելու հնարավոր ուղիներն ուրվագծելու մտահոգությունը:

Նկատենք, որ սկսած 1990 թ. վերջերից, երբ հողի, անասունների և գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների մասնավորեցման մասին օրենքների և որոշումների նախագծերի մշակումը նոր-նոր էր ձեռնարկվում, տարբեր առիթներով դեմ ենք արտահայտվել չնախապատրաստված և անժամանակ իրականացվող մասնավորեցումների գաղափարին[1]:

---

[1] Դա տեղի է ունեցել հանրապետության Նախարարների խորհրդի, ՀՀ Գերագույն խորհրդի ենթահանձնաժողովների, էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերում և ժողովներում, գիտական նստաշրջաններում, նաև առանձին հրապարակումներով:

Այսպես, վարչապետ Վ. Մանուկյանի հետ 1990 թ. նոյեմբերին մտավորականության հանդիպման ժամանակ մեր կողմից հարցադրվեց՝ հետո կանգնել հողի և անասունների մասնավորեցման մասին օրենքի ընդունումից, հիմնավորելով դրա անժամանակությունը և կանխագուշակելով վտանգավոր հետևանքները: Կարևորվեց Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի անհրաժեշտությունը, մատնանշվեցին այլ երկրների, մասնավորապես ԽՍՀՄ-ի հետ տնտեսական կապերը ջլատելու ուղղությամբ տարվող քաղաքականության անկանխատեսելի հետևանքները:

ՀՀ Նախարարների խորհրդի 1991 թ. օգոստոսի նիստում հաստատվեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում շուտափույթ գույքագրում անցկացնելու հրատապությունը՝ արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների, առևտրի և սննդի օբյեկտների հիմ-

Դիրքորոշման ելակետն այն էր, որ գյուղատնտեսության մեջ տկար մեքենայական պարկի առկայության պայմաններում խոշոր տնտեսություններից մանրին անցումը հողի է անկանխելի հետևանքներով, առանձին դեպքերում՝ հողամշակման իր դարն ապրած ձևերին ու եղանակներին հետ դառնալու վտանգով:

Հանրահայտ է, թե ԽՍՀՄ-ում բռնի կոլեկտիվացումը որքան թանկ նստեց հասարակության վրա: Անասունների զանգվածային մորթ կատարվեց, նվազեց գյուղատնտեսությամբ զբաղվելու շահագրգռվածությունը: Տասնամյակների ընթացքում ԽՍՀՄ-ում չվերականգնվեց խոշոր եղջերավոր անասունների 1913 թ. գլխաքանակը: Գրեթե նույնը տեղի ունեցավ «Հողի և անասունների սեփականաշնորհման մասին» ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. փետրվարին ընդունած որոշումը կյանք մտնելուց հետո:

Այս օրենքով վճիռը թողնվում էր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվներին: Բայց մամուլում քարոզչության բազմազան ձևերով հրամցվում էր հողի և անասունների անհապաղ մասնավորեցման անհրաժեշտությունը, «հիմնավորվում» դրա օգտավետությունը:

Ինքնին գաղափարը գայթակղիչ էր. տասնամյակներ շարունակ գյուղացին թալանվել է, հողից օտարվել, ծուլացել, և այժմ եկել է հողի տեր դառնալու փափագի իրականացման պահը:

Կարթը գցված էր, հետևանքը՝ անկանխատեսելի: Երկար-բարակ չմտածելով՝ ոմանք գայթակղվեցին և «խայծը» կուլ տվեցին, չխորհելով գյուղատնտեսական մեքենայական պարկի անզորու-

---

նական փոնդերի բաշխանը կանխելու, մասնավոր անձանց, կոոպերատիվներին. առանձին հանրապետություններին դրանց վաճառքը դադարեցնելու մտահոգությամբ: Գույքագրումն արվեց շատ ուշացումով՝ երկու տարի անց, երբ շատ դեպքերում բանը բանից անցել էր:

Մեկ այլ օրինակ. 1990 թ. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրինության նիստում հողի և անասունների մասնավորեցման մասին ինստիտուտի ավագ գիտաշխատող Հ. Բագրատյանի զեկուցման թեզերի քննարկման ժամանակ (նրան էկոնոմիկայի նախարար նշանակելուց մեկ-երկու օր առաջ) հարցադրմանն սկզբունքորեն դեմ արտահայտվեցին ագրարային հարցերի գիտակ Հ. Ֆահրադյանը և տողերիս հեղինակը:

թյան պայմաններում իրենց դարանակալ սպասող՝ հողը մշակելու հարցում խարխափզդու բարդությունների, արդյունքն իրացնելու դժվարությունների, մեն-մենակ ցանքաշրջանառություն կիրառելու, հողի պարարտացման, վնասատուների դեմ պայքարի, սպասարկման բարձր գների ու հարկերի և այլ խնդիրների մասին:

Այդուհանդերձ, հարցի շուրջ ընթացող թեժ վեճերում բուն գյուղատնտեսությամբ զբաղվող շատերը մեծ մասամբ պաշտպանում էին առժամանակ խմբային սեփականության ձևը պահպանելու և ատոհնանքար աննատական տնտեսության անցնելու գաղափարը: Սինչդեռ կոլեկտիվ տնտեսությունների և, ընդհանրապես, գյուղատնտեսության մեջ քրտինք չթափած և դրա հետ առնչություն չունեցող մարդիկ քվեարկեցին հապշտապ մասնավորեցման օգտին՝ արագորեն տեր դառնալով լավագույն հողակտորների, կոլեկտիվ և խորհտնտեսություններին պատկանող կթու և մթերատու անասունների մի զգալի մասին: Փողազուրկ աշխատավորներից շատերը, մեկ տարի հետո մասնավորեցված անասունների գինը սահմանված կարգով պետությանը վճարելու վախի զգացումից դրդված, կողմ քաշվեցին: Հիմնականում հոտի տեր դարձան գյուղատնտեսության հետ քիչ առնչվող հողատերեր: Սահմանված ժամկետին ճբանք համապատասխան վճարը չմուծեցին, իսկ այդ անասունների մի զգալի մասը տարվա ընթացքում սպանդանոցների բաժին դարձավ: Անավասիկ, 1988 թ. 833,6 հազար խոշոր եղջերավոր անասուններից 1994 թ. մնում էր 501,7 հազարը, այդ թվում 312,3 հազար կովից՝ 269,8 հազարը, 1729,6 հազար ոչխարներից և այծերից՝ 722,3 հազարը, 344,1 հազար խոզից՝ 81,5 հազարը[2], մեկ տասնյակ միլիոնից ավելի թռչուններից՝ շատ քիչ, քանի որ հօդս ցնդեցին բոլոր թռչնանոցները: Ըստ որում, կոլեկտիվին կամ խորհտնտեսությանը պատկանող ցեղական կովերի մեծ մասը մինչ սեփականաշնորհումը տիրող թոհ ու բոհի մեջ «իրենցով էին արել» գյուղերի ղեկավարները:

Ի՞նչ կա որ, հեղափոխական խառնակ ժամանակներ են, ձեռքիցդ ինչ գալիս է, արա, ո՞վ է տերը:

---

2 Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994, Ե., 1996, էջ 140:

Մասնավորեցման հետևանքով գյուղատնտեսական օգտագործողների զգալի մասն առ այսօր մնում է անմշակ: Չէ՞ որ պարկում եղած մեքենաները խորհրդանշական գներով նվիրվեցին սրան-նրան: Կարճ ժամանակում դրանց պատկառելի մասը շարքից դուրս եկավ, մնացածներն էլ ֆիզիկապես մաշված են և քիչ պիտանի: Գյուղացին մեծ մասամբ կանգնեց ձեռքով հողը մշակելու հարկադրանքի առջև:

Նույնը տեղի ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների, առևտրի ու սննդի օբյեկտների հետ: Գյուղում մասնավորեցման դառը փորձը հուշում էր այդ բնագավառում շուտափույթ գույքագրում կազմակերպելու անհրաժեշտությունը: Արդյունաբերության 20 տոկոսի անհատույց մասնավորեցումը նույնպես ժամանակավրեպ էր: Համաժողովրդական միջոցների հաշվին հիմնականում սեփականատեր դարձան քչերը: Բաժանված վաուչերները չեն արտահայտում հիմնական ֆոնդերի իրական արժեքը: Պետական սեփականությունը տասնամյակների ընթացքում գոյացել է բոլորի ներդրած միջոցներից: Արդյունքում պետական սեփականության գոյացման հիմնական մասնակիցներն ունեզրկվեցին, միլիոնատեր դարձան այդ սեփականության գոյացմանը գրեթե մասնակցություն չունեցածները*:

Ազատ շուկայական տնտեսություն ստեղծելու մարմաջով Հայաստանում արևմտյան, մոնետարիստական քաղաքականությունը կուրորեն ընդօրինակելը, տեղական պայմաններն ու առանձնահատկությունները, մասնավորապես ամբողջատիրական համակարգի օրոք ստեղծված պետական սեփականության առկայությունը, նաև ազգային մեր հոգեկեցվածքն ու այլ առանձնահատկություններն անտեսելը չէր արդարացնում մեկ ակնթ-

---

* Ունևոր դառնալն էլ ունի իր տրամաբանությունը: Պատմական փորձից հայտնի է, որ միլիոնատեր դառնում են ժամանակի ընթացքում, տքնաջան ու ջանադիր աշխատանքով, գործիմացությամբ, խնայողությամբ, մրցակցության մեջ հաղթող դուրս գալու հնարավոր և անհնարին ունակություններ, հնարքներ, ոիսկ գործադրելու միջոցով: Իսկ մեր օրերում տասնամյակների ընթացքում կուտակված պետական կապիտալը նվիրվում է պատահական մարդկանց: Կապիտալի կուտակման իրական մասնակիցների ճնշող գերակշռությունը համալրում է ընչազուրկների բանակը, ուժեղացնում հասարակության բևեռացումը, թեժացնում սոցիալական լարված մթնոլորտը:

թարթում անցումը մասնավոր սեփականության և կեղծ շուկայական հարաբերությունների:

Շուկա գոյություն ուներ նաև ամբողջատիրական համակարգի օրոք: Շուկայի հետ մեկտեղ գոյություն ուներ շուկայական տնտեսություն: Ճիշտ է, այն ինչ-որ չափով ազատ չէր, բայց գործում էր որոշակի շրջանակներում ու պայմաններում: Այն գոյություն ուներ արդյունաբերական բազմաբնույթ արտադրատեսակների, գյուղատնտեսական մթերքների, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի ու կապի միջև, դրանցից յուրաքանչյուրի ներսում գործող կոոպերացիոն կապերի, ապրանքափոխանակության ու ապրանքաշրջանառության, արտաքին աշխարհի հետ խորացող տնտեսական ինտեգրացիոն և այլ կապերի տեսքով: Հետևաբար այդ շուկան խարսխված էր տնտեսության վրա, շրջանառում էին տնտեսության մեջ արտադրվող արտադրատեսակները:

Իսկ այսո՞ր: Այսօր այդ շուկան իր վրա խարսխված տնտեսությամբ հօդս ցնդեց, արհեստական հնարքներով ու կարգախոսներով տեղը զիջելով հիմնականում սպառման ոլորտին: Նման շուկան գերազանցապես հիմնված է արտաքին աշխարհից բերված ապրանքատեսակների վրա:

Այսպիսով, տասնամյակների ընթացքում պետական և կոոպերատիվ համակարգում կուտակված կապիտալի մի զգալի մասը մասնավորեցման քողի տակ անցավ մի խումբ, հիմնականում անարժան մարդկանց ձեռքը:

Մասնավորեցումն իրականացնողները գործընթացը ներկայացրին որպես կապիտալի նախասկզբնական կուտակում: Իրականում բանն այդպես չէ: Դա ավելի շատ կապիտալի փոշիացման , քան կուտակման գործընթաց է:

Կապիտալի նախասկզբնական կուտակման փորձից հայտնի է, որ բչերի ձեռքում կուտակված կապիտալը գործադրվում է արտադրողաբար: Երկարատև ներդրումների շնորհիվ այդ կապիտալը շարժման ընթացքում մրցակցային պայքարում հաղթողներին ապահովում է համապատասխան շահույթ: Վերջինիս մի զգալի մասը դառնում է նոր ներդրումների, ուստի և արտադրության զարգացման ու աճի աղբյուր: Գործընթացն ուղեկցվում է սպառմանը հատկացվող միջոցների բացարձակ մեծու-

թյան աճի հետ: Այսինքն՝ կապիտալի ինքնավերարտադրության ընթացքում ամեն մի նոր կուտակում հիմք է դառնում սպառմանը հատկացվող միջոցների աճի համար:

Հայաստանում ոմանց ձեռքին հայտնված կապիտալը մեծ մասամբ չվերածվեց արտադրողական կապիտալի, չդարձավ երկարատև ներդրումների աղբյուր: Դրա համար լիիրավ պայմաններ չստեղծվեցին: Արդյունքում արտադրությունը, մասնավորապես արդյունաբերությունը, զարգանալու փոխարեն ապրեց և ապրում է հետընթաց (վայրէջք):

Ձևավորվեցին հայրենական արտադրության զարգացմանը նպաստող բաժնետիրական լուրջ ու գործունակ ընկերություններ: Լավագույն դեպքում դրանք գոյացան առևտրական և բանկավարկային համակարգում: Դրանք առ այսօր էլ ծառայում են ոչ թե արտադրության զարգացումը խթանող երկարատև, այլ մեծ մասամբ կարճատև ներդրումների նպատակին:

Փաստորեն Հայաստանում տեղի ունեցավ կապիտալի ոչ թե կուտակում (կենտրոնացում), այլ փոշիացում: Դա կատարվեց մի շարք ճանապարհներով:

Առաջին, կապիտալը հիմնականում շրջանառության մեջ դրվեց առևտրի բնագավառում՝ սպասարկելով ոչ այնքան հայրենական, որքան արտասահմանյան երկրներից ներմուծվող ապրանքների առքուվաճառքի գործընթացները: Հայաստանի ապրանքային շուկան գերհագեցած է մերձավոր և հեռավոր կապիտալիստական երկրներից ներկրվող ապրանքատեսակներով, որոնք ծառայում են բնակչության անմիջական սպառման նպատակին: Հայրենական շուկայում տեղական արտադրանքը մղվել է հետին պլան: Երևույթի հետագա խորացումը կործանարար ազդեցություն կարող է ունենալ սեփական երկրի արտադրության համար:

Երկրորդ, կապիտալը փոշիացավ նաև դրա մի զգալի մասը շուայլորեն մասնավոր բնակարանաշինության մեջ ներդնելով: Դրանով իսկ այդ գումարի շոշափելի մասը վերածվեց մեռյալ կապիտալի:

Երրորդ, հայրենիքում կիրառման նպաստավոր ոլորտ չգտնելով՝ կապիտալի որոշ մասն արտահոսեց նրա սահմաններից դուրս:

Հիմնականում շրջանառության մեջ կապիտալի ներդրումը բացատրվում է.

1) կապիտալի ավելի արագ պտույտով, որը կարճ ժամանակամիջոցում այն տնօրինողներին ապահովում է հատապատասխան շահույթ,

2) գործընթացն իրականացնելու համար պահանջվող ավելի փոքր դրամագլխով:

Մինչդեռ կապիտալի արտադրողական կիրառման ժամանակ պահանջվում է ոչ միայն համեմատաբար մեծ դրամագլուխ, այլև փոխհատուցման (կապիտալի պտույտի) ավելի տևական ժամանակահատված:

Այդ բոլորը և այլ հանգամանքներ իրենց որոշակի դրոշմը թողեցին աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության վրա: Աստեղ խորացավ աշխատուժի առաջարկի ու պահանջարկի անհավասարակշռությունը: Հանդես եկավ գործազրկություն, որն իր բացահայտ և թաքուն ձևերով օրեցօր թափ է առնում: Արմատապես փոխվեց զբաղվածության ճյուղային կառուցվածքը: Արտադրության ինդուստրիալ ճյուղերում զբաղվածությունը տեղի տվեց, այն ավելացավ ագրարային և ապրանքաշրջանառության ոլորտներում: Ինչ-որ չափով ինտենսիվ բնույթ կրող զբաղվածությունն իր տեղը զիջեց էքստենսիվ տիպի զբաղվածությանը: Արտադրողների ստվար զանգվածներ համալրեցին չաշխատողների շարքերը՝ աշխատանքի շուկայում ստեղծելով չափազանց լարված իրավիճակ: Դրանց մի զգալի մասը, աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության հետ միասին, հայրենիքում զբաղմունք և ապրուստ վաստակելու ասպարեզ չգտնելով՝ բռնեցին արտագաղթի ճանապարհը, մի մասն էլ համալրեց մանրավաճառների, վերավաճառողների, գյուղատնտեսության մեջ ընդգրկվածների և էքստենսիվ բնույթ կրող այլ զբաղմունք ունեցողների շարքերը:

Կարիք կա՞ արդյոք, որ տասնյակ հազարավոր մարդիկ վիթխարի ծախսերով մեկնում են Մերձավոր արևելքի երկրներ, Չինաստան, ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, արաբական երկրներ և այլուր, օրինիբուն նստում տոնավաճառներում՝ բերածը վաճառելու համար: Պետական, ինչպես նաև խոշոր առևտուրը կպահանջեր քիչ ծախսեր, դրանում կընդգրկվեին ձեռներեցները,

կուսումնասիրվեր արտաքին շուկան՝ ներքին պահանջների հաշվառմամբ: Նույնը վերաբերում է գյուղատնտեսությանը, ուր ֆիզիկական աշխատանքն է գերիշխողը:

Վառելիքի, հացամթերքի, սպիրտի, օճառի, աղի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների պետական մոնոպոլիան փոխարինվել է մասնավորների, ավելի ճիշտ, ստվերային խմբավորումների մոնոպոլիայով:

Արդյունքում՝ ընչազուրկների, օրվա հացի կարիք ունեցողների, գործազուրկների, աշխատանքը կամավոր լքողների մի վիթխարի զանգված, կամայականության հետևանքով առողջապահական, կրթական, գիտական համակարգի կազմալուծումը: Նման պայմաններում հասարակայնությունն արտադրողից վերածվում սպառողի, տուժում է նրա գլխավոր հարստությունը:

Նկատենք, որ հասարակության գլխավոր հարստությունը աշխատանքային ներուժն է: Ամեն երկիր օժտված է որոշակի ռեսուրսային ներուժով: Այն հանդես է գալիս բնական հարստությունների՝ հանքահումքային, վառելիքաէներգետիկ, հողային, ջրային, կենսաերարտադրողական (ռեկրեացիոն), տնտեսական, այդ թվում՝ նյութաարտադրական, ֆինանսական, տեղեկատվական (գիտատեխնիկական առաջընթացի), ինչպես նաև աշխատանքային ներուժի և այլ տեսքով: Հասարակության այդ ռեսուրսային ներուժը շատ առաձգական և ժամանակի ու տարածության մեջ փոփոխվող մեծություն է: Վերջինս պայմանավորված է ոչ միայն տվյալ երկրում այդ ռեսուրսների առկայությամբ, այլև դրանք տնտեսական շրջանառության մեջ խելամտորեն ընդգրկելու և օգտագործելու համար ձևավորված արտադրատնտեսական և կառավարման համակարգով, աշխատանքային, հատկապես մտավոր ռեսուրսների առաջադիմական վերարտադրության համար որոշակի նախադրյալների առկայությամբ:

Տնտեսական ռեսուրսների կարևորագույն աղբյուրը հասարակական արտադրությունն է, որտեղ վճռական դերը պատկանում է աշխատանքային ռեսուրսներին՝ հասարակության այդ գլխավոր հարստությանն ու արտադրողական ուժին: Դրանց բանական օգտագործման հիման վրա է թափ առնում ամեն մի

Երկրի տնտեսական պոտենցիալը, բազմապատկվում նրա տնտեսական հզորությունը:

Երևույթների այս շարքում երկրի համար վտանգավորն այն է, որ հետին պլան է մղվել, մոռացության մատնվել մարդ արարածի բոլոր հատկանիշներից ամենագլխավորը՝ արարելու հատկությունը: Պարապությունն ու անգործությունը հասարակական չարիքի վերածելու վտանգ է սպառնում: Իր սպառնացող հետևանքներով դա դեռևս երկար ժամանակ անդառնալի ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն տնտեսական անկման, այլև հասարակության բարոյահոգեբանական անաղարտ կերպարը բնութագրող չափանիշներից շեղվող արատավոր երևույթների տարածման վրա, եթե հասարակությունն իր մեջ չգտնի զորավոր մի ուժ՝ զարգացման բնականոն ընթացքի մեջ մտնելու և կացությանը տիրապետելու համար: Այդ ուժը, որ իր ամբողջ կարևորությամբ հառնում է հասարակության առջև, առաջին հերթին, նրա գլխավոր հարստության տնտեսական ակտիվության բարձրացումն է, աշխատուժի, հատկապես նրա որակյալ մասի վերարտադրության ընդհատված շղթայի վերականգնումը, այդ ներուժի նպատակամղված գործունեությունն ապահովող հունի բացումը: Հենց դա էլ պետք է դառնա պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության գերակայություններից մեկը՝ բնակչության զանգվածային աղքատացման ընթացքը կասեցնելու, հասարակության գենոֆոնդի պահպանությանը սպառնացող վտանգից փրկելու հիմնահարցի լուծման բանալին: Ամենից առաջ դա պահանջում է պետական հոգածություն, տևական ներդրումներ կիրառելու ակտիվ քաղաքականությամբ նոր աշխատատեղերի ստեղծման հիման վրա մարդկանց արարչագործությունների համակողմանի խթանում: Անցման շրջանում դա կթեթևացնի պետության հոգսերը՝ բնակչության ստվար զանգվածների, սոցիալապես անպաշտպան խավերի կենսամակարդակի նվազագույնն ապահովելու, արտագաղթի ահագնացող չափերը մեղմելու և սոցիալական այլ չարիքների առաջն առնելու համար:

Ինչևէ, հավանաբար, դեռևս ամեն ինչ կորած չէ, վինակն էլ՝ օրհասական: Պետք է խելամտորեն որոնել, գտնել տնտեսության կառավարման, կազմակերպման այնպիսի ձևեր ու եղա-

նակներ, որոնք հասարակության այդ մոռացված գլխավոր հարստությունը՝ մարդու ունակություններն ու օժտվածությունը, ինչ-որ չափով շարժման մեջ դնելու շնորհիվ աշխուժացնեն ժողովրդական տնտեսությունը, աշխատանքով ստեղծեն բարիքներ, մատուցեն ծառայություններ:

Մեր օրերում բարիք արարողների թիվը նվազել է, կատարվել է ապարդյունավորում, ընկել որակավորում պահանջող աշխատողների վարկը, ապրանքաշրջանառության ոլորտում սեփական արտադրատեսակներն արտամղվել ու պակասել են: Այդ բանում արտադրողներն իրենք մեղք չունեն:

Մենագրության նպատակը աշխատանքի շուկան կարգավորող տնտեսական մեխանիզմներ և զբաղվածության բանական քաղաքականություն մշակելու միջոցով հասարակության այդ գլխավոր հարստությունն ակտիվացնելու, նրա օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ուղիների որոնման մի համեստ փորձ է, այդ ճանապարհով երկիրը ներկա ճգնաժամային վիճակից դուրս բերելուն նպաստելու մտահոգություն: Արդի տնտեսական քաղաքականության քննական վերլուծությունը թելադրված է ճիշտ լուծումներ գտնելու և դրանք բացահայտելու ակնկալությամբ: Թե որքանով է դա հաջողվել, դժվար է ասել: Այն թողնում ենք ընթերցողների և ժամանակի դատին, այդ ամենաարդար դատավորների դատավճռին:

Մենագրությունը հրատարակման համար պատրաստ էր դեռևս 1994 թ. վերջերին: Այն լույս աշխարհ չեկավ հրատարակիչ չգտնվելու պատճառով: Մի շարք հրատարակիչներ զգուշացան «ավելորդ» վտանգից կամ գլխացավանքից: Հետագա տարիներին այն համալրվել է նոր նյութերով, համապատասխան վերլուծություններով և ընդհանրացումներով: Մենագրության առանձին հատվածներ 1992—1997 թթ. ընդարձակ հոդվածներով լույս են տեսել Հայաստանի և միջազգային մի շարք պարբերական ամսագրերում, ընթացիկ մամուլում: Տողերիս հեղինակը զեկուցումներով մասնակցել է հիմնախնդրին նվիրված մի շարք միջազգային գիտաժողովների:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՆՊՏՂԱԲԵՐ ԿԱՄ ՉԱՐԳԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆ

Հայ ժողովուրդն այսօր, քան երբևէ, դեմ հանդիման կանգնել է գոյատևման ճակատագրական փաստի առջև: Նրան սպառնում է ոչ միայն արտաքին գործոններով թելադրվող համընդհանուր ճգնաժամային իրավիճակը, այլև այդ ճգնաժամը հաղթահարելու և տնտեսությունն առաջ մղելու ներքին և արտաքին քաղաքականության խելամիտ և գործունակ ծրագրի բացակայությունը: Գումարվում են նաև Հայաստանի Հանրապետությունով մեկ գլուխ բարձրացրած անիշխանությունը, ապօրինություններն ու տնտեսական քաոսը: Բացակայում է իրավական դաշտը: Իրավական օրենքներով կառավարվելու և վերից վար հավասար հիմունքներով դրա առջև պատասխանատվություն կրելու փոխարեն, նպաստավոր միջավայր է ստեղծվել ստվերային տնտեսության գոյության, կոռուպցիայի, կաշառակերության, ժողովրդական ունեցվածքի զանգվածային թալանի, հափշտակումների և անպատժելիության համար:

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մասին կարելի էր որոշակի դատողություններ անել, հիմնադրույթներ առաջարկել, աստիճանաբար և ակամա դեպի անդունդ ընթացող տնտեսությունը փրկել նրա եզրին հայտնվելու վտանգից, իրատեսորեն կանխորոշելով սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները՝ դեռևս հինգ-վեց տարի առաջ:

Ներկայումս խնդիրը տնտեսության վարքագիծը կասեցնելն է, այն տենդային վիճակից փրկելը: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ուժերով: Հանրապետությունն արդեն անզոր է:

Հանրապետությունում ստեղծված այս տնտեսական ճգնաժամը բացատրվում է միահյուսված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ակտիվ արտահայտվածությամբ:

Որպես օբյեկտիվ գործոններ (որոնք շատ դեպքերում իրենց վրա կրում էին նաև սուբյեկտիվ կնիք)՝ հանդես եկան երկրաշարժը, Արցախում և սահմանամերձ շրջաններում մղվող պատերազմը, բարբարոսական բնույթ կրող անվերջանալի շրջափակումները, գազատարի, երկաթուղու, կամուրջների պայթեցումները, Խորհրդային Միության փլուզումով նախկին հանրապետությունների հետ սերտաճած տնտեսական կապերի ջլատումը, բաց դռների քաղաքականության հետևանքով ԱՊՀ երկրների շուկաներում արտաքին երկրներից անարգել ներկրվող որակյալ և էժան արտադրանքի նկատմամբ Հայաստանում արտադրվող արդյունքների չափազանց ցածր մրցունակությունը (Հայաստանից արտահանվող ապրանքների արժեքի վրա մեծ ազդեցություն ունեցան շրջափակումների հետևանքով օդային փոխադրածախսերը), հզոր տերությունների կողմից մուսուլմանական աշխարհին, այլև ուժեղներին սատար կանգնելու քաղաքականությունը և այլն: Հոգ չէ, որ դրանք բոլորն էլ հակասում են ազգերի և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային նորմերին:

Որպես սուբյեկտիվ գործոն՝ առաջին պլան է մղվում ռազմավարական և մարտավարական սոցիալ-տնտեսական հիմնավորված ծրագրերի բացակայությունը, մեր օրերում վարվող անհեռատես, չհիմնավորված, անհոգ և բռնահաճ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Այդ քաղաքականության ուղղվածությունը կյանքի պահանջներից չի բխում և շատ դեպքերում թելադրվում է դրսից:

Արևմուտքի կողմից իբրև նոր հրամցվողը անկենսունակության պատճառով հանախ դեռևս կյանք չմտած և իրականության հանդեպ իր անհետաքրքրության, հարմարվելու միջավայրի բացակայության պայմաններում մեռնում է խանձարուրի մեջ՝ հետևում թողնելով ավեր և անկայունություն: Հնի քողի

տակ քանդվում են կյանք մտած և կայացած արժեքները, որոնց մի զգալի մասը դասական են և կենսունակ: Տնտեսությունը կառավարելը շատ բարդ արվեստ է: Հիրավի, կառավարողներն օժտված պետք է լինեն ոչ միայն բնատուր տաղանդով, տնտեսության հանգուցային հարցերին տիրապետելու ունակությամբ, այլև կառավարման արհեստավարժ գիտելիքներով, հմտությամբ ու կենսափորձով և, որ չափազանց կարևոր է՝ ունկնդիր լինելու անթաքույց խոհեմությամբ, ողջախոհությամբ ու պատասխանատվությամբ:

Ղեկավարել՝ նշանակում է տիրապետել ոչ միայն ղեկավարելու արվեստին, այլև հենց այդ ղեկի մեխանիզմին, նրա կառույցներին:

Մինչդեռ երկրի ղեկավարման վերին և ստորին օղակներում ներբոլշևիկյան սկզբունքով հանպատրաստի ատոռներ գրված շատ իշխանատենչ տղաներ՝ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, Ֆիզեռներ, պատմաբաններ, գրականագետներ, լեզվաբաններ, նկարիչներ, դերասաններ, որոնք չունեն տնտեսագիտական արհեստավարժ կրթություն, ինչպես նաև չեն անցել արհեստավարժության դպրոց, ինչու չէ նաև խակ տնտեսագետներ, որոնք չունեն կենսափորձ, տեղեր են զբաղեցրել կուսակցական պատկանելությամբ, իրականացնում են ՀՀՇ-ի դիրեկտիվ ցուցումները: Գրեթե ամեն մի օղակում ղեկավարը սեփական թիմը կազմավորում է հիմնականում նվիրվածության սկզբունքով:

Մի քանի տարի առաջ տնտեսության հանգուցային հարցերով զբաղվելը ոմանք ժամանակավրեպ էին համարում՝ գլտնելով, որ մասնավորեցման պայմաններում պետության դերը խիստ նվազում է, տնտեսության զարգացման հարցերով թող մասնավորները զբաղվեն: Դրա հետ մեկտեղ նրանք գտնում են, որ Հայաստանը փոքր երկիր է, նրա բնակչությունը պետք է առաջադիմի ոչ թե արդյունաբերության, գիտության, այլ սպասարկման բնագավառներում:

Բայց այս անգամ էլ կյանքը, ժամանակը իրենց կծու սարկազմով, հեգնական ժպիտով և արհամարհանքով հաստատեցին այն հայտնի ճշմարտությունը, որ տոտալական կյանքը զարգանալ կարող է առողջ տնտեսական հիմքի վրա:

2—3 84813

Մեր իշխանավորները չունեն ունկնդրելու պատրաստակամություն: Զարմանալի է, թե ինչու թշնամանք են տածում այն մարդկանց հկատմամբ, ովքեր մամուլում, պաշտոնական հավաքներում արտացայտությամբ որևէ լուրջ հարց են բարձրացնում և խելամիտ լուծումներ առաջարկում: Ունկնդիր լինելու փոխարեն, չէ՞ որ դա էլ կառավարման աբվեստի մի կարևոր մասնիկն է և օգտակար, հավաքներում, վերջին խոսքն ասելու անվերապահ իրավունքը իրենց վերագրելով, մեծամտորեն պարսավում են ամեն մի խելոք միտք և առաջ մղում իրենցը: Բայց կյանքն իր հունով է գնում: Վերջին շրջանում հայերենը հարըստացրել են նորաթուխ մի բառով: Դա «ընդդիմաբոս» բառն է, որով պիտակավորվում են այն մարդիկ, ովքեր «հանդգնում են» ճշմարիտ խոսք ասել:

Գաղտնիք չէ, որ միշտ էլ ավել կամ պակաս չափով մտավորականությունը հանդես է եկել որպես հասարակությանն ուղղություն տվող և կողմնորոշող ուժ, կանխորոշել նրա ապագա ընթացքը: Դրա հիմքում ընկած են երևույթների զարգացման օրինաչափությունները բացահայտելու և միտումները կանխատեսելու նրա արհեստավարժ գիտելիքները, գործիմացությունը: Այս առումով մտավորականությունը, հավանաբար, ապագա լայնանում մայրուղին առաջնորդվում է անհայտ և չտրորված արահետներով: Դժվար է այդ ճանապարհը. պետք են գիտելիքներ, հաղթանակելու հավատ, արարելու անհկում կամք, յոթ չափելու և մեկ ձևելու իմաստնություն, հնարամտություն և բազում այլ հատկանիշներ:

Այդուհանդերձ, խնդիրը վերաբերում է մտավորականության ոչ որպես վերացական հասկացության բնութագրությանը, այլ նրա արհեստավարժությանը: Չէ որ յուրաքանչյուր մտավորական հանդես է գալիս որպես որևէ արհեստավարժ մասնագիտական ուղղվածության կրող: Ամեն մի մտավորական հասարակության մեջ առաջատարի իր առաքելությունը, առաջին հերթին, ապահովում է իր արհեստավարժ ուղղվածությամբ: Հենց այս իմաստով խնդիրը գնահատելիս, այսօր իրոք մտավորականությունը չի կարողանում ամբողջ ներիրումով մղվել իր կոչմանը: Դա բացատրվում է ոչ միայն մտավորականի սոցիալ-տնտեսական , նեղ առումով՝ նյութական անբարենպաստ վիճա-

կով, այլև հասարակության կողմից նրա արհեստավարժ որակական հատկանիշների թերագնահատման փաստով: Մտավորականների ճնշող մասը արհեստավարժության առումով, բարոյական արժեզրկման վտանգի առջև է հայտնվել: Դրա հետ մեկտեղ մտավորականի, որպես հասարակության կողմնորոշիչ դերի, կառավարող իշխանությունների կողմից մեծ մասամբ ոչ միայն անտեսվում է, այլ որոշ չափով նսեմացվում: Դրանով իսկ ձևավորվել է ինչ-որ հակասություն, մի կողմից, մտավորականության մի զգալի մասի, մյուս կողմից, իշխանությունների վերին օղակներում տեղեր գրաված այրերի պահվածքի միջև: Մտավորականությունն իր կողմնորոշիչ դերով նայում է առաջ, շուտ է նկատում, զանազան ձևերով առաջարկում իր ծառայությունները, իսկ իշխանությունները լուծում են հանապազօրյա խնդիրները: Այստեղից էլ մտավորականների մի մասի ընդդիմադիր կեցվածքը, երբ երևույթների ընթացքը վաղօրոք արտահայտած նրա հիմնավոր կանխատեսումները հաճախ քամահարվում են, չեն գնահատվում կամ շատ ուշացած են ուշադրության արժանանում:

Առանց առողջ տրամաբանությամբ երևույթը ճանր ու թեթև անելու, հանրապետությունում իրականացվող մասնավորնցումները (որին ժամանակին դեմ ելան գործից հասկացող մարդիկ) հանգեցրին ժողովրդական միջոցների ոչնչով չարդարացված մեծ կորուստների: Առանց որևէ տնտեսագիտական հիմնավորվածության մեր օրերի տնտեսական քաղաքականության լեյտմոտիվը դարձան ամբողջատիրական համակարգի օրոք տիրապետող պետական սեփականության ձևից մոգական գավազանի օգնությամբ մեկ ակնթարթում և մեկ ոստյունով դեպի շուկայական հարաբերությունների «երկնային դրախտը» ցատկելու համար հանրապետության տնտեսությունը փորձադաշտի վերածելու մտահղացումները:

Ոչ ոք չի ժխտում բազմասեփականության հիման վրա շուկայական տնտեսության և շուկայական հարաբերությունների անցնելու անհրաժեշտությունը: Բայց ինչու միանգամից, այն էլ որոշումներով, անցնելով չտրորված արահետներով, առաջինը, անպայման առաջինը երևալու փութաջանությամբ՝ փոքրիկ, անպաշտպան հանրապետությունը ուրիշների համար փորձադաշտ դարձնելու տղայական պարծենկոտությամբ:

Առ այսօր տնտեսության «առողջացման» ասպարեզում կիրառվող քաղաքականությունը շուկայական հարաբերությունների անցման քողի տակ շատ հաճախ հանգեցրել է տնտեսական քաոսի, անտեսել տնտեսական կյանքում պետության կարգավորող դերը՝ աստիճանական էվոլյուցիոն ճանապարհով նորմալ շուկայական հարաբերությունների անցման գործում: Կեղծ «շուկայական տնտեսության» պայմաններում արտադրությունը չի աշխատում, իսկ շուկան կարծեցյալ «երկունք» է ապրում: Ի դեպ, նման պայմաններում ժողովրդական տնտեսության վարընթացը որքան արագանում է, հապշտապ շուկայական հարաբերությունների անցման կարգախոսներն այնքան շատանում են, ընդունվում են հիմնազուրկ և անպտուղ որոշումներ, իրավական օրենքներ և այլն: Մինչդեռ սպառման շուկան կամ շրջանառության ոլորտը ձևավորվում է ոչ թե որոշումներով, իրավական օրենքներով, այլ տնտեսական զարգացման օբյեկտիվ ընթացքով, առաջին հերթին սնվելով սեփական ներքին աղբյուրների հաշվին: Հայաստանում վարվող տնտեսական քաղաքականությունն ընդհանրապես չի կառուցվում տնտեսության զարգացման ներհատուկ օրինաչափությունների տրամաբանական զարգացման ընթացքը ճշտորեն կանխատեսելու հիմքի վրա: Ընդհակառակը, մերկապարանոց քաղաքականությունը փորձում է տնտեսության զարգացումը տանել մտացածին «ցանկալի» ուղղություններով՝ անտեսելով իրական հնարավորությունները: Նման քաղաքականությունը տնտեսության վրա գործադրած ճնշմամբ մեծապես վնասել և վնասում է նրա հետագա տրամաբանական զարգացման օբյեկտիվ ընթացքին:

Մինչ շուկայական հարաբերություններին անցնելը պետության ակտիվ միջամտությամբ աստիճանաբար պետք է հաղթահարվեն երկրի տնտեսական վերարտադրողական կառուցվածքի ձևախախտումները, առողջացվի տնտեսությունը, որը ապրանքաշրջանառության ոլորտը հագեցնի ոչ միայն ներկրողի պատրաստի արդյունքների, այլև սեփական արտադրության հիման վրա: Շուկան իր հակադարձ ազդեցությունն է ունենում արտադրության զարգացման ընթացքի և ուղղությունների ձևավորմանը: Մեծ մասամբ դրսից բերվող ապրանքներով բնակչության ապրանքաշրջանառության ոլորտի կեղծ «աշխուժա-

ցումը» միայն օժանդակ դեր կարող է խաղալ: Այդ արդյունքներով շուկան մշտապես գործել, իսկ ժողովուրդը կերակրվել չի կարող: Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական խողովակով արտասահմանյան երկրներից ներմուծվող ապրանքատեսակների ներհոսքը պետք է ուղեկցվի հանրապետությունում այդ պահին ստեղծված սեփական արտադրության ապրանքատեսակների արտահանության մասշտաբների ընդլայնման հետ, իր հիմքում ունենալով աշխատանքի միջազգային բաժանմանը Հայաստանի ակտիվ մասնակցությունը: Այլ պարագաներում արտահոսում են նախորդ տասնամյակներում ստեղծված և արդեն կուտակված պատրաստի արժեքները (ոսկի, արդուզարդ, պղինձ, մետաղյա զանգված և այլն)՝ աղքատացնելով երկիրն ու հասարակությունը:

Հանրահայտ է, որ այսօրվա զարգացած կապիտալիստական ամեն մի երկրում շուկայական տնտեսությունը կազմավորվել է դարերով, անցել ներքին շուկայի գոյացման երկարատև փուլ, աստիճանաբար ներքաշվել դանդաղորեն ձևավորվող համաշխարհային շուկայի ոլորտները: Ավելին, այդ երկրներից յուրաքանչյուրը շուկայական տնտեսության է անցել՝ չբացառելով սեփականության հին ձևը: Երկու դեպքում էլ բնորոշ է եղել մասնավոր սեփականությունը: Մինչդեռ հանրապետությունում կիրառվող «շուկայական թերապիան» շրջանցել է տնտեսության զարգացման բնականոն ընթացքը և ռեֆորմներ իրականացնելու շտապողականությամբ դարձել է տնտեսական ու սոցիալ-քաղաքական խոր ճգնաժամի դրդապատճառներից մեկը: Կյանքն անհրաժեշտորեն թելադրում է հրաժարվել «շուկայական թերապիայի» մեթոդներից, արմատապես փոխել տնտեսական ռեֆորմների ռազմավարությունն ու մարտավարությունը, վերականգնել պետության կարգավորիչ դերը՝ նրան բնականոն ներհատուկ բոլոր ֆունկցիաներով: Տնտեսության պետական կառավարելիությունը երկրի տնտեսական ու սոցիալական իրավիճակների կայունացման երաշխիքն է: Մուտքը քաղաքակիրթ շուկա ոչ թե բացառում, այլ ենթադրում է շուկայի զարգացման գործում պետության միջամտության դրական դերը, նրա կարգավորիչ ֆունկցիաների անհրաժեշտությունը: Նման սկզբունքը չի հակասում նաև բարձրարդյունավետ շուկայական էկոնոմի-

կայի պետական մասնակցության միջազգային փորձին և շատ երկրների պրակտիկային:

Տնտեսության պետական կարգավորման համակարգի վերակառուցումը չափազանց կարևոր է շուկայական ենթակառուցվածքի ձևավորման նպատակամղվածությունն ապահովելու և շուկայական հարաբերությունների ընթացքը կարգավորելու հարցում:

Արտասավոր, իսկապես արտասավոր է նաև ներքին շուկան, ապրանքաշրջանառության ոլորտը հիմնականում մասնավոր ճանապարհներով ներկրվող ապրանքատեսակների մանրավաճառության ասպարեզ դարձնելը: Խնդիրը միայն մանրավաճառությունը չէ, այլ հանուն կեղծ բիզնեսի մարդկանց որոշ մասին հանրօգուտ աշխատանքից արտամղելը: Սեղանիկների առևտուրը, որ հաճախ անվանում են իսկական «բիզնես» կամ «կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցես», չի բխում ազգային տնտեսության հետագա զարգացման շահերից: Պետական գանձարանը հարստացնելու փոխարեն, իրենց հերթին, սեղանիկներն ո մասնավոր առևտրի մի շարք օղակներ առայժմ ծնում են անօրինական միլիոնատերեր, նպաստում ազգի որոշ մասի բարոյական արժեզրկմանը:

Մանրավաճառությունը հիմնավորելու համար հաճախ վկայակոչվում է զարգացող երկրների օրինակը, որոնցում նույնպես սնկի նման բազմանում է մանրավաճառությունը, բայց որը նպաստում է սեփական երկրի արտադրության և ներքին շուկայում շրջանառության ոլորտի աշխուժացմանը:

Հայաստանում, միակողմանիորեն ընդօրինակելով զարգացող երկրների փորձը, անտեսվում են մի շարք պայմաններ:

Նախ, շուկայական տնտեսություն որդեգրած ամեն մի զարգացող երկիր ներքին շրջանառության ոլորտը հիմնականում խարսխում է սեփական արդյունքների արտադրության որոշ ճյուղերի զարգացման վրա՝ ապահովելով աշխատուժի օգտագործման արդյունավետությունը: Այդ նպատակով պետությունը մաքսային, ակցիզային, հարկային և բյուջեի հաշվին իրականացվող ներդրումային քաղաքականությամբ հովանավորում ու խթանում է սեփական ռեսուրսների օգտագործմամբ երկրի բնակչության անմիջական սպառման պահանջները բավարարող ար-

տադրության ճյուղերի կամ ենթաճյուղերի զարգացումը: Անհրաժեշտ է մտահոգվել ներքին շուկան տեղական ապրանքներով հագեցնելու, ինչպես նաև ներհանրապետական արտադրական տնտեսական կապերի ստեղծման և հետագա խորացման ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ լայն սպառման ապրանքների գծով բնակչության պահանջմունքները թե՛ քանակական, թե՛ որակական առումով, թե՛ համապատասխան տեսականիով «սեղանիկները» բավարարել չեն կարող: Թեև ներկայումս մասնավոր հիմունքներով գործող շատ խանութներ հագեցված են արտասահմանյան ապրանքների որոշ տեսականիով, որոնք շատերի գրպանի համար հասու չեն: Նման պարագաներում մասնավոր ձեռներեցներն, ինչքան էլ ճկուն լինեն, ի վիճակի չեն ապահովելու բնակչության պահանջմունքները համապատասխան տեսականու ապրանքներով:

Քանի դեռ երկիրը սեփական արտադրությամբ սպառման հիմնական առարկաների և՛ քանակով, և՛ տեսականիով բնակչության պահանջմունքները բավարարել չի կարողանում, ապա արտադրվող արդյունքների որակի բարձրացման և արտադրության կատարելագործման բնագավառում մրցություն ծավալելու մասին զրույցն ավելորդ է:

Անցման շրջանում բազմասեփականության պայմաններում պետության դերը բարձրանում է նաև բնակչության պահանջմունքները համապատասխան տեսականիով բավարարելու գործում, քանի որ խառը, համատեղ, փոքր ձեռնարկությունները տեսականու խնդիրը երբեք լուծել չեն կարող: Այստեղ նույնպես չափազանց կարևորվում է պետության դերը, որը կնպաստի նաև տնտեսության բոլոր ձևերի միջև մրցության ակտիվացմանը, ուստի և արդյունքների արժեքների իջեցմանը և տեսականու ավելացմանը:

Երկրորդ, պետությունը, այո՛, պետությունը, իր հովանավորչական քաղաքականությամբ պետք է նպաստի արտահանող ճյուղերի զարգացմանը: Մանավանդ դա վերաբերում է այն երկրներին, որոնցում աշխատուժն էժան է:

Դրա հետ մեկտեղ երրորդ երկրներն իրականացրել են բնակչության զբաղվածության որոշակի քաղաքականություն: Այդ նպատակով բյուջեի հաշվին կատարել են երկարատև կա-

պիտալ ներդրումներ: Ահա թե Հայաստանը որտեղ պետք է ընդօրինակի զարգացող երկրներին, չէ՞ որ մեր երկրում նույնպես աշխատուժը, մասնավորապես նրա որակյալ մասը, շատ էժան է, թեև Հայաստանը բնութագրվում էր ինդուստրիալ ճյուղերում զբաղվածության բարձր, և ագրարային ճյուղերում՝ համեմատաբար ցածր մակարդակով: Առավել ևս, եթե զարգացող երկրներում շուկայական հարաբերությունների են անցել ժողովրդական տնտեսության զարգացման շատ ցածր մակարդակի պայմաններում, բնորոշ է եղել տնտեսության ագրարային բընույթը և այդ ճյուղերում բավականին տարողունակ զբաղվածությունը:

Երրորդ, զարգացող երկրներում տնտեսության մեջ աստիճանաբար որոշիչ նշանակություն է ձեռք բերել պետական սեփականությունը, որը ձևավորվում է մասնավոր սեփականության ազգայնացման հիման վրա: Արտադրության որոշ ճյուղերում հաստատվում է պետական մոնոպոլիա: Մինչդեռ Հայաստանում անցումը շուկայական հարաբերությունների սկսվեց նաև տասնամյակների ընթացքում գոյացած և գործող պետական (գյուղում՝ խմբային կոոպերատիվ) համակարգը միանգամից բացառելու և մասնավորեցում իրականացնելու ճանապարհով: Խաղատախտակի վրա ամեն մի քայլ կատարելիս պետք է կարողանալ սթափ գնահատել և կանխատեսել դրա ազդեցությունը հետագա քայլերի ընթացքի վրա: Մի բան, որ չի արվում:

Նման պարագաներում հարկ է մտահոգվել ոչ թե պետությունը տնտեսապես ջլատող, այլ հզորացնող լծակները շարժման մեջ դնող մեխանիզմների ակտիվացման, տնտեսական ու հասարակական կյանքում պետության կարգավորող դերի բարձրացման մասին: Մանավանդ որ երկիրն ապրում էր պատերազմական իրավիճակ: Պատերազմական պայմաններում գտնվող ամեն մի երկիր իր տնտեսության զարգացումը, նիստն ու կացը, վարքն ու բարքը պետք է չափավորի նաև պատերազմական օրենքներով: Պատերազմը հրամայաբար թելադրում էր կենտրոնացած պետական տնտեսության գերակայություն և ոչ թե դրա փոշիացում: Արտադրության վճռորոշ ճյուղերի հետ մեկտեղ պատերազմի մեջ գտնվող պետությունը պետք է իր ձեռքում կենտրոնացնի երկրի կարևորագույն ռեսուրսները, կար-

գավորի դրանց վերարտադրության ընթացքը, միջոցների բաշխումը, կարևորագույն ապրանքների փոխանակումն ու սպառումը: Շուկայական հարաբերությունների անցման շրջանում պետությունն իր տնտեսական քաղաքականությամբ, պետական սեփականության օբյեկտ հանդիսացող ձեռնարկությունների միջոցով պետք է կարգավորի և ընթացք հաղորդի ներքին շուկայի կազմավորմանը, պայմաններ ստեղծի սեփականության տարբեր ձևերի օբյեկտ հանդիսացող արտադրությունների միջև մրցության ծավալմանը, նպաստի նյութատեխնիկական մատակարարմանը, ապրանքաշրջանառության ու առևտրի, արտաքին տնտեսական կապերի զարգացմանը: Մինչդեռ մրցությունը ծավալվել է մանրավաճառության բնագավառում: Ներքին շուկայում այն ոչ թե որոշիչ, այլ ստորադաս դեր պետք է տանի, ճիշտ այնպես, ինչպես շուկայական հարաբերությունների անցած շատ երկրներում է: Մինչդեռ տնտեսության շատ ոլորտներ ապակենտրոնացվել են, փոխանակությունն ու սպառումը ապավինվել են մասնավոր անձանց: Արտադրության որոշ օղակների՝ արտադրական և անձնական սպառման համար կենսական նշանակություն ունեցող ապրանքատեսակների, առանձնապես վառելիքի, նավթամթերքների առքն ու վաճառքը մասնավորների տնօրինությանը հանձնելու, անիշխանությամբ ուղեկցվող հրատակ ու ճկուն հարկային քաղաքականության բացակայության պայմաններում պետական բյուջեն զրկվում է վիթխարի դրամական միջոցներից: Մասնավորեցումները չուղեկցվեցին տընտեսապես հիմնավորված հարկային քաղաքականությամբ: Եկամուտ ստացողներից բոլորը չէ որ համապատասխան հարկ են վճարում: Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր արտադրական օղակներից, կոոպերատիվներից, խառը և համատեղ ձեռնարկություններից, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից և այլն համապատասխան հարկեր չեն գանձվում եկամտի մի մասից: Գլուխ է բարձրացրել ստվերային տընտեսությունը, որի եկամտի զգալի մասը թաքցվում է: Հարկեր չեն վճարում տասնյակ հազարավոր մանրավաճառներ, շուկաներում գյուղատնտեսական մթերքների վերավաճառողներ, արհեստավորներ և այլք: Այդ միջոցները կարող էին թեկուզ ինչոր չափով թեթևացնել պետական գանձարանի հոգսերը:

Պետական բյուջեում միջոցները կուտակվում են ոչ այնքան ներքին արտադրության, ներքին շուկայի, որքան արտաքին փոխառությունների և էմիսիայի ճանապարհով: Էմիսիոն վարկը հավելումով պիտի վճարեն սերունդները: Պետական գանձարանի դատարկության պայմաններում դրամը վիթխարի չափերով շրջանառում է մասնավոր սեկտորում, կուտակվում մասնավոր բաժնետիրական բանկերում, կոոպերատիվներում, մանրավաճառների մոտ, որը, կարճ ժամանակում, հետադարձ հոսանքով արտահոսում է դեպի արտասահման: Հոգ չէ նաև այն, որ երկրից արտահոսում են պետական գանձարանի առկա չնչին պաշարները, աղքատանում է բնակչությունը: Բնակչության ձեռքին գտնվող ոսկեղենը, ադամանդեղենը և այլ թանկարժեք արդուզարդ դարձան Թուրքիայի, Մերձավոր արևելքի և արաբական աշխարհի քաղաքացիների սեփականությունը: Դրան մեծապես նպաստեց նաև գների ազատ արձակումը, որը չուղեկցվեց աշխատավարձի ինդեքսավորման ճկուն քաղաքականության իրականացմամբ: Անցման շրջանում նույնիսկ տնտեսապես անկայուն և ծանր իրավիճակում գտնվող պետությունն իր վարած քաղաքականությամբ պետք է ապահովի բնակչության ապրուստի նվազագույնը, ունենա բնակչության գոնե նվազագույն պահանջմունքները կարգավորված գներով, առաջին անհրաժեշտության ապրանքներով բավարարելու պետականորեն մշակված ծրագիր:

Գների (մասնավորապես հացի գների) լրիվ ազատականացման քաղաքականությունը չհանգեցրեց ցանկալի արդյունքների և դրամի սպասվելիք կայունացման փոխարեն անխուսափելի դարձավ արժեզրկումը: Տվյալ դեպքում պետք է նկատի առնել ոչ միայն ապրանքների գների աճը, այլ դոլարի հետ դրամի փոխարժեքի «կայունությունը»: Վերջինս հարաբերականորեն էլ կայուն չէ, իսկ աշխատավարձի բարձրացումը չի փոխհատուցում գների անզուսպ աճը (էլեկտրականության, ջրի, աղբի և կենցաղային այլ ծառայությունների համար օրեցօր բարձրացող վարձ և այլն): Հենց միայն հացի գների ազատ արձակումը պետք է ուղեկցվեր բյուջետային հիմնարկներում աշխատողների աշխատավարձի շատ էական բարձրացմամբ: Տվյալ դեպքում հարկավոր է նկատի առնել, որ հացի գների ամեն մի

բարձրացում հանգեցնում է սպառողական զամբյուղը կազմող բոլոր ապրանքատեսակների և ծառայությունների գների անխուսափելի բարձրացման: Աշխատուժի խիստ ցածր արժեքի հետևանքով ձևախեղվեց նաև ընտանիքի սպառողական բյուջեն: Անհրաժեշտ է նկատի առնել նաև ընտանիքի չաշխատող անդամներին: Գաղտնիք չէ նաև այն, որ տարիների ընթացքում ապրանքների գների անզուսպ աճը էլ ավելի է սրել բնակչության սոցիալական շերտավորումը: Այդ ընթացքում աղքատներն ավելի ու ավելի աղքատացան, իսկ հարուստներն ավելի ու ավելի հարստացան: Աշխատավարձը դադարեց անգամ առաջին անհրաժեշտության ապրանքներ ձեռք բերելու միջոց լինելուց: Հանապազօրյա սպառման ապրանքների՝ հաց, կաթնամթերք, մսամթերք, շաքարավազ, վառելիք և այս կարգի այլ ապրանքների գները մի քանի անգամ ավելի արագ են բարձրանում, քան ավտոմեքենաների, արդուզարդի, ոսկեղենի, ադամանդեղենի, կահ-կարասիների, կահույքի, բնակարանների և երկարատև օգտագործման այլ ապրանքների գները: Երկարատև սպառման ապրանքների նկատմամբ բնակչության լայն զանգվածների պահանջարկի նվազումը իր հետքը թողեց դրանց արտադրությունների մասշտաբների, ուստի և զբաղվածության չափերի վրա: Ցածր վաստակը, թոշակը, նպաստը չեն ապահովում ապրուստի նվազագույնը: Ծայրը ծայրին մի կերպ հասցնելու համար աղքատները իրենց վերջին ունեցվածքը հարուստներին վաճառում են ցածր գներով և գնում են օրվա անընդմեջ թանկացող գներով: Մինչդեռ գներն աճում են երկրաչափական, աշխատավարձը՝ թվաբանական առաջադիմության օրենքներով, որի հետևանքով ապրուստի նվազագույն մակարդակն իջնում է պինդ մարմնի ազատ անկման արագությանը համապատասխան: Դա օրավուր, անզուսպ չափերով, խորացնում է ապրանքների գների և բնակչության եկամուտների հեղքվածքը, աղքատացող և հարստացող ընտանիքների կենսապայմանների միջև այս տարիների ընթացքում գոյացող մեծ տարբերությունը: Ավելին, ստեղծվեց վիթխարի վիհ աշխատավարձի և ընտանիքի սպառողական զամբյուղի միջև, որը հետզհետե խորացավ սպառողական ապրանքների գների անընդհատ աճի, աշխատուժի արժեքի ու գնի անկման հետևանքով:

Պետական սեփականությունից մասնավոր համակարգին անցման վտանգում, առավել ևս իր կիրառած տնտեսական ու սոցիալական քաղաքականությամբ, պետությունը ոչ թե պետք է ձեռքերը լվանա, ուսերը թոթվի ու մի կողմ քաշվի, այլ իր կարգավորիչ դերով խթանի գանձարանի հարստացմանը, այդ միջոցների հաշվենկատ և նպատակամետ օգտագործմանը:

Քանի դեռ տնտեսությունն իր զարգացման բնականոն ընթացքի մեջ չէ, գների ազատ արձակումը և լայն մասշտաբով շուկայական հարաբերությունների անցումը վաղաժամ է: Դա նպաստում է սոցիալական լարվածության շիկացմանը:

Միջազգային վալյուտային ֆոնդի առաջադրած պահանջներն ընդունելի են շատ երկրներում: Մեր հանրապետությունում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում, շրջափակումների պայմաններում, հավանաբար, այն հղի է անցանկալի հետևանքներով, այդ թվում տնտեսական ու քաղաքական հետագա կախվածության խորացման վտանգով:

Ներքին շուկայի ստեղծման գործում մեծ հույսեր էին կապում հողի, անասունների, գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների մասնավորեցման հետ: Այսօր ճաշակում ենք դրանց դառը պտուղները:

Նման «մասնավորեցումները» բուն գյուղատնտեսության հետ միասին հարվածեցին քաղաքային բնակչության կենսապահովմանը, սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկությունների նորմալ գործընթացին, ծայրաստիճան թուլացրին տնտեսական կապերը գյուղի և քաղաքի միջև:

Չորս տարի էր, ինչ թեժ աղմուկ-աղաղակ էր բարձրացել արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների, նյութատեխնիկական մատակարարման, առևտրի օբյեկտների ու տրանսպորտի միջոցների մասնավորեցման մասին: Ցավոք, այդ հարայ-հրոցներին չնախորդեց պետական մակարդակով պետական ձեռնարկությունների ուսումնասիրությունը: Անհիշխանության պայմաններում դրանով սկիզբ դրվեց պետական գույքի հափշտակումների և վերջ չունեցող զանգվածային թալանի: Այն ժամանակ ճիշտ էր ասվում, որ եթե մասնավորեցում տեղի ունենա, կմասնավորեցվեն հիմնականում չորս պատերը: Դրա հետ մեկտեղ «մասնավորեց-

ման» քողի տակ առևտրի և շինարարական բազմաթիվ օբյեկտներ, փոքր ձեռնարկություններ, տրանսպորտի միջոցներ չնչին գներով կամ անվճար նվիրաբերվեցին առանձին անձանց: Պետական առևտուրը տեղի տվեց:

Արդյունաբերական ձեռնարկություններում ու շինարարական կազմակերպություններում տեղադրված ու չտեղադրված արտասահմանյան նորագույն տեխնիկան շատ դեպքերում չընչին գներով վաճառվեց կոոպերատիվների, գործարար մարդկանց, այլ երկրների: Ցածր գներով օտարվեց նաև տրանսպորտի միջոցների մի զգալի մասը: Հենց այսօր էլ պետական արդյունաբերական ձեռնարկություններում անգործության մատնված, անգամ գործող արտադրական կարողությունների մի մասը (զանազան հաստոցներ, հարահոս գծեր, ավտոմատ և կիսաավտոմատ սարքեր) հատվում և որպես մետաղյա զանգված մասնավոր կարգով արտահանվում է Իրան: Ոմանք դա «հիմնավորում» են, որ այդ սարքավորումները, միևնույն է, չեն գործում, ուստի պարապ մնալու փոխարեն հարկավոր է որպես մետաղ վաճառել և արժեքը դնել շրջանառության մեջ: Անտեսենք այն, որ պետական սեփականության օբյեկտ հանդիսացող այդ հաստոցներն անհատույց յուրացնում են անհատներ, առանձին մարդիկ: Դրանք որպես մետաղյա զանգված այլ երկրներ արտահանելու և վաճառելու փոխարեն հարկավոր է մտահոգվել այդ կարողությունները գործարկելու, համապատասխան տնտեսական լծակների օգնությամբ դրանք շարժման մեջ դնելու միջոցով նոր արժեքներ ստեղծելու մասին: Չէ որ վաղը, մյուս օրը հասարակությունը կանգնելու է արտադրական կարողություններից զրկվելու տխուր փաստի առջև: Հարստահարված հասարակությունն ինչքա՞ն միջոցներ պետք է ծախսի այդպիսիք ձեռք բերելու համար:

Մասնավորեցումներ իրականացնելիս հաճախ վկայակոչվում է համաշխարհային փորձը՝ անտեսելով երկու կարևոր պայման:

Առաջին, այդ երկրների մեծ մասում գերիշխողը եղել են մասնավոր սեփականությունը, շուկայական էկոնոմիկան և շուկայական հարաբերությունները:

Երկրորդ, ամեն մի երկրում մասնավորեցվել է պետական սեփականություն հանդիսացող միայն մեկ ճյուղ (ածխարդյունաբերություն, մետաղաձուլություն, տրանսպորտի կամ հանքային արդյունաբերության որևէ ճյուղ և այլն):

1994 թ. վերջերին տեղի ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների 20 տոկոսանոց անհատույց մասնավորեցում: Մինչ այդ, ուշացումով անցկացվեց գույքագրում: Ձեռնարկությունները թալանելուց հետո գույքագրման ընթացքում դրանց հիմնական ֆոնդերը գնահատվեցին չափազանց ցածր: Գնահատման համար հիմք ծառայեցին ոչ թե դրանց ներկայիս իրական արժեքները, այլ տարիներ առաջ տեղադրված ժամանակվա արժեքները, որոնք ներկայիս համեմատ շատ ցածր գնահատվեցին: Դրա հետ մեկտեղ դուրս գրվեց նաև մաշվածքը: Տվյալ դեպքում նկատի է առնվել ոչ թե իրական մաշվածքը, այլ տարիների ընթացքում ամորտիզացիոն գործակիցներով նախատեսվող գումարը: Հոգ չէ, որ տարիների ընթացքում դրանք գրեթե չեն գործել, քիչ են մաշվել, մեծ մասը ֆիզիկապես լավ վիճակում է: Ավելին, հաշվարկից հետո մնացած ընդհանուր գումարը վերահաշվարկվեց դրամով, այսինքն՝ այն բաժանվեց 200-ի: Պարզ է, թե արդյունքում ինչ չնչին գումար մնաց: Հարցը, սակայն , դրանով չի ավարտվում: Մասնավորեցման ճանապարհով սեփականատեր դարձած անձինք պետական բյուջե մուծեցին սեփականացված օբյեկտների այդ խիստ ցածր վերահաշվարկված արժեքի դիմաց ոչ միայն դրամով, այլև վաուչերներով՝ բազմապատիկ նվազեցնելով առանց այդ էլ խիստ ցածր գնահատված գույքի արժեքը: Այդ վաուչերներն իրականում ոչ այլ ինչ էին եթե ոչ թղթի կտրոններ: Օրը ցերեկով, ժողովրդի աչքին թոզ փչելով, տեղի ունեցավ շատ հասարակ ու պարզ մի կերպարանափոխություն: Ի վնաս պետական գանձարանի ծնվեցին նորելուկ միլիոնատերեր:

Հիմնական ֆոնդերի հաշվեկշռային արժեքից ցածր գնահատումը և մասնավորեցված ձեռնարկությունների դիմաց վաուչերներով վճարումներն արվում են՝ միանգամից երկու հարց լուծելու համար:

Առաջին, պետական սեփականությունը ցածր գներով և հեշտությամբ իշխանամետ մարդկանց էին նվիրվում: Այս ճա-

նապարհով նույնպես արհեստականորեն միլիոնատերեր են հանդես գալիս: Այդ նպատակով էլ շատ արտադրական օբյեկտների տնօրեններ նշանակվում են յուրայիններ:

Երկրորդ, ելնելով հաշվեկշռային ցածր արժեքից՝ շատ ցածր են գնահատվում նաև վաուչերները: Դրանով իսկ թեթևանում է նաև բաժնետիրական ընկերությունների հոգսը՝ հետագայում այդ գումարները վճարելիս: Այսպիսով, շարունակվում է այն քաղաքականությունը, որը հասարակությանը մղեց խիստ բևեռացման՝ ձևավորելով միլիոնատերեր և ընչազուրկներ:

Բայց այդ ո՞ւմ միջոցներն են այդպես հեշտ ու հանգիստ նվիրվում այսան ու նրան: Միշտ այդպես, ո՞վ է հաշիվ տալիս այն բանի համար, որ 1991 թ. իբր թե «ձեռներեցությունը» խթանելու նպատակով, մարման ցածր տոկոսադրույքներով որպես վարկ, պետական բյուջեից միլիոններ տրամադրվեցին առանձին անհատների: Դրանից երկու տարի անց՝ 1993 թ. նոյեմբերին, երբ շրջանառության մեջ էր մտցվում դրամը, այդ վարկերը մարվեցին հազարապատիկ արժեզրկված ռուբլով: Ձեռներեցները դրանք նախապես դարձել էին տարադրամ և արտահանել: Էլ չենք խոսում տարադրամային ֆոնդով ՀՀ-ին տրամադրված վարկերի մասին, որոնք ծառայեցին ոչ տնտեսության աշխուժացման նպատակներին, որով հնարավոր լիներ ստեղծել աշխատատեղեր:

Միլիոնատերեր կան նաև կապիտալիստական աշխարհում, բայց Երբեք դրան հասել են ոչ թե բոլորին պատկանող միջոցները մի գիշերում մասնավորեցնելու ճանապարհով, այլ տասնամյակների ընթացքում ինքնավերարտադրության և իրենց ներքին կուտակումների հաշվին՝ դիմանալով մրցակցությանը, կիրառելով գիտատեխնիկական առաջադեմ մեթոդներ, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի որակը, իջեցնելով վերջիններիս արժեքը:

Ցպեսք է մոռանալ, որ ապապետականացվում և մասնավորեցվում են ժողովրդին պատկանող միջոցները: Դրանք պետական սեփականություն են դարձել բոլորի ջանքերով, բոլորի ներդրած և բոլորից հավաքագրված և նույնիսկ հարկադիր գանձված միջոցներով: Հետևաբար, պետք էր մշակել և կիրառել մասնավորեցման այնպիսի ձևեր և մեթոդներ, որ այդ միջոց-

ները հասանելի դառնային բոլորին, այդ թվում հոգևոր և մշակույթի ասպարեզում ընդգրկված մարդկանց, որոնք մեծ մասամբ չունեն մասնավորեցման համապատասխան բնագավառներ:

Պետական գանձարանը տկարացավ ոչ միայն այդ պատճառով, այլև հարկային քաղաքականությամբ բյուջե մուտքագրվող միջոցների խիստ նվազման հետևանքով: Նախ, մասնավորեցված օբյեկտների մեծ մասը լիաթոք չի գործում: Երկրորդ, որևնց եկամուտները լրիվ ցույց չեն տրվում:

Կապիտալի նախասկզբնական կուտակման՝ պատմությանը ոչ հայտնի այս ձևերով ոմանց ձեռքին հայտնված կապիտալն իր երկրի տնտեսությունը վերակենդանացնելու փոխարեն կիրառում գտավ այլ երկրներում:

Այս միջոցները նորմալ պայմաններում կարող էին ուղղվել արդյունաբերության որոշ ճյուղերի վերապրոֆիլավորման միջոցով առկա ինժեներատեխնիկական և բանվորական ներուժի օգտագործումն ապահովելու նպատակին:

Շատ հաճախ երևույթների ընթացքն արդարացնելու պատրվակով տրտնջում ենք տևական կապիտալ ներդրումների (ինվեստիցիաների) պակասի համար: Վկայակոչելով խորհրդային համակարգի փլուզման հետևանքով նախկինում հաստատված տնտեսական կապերի խզումը՝ պատրանք ենք ստեղծում, թե միջոցներ չկան: Անշուշտ, դա ճշմարտություն է: Իրոք միջոցներ չկան: Բայց ինչով է արդարացվում այն, որ գանգատվում ենք ներդրումների պակասից: Այդ պակասն այնքան զգալի չէր լինի, եթե տասնամյակների ընթացքում ինչ-ինչ ճանապարհներով ոմանց ձեռքին կուտակված կապիտալը չարտահոսեր երկրի սահմաններից դուրս: Այն արտահոսեց մայր երկրում արդյունավետ կիրառման ոլորտ, օրենսդրական դաշտ և իրավական պաշտպանվածություն չունենալու, այն կորցնելու վտանգի և վախի ազդեցության պատճառով: Պակաս դեր չխաղացին հանրապետության սահմաններում ձեռներեցությունը ոչնչով չխրախուսելու, սեփական երկրի արտադրողների շահերի պաշտպանության, մարդու իրավունքների, մասնավորապես, աշխատանքային իրավունքների պաշտպանվածության օրենսդրական նորմերի բացակայությունը, թերամշակ և անգոր-

ծունկ հարկային քաղաքականությունը և այլն: Դրան նպաստեցին ոչ միայն արտադրության մասշտաբների անկումը, ենթակառուցվածքի (ծառայություններ, տրանսպորտ և այլն) բացակայությունը, այլև տասնամյակների ընթացքում բոլորի աշխատանքով կուտակված պետական սեփականության հափշտակումն, հապճեպ, չնախապատրաստված մասնավորեցումը, այդ հարցությունը քչերին ձվիրաբերելու անհեռատես, ժամանակավրեպ և քմահաճ քաղաքականությունը:

Գանգատվում ենք, որ նախկին տնտեսական կապերի փլուզման հետևանքով վերամշակման համար հանրապետությունն շատ քիչ հումք է մուտք գործում: Մինչդեռ գիշեր ու զոր գյուղացու տքնաջան աշխատանքով արտադրված արժեքավոր գյուղատնտեսական մթերքների մի զգալի մասը սեզոնում մեր աչքերի առջև ոչ ու փուչ է դառնում: Վերամշակող ձեռնարկությունները վերակառուցելու, նորերը կառուցելու փոխարեն հներն էլ անգործության մատնվեցին: Դա վերաբերում է խաղողի, լոլիկի, ծիրանի, մրգերի ու բանջարեղենի զանազան տեսակների արդյունաբերական վերամշակմանը, որը կապահովեր կոնյակի, գինու, սպիրտի, զանազան պահածոների արտահանության միջոցով վիթխարի տարադրամի մուտքը Հայաստան:

Գաղտնիք չէ, որ սեզոնում գյուղացին այդ մթերքների ձեռքը կրակն է ընկնում: Հետևանքը եղավ այն, որ հատվեցին խաղողի այգիները, ծիրանի, տանձի ու խնձորի ծառերը, պակասեցին բանջարեղենի ցանքատարածությունները:

Չվերանսկվող սովերային տնտեսության առկայությունը կապիտալի արտահոսքն ավելացնելու հետ միասին հիմք դարձավ այդ կապիտալը ինչ-որ ձևով մեղյալ կապիտալի վերածելուն: Խոսքը վերաբերում է մասնավոր բնակարանաշինարարությանը: Հարցադրումը սխալ չընկալելու համար պարզաբանեմ միտքը: Ոչ ոք չի համարձակվի ժխտել մեկ-երկու հարկանի հարմարավետ բնակարան կառուցելու նպատակահարմարությունը: Մինչդեռ շատ դեպքերում կառուցվում են մի քանի հարկանի (երեք-չորս) անոռելի առանձնատուն-պալատներ, որոնք կահավորվում են արտասահմանյան շատ թանկարժեք և ճոխ կահկարասիներով: Մեկ ընտանիքի համար, եթե շուրջդ աղքատություն է թևածում, դա աչք ծակող շռայլություն է: Բայց հարցը

մեջ եմ բերում հարևանցիորեն, փակագծերում: Խոսքը վերաբերում է այն հարցին, որ ճիշտ հարկային քաղաքականության պայմաններում ստվերային տնտեսության և որևէ այլ ճանապարհով մասնավոր անձանց ձեռքին կուտակված կապիտալը կարող էր շատ քաղաքակիրթ եղանակով և օրինական ճանապարհով, առանց ոտնահարելու սեփականատիրության իրավունքները, հայտնվել պետության գանձարանում: Այն կարող էր դառնալ ոչ միայն կրթական, գիտական, առողջապահական համակարգի, սոցիալական խնդիրներ լուծելու միջոց, այլև նոր աշխատատեղեր ստեղծելու պայման:

Հար և նման այլ հարցերում լուռ ու մռայլ են հարկային քաղաքականությունը, օրենսդրությունը, համապատասխան պաշտոնատար անձինք: Զանազան հարցեր քննարկելիս, ոմանք տեղի-անտեղի, շատ հաճախ վկայակոչում են զարգացած երկրներին ընդօրինակելու պատվախնդրությունը: Ուրիշ երկրներում, ինչպես մեզ մոտ, ոչ ոք չի սահմանափակում բնակարանների կառուցումը: Բայց շատ երկրներում, այդ թվում Արևելյան Եվրոպայի երեկվա սոցիալիստական երկրներում, հարկային մարմիններն օրենսդրական հիմունքներով հարկեր են գանձում ոչ թե բնակարանաշինարարության, թանկարժեք գույք (ավտոմեքենա, կահ-կարասի և այլն) գնելու, այլ դրանց վրա ծախսված գումարներից, եթե այդ եկամուտներից նախապես հարկ չի գանձվել: Եթե մուծված եկամտահարկերը համապատասխանում են նախնական հայտարարագրերում նշված միջոցների չափերին, ապա ամեն ինչ կարգին է: Չհամապատասխանելու դեպքում բարի եղիր մուծել օրենքով սահմանված եկամտահարկը: Չեա մուծում, կգործի քրեական օրենքը:

Հանրապետության նախագահը 1996 թ. իր նախընտրական ելույթում ասաց, որ հանրապետությունում կառուցվել են 11 հազար մասնավոր բնակարաններ, շատ-շատերը ձեռք են բերել արտասահմանյան մակնիշի թանկարժեք մեքենաներ: Ուրախալի է: Մեկ այլ, ոչ պակաս պատասխանատու ասք գտնում էր, որ այդ բնակարաններից յուրաքանչյուրի վրա միջին հաշվով ծախսվել է 0,5 մլն դոլար: Ի՞նչ պատկառելի գումար կկազմեր պետության բյուջե մուտքագրվող եկամտահարկը: Չէ՞ որ

դա սովետական տնտեսության եկամուտների շատ չնչին մասը հարկելու անուղղակի միջոցն է:

Այսպիսով, պետական բյուջե մուտք գործող լրացուցիչ միջոցներով հնարավոր կլինի վերականգնել տնտեսության վերարտադրողական կառուցվածքը, իրականացնել առաջադիմական կառուցվածքային վերափոխումներ, նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով լուծել սոցիալական խնդիրներ՝ թեթևացնելով պետության հոգսերն այդ ասպարեզում, փրկել հասարակության գլխավոր հարստությունը, մասնավորապես նրա ամենավոր ներուժը՝ ապատրակավորման հետագա վտանգից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Աշխատանքի շուկան ընդգրկուն հասկացություն է, բայց հիմնականում վերաբերում է աշխատուժի առուծախին՝ նրա փոխանակությանը: Դա աշխատուժի վերարտադրության փուլերից մեկն է:

Նկատենք, որ համախառն ներքին արդյունքի նման աշխատուժի վերարտադրությունը նույնպես անցնում է չորս փուլերով: Դրանք աշխատանքային ռեսուրսների (աշխատուժը կրողների) կազմավորման (արտադրության), մարդկային գործունեության տարբեր ոլորտներում նրանց բաշխման, փոխանակման և սպառման (օգտագործման) փուլերն են: Դա պայմանավորված է նրանով, որ աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը հասարակական արտադրության և վերարտադրության բաղկացուցիչ մասն է:

Հասարակական արտադրությունը լինում է երկու տեսակ.

ա) բուն կենսամիջոցների (սնունդ, հագուստ, կոշիկ, բնակարան, վառելիք և այլն) արտադրություն,

բ) աշխատանքային ռեսուրսների արտադրություն:

Արդ, ի՞նչ են աշխատանքային ռեսուրսները, ի՞նչ է «աշխատուժը»:

Աշխատանքային ռեսուրսներն ամեն մի երկրի բնակչության այն մասն է, որն օժտված է աշխատունակությամբ և զբաղված է կամ պատրաստ է զբաղվելու մարդկային աշխատանքային գործունեության որևէ ոլորտում: Աշխատանքային ռե-

տուրսները բնութագրվում են նաև ժողովրդական ցուցանիշներով՝ սեռը, տարիքը, տարաբնակեցումը, գաղթը (միգրացիան), ընտանեկան-ամուսնական դրությունը և այլն:

Աշխատանքային ռեսուրսներն աշխատուժի կրողներն են: Իսկ աշխատուժը մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների ամբողջությունն է, որը նա շարժման մեջ է դնում ամեն անգամ, երբ որևէ ապառարժեք է արտադրում կամ ծառայություն է մատուցում:

Աշխատանքային ռեսուրսները բնութագրվում են նեղ և լայն իմաստով: Դրանց նեղ իմաստով գնահատելու ժամանակ նկատի է առնվում աշխատունակությամբ օժտված անհատը, որն իր աշխատունակությունը դրսևորում է այն բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում իրականացնել որևէ աշխատանքային գործունեություն:

Լայն առումով աշխատանքային ռեսուրսները աշխատանքային ռեսուրսների միագումար են՝ իրենց քանակական, որակական և ժողովրդագրական հատկանիշներով: Տվյալ դեպքում աշխատուժն ամբողջությամբ վերցրած տղջ հասարակության հավաքական աշխատունակությունն է: Այդ ունակությունները մարմնավորվում են այս կամ այն երկրի աշխատունակ բնակչության, նրա աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թվաքանակի մեջ: Յուրաքանչյուր տվյալ պահին ամեն մի երկրի աշխատանքային ռեսուրսների թվաքանակի մեջ են մտնում հիվանդության և ծննդաբերության պատճառով ժամանակավորապես չաշխատողները, I և II կարգի աշխատող հաշմանդամները:

Ինչպես տեսնում ենք, աշխատունակությունը, այսինքն որևէ բան արարող մարդ-անհատի՝ ֆիզիկական և մտավոր ունակություններով օժտվածությունն աշխատանքային ռեսուրս դառնալու նախապայմանն է: Առանց աշխատունակության անհատն աշխատանքային ռեսուրսի վերածվել չի կարող: Բայց աշխատունակությամբ օժտված ամեն մի անհատ չէ, որ աշխատանքային ռեսուրս է, թեև առանց աշխատունակության աշխատանքային ռեսուրս գոյություն ունենալ չի կարող:

Արտադրողական ուժերի անձնական գործոնը՝ անհատը, իր այդ ունակություններն իրացնում է արտադրության ընթացքում: Նա աշխատանքի շնորհիվ դառնում է իր աշխատունա-

կությունը գործադրող, ուստի և՝ աշխատանքային ռեսուրս: Այդ պատճառով էլ «աշխատուժ» և «աշխատանքային ռեսուրս» հասկացությունները որպես տնտեսական կատեգորիա իրենց սոցիալ-տնտեսական բովանդակությամբ միմյանցից չեն տարբերվում: Բայց, ի տարբերություն աշխատուժի, աշխատանքային ռեսուրսներն ունեն նաև քանակական, ժողովրդագրական արտահայտություն: Աշխատուժի կրողները հենց այդ ժողովրդագրական հատկանիշների շնորհիվ հանդես են գալիս որպես աշխատանքային ռեսուրսներ: Մինչդեռ աշխատանքային ռեսուրսների որակական հատկանիշներն առաջին հերթին բնութագրվում են մտավոր և ֆիզիկական ունակությունների ամբողջությամբ: Դրա հետ մեկտեղ աշխատանքային ռեսուրսները տնտեսագիտական կատեգորիա են ոչ թե իրենց ժողովրդագրական հատկանիշների, այլ այն բանի շնորհիվ, որ աշխատուժի կրողներ են և արտահայտում են որոշակի սեփականատիրական հարաբերություններ:

Համախառն ներքին արդյունքի արտադրության ժամանակ ստեղծված նյութական և հոգևոր բարիքներն օգտագործվում են աշխատունակության վերականգնման և զարգացման համար: Մինչդեռ իր իսկ ստեղծած նյութական և հոգևոր բարիքների սպառումով (օգտագործմամբ) մարդը պահպանում է իր գոյությունը, զարգացնում աշխատունակությունը: Ուստի աշխատուժը կարելի է դիտել երկու տեսանկյունից.

Նախ, որպես նյութական բարիքներ ստեղծողի և ծառայություններ իրականացնողի, երկրորդ, վերարտադրության, այսինքն՝ մարդու աշխատունակությունը վերականգնելու և պահպանելու տեսանկյունից: Աշխատանքային գործունեության ժամանակ մարդկանց միջև ստեղծվող փոխհարաբերությունների ընթացքում իրացվում է նրանց աշխատունակությունը, այսինքն՝ գործադրվում է մարդու աշխատուժը:

Աշխատանքային ռեսուրսների արտադրության կամ կազմավորման փուլում. նախ, վերականգնվում և պահպանվում է աշխատանքի ընթացքում անհատների սպառած աշխատունակությունը: Աշխատողը, որպեսզի հաջորդ օրը նույնպես կարողանա շարունակել իր աշխատանքային գործունեությունը, առնվազն պետք է վերականգնի ու պահպանի իր ունակություններ-

ի և առողջության նախկին մակարդակը: Դրանով իսկ մշտապես վերականգնվում է առանձին աշխատողների աշխատունակությունը՝ որպես հավաքական աշխատունակության մի մասնիկը: Երկրորդ, վերականգնվում է հավաքական աշխատունակությունը, որը հասարակական աշխատանքի ընթացքում կազմավորվել է անհատական աշխատունակության միագումարից: Ամբողջությամբ վերցրած դա հասարակության աշխատունակության մշտական վերականգնումն է: Հասարակական աշխատունակության վերարտադրությունը բնութագրվում է նաև աշխատանքային ռեսուրսների քանակական և սեռատարիքային կազմի վերականգնումով:

Հավաքական աշխատուժի վերարտադրությունն ընդգրկում է նաև աշխատանքային ռեսուրսների մշտական նորացումն այն հատկանիշներով, որով օժտված մարդիկ հանդես են գալիս որպես հասարակական էակներ (արհեստավարժություն, որակավորում, ընտանեկան դրություն և այլն):

Աշխատանքային ռեսուրսների արտադրության կամ կազմավորման փուլին հատուկ է նաև որակյալ աշխատուժի վերարտադրությունը, որն ապահովում է աշխատուժի զարգացումը: Դա ձեռք է բերվում ուսումնառության ընթացքում և բուն արտադրության մեջ:

Անհատական աշխատուժի ապառած աշխատունակության վերականգնման, պահպանման և զարգացման համար առաջնահերթ նշանակություն են ստանում աշխատանքի պայմանները և աշխատող մարդու ապառման մակարդակը: Խնդիրը հասարակության պատմական զարգացման կոնկրետ տվյալ մակարդակին համապատասխան նորմալ միջին լարվածությամբ աշխատանքի կազմակերպումն է: Եթե աշխատանքի լարվածության աստիճանը գերազանցում է մարդկային օրգանիզմի կարողություններին, ապա ծախսված աշխատունակության նորմալ վերականգնման մասին խոսք լինել չի կարող:

Աշխատուժի ծախսերի փոխհատուցման համար անհրաժեշտ է ապահովել նաև համապատասխան կենսամակարդակ: Հայտնի է, որ աշխատուժի վերարտադրության հիմքը անհրաժեշտ արդյունք է: Այն արտահայտվում է աշխատանքային ռեսուրսների կենսագործունեությունը պահպանելու և մարդկա-

յին սերունդը վերարտադրելու համար անհրաժեշտ կենսամիջոցների քանակով: Ինչպես իր ծախսած ֆիզիկական, մտավոր, նյարդային էներգիան վերականգնելու, այնպես էլ փոխարինող սերունդ ապահովելու համար անհրաժեշտ են գոյամիջոցներ: Այդ իսկ պատճառով էլ աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ ծախսերը պայմանավորվում են. առաջին, աշխատավոր մարդու աշխատուժի վերականգնման, նրա նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման և զարգացման համար պահանջվող ծախսերով: Երկրորդ, ընտանիքի վերարտադրության, նրա չաշխատող անդամների պահպանության, ուսուցման, դաստիարակության համար անհրաժեշտ միջոցներով: Հասանելիվող և ավելացող աշխատանքային ռեսուրսները, որ մինչ այդ տարիների ընթացքում արտադրվում ու վերարտադրվում էին որպես մարդկային ռեսուրս, նյութական պաշտպանության կարիք են զգում: Լրացուցիչ ծախսեր են պահանջվում ընդհանրապես որակավորման համակարգի հարցերը լուծելու համար:

Աշխատանքային ռեսուրսների մեծությունը (ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով) փոփոխվում է ժամանակի և տարածության մեջ: Այն փոփոխվում է ինչպես ժողովրդագրական գործոնների, այնպես էլ աշխատողների արհեստավարժական-մասնագիտական և որակական ցուցանիշների փոփոխության, կենսաթոշակառուների և անչափահասների աշխատունակությունը գործադրելու համար ստեղծված պայմանների հետևանքով:

Հավաքական աշխատունակության վերականգնումը, նախ, տեղի է ունենում բնական ճանապարհով աշխատունակությունը կորցրած անձանց նոր մարդկանցով փոխարինելու միջոցով: Վերջինիս աղբյուրը աշխատանքային տարիք մուտք գործող աշխատունակ բնակչությունն է: Դրանք ընդգրկվում են հանրօգուտ աշխատանքի որևէ բնագավառ կամ շարունակում են ուսումը: Այդ համալրումը տեղի է ունենում 15—16 տարի առաջ ծնված երեխաների հաշվին: Նայած թե այդ երկրում աշխատանքային տարիք մուտք գործելու իրավական սահմանը որ տարիքից է ընդունված: Մինչդեռ ամեն մի երկրում ծնվող երե-

խաների բացարձակ թիվը ժամանակի ընթացքում տատանվում է։

1960 թ. Հայաստանում ծնվել է 75 հազ., իսկ 1970 թ.՝ 55 հազ. երեխա։ Հենց այդ պատճառով էլ 16 տարի անց, այսինքն՝ 1970-ականների կեսերից սկսած, աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությունն սկսեց ավելանալ, իսկ 1980-ականների վերջերին և 1990-ականների կեսերին, ընդհանրապես, նվազեց։ Դա հանգեցրեց աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռների փոփոխության. 1979 թ. բնակչության ընդհանուր թվի մեջ աշխատանքային տարիքի բնակչությունը կազմում էր 57,3, մինչդեռ 1989 թ. իջավ և կազմեց 56.2 տոկոս։ 1990-ականների կեսերից այն նորից բարձրանալու միտում է դրսևորում, քանի որ աշխատանքային տարիք են մուտք գործում 1980-ականների ծնվածները։ 1981—1990 թթ. տարեկան միջին հաշվով ծնվել է 78—80 հազար երեխա։

Երկրորդ, աշխատանքային ռեսուրսների թվաքանակն ավելանում է նաև աշխատանքային տարիքում գտնվող, բայց չաշխատող աշխատունակ բնակչությանը աշխատանքային գործունեության մեջ ընդգրկելով։

Երրորդ, այլ երկրներից ներգաղթածներին աշխատանքային գործունեության մեջ ընդգրկելով։

Աշխատանքային ռեսուրսների թվակազմը նվազում է՝

առաջին, կենսաթոշակային տարիք թևակոխած այն անձանց հաշվին, ովքեր թողնում են աշխատանքային գործունեությունը և անցնում կենսաթոշակի։

Հայաստանում 1980-ականների կեսից սկսած (մինչև 1990-ականների կեսերը) աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշռի վրա ազդեց նաև կենսաթոշակառու տարիք թևակոխող բնակչության բացարձակ թվի ավելանալը։ Այդ տարիներին կենսաթոշակային տարիք մուտք գործեց 30-ականներին ծնված սերունդը, որը բացարձակ նշանակությամբ բավականին մեծ թիվ էր կազմում։

Երկրորդ, աշխատանքային տարիքի բնակչությունը նվազում է նաև այդ տարիքում բնական կորստի (մահվան) պատճառով։ Հայաստանում աշխատանքային տարիքում մահացությու-

նը շատ ցածր է և էական ազդեցություն չի թողնում նրա թվակազմի նվազման վրա: Ինչ վերաբերում է աշխատանքային տարիքի աշխատունակ բնակչությանը, ապա դրանց թիվը նվազում է նաև արտադրական վնասվածքների, աղետների և այլ ողբերգական դեպքերի հետևանքով, երբ մարդիկ կորցնում են աշխատունակությունը, զրկվում կյանքից:

Երրորդ, աշխատանքային տարիքի բնակչության և, ընդհանրապես, աշխատանքային ռեսուրսների թիվը նվազում է նաև արտագաղթի պատճառով:

Հայաստանում վերջին տարիների ընթացքում արտագաղթի ապպարեզում դրսևորվել են հակադիր միտումներ: Խիստ ավելացել է արտասահմանյան երկրներ արտագաղթողների թիվը. թեև Ադրբեջանից բռնագաղթված, ինչպես նաև Խորհրդային Միության նախկին հանրապետություններից Հայաստան ներգաղթած բնակչության թիվը բավականին մեծ է:

Աշխատուժի վերարտադրության հաջորդ փուլը **աշխատանքային ռեսուրսների բաշխումն է:** Տվյալ դեպքում հասարակական արտադրության մասնակիցները բաշխվում են երկրի տարածքում՝ առանձին բաղարներում և գյուղական բնակավայրերում, տնտեսության տարբեր ճյուղերի միջև, ինչպես նաև ըստ զբաղմունքի առանձին բնաբավառների:

Աշխատանքային ռեսուրսների բաշխումը մեծ փոփոխություններ է կրել և կրի Հայաստանում մասնավորեցման և ապատուրանացման հետևանքով: Օրինակ, [illegible] զբաղվածների ճիշտ գերակշռությունը ընդգրկված էր հանրային ոլորտում՝ պետական ձեռնարկություններում և կոլտնտեսային արտադրության մեջ: Հողի և գյուղատնտեսության այլ արտադրամիջոցների, արդյունաբերական, առևտրի, հասարակական սննդի և այլ ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների մասնավորեցումները հանգեցրել են և այսուհետև կտանեն մասնավոր և կոոպերատիվ սեկտորում զբաղվածության շեշտակի ավելացմանը՝ ի հաշիվ պետական սեկտորում դրա խիստ կրճատման:

Աշխատանքային ռեսուրսների քանակական փոփոխությունը տեղի է ունեցել ոչ միայն դրանց թվակազմի, այլև բաշխման կառուցվածքի փոփոխության հետևանքով:

Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության **վերջին փուլը** նրա **սպառման կամ օգտագործման** փուլն է: Աշխատուժը սպառվում է արտադրության մեջ, այսինքն՝ աշխատանքի գործընթացում: Բայց աշխատուժի վերարտադրության մեջ այս փուլը երկակի դեր է խաղում: Նախ, աշխատանքի ընթացքում մարդը փոխհարաբերության մեջ է մտնում բնության հետ: Աշխատանքի գործիքների օգտագործմամբ նա ձևափոխում է աշխատանքի առարկաները և դրանց տալիս է այն տեսքը, ինչ նախապես ծրագրված է իր ուղեղում:

Երկրորդ, ինչպես արդեն հիշատակվել է, աշխատուժի սպառման ընթացքում մարդը սիաժամանակ բարձրացնում է իր որակավորումը, կուտակում որոշակի փորձ, ձեռք բերում հմտություն, հարստացնում գիտելիքները, կատարելագործում աշխատանքի գործիքները, ավելի խնայողական է օգտագործում աշխատանքի առարկան, ավելի լավ է կազմակերպում իր աշխատանքը և այլն: Ուստի աշխատուժի վերարտադրության այս փուլը միաժամանակ որակյալ աշխատուժի արտադրության, նրա վերարտադրության ու զարգացման փուլ է: Այդ իմաստով աշխատուժի սպառման փուլը կարծես թե մասնակիորեն միահյուսվում կամ համընկնում է հասարակական ամբողջական արտադրանքի արտադրության փուլի հետ: Թեև անժխտելի է, որ աշխատուժի վերարտադրությունը հիմնականում տեղի է ունենում արտադրության գործընթացից դուրս:

Մինչ աշխատուժի սպառվելը, այն պետք է անցնի փոխանակման փուլով: Փոխանակության փուլը աշխատուժի առուծախի գործընթացն է: Վերարտադրության այդ փուլի գոյությունը պատմական զարգացման արդյունք է և կապված է զարգացած շուկայական հարաբերությունների հետ: Ոչ զարգացած շուկայական հարաբերությունների պայմաններում աշխատուժի վերարտադրության այս փուլում առուծախի օբյեկտ են դառնում ոչ թե աշխատուժը, այլ նրա կրողը կամ նրա արտադրած արդյունքները:

Մինչ որևէ բան վաճառելը, այն պետք է տնօրինել: Աշխատուժով օժտված ստրուկն այդ ուժի տնօրինողը չէր, քանի որ պատկանում էր տիրոջը: Եվ եթե ստրկատերը ստրուկի աշխատուժը օգտագործելու կարիքը չուներ, ցանկացած դեպքում

նրան վաճառում էր: Վաճառքի օբյեկտը դառնում էր ոչ թե աշխատուժը, այլ անձը՝ ստրուկը: Վաճառվում էին նաև ստրուկների աշխատանքով ստեղծված արդյունքները: Այդպես էր նաև ճորտ գյուղացին: Նա նույնպես զրկված էր իր աշխատուժը տնօրինելու իրավունքից: Կալվածատիրոջ հողակտորի վրա ապրող ճորտ գյուղացին հողակտորի և այլ արտադրամիջոցների հետ միասին դառնում էր առուծախի օբյեկտ: Վաճառքի էին հանվում նաև գյուղերը՝ իրենց բնակիչներով:

Որպեսզի աշխատուժը կրողը տնօրինի այն և վաճառելու իրավունք ունենա, առաջին հերթին պետք է իրավապես ազատ լիներ, և ապա՝ զուրկ արտադրության միջոցներից: Իրավական այդ ազատությունը մարդը ստացավ կապիտալիզմի օրոք: Դրանով իսկ նա դարձավ իր աշխատուժի տնօրենը, իր ցանկությամբ այն գործադրելու, ուտի և վաճառելու լիակատար իրավունքով: Աշխատուժի տիրոջ և գնող կողմերի համաձայնությամբ այն վաճառվում է ժամանակավորապես: Այսինքն, ի տարբերություն մնացած ապրանքների, աշխատուժը տիրոջից օտարվում է ոչ թե ընդմիշտ, այլ ժամանակավորապես: Հակառակ դեպքում նրա «կրող»ն ընդմիշտ կզրկվի աշխատուժը տնօրինելու իրավունքից և կվերածվի ստրուկի, աշխատուժի փոխարեն վաճառքի օբյեկտ կդառնա ինքը:

Հայաստանում մասնավորեցումների և իրավական ազատության հետևանքով «Զբաղվածության մասին օրենքով» յուրաքանչյուրն իր պատկանելությունը՝ աշխատունակությունը, ազատորեն տնօրինելու իրավունք ստացավ: Աշխատուժը վաճառելու կարիք ունեցողները վարձու աշխատանքներում ընդգրկվելու նպատակով իրենց պատկանելությունը ժամանակավորապես օտարում են, այսինքն վաճառում են գործատուներին: Այսպիսով, աշխատանքի շուկան երկու հակադիր ուժերի՝ աշխատուժը տնօրինողների և այն գնողների դիալեկտիկական միասնությունն է: Հարաբերություններն այստեղ պտտվում են աշխատուժի գնի, աշխատանքի պայմանների, սոցիալական և այլ խնդիրների շուրջը: Դա տեղի է ունենում մրցակցային պայքարում: Հայաստանում անհավասար իրավիճակ է ստեղծվել աշխատուժ վաճառողների և այն գնողների միջև: Աշխատուժի առաջարկը բարձր է, աշխատատեղերը՝ քիչ: Արդյունքում՝ աշ-

խատանք որոնողները անընդհատ փնտրտուքի մեջ են, գնորդները կարող են կատարել լայն ընտրություն:

Մնացած բոլոր ապրանքների նման, աշխատանքի շուկայում գոյանում է աշխատուժի գինը, որը Հայաստանում շատ ցածր է: Դրա հիմքում ընկած է աշխատուժի ցածր արժեքը: Վերջինս բացատրվում է հանրապետության տնտեսական զարգացման և աշխատանքի արտադրողականության չափազանց ցածր մակարդակով: Գնի վրա ազդում են նաև աշխատուժի պահանջարկի ու առաջարկի անհամաչափությունը, երբ առաջարկը շատ է գերազանցում պահանջարկին, բացահայտ և թաքուն գործազրկության մեծ մասշտաբները և այլ գործոններ:

Ուստի ապրանքային շուկայի նման, աշխատանքի շուկայում նույնպես գները շեղվում են արժեքից, նայած առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությանը: Բայց ի տարբերություն այլ ապրանքների, աշխատուժի գնի խիստ ցածր մակարդակը պայմանավորված է մշտապես նրա բարձր առաջարկով, գործազրկության առկայությամբ, հակամենաշնորհ միջոցառումների բացակայությամբ: Եվ քանի որ Հայաստանում աշխատանքի շուկան խիստ գերհագեցած է, աշխատուժի տնօրենը այն առաջարկում է արժեքից տատանապատիկ ցածր գներով, այն դեպքում, երբ աշխատուժը գնող գործատուները ունեն ցածր գներով հարուստ ընտրություն կատարելու մեծ հնարավորություններ:

Մասնավորեցումների և ապապետականացման գործում թույլ տրված կամայականությունների, կոպիտ սխալների և թողտվության հետևանքով պետությունն իրականում կորցրեց աշխատուժի գնի վրա ազդելու իր մենաշնորհը:

2. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը լինում է երկու տեսակ՝ պարզ և ընդլայնված:

Աշխատուժի պարզ վերարտադրությունն ամենից առաջ ենթադրում է արտադրության մեջ ծախսված աշխատունակության նախկին մակարդակի վերականգնում՝ անփոփոխ չափերով: Այն իրականացվում է արտադրության նախկին տեխնիկա-

կան բազմի պայմաններում: Պարզ վերարտադրությանը բնորոշ է մասշտաբների կայունությունը, այսինքն՝ աշխատողների թվի, նրանց մասնագիտական որակական կազմի անփոփոխ մակարդակը: Դա, նախ, անհատի վերարտադրությունն է որպես աշխատուժը կրողի: Նա պետք է վերականգնի ու պահպանի իր աշխատունակության նախկին մակարդակը: Երկրորդ, դա հավաքական աշխատունակության վերարտադրությունն է, երբ հասարակական արտադրությունից տարբեր պատճառներով դուրս եկած աշխատողները փոխարինվում են հավասար քանակությամբ և միևնույն որակական կազմ ունեցող նոր սերնդի մարդկանցով:

Աշխատուժի պարզ վերարտադրության ժամանակ հավաքական աշխատունակության մասնակի կորուստը վերականգնվում է նաև զբաղվածների որակավորումը բարձրացնելու միջոցով: Վերջինս կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ հասարակության հավաքական աշխատունակության մեծությունը մնում է անփոփոխ, այսինքն՝ հասարակական արտադրությունից դուրս եկած աշխատողները փոխարինվում են թվով ավելի քիչ, բայց որակական ավելի լավ ցուցանիշներ ունեցող մարդկանցով:

Աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը ենթադրում է աշխատունակ բնակչության աշխատունակության ինչպես մասնակի, այնպես էլ լրիվ կորստի վերականգնում ոչ թե նախկին, այլ ավելի մեծ մասշտաբներով: Դա իր արտահայտությունն է գտնում աշխատողների թվակազմի ավելացման և որակական ցուցանիշների բարձրացման մեջ:

Գոյություն ունի աշխատանքային ռեսուրսների ընդլայնված վերարտադրության երկու տեսակ՝ էքստենսիվ և ինտենսիվ:

Էքստենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության դեպքում հասարակական աշխատունակությունն աճում է աշխատողների թվակազմի ավելացման հաշվին: Ավելացող աշխատանքային ռեսուրսները տեսականորեն բնութագրվում են այն նույն մասնագիտական որակական կազմով, նույն տեխնիկական զինվածությամբ, աշխատում են նույն արտադրողականությամբ, ինչպես որ նախկին աշխատողներն էին: Վերարտադրության այս տեսակն իրականացվում է արտադրության անփո-

փոխ տեխնիկական մակարդակի պայմաններում: Դա նշանակում է, որ աշխատողների ավելացող թվին հարմարատասխան ավելանում են նաև հիմնական արտադրական ֆոնդերը: Վերջիններիս տեխնիկական չափանիշները սկզբունքորեն որևէ փոփոխության չեն ենթարկվում:

Հայաստանի Հանրապետությունում հողի և գյուղատնտեսության այլ արտադրամիջոցների մասնավորեցումն ուղեկցվեց գյուղատնտեսության մեջ աշխատանքային ռեսուրսների խիստ էքստենսիվ վերարտադրությամբ: Հողատեր դարձած աշխատողների թիվն ավելացավ նրանց տեխնիկական զինվածության նույնիսկ անկման պայմաններում: Վերարտադրության էքստենսիվ ձևն արտահայտիչ դարձավ նաև մինչ այդ հողագործության հետ բնավ առնչություն և մասնագիտական համապատասխան որակավորում չունեցող մարդկանցով, որոնք տնտեսության այդ ոլորտներից տեղափոխվեցին գյուղատնտեսություն:

Աշխատուժի վերարտադրությունը պատմական առանձին ժամանակահատվածներում հնարավոր է, որ իրականացվի միայն նեղացված ձևերով: Այդպես է լինում այն դեպքերում, երբ կրճատվում է աշխատողների թիվը, փոփոխվում են նրանց որակական ցուցանիշները, իջնում է աշխատանքի արտադրողականությունը, պակասում է արտադրված ներքին համախառն արդյունքը: Դա, օրինակ, տեղի ունեցավ Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերում, արտանավթում, շինարարության և այլուր:

Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության էքստենսիվ ձևը հիմնված է գիտատեխնիկական առաջընթացի վրա: Աշխատողների թվաքանակի և արտադրական կարողությունների աճն ուղեկցվում է որակական փոփոխություններով: Փոխվում է նաև աշխատողների մասնագիտական-որակական կազմը: Հիմնական արտադրական ֆոնդերի համեմատ զբաղվածների ավելի դանդաղ աճը (կամ նվազումը) հանգեցնում է ֆոնդազինվածության և աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրվող հասարակական ամբողջական արդյունքի ավելացման:

Աշխատուժի ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության պայմաններում էականորեն կարող են փոխվել աշխատանքային ռեսուրսների բաշխման համամասնությունները ժողովրդական տնտեսության ճյուղերի, գբաղմունքի տարբեր բնագավառների միջև: Դա որոշակի ազդեցություն է ունենում աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների վրա:

Աշխատուժի ինչպես պարզ, այնպես էլ ընդլայնված վերարտադրությունն ունի քանակական և որակական արտահայտություն: Որակյալ աշխատուժի վերարտադրությունն արտադրողական ուժերի զարգացման անընդհատ վերելքն ապահովող կարևոր պայմաններից մեկն է: Հավաքական աշխատուժի որակական աճը հանգեցնում է ավելի մեծ տնտեսական արդյունքների, քան քանակականը: Եթե աշխատողների թվաքանակի ավելացումն առաջ է բերում նաև սպառող բնակչության ավելացում, ապա նման հետևանք չի ունենում աշխատուժի որակական աճը: Վերջինս, սակայն, պահանջում է որակավորման համար պահանջվող լրացուցիչ ծախսեր, աշխատողների ֆիզիկական զարգացման և աճող հոգևոր պահանջմունքների բավարարման նոր միջոցներ:

Աշխատուժի քանակական և որակական վերարտադրությունը միմյանցից մեկուսացված գործընթացներ չեն: Հասարակության բնականոն զարգացման պայմաններում աշխատողների քանակական փոփոխությունը անհրաժեշտորեն ուղեկցվում է որակյալ աշխատուժի վերարտադրմամբ: Աշխատունակ բնակչության քանակական ամեն մի համալրում միաժամանակ նոր որակ է: Սերունդները իրար են հաջորդում ժամանակի ընթացքում, երբ հասարակական արտադրության ամեն մի նոր ժամանակաշրջանին համապատասխան ստեղծվում են աշխատանքի նոր գործիքներ, որոնք պահանջում են նոր որակավորում ունեցող աշխատողներ: Գիտատեխնիկական առաջընթացը պայմանավորում է արտադրության թե՛ իրային և թե՛ անձնական տարրերի որակական թռիչքը: Եվ քանի որ հասարակական արտադրությունն անընդհատ զարգանում է, յուրաքանչյուր տվյալ ժամանակաշրջանում այն ուղեկցվում է որակավորման հանդեպ ցուցաբերվող նոր պահանջներով, նրա մի այնպիսի նոր որակի

անհրաժեշտությամբ, որը համապատասխանի աշխատանքի ու արտադրության կազմակերպման, գիտության ու տեխնիկայի զարգացման տվյալ մակարդակի պահանջներին:

Հասարակության աշխատանքային ռեսուրսները համալրող յուրաքանչյուր նոր սերունդ հասարակական արտադրություն մուտք է գործում նրա պահանջները բավարարող գիտելիքների նոր մակարդակով: Այդ իսկ պատճառով գիտատեխնիկական առաջընթացը կախված է նաև արտադրության գործիքների կատարելագործման մակարդակի և բանվորների որակավորման համապատասխանության աստիճանից, ինչպես նաև այն ժամանակահատվածի կրճատումից, որն ընկած է աշխատանքի նոր գործիքներ ստեղծելու և դրանք օգտագործելու համար որակյալ կադրեր պատրաստելու միջև:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

Նախքան աշխատանքային ներուժի մասին խոսելը, անհրաժեշտ է անդրադառնալ «ներուժ» հասկացության ընդհանուր բնութագրությանը:

Աշխարհում գոյություն ունեն հարուստ և աղքատ երկրներ: Ամենից առաջ դա բացատրվում է ամեն մի երկրում պատմականորեն ձևավորված արտադրողական ուժերի զարգացման, հասարակական արտադրության կազմակերպման, կառավարման և այլ երկրների հետ ունեցած տնտեսական սերտաճման ձեռք բերած մակարդակով: Բայց դա բոլորը չէ: Շատ բան կախված է նաև այդ երկրներից յուրաքանչյուրի ռեսուրսային ներուժից: Վերջիններս հանդես են գալիս բնական հարստությունների՝ հանքահումքային, վառելիքա-էներգետիկ, հողային, ջրային և կենսավերականգնողական (ռեկրեացիոն) ռեսուրսների, ինչպես նաև աշխատանքային ներուժի տեսքով:

Հասարակության տրամադրության տակ գտնվում են ինչպես ռեսուրսային, այնպես էլ տնտեսական հնարավորություններ (ներուժ): Ռեսուրսային ներուժն ընդգրկում է տվյալ երկրների բացահայտված բնական հարստությունների և կազմավորվող աշխատանքային ռեսուրսների ամբողջությունը: Ինչ վերաբերում է տնտեսական ռեսուրսներին, ապա դրանք ար-

տանհայտում են հասարակության արտադրական տնտեսական համակարգի ձեռք բերած մակարդակը: Տնտեսական ռեսուրսների կարևորագույն աղբյուրը հասարակական արտադրությունն է:

Ռեսուրսային ներուժը կարելի է գնահատել թե՛ լայն և թե՛ նեղ առումով:

Լայն առումով գնահատումն ընդգրկում է ռեսուրսային ներուժի այն բոլոր տարրերը, որոնք հասարակական արտադրության մեջ վերամշակվելով վերածվում են վերջնական ժողովրդատնտեսական արդյունքների կամ տնտեսական ռեսուրսների: Օրինակ, հանքանյութի հարստացման շնորհիվ ստացվում է պատրաստի վերջնական արդյունք: Դրա որոշ մասը վերարտադրության ընթացքում կարող է դառնալ արտադրության հաջորդ փուլի ելակետ, այսինքն՝ հանդես գալ որպես տնտեսական ռեսուրս:

Ռեսուրսային ներուժը նեղ բովանդակությամբ նյութական արտադրություն կամ ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ բազմազան բաղադրիչների՝ հումքի, նյութերի, սարքավորումների, մեքենաների, աշխատուժի և այլնի զանգվածի միասնությունն է: Որոշակի արտադրական տեխնոլոգիայի շրջանակներում աշխատանքի գործիքների օգնությամբ սարքը հումքի և նյութերի [illegible] արարում է որևէ նոր ապրանք: Դրանք [illegible] կարգավորող տարրերը [illegible] արտաքին տեսքով, կառուցվածքով [illegible]:

Բացի տնտեսական ռեսուրսներից, այնպես էլ ռեսուրսային ներուժը կազմավորվում են որոշակի տարրերից: Այդ բաղադրիչ տարրերը երկու դեպքում էլ օրենք նույնն են: Բացի տարբերությունն տնտեսականի, ռեսուրսային ներուժն ընդգրկում է նաև բնական ռեսուրսները: Թեև վերջիններս տնտեսական ռեսուրսների տարրը չեն, սակայն հասարակության տնտեսական ռեսուրսները կազմավորվում են դրանց հիման վրա:

Հասարակության ռեսուրսային ներուժի առաջին կարևոր տարրը կամ բաղադրիչը բնական ռեսուրսներն են: Երկրորդ տարրը հասարակական արտադրությունն է, որտեղ վճռական դերը պատկանում է բնակչությանը և մարդկային աշխատան-

քային ռեսուրսներին: Վերջիններիս օգտագործման հիման վրա գոյանում է ամեն մի երկրի աշխատանքային ներուժը:

Ռեսուրսային ներուժի և տնտեսական ռեսուրսների մյուս կարևոր տարրը նյութական ռեսուրսներն են: Դրանք գոյանում են նյութական արտադրության ընթացքում: Հասարակական արտադրության կազմակերպման և մարդկային կենսագործունեության շնորհիվ ստեղծվում և կուտակվում են նոր նյութական ռեսուրսներ: Բացի ազգային հարստության մաս, դրանք հանդես են գալիս հիմնական արտադրական, ոչ արտադրական և շրջանառու ֆոնդերի, ապրանքային պաշարների, ինչպես նաև բնակչության անձնական ունեցվածքի տեսքով:

Հասարակության ռեսուրսային ներուժի մեջ չափազանց կարևոր դեր է պատկանում ֆինանսական ռեսուրսներին: Դրանք այն միագումար դրամական միջոցներն են, որոնց շնորհիվ գոյանում կամ կազմավորվում է կենտրոնացված և ապակենտրոնացված ֆինանսական համակարգը:

Համաշխարհային արդի գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում վճռական խնդիրներ են լուծում նաև լրատվական ռեսուրսները: Ռեսուրսների այս խումբը նախ և առաջ ընդգրկում է գիտատեխնիկական տեղեկատվության չնյութացված արժեքները՝ գիտելիքները և կրթական ներուժը, ինչպես նաև մշակութային արժեքները և գեղագիտական տեղեկատվությունը:

Այժմ տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում այդ ներուժի հիմնական տարրերից յուրաքանչյուրը:

Ամեն մի երկրի ռեսուրսային ներուժի հիմքը առաջին հերթին ձևավորվում է նրա բնական հարստություններով: Բնական ռեսուրսների աղբյուրը բնությունն է, մեզ շրջապատող բնական միջավայրը: Դրանք ընդերքի հարստություններն են՝ օգտակար հանածոները, ջրային, կենսավերականգնողական և հողային ռեսուրսները:

Օգտակար հանածոներն ընդգրկում են երկրի հանքանյութային, վառելիքաէներգետիկ ռեսուրսները, որոնք չվերարտադրվող հարստություններ են: Իրենց արդյունահանվելու և օգտագործվելու համեմատ այդ ռեսուրսները ժամանակի ընթացքում անհետանում են կամ վերարտադրության ընթացքում վերածվում

ռեսուրսների այլ տեսակների: Օրինակ, հանքաքարը վերածվում է մետաղի մի որևէ տեսակի, իսկ դրանից պատրաստում են բազմատեսակ մեքենաներ, հաստոցներ, սարքավորումներ և այլն: Նավթը, ածուխը, վառելիքի այլ տեսակներն այրման միջոցով կորցնում են իրենց բնական տեսքը և, վերածվելով էներգիայի այլ աղբյուրների, անհետանում:

Ջրային ռեսուրսներն ընդգրկում են օվկիանոսները, ծովերը, լճերը, գետերի ցանցը, ստորգետնյա ջրերը, ջրամբարները և այլն:

Կենսավերականգնողական ռեսուրսները բնակլիմայական պայմաններն են (արեգակնային էներգիան, օդի միջին ջերմաստիճանը), ռելիեֆի ձևերը, բուսական և կենդանական աշխարհը, հանքային բուժիչ ջրերը, առողջարանների և տուրիստական օբյեկտների ցանցը և այլն:

Հողային ռեսուրսները գյուղատնտեսական մշակելի հողատարածություններն են, արտադրական օբյեկտների ու բնակարանների, խճուղիների, կամուրջների զբաղեցրած և օգտակար հանածոներ պարունակող հողերը:

Ռեսուրսային ներուժը հասարակության տրամադրության տակ գտնվող պաշարների ամբողջությունն է: Ամեն մի երկրի բնական ռեսուրսների ներուժն ընդգրկում է դրանց այն ծավալը, որը համապատասխանում է տնտեսության պահանջներին: Որևէ երկրի ռեսուրսային ներուժի պաշարները գնահատվում են ըստ գոյացման առանձին աղբյուրների և ուղղությունների: Հաշվի են առնվում արդեն հասարակության տրամադրության տակ գտնվող և բնության մեջ գոյություն ունեցող առկա ռեսուրսները, ընթացիկ և հեռանկարային ժամանակաշրջանում այդ ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու հնարավորությունները: Տվյալ դեպքում նկատի են առնվում նաև առաջիկայում, հնարավոր հեռանկարում, այդ ռեսուրսների օգտագործման մասշտաբներն ընդարձակելու և նոր աղբյուրներով համալրելու հնարավոր ուղղությունները: Օրինակ, օգտակար հանածոների ներուժը որոշելիս նկատի են առնվում ինչպես հանգամանորեն հետազոտված և շահագործվող հանքերը, այնպես էլ այն հանքերը, որոնց վերաբերյալ կան միայն նախնական գնահատումներ: Ճիշտ այդպես աշխատանքային ռեսուրսների ներուժը գնա-

հատելիս առկա աշխատունակ բնակչության հետ միասին նկատի է առնվում ապագա աշխատունակ բնակչության թվակազմը:

Հեռանկարային պաշարները գնահատելիս նկատի չեն առնվում այն պաշարները, որոնք տվյալ պահին և մոտ ապագայում որևէ ձևով մշակման ենթակա չեն: Գրականության մեջ, որպես օրինակ, հիշատակվում են ոսկու պաշարները: Այդ պաշարները գնահատելիս հաշվի չեն առնվում դրանց առկայությունը ծովերի և օվկիանոսների հատակում: Չէ՞ որ այժմյան և մոտ ապագայի տեխնիկայի և տեխնոլոգիայի պայմաններում այդ պաշարներն արդյունահանման ենթակա չեն:

Բնական ռեսուրսները սահմանափակ են: Հենց այդ սահմանափակությունն էլ որոշակի ազդեցություն է թողնում ցանկացած երկրի զարգացման ընթացքի, նրա տնտեսական ներուժի աճի վրա:

Բնական ռեսուրսները տնտեսական ռեսուրսների ընդլայնման հիմքն են, վերջիններիս աճի կարևոր նախադրյալը: Արդյունահանվելու և տնտեսական շրջանառության մեջ ընդգրկվելու համեմատ դրանք աստիճանաբար վերածվում են տնտեսական ռեսուրսների: Ռեսուրսային ներուժի նոր աղբյուրները գոյանում, հին աղբյուրները համալրվում, հասարակական ամբողջական արդյունքի արտադրության տեմպերն արագանում են այդ ռեսուրսների տնտեսական իրացման համար համապատասխան նախադրյալներ ստեղծելու միջոցով: Դրանց նոր աղբյուրների բացահայտման և հին աղբյուրների ընդլայնման շնորհիվ հնարավոր է դառնում կանխորոշել հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները:

Հասարակության տնտեսական առաջընթացի պատմությունը միաժամանակ ռեսուրսային ներուժը տնտեսականի վերածելու պատմությունն է: Այդ զարգացման առանցքը արտադրողական ուժերի ձեռք բերած մակարդակն է: Ամբողջության մեջ տնտեսական ռեսուրսների ծավալն ու կառուցվածքը պայմանավորված են տնտեսական զարգացման իրական հնարավորություններով:

Այս բոլորից հետևում է, որ հասարակության ռեսուրսային ներուժի մեծությունը կամ ծավալը պայմանավորված է ոչ միայն տվյալ երկրում բնական և աշխատանքային ռեսուրսների առ-

կայությամբ, այն դրանք տնտեսական շրջանառության մեջ իսկ-ամենորեն ընդգրկելու և օգտագործելու համար ձևավորված արտադրական-տնտեսական և կառավարման համակարգով:

Որպես օրինակ կարելի է վկայակոչել Ճապոնիան: Այդ երկիրը գրեթե զուրկ է ընդերքի հարստություններից, բնութագրվում է հողային, վառելիքաէներգետիկ ռեսուրսների թույլ բազայով: Բայց արտադրողական ուժերի զարգացման և հասարակական արտադրության կազմակերպման բարձր մակարդակի շնորհիվ Ճապոնիան հասել է վիթխարի տնտեսական արդյունքների: Չափազանց մեծ են նվազ բնական ռեսուրսներով բավելի խոշոր տնտեսական արդյունավետություն ապահովելու, այդ ռեսուրսներն ավելի շատ և բազմազան տնտեսական ռեսուրսների վերածելու նրա հնարավորությունները:

Հասարակության ռեսուրսային ներուժը շատ առաձգական և ժամանակի ու տարածության մեջ փոփոխվող մեծություն է: Մարդկային հասարակության զարգացման արշալույսին արտադրողական ուժերը բնութագրվում էին զարգացման չափազանց ցածր մակարդակով: Տնտեսական ռեսուրսները գոյանում էին որսորդության, ձկնորսության, վայրի պտուղների հավաքման միջոցով: Հետագայում, նստակյաց կյանքի անցնելուն համընթաց, աստիճանաբար անցում է կատարվում անասնապահության և հողագործության: Բուսական աշխարհը դառնում է անասնակերերի աղբյուր, հողը՝ մշակման օբյեկտ:

Հասարակական աշխատանքի բաժանումը, ապրանքափոխանակային հարաբերությունների ծագումն ու զարգացումը, արհեստների երևան գալը, արդյունաբերական հեղաշրջումը, գիտության ու տեխնիկայի առաջընթացն անչափելիորեն ընդլայնեցին հասարակության ռեսուրսային հիմքը: Բայց հանքերի հետ մեկտեղ շրջանառության մեջ մտան ընդերքի ավելի խոր հանքերը, հարուստ պաշարներով բնութագրվող հանքերի հետ մեկտեղ՝ ավելի աղքատիկ պաշարներ ունեցողները: Անհրաժեշտ թռիչք կատարվեց տնտեսական ռեսուրսների վերամշակման տեխնիկայի ու տեխնոլոգիայի ասպարեզում: Դրանք վճռական դեր խաղացին նաև հանքանյութերի կորզման նոր եղանակների մշակման և դրանց արդյունավետությունը բարձրացնելու գործում: Այդ բոլորն ուղեկցվեցին նոր նյութերի աղբյուր-

ների հայտնագործման և դրանց արդյունքների նկատմամբ պահանջմունքների մշտական աճով:

Հասարակության առաջընթացի համեմատ ռեսուրսների որոշ մասի դերը նվազում կամ անկում է ապրում, մյուսներինը՝ մեծանում: Հացահատիկի մշակության և այգեգործության զարգացումը հանգեցրին հատապտուղների, ընտանի կենդանիների բուծումը՝ որսորդության դերի անկմանը, էներգետիկ ռեսուրսների զարգացումը նպաստեց էներգիայի նորանոր աղբյուրների հանդես գալուն: Էլեկտրական էներգիայի շնորհիվ ձեռքով գործի դրվող հաստոցները փոխարինվեցին ավտոմատ հաստոցներով, երևան եկան վերջնական արդյունքի ստացման միջանկյալ նոր փուլերը, բազմաթիվ բնական ռեսուրսները փոխարինվեցին արհեստականով և այլն, և այլն: Վերջապես հանդես եկան արտադրության համալիր մեքենայացման ու ավտոմատացման, ինչպես նաև դրանցով պայմանավորված ռոբոտատեխնիկայի համակարգերը: Ավտոմատ կառավարման համակարգն ընդգրկեց ոչ միայն բուն տեխնոլոգիական գործընթացները, այլև դրանց վերահսկումն ու կառավարումը, որոնք կատարվում են հաշվիչ, վերլուծիչ և կարգավորող մեքենաներով: Այս բոլորն ընդլայնեցին տնտեսավարման ռեսուրսների ծավալն ու անվանացանկը, փոխեցին շատ հումքանյութերի նշանակությունը, դրանց ապահովման կառուցվածքը: Ոմանք չորրորդ աստիճանի վերջնական արդյունքի ստացման միջանկյալ փուլերը:

Ամենահետաքրքիրը ինչ է իրենից ներկայացնում աշխատանքային ներուժ հասկացությունը:

«Աշխատանքային ռեսուրս» հասկացության հետ մեկտեղ տնտեսագիտական գրականության մեջ գործածվում է նաև «աշխատանքային ներուժ» հասկացությունը: Բայց այդ երկու կատեգորիաներն իրար հետ չպետք է շփոթել: Դրանց միջև գոյություն ունեն ակնհայտ տարբերություններ:

Աշխատանքային ներուժը երկրի հավաքական կամ ամբողջական աշխատունակությունն է, մինչդեռ աշխատանքային ռեսուրսները երկրի մասշտաբով աշխատունակության կրողներն են: Աշխատանքային ռեսուրսների թիվը աշխատանքային ներուժի քանակական մեծությունը բնութագրող տարրերից մեկն

է: «Աշխատանքային ներուժ» հասկացությունն արտահայտում է աշխատող անհատների աշխատունակության միագումարը:

Աշխատանքային ներուժն ունի քանակական և որակական արտահայտություն:

Ամեն մի երկրում աշխատանքային ներուժի քանակական մեծությունը գոյանում է աշխատանքային ռեսուրսների բացարձակ մեծության (թվակազմի) և նրանց կողմից որոշակի ժամանակահատվածում (դիցուք մեկ տարվա ընթացքում) աշխատած մարդ-օրերի կամ մարդ-ժամերի արտադրյալով: Այդ ցուցանիշն ստանալու համար տարվա ընթացքում մեկ աշխատողի աշխատած մարդ-օրերը կամ մարդ-ժամերը բազմապատկվում են աշխատողների ընդհանուր թվով: Դա աշխատանքային ներուժն արտահայտող էքստենսիվ ցուցանիշն է:

Աշխատանքային ներուժի որակական մեծությունն արտահայտվում է երկրի աշխատանքային ռեսուրսների առողջական վիճակով, ֆիզիկական և հոգևոր զարգացման աստիճանով, նրանց գործունակությամբ, կրթական, մասնագիտական որակավորման և ընդհանուր գաղափարական զարգացման մակարդակով: Դա աշխատանքային ներուժն արտահայտող ինտենսիվ ցուցանիշն է: Ինտենսիվ անը բնութագրող ցուցանիշների համակարգի մեջ մտնող թվարկած ամեն մի գործոն յուրովի է ներազդում աշխատանքային ներուժի վրա:

Աշխատանքային ներուժի ինչպես քանակական, այնպես էլ որակական որոշակիության վրա կոնկրետ ազդեցություն է ունենում ժողովրդագրական գործոնը, և, առաջին հերթին, աշխատանքային ռեսուրսների սեռը և տարիքը: Օրինակ, երկրի պատմական զարգացման առանձին ժամանակահատվածներում աշխատանքային տարիքի բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գերազանցում են կամ կանայք, կամ տղամարդիկ: Երկրորդ համաշխարհային պատերազմը երկար ժամանակ որոշակիորեն ազդեց տղամարդկանց ընդհանուր թվաքանակի վրա: Այդ բոլորով հանդերձ միշտ էլ տղամարդկանց միագումար աշխատանքային ներուժն ավելի մեծ ցուցանիշով է բնութագրվել հենց այն պատճառով, որ նրանց աշխատանքային գործունեության տևողությունը մի քանի տարով գերազանցում է կանանց

աշխատանքային գործունեության տեղողությանը, քանի որ կանայք ավելի շուտ են անցնում կենսաթոշակի:

Ժողովրդագրական գործոնն ազդում է նաև աշխատանքային ներուժի որակական որոշակիության վրա: Օրինակ, տարբեր սեռերի և տարբեր տարիքի մարդիկ բնութագրվում են արտադրական-աշխատանքային գործունեության, կրթական, որակական, մշակութային և մասնագիտական տարբեր ցուցանիշներով: Դա կարելի է ցույց տալ զբաղված բնակչության կրթական մակարդակի օրինակով: Հայաստանում յուրաքանչյուր 1000 զբաղված ի հաշվով բարձրագույն կրթություն ունեցողների թիվը 1989 թվականին 1979 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցել է 51, իսկ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներով՝ 85 մարդով: 1980-ականի սկզբներին Հայաստանում աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության բացարձակ թիվը նվազելու հետևանքով աշխատանքային տարիքի ընդհանուր բնակչության թվակազմում սկսեց գերազանցել «ծերացած» բնակչությունը: Եվ հակառակը, 1990-ականի կեսերից, երբ մեծ չափերով ավելանալով աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությունը, նրա ընդհանուր թվակազմում նախ, ավելացել է երիտասարդությունը, ապա որոշ ժամանակ անց կավելանա ակտիվ աշխատանքային տարիքի բնակչությունը: Սակայն բնակչության մեծ արտագաղթի հետևանքով աշխատանքային ներուժը նվազելու հետ մեկտեղ «ծերացել է»:

Այս երևույթները որոշակի ազդեցություն են գործում աշխատանքային ներուժի ոչ միայն քանակական, այլև որակական որոշակիության վրա: «Ծեր» աշխատանքային տարիքում աշխատանքային ներուժը նվազում է աշխատունակության ավելի ցածր ակտիվության պատճառով: Բայց դրա փոխարեն որոշակի դեր է խաղում փորձը, հմտությունը, որակավորումը և այլն: Երիտասարդների մոտ (16—20 տարեկաններ) բացակայում է աշխատանքային փորձը, հմտությունը, բայց բարձր է նրանց շարժունությունը: Դրանք որոշակիորեն փոխհատուցվում են ֆիզիկական առողջության լավ ցուցանիշների, աշխատանքի հեռանկարի հետ կապված սպասելիքների, աշխատանքում առաջ գնալու, որակավորումը բարձրացնելու նպատակամղվածության, գիտելիքներ ձեռք բերելու, աշխատանքում ծագած շատ բար-

դությունների հաղթահարելու մեծ պատրաստակամության շնորհիվ:

Վերջապես, աշխատանքային ներուժն ավելանում կամ նվազում է նաև աշխատանքային տարիքի բնակչության թվակազմում աշխատունակ բնակչության գործունակ մասի (25—44 տարեկաններ) տեսակարար կշռի փոփոխության հետևանքով: Այդ տարիքի աշխատունակ մարդիկ արդեն ընտրել են իրենց աշխատանքային գործունեության ուղղությունը, և որոշակի է նրանց տեղը կյանքում: Նրանք ստացել են կրթություն, ձեռք բերել մասնագիտություն, համապատասխան որակավորում, հմտացել իրենց աշխատանքում և, որ չափազանց կարևոր է, առողջ են: Աշխատանքային ներուժն ավելանում է հենց այդ տարիքի բնակչության հաշվին:

Ներկա պայմաններում Հայաստանում աշխատանքային ներուժը դրսևորվում է նվազման հայտնի միտում որակական այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են՝ աշխատողների ապատրակավորումը, արտադրությունն ավելի ցածր որակավորում ունեցողներով համալրելը, առողջությունը և այլն:

4 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արդի փուլի համար հատուկ են մի շարք հայտանիշներ, որոնք վկայում են աշխատանքի շուկայի լարված իրավիճակը, աշխատուժի անընդհատ աճող առաջարկի նկատմամբ նվազող պահանջարկը: Դա բնորոշ է ԱՊՀ շատ երկրների[1] և նոր-

[1] Թեմատիկայի շուրջ գրականությունը նոր-նոր է ստեղծվում, բանզի իրական կյանքում աշխատանքի շուկայի ձևավորումն այդի տեսությամբ նորանկախ պետություններում նոր երևույթ է: Հրապարակի վրա են ՌԴ տնտեսագետների կողմից վերջին երեք-չորս տարիների ընթացքում լույս ընծայած առանձին օրեր, գրքույկներ, ամսագրային հոդվածներ: Հարցն ինչ-որ չափով բննարկվում է նաև գործազրկության և այլ թեմաներին նվիրված հրապարակումներում: Հոդվածը շարադրելիս մեզ համար մասնավորապես օգտակար եմ եղել «Рынок труда в России», под ред. К. И. Микульского. М., 1995; Роль женщин в перестройке российской экономики, Вашингтон, 1994; Концепция женской занятости, М., 1994; Рынок труда и социальная политика в центральной и восточной Европе, Переходный период и перспективы, под ред. Н. Барра, Публикация Все-

անկախ պետությունների: Առաջին ուսումնասիրողներ, այդ թվում տողերիս հեղինակը, աշխատանքի շուկայի ձևավորման մասշտաբների վրա ազդող ընդհանուր գործոնների թվին են դասում, օրինակ, բազմաբևեռականության երևան գալը, արտադրության կառուցվածքային փոփոխությունները, շուկայական հարաբերությունների և մրցակցության մեջ ներքաշվելը, համապատասխան շահութաբերություն չապահովող արտադրական օղակների լրիվ կամ մասնակի անհանգացումը, դրանց լուծարումը կամ մասշտաբների նեղացումը, խորհրդային համակարգի փլուզման հետևանքով տարբեր երկրների միջև տնտեսական կոոպերացիոն կապերի խզումը: Ամենուրեք բնորոշ դարձան արտադրության մասշտաբների անկումը, կապիտալ ներդրումների չափերի զանգվածային կրճատումը, աշխատավարձի և ապրանքների գների անընդհատ խորացող ճեղքվածքը, սոցիալական լարվածությունը, բնակչության եկամուտների ձևավորման գործընթացի անկառավարելիությունը և այլն[2]: Այդուհանդերձ ԱՊՀ երկրներում աշխատանքի շուկան դեռ լրիվ չափով ձևավորված չէ, աշխատուժի բարձր առաջարկը չի ուղեկցվում համապատասխան պահանջարկով, մեծ է դրանց միջև անհաշվեկշռվածությունը, իսկ շուկան կարգավորող և շարժիչ ուժերը թույլ են: Աշխատուժի չափազանց ցածր արժեքի պայմաններում անգամ աշխատավարձը չի փոխհատուցում

мирного банка, Чехия, 1994; Учет, оценка, приватизация, Нью-Йорк, 1994; Н. Заславская, Труд, занятость, безработица, М., 1992; С. Белозерова, Социальная политика в сфере труда, М., 1995; тот же: От искусственного дефицита к реальной нехватке рабочей силы, «Российский социально-политический вестник», М., 1995, № 1; Г. Дектяров, Регулирование занятости в условиях массового высвобождения, некоторые неувязки и неточности; там же: Проблемы занятости и безработицы в условиях перехода к рынку, «Российский социально-политический вестник», М., 1995, № 2; Социально-экономическая ситуация в России», «Вопросы экономики», 1994, № 2; Л. Миллер, Проблемы безработицы в Польше; Формы и методы решения, Ж. «Теория и практика управления», 1995, № 3; А. Неспорова, «Тенденции и политика на российском рынке труда», там же, 1996, № 1; «Вопросы статистики», 1995, № 2; «Информационный статистический бюллетень», 1995, № 2; «Теория и практика управления», 1997, № 1 и др.

2 Մանրամասն տե՛ս «Рынок труда в России», с. 3—13.

աշխատուժի ոչ միայն ընդլայնված, այլ նույնիսկ պարզ վերարտադրության համար անհրաժեշտ ծախսերը:

ՀՀ-ում աշխատանքի շուկայի ձևավորման վրա ներազդեցին նաև այդ փուլում Հայաստանին յուրահատուկ մի շարք այլ երևույթներ: Դրանք հանդես եկան որպես հանրապետությունում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի, երկրաշարժի, վառելիքաէներգետիկ ճգնաժամի, չնախապատրաստված, անժամանակ և հախուռն ապապետականացման, ինչպես նաև ժողովրդագրական գործոնների (հատկապես բռնագաղթված բնակչության հոծ զանգվածների առկայության) անմիջական օպերատիվ արձագանք[3]:

Աշխարհաքաղաքական իրավիճակն աշխատանքի շուկայի վրա ազդում է հարևան հանրապետության հետ զինված ընդհարումների և դրանով պայմանավորված շրջափակումների, երկաթուղու ու գազատարի պայթեցումների, ստոր հումքային ռեսուրսները ներկրելու և արտադրված պատրաստի արտադրանքներն այլ երկրներ առաքելու անհնարինության հանող բարդությունների պատճառով:

— երկրաշարժի ազդեցությունը պայմանավորված էր աղետի գոտում տնտեսության կազմակերպմամբ, այն վերականգնելու աշխատանքների ձգձգումով, երկարատև կապիտալ ներդրումների պակասով և այլն,

— վառելիքաէներգետիկ ճգնաժամի ավելի սուր արտահայտվածությունը, որ կապված է նաև ԱԷԿ-ը կանգնեցնելու հետ, հանգեցրեց բազմաթիվ արտադրությունների փակմանը, դրանց մասշտաբների կրճատմանը, թեև Հայաստանում արտա-

---

3 Հայաստանում այդ հարցերի առանձին կողմեր շատ հարևանցիորեն քննարկվում են մեր կողմից հրատարակված մի շարք հոդվածներում. տե՛ս «Трудовые ресурсы и проблемы занятости», «Проблемы теории и практики управления», 1996. № 1. Աշխատանքային ռեսուրսները և դրանց վերարտադրությունը, «Էկոնոմիկա», 1992, հ. 11—12, 1993, հ. 1—2: Ակտիվացնել աշխատանքային ռեսուրսների օգտագործումը շուկայական հարաբերություններին անցնելու պայմաններում, «Էկոնոմիկա», 1993, հ. 9—10: Աշխատանքի շուկայի ձևավորումն և զարգացումը քաղաքականության հիմնահարցերն անցման շրջանում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1997, հ. 1, էջ 22—35: Զբաղվածության քաղաքականությունը, «Էկոնոմիկա», 1997, հ. 1—3, էջ 9—13:

դրության մասշտաբները կրճատվում էին 1988-ի վերջերից: Ղարաբաղյան շարժման օրերին անհարկի փակվեցին շատ արդյունաբերական ձեռնարկություններ: Սկիզբ առան և շարունակական բնույթ էին կրում գործադուլները,

— աշխատանքի շուկայի վրա մեծ ազդեցություն ունեցավ նաև ժողովրդագրական իրավիճակը: Դա պայմանավորված էր երկրաշարժի ժողովրդագրական հետևանքների, աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության չափերի և բնակչության թվաքանակում տնտեսապես ակտիվ աշխատանքային տարիքի մարդկանց տեսակարար կշռի աճի, հարևան հանրապետության հետ հրադադարի հետևանքով զորացրված երիտասարդության առկայությամբ[4],

— աշխատանքի շուկայում լարվածությունն ուժեղացավ տնտեսության հետադիմական կառուցվածքային փոփոխությունների հետևանքով: Առաջին հերթին դա իր արտահայտությունը գտավ ծանր ու թեթև արդյունաբերության ճյուղերի (մեքենաշինության, մետաղաձուլության, կաշեգործության, տեքստիլ և այլն) կազմալուծման մեջ, որոնք հիմնված էին ներկրվող հումքային ռեսուրսների վերամշակման վրա (մետաղ, նավթ, գազ, ածուխ, փայտանյութ, կաշի, տեքստիլի հումքատեսակներ և այլն): Պատճառը միայն տնտեսական կապերի խզումը չէր: Այդ մասին է վկայում, օրինակ, այն, որ ներկայումս գյուղատնտեսական հումքի առկայության պայմաններում դրանք վերամշակող սննդի արդյունաբերության շատ ձեռնարկություններ չեն գործում:

Զարգացած երկրներում ընդլայնվելու սահմանափակ հնարավորություններով օժտված ավանդական արտադրություններից և ճյուղերից ազատվող աշխատուժը ներճյուղային և միջճյուղային վերաբաշխմամբ զբաղմունք է գտնում տեխնոլոգիական տեսակետից առաջադեմ և ընդլայնվող ճյուղերում: Հայաստանում մասնավորեցումները հանգեցրին հակառակ գործընթացի: Արդյունաբերությունից, շինարարությունից, տրանսպորտից, գիտատակրթական համակարգից արտամղվող աշխատուժի որոշ մասը կիրառում է գտնում գյուղատնտեսության մեջ, առևտրում,

---

4 «Էկոնոմիկա», 1996, հ. 1—3, էջ 6—20:

ծառայությունների ոլորտում և շուկայական ենթակառուցվածքի այլ ճյուղերում,

— աշխատանքի շուկայում չափազանց արտահայտիչ է միգրացիայի դերը: 1988 թ. սկսած աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկը մեծապես ավելացավ նաև ցեղասպանության հետևանքով Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների հոծ զանգվածների հաշվին: Դա աշխատուժի ներուժն ավելացրեց ոչ միայն քանակապես, այլև որակապես: Այդ ներուժի մեծ մասը չօգտագործվեց: Փախստականների մեջ մեծ տոկոս էր կազմում Ադրբեջանի քաղաքային բնակավայրերի հայ բնակչությունը, որի մի զգալի մասը մտավորականներ և արհեստավորներ էին: Լավագույն դեպքում նրանք տեղաբաշխվում էին սահմանամերձ գյուղական բնակավայրերում՝ շատ դեպքերում չապահովվելով իրենց մասնագիտական որակավորվածությանը համապատասխանող որևէ հարմար զբաղմունքով և վաստակելու հնարավորությամբ: Մի կողմում երևանիվայր ընկած հողն էր, մյուսում՝ այն մշակելու եղանակներին անծանոթ, տեխնիկական միջոցներից զուրկ, պատրաստակամություն, հակում և հմտություն չունեցող տարեց մարդիկ: Քաղաքաբնակ փախստականների մեծ մասը , նրանք, ովքեր իրենց բնակարանները փոխանակել էին հանրապետության սահմանամերձ և լեռնային շրջանների գյուղական վայրերում, չհարմարվելով տեղի պայմաններին և զբաղմունքին, արտագաղթեցին հանրապետության քաղաքներ և մեծ մասամբ արտասահմանյան երկրներ:

Ժամանակի ընթացքում արտագաղթի որոշիչ պատճառ դարձան և առանձնաբար սուր արտահայտվածություն ստացան սոցիալական լարվածության, մասնավորապես աշխատանքի ասպարեզը նեղանալու հետ ծագող նոր երևույթներ, որոնք ոլորտատույտի մեջ ներքաշեցին նաև Հայաստանի մշտական բնակիչներին.

— ի տարբերություն շատ այլ երկրների Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքի և աշխատուժի պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության լարվածության խորացման վրա որոշակիորեն ազդեց կապիտալի արտահանումը: Այն հայրենիքում բարենպաստ միջավայր չգտնելու, թող-

տվության և անհիշեալության պայմաններում ապարեզ գտավ այլ ափերում՝ իր հետևից մագնիսի նման ձգելով աշխատավոր երիտասարդությանը: Ինվեստիցիաների պակասն իր հերթին հանգեցրեց արտադրության մասշտաբների կծկման և աշխատատեղերի կրճատման՝ աշխատանքի շուկային տալով գերնաագեցած բնույթ՝ ի հաշիվ շարքից դուրս եկած աշխատատեղերի անընդհատ ավելացման: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ նաև այն, որ զանգվածային արտագաղթը մեղմացրել է Հայաստանում գործազրկության ներուժը և աշխատանքի շուկայի լարվածության շատ ավելի սուր արտահայտվածությունը: Առանց այդ էլ, ինչպես կնկատենք, նույնիսկ արտագաղթի մեծ չափերի առկայության պայմաններում գործազրկության մասշտաբները տարեցտարի մեծանում են: Արտագաղթը փոքրինչ մեղմացրել է մայր երկրում բնակչության ապագա խիտ բնեռացումը: Ծոշափելով նաև զանգվածային աղքատության մեջ ընդգրկված որոշ մարդկանց շահերը՝ կասեցրել է բնակչության այդ զանգվածներին թշվառության գիրկը հետելու ընթացքը: Արտագաղթը չնչին չափերով նպաստել է նաև մայր երկրում աշխատանքի շուկայի ակտիվացմանը: Թեև անհնարելի, բայց խթանել է մայր երկրում ձեռներեցության քայլեր ձեռնարկելուն, փոքր գործարարության աշխուժացմանը.

— աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքի վրա մեծ հետք են թողել ապապետականացման և մասնավորեցման գործընթացները: Դրանով իսկ հանդես են եկել մի կողմում մասնավոր գործատուներ, մյուս կողմում՝ աշխատանքի շուկայում իրենց աշխատուժը վաճառողներ: Չափազանց մեծ տոկոս են կազմում առք ու վաճառքով զբաղված վերավաճառողները՝ մանրավաճառության, գյուղատնտեսական մթերքների վերավաճառման օղակներում ընդգրկվածները, որոնց մի զգալի մասն ինքն է գործադրում իր աշխատուժը, այսինքն՝ այն չի դառնում առք ու վաճառքի առարկա: Դրանով իսկ Հայաստանում աշխատանքի շուկան իր վրա դեռևս քաղաքակրթության կնիքը չի կրում:

Գյուղատնտեսության մեջ մասնավորեցումը աշխատուժի շարժունակությունը նվազեցնող և ազգային աշխատանքի շուկայի զարգացումը սահմանափակող գործոն է:

Դրա հետ մեկտեղ գյուղատնտեսության մեջ մասնավորեցումները մի կողմից հանգեցրին աշխատուժի շուկայի նեղացմանը, մյուս կողմից՝ ընդլայնմանը: Բայց աշխատուժի շուկան գյուղում ավելի շատ նեղացավ, քան ընդլայնվեց: Դա տեղի ունեցավ այն պարզ պատճառով, որ սեփականատեր դարձած գյուղացին առայժմ իր հողը ինքն է մշակում, պահում և խնամում իր անասունները: Տվյալ դեպքում աշխատուժը փոխանակության փուլով չի անցնում, բացակայում է դրա առքն ու վաճառքը: Նշանավանդ նշանակություն է ստացել նաև տնտեսություն վարելու բնամթերային ձևը: Այս բոլորը հանգեցրել են աշխատանքի շուկայի նեղացման:

Ֆերմերային տնտեսություններ ստեղծվելու և գյուղատնտեսությունը ինտենսիվ հիմունքներով վարելու համեմատ կստեղծվեն համապատասխան նախադրյալներ գյուղում աշխատանքի շուկայի ընդլայնման համար:

— մասնավորեցումներն աշխատանքի շուկայի վրա ներազդել են նաև ներպետական միգրացիոն գործընթացների հոսքերի ուղղությունները փոխելու միջոցով: Տասնամյակներ շարունակ քաղաքներում բնակչության աճի հիմնական աղբյուրը՝ գյուղը, դարձել է քաղաքներից բնակչություն ընդունող: Գյուղում սեփականատեր դարձած գյուղացու շարժունակությունը իջնելու հետ մեկտեղ հողասեփականատեր դառնալու համար աշխուժացել է քաղաքից գյուղ կատարվող շարժը: Վերջինս բացատրվում է նաև քաղաքներում հանդես եկած սոցիալ-տնտեսական ավելի բարդ իրավիճակներով: Այդ և քաղաքներում բնակարան ունենալու հետ կապված դժվարություններն իրենց ներքին ազդել են գյուղական բնակչության շարժունակության վրա: Հողի սեփականաշնորհումը դանդաղեցրեց նաև սահմանամերձ լեռնային շրջանների դեպի հարթավայրային շրջաններ բնակչության շարժման ընթացքը.

— աշխատանքի շուկան ձևավորվել և գործում է ստվերային տնտեսության ոլորտում, որը ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի կողմից չի հաշվառվում և պետական բյուջեի կազմավորման հետ որևէ առնչություն չունի.

— աշխատանքի շուկայի վրա որոշակի ազդեցություն է թողնում բնակչության ցածր կենսամակարդակը, որի հետևան-

քով լայնորեն աշխատանքային շուկա ներթափանցեցին ընտանիքների անչափահաս անդամները: Սկզբունք է դարձել կրկնակի, եռակի, քառակի զբաղվածությունը: Աշխատատեղերը չեն լրում թոշակառուները, բազմազավակ մայրերը, որոնք չընչին կենսաթոշակով, նպաստով, հումանիտար օգնությամբ հատկացված միջոցներով իրենց գոյությունն ապահովել չեն կարողանում:

Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքում խստորեն նեղացել են վարձու աշխատողների սոցիալական իրավունքների և շահերի պաշտպանության հնարավորությունները: Իրավական օրենսդրական դաշտի բացակայության պայմաններում մասնավորեցումները լայն ասպարեզ բացեցին սեփականատերերի կամայականությունների դրսևորման համար, որը ուժեղացրեց նրանց քմահաճույքներից աշխատողների կախվածությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՈՐԴ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Զբաղվածությունը մարդկանց աշխատատեղերով ապահովվելու և հանրօգուտ աշխատանքային գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար նրանց միջև ստեղծվող հարաբերությունների համակարգն է: Դա աշխատունակ բնակչության ֆունկցիոնալ բնութագրումն է:

Մինչ այդ բնութագրին անդրադառնալը, նկատենք, որ բնակչությունը տարբերվում է նաև իր ֆունկցիոնալ կառուցվածքով: Այս չափանիշներով բնակչությունը բաժանվում է երեք տարիքային խմբերի: Դրանք են՝ անչափահասների, աշխատանքային տարիքի և կենսաթոշակառուների խմբերը:

1989 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվակազմում (3 մլն 304 հազ. մարդ) անչափահասները 32,1, աշխատանքային տարիք ունեցողները 56,2, կենսաթոշակային տարիքի մարդիկ՝ 11,7 տոկոս էին կազմում:

Բնակչության այդ ֆունկցիոնալ կառուցվածքի տարիքային սահմանները որոշվում են իրավական օրենսդրական հիմունքներով: Բազմաթիվ երկրներում անչափահասների տարիքային վերին սահմանն ավարտվում է 13 տարեկաններով: Հայաստանում, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության կազմի մեջ մտնող նախկին հանրապետություններում, անչափահասների տարիքային խումբը եզրափակվում էր 15 տարեկաններով: Ազգային ժողովի որոշմամբ Հայաստանում այդ սահմանն իջեցվեց և ընդգրկում է մինչև 14 տարեկանները:

Անչափահասների տարիքային խմբին հաջորդում է աշխատանքային տարիքի խումբը: Վերջինս ընդգրկում է բնակչության այն մասը, որն օժտված է աշխատունակությամբ, այսինքն՝ այն սերունդը, որն ի վիճակի է գործադրելու իր ֆիզիկական ու մտավոր ունակությունները: Զարգացած շատ երկրներում աշխատանքային տարիքի իրավական սահմաններն սկսվում են 14 և ավարտվում տղամարդկանց համար՝ 65, կանանց համար՝ 62 տարիքային սահմաններով: Նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, աշխատանքային տարիքն ընդգրկում էր 16-ից 59 տարեկան տղամարդկանց (44 տարի) և 14-ից 54 տարեկան կանանց (39 տարի): Ներկայումս այդ սահմանները ՀՀ-ում ընդլայնվել են և ընդգրկում են մինչև 65 տարեկան տղամարդկանց և 63 տարեկան կանանց:

Բնակչության տարիքային հաջորդ խումբն ընդգրկում է կենսաթոշակառուներին: Կենսաթոշակառուների տարիքային խմբի մեջ է մտնում նաև արտոնյալ պայմաններում կենսաթոշակի անցած բնակչությունը (տղամարդիկ՝ 60, կանայք՝ 57 տարեկանից): Դա վերաբերում է այն անձանց, ովքեր աշխատում են վտանգավոր և տաք ցեխերում (քիմիական արտադրություն, մետաղաձուլություն, նավթահանքային արտադրություն, նավարկություն, օդագնացություն և այլն): Դա կարող է վերաբերվել նաև առանձին մասնագետների, որոնք մյուսներից ավելի վաղ տարիքում են կորցնում իրենց մասնագիտական որակավորումը (պարողներ, երգիչներ, զինծառայողներ, ուսուցիչներ և այլն): Հոր և ավելի երեխաներ խնամած մայրերը կենսաթոշակի կարող են անցնել արտոնյալ պայմաններով:

Պետք է տարբերել աշխատանքային տարիքի բնակչությունը աշխատունակ բնակչությունից: Աշխատունակ բնակչության թվակազմը կարելի է որոշել աշխատանքային տարիքի բնակչության ընդհանուր թվից արտոնյալ պայմաններով թոշակի անցնողների, ինչպես նաև 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների թիվը հանելու միջոցով:

Աշխատանքային տարիքն ընդգրկում է որոշակի տարիքային սահմաններ: Մարդն աշխատունակ է դառնում որոշակի տարիքում, երբ հասնում է ֆիզիկական և մտավոր զարգացման

մի այնպիսի աստիճանի, որ կարողանում է նպատակահարմար ձևով գործադրել իր օժտվածությունը, իր ունակությունները: Ամեն մի անհատ աշխատունակությունը կորցնում է դարձյալ որոշակի տարիքում, բայց աշխատունակությունը յուրաքանչյուր կոնկրետ անձի մոտ անցնում է տվյալ երկրում ընդունված իրավական սահմաններից: Մինչդեռ յուրաքանչյուր երկրում աշխատանքային տարիքի ընդունված իրավական սահմանները վերաբերում են բոլորին: Ճիշտ այնպես, երբ շատ երկրներում աշխատանքային տարիքի նվազագույն և վերին սահմանների տարբերությունն ավելի մեծ էր, իսկ Խորհրդային Միությունում ավելի փոքր, բնավ էլ չէր նշանակում, թե այդ երկրներում, իրոք, ֆիզիոլոգիական առումով աշխատունակ են դառնում ավելի վաղ, իսկ աշխատունակությունը կորցնում են ավելի ուշ տարիքում, քան ԽՍՄ-ում: Նման տարբերությունը բացատրվում է ամեն մի երկրում ընդունված օրենսդրությամբ, կրում է իրավական բնույթ և խիստ պայմանական է: Միայն մարդկանց ֆիզիոլոգիական զարգացման օբյեկտիվ պայմաններով չէ, որ որոշվում են աշխատանքային տարիքի իրավական սահմանները: Դրանք կարող են փոփոխվել նաև սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությամբ:

Ներկա պայմաններում մեծ է գիտատեխնիկական առաջընթացի դերը: Դա հանգեցնում է հասարակական արտադրություն մուտք գործելու համար նախնական պատրաստություն ձեռք բերելու հանրորեն անհրաժեշտ ժամանակի փոփոխության: Գիտատեխնիկական առաջընթացը կարող է հանգեցնել նաև աշխատանքային տարիքի նվազագույն սահմանների բարձրացման:

Բնակչության ընդհանուր զանգվածից աշխատանքային (ինչպես նաև աշխատունակ) տարիքն առանձնացնելն ինքնանպատակ չէ: Աշխատանքային տարիքի աշխատունակ բնակչությունը կարևոր տնտեսական ցուցանիշ է, աշխատանքային ռեսուրսների թվակազմի ելակետը: Դա թելադրվում է ամեն մի երկրում զբաղմունքի կարիք ունեցող բնակչության մոտավոր թվակազմը ապագայում կանխատեսելու անհրաժեշտությամբ: Չէ՞ որ աշխատանքային տարիքի բնակչության թիվն անընդհատ փոփոխվում է: Այն մի կողմից համալրվում, մյուս կող-

մից նվազում է: Համալրումը տեղի է ունենում տարիներ առաջ ծնվածների, նվազումը՝ կենսաթոշակային տարիք մուտք գործողների և աշխատանքային տարիքում բնական կորստի (մահվան) և հաշմանդամության հետևանքով: Միևնույն տարիքային ամեն մի խումբ ունի տարբեր սոցիալական և արտադրական պահանջներ: Այդ պահանջներն ապագայում նկատի առնելու նպատակով անհրաժեշտ է իմանալ երկրի ապագա բնակչության ոչ միայն ընդհանուր թվակազմը, այլև տարիքային կառուցվածքը:

Ինչ վերաբերում է աշխատունակ բնակչության ֆունկցիոնալ կառուցվածքին, ապա այն բաժանվում է երկու մասի.

ա) անձինք, ովքեր ընդգրկված են որոշակի աշխատանքային գործունեության մեջ և զբաղված են,

բ) անձինք, ովքեր նման գործունեության մեջ ընդգրկված չեն, այսինքն՝ զբաղմունք չունեն:

Զբաղվածությունն ունի տնտեսական և սոցիալական նշանակություն:

Տնտեսական նշանակության առումով զբաղվածությունը մարդկանց անձնական գործունեության դրսևորումն է հանրօգուտ աշխատանքի որևէ ասպարեզում: Նկատի է առնվում հասարակական արտադրության որևէ բնագավառում (ինչպես նյութական բարիքների, այնպես էլ ծառայությունների ոլորտներում) մարդկանց զբաղվածությունը:

Զբաղվածության սոցիալական նշանակությունն անձնական աշխատանքային կենսագործունեության շնորհիվ մարդկանց համար անհրաժեշտ եկամուտների ապահովումն է:

Զբաղվածությունը հաճախ նույնացնում են աշխատանքի պրոցեսի հետ: Բայց այդպես չէ:

Աշխատանքը գործընթաց է, մի հարաբերություն, որ գոյանում է մարդկանց միջև՝ աշխատանքի գործիքների օգնությամբ աշխատանքի առարկան ձևափոխելու և նորը արարելու ընթացքում: Մարդն՝ իր գործունեությամբ կամ նյութական նոր բարիքներ է արտադրում, կամ ծառայություն է իրականացնում: Տնտեսագիտական գրականության մեջ զբաղվածությունը չի դիտվում որպես գործունեություն: Այն դիտվում է աշխատողին որոշակի աշխատատեղում, աշխատանքային կոոպերացիայի մեջ

ընդգրկելու համար մարդկանց միջև գոյացող հարաբերությունների համակարգ: Զբաղվածությունը մարդկանց աշխատանքային գործունեության դրսևորման հիմքն է, կարևոր նախապայմանը:

Ապապետականացումը և մասնավորեցումները, ինչպես նշվեց, աշխատանքի շուկայի ձևավորման, զբաղվածության և աշխատուժի օգտագործման վրա հակասական ներգործություն են ունեցել: Նախ, արտադրության որոշ ճյուղերում դրանք հանգեցրել են աշխատողների թվակազմի ավելացմանը, որն իր հերթին մեծ մասամբ ուղեկցվել է աշխատուժի օգտագործման արդյունավետության անկմամբ, աշխատանքի նորմալ միջին լարունության մակարդակի խիստ բարձրացմամբ[5]: Օրինակ, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը 1990—1995 թթ. շուրջ երկու անգամ ավելանալու պայմաններում[6] մշակվող հողատարածությունները խիստ կրճատվել են, համախառն բերքը չի ավելացել, այսինքն՝ տեղի է ունեցել զբաղվածության էքստենսիվ տիպի ընդլայնված վերարտադրություն, որն ուղեկցվել է աշխատանքի արտադրողականության խիստ անկմամբ: Արտադրության մյուս ճյուղերում նույնպես մասնավորեցումները չեն նպաստել աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Աշխատատեղերը հիմնականում ավելանում են ծառայությունների և շրջանառության բնագավառում, մասնավորապես մանրավաճառության մեջ: Այս կառույցներում զբաղվածության աճը, անշուշտ, դրական երևույթ է, բայց այն տեղի է ունենում էքստենսիվ հիմունքներով և խարխլված չէ սեփական երկրի արտադրության ընթացքի արագացման վրա: Խնդիրն այն է, որ առևտուրը նպաստի մայր երկրի արտադրության մասշտաբների ընդլայնմանը: Մասնավորեցումների ընթացքում ովքեր չկարողացան խորհրդանշական գներով կամ անվճար տեր դառնալ պետական կամ կոոպերատիվ ունեցվածքի, ընդգրկվել առևտրաֆինանսական միջնորդային օղակներում, կոոպերա-

---

5 Սոցիալական աշխատանքը Հայաստանում, գործընթացը, արդյունքները, հիմնախնդիրները, Ե., 1996, էջ 27:

6 Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., Ե., 1996 էջ 24:

տիվներում, բաժնետիրական ընկերություններում, կանգնել «սեղանիկների» ետևում՝ զբաղվելով «կապիտալի նախասկզբնական կուտակմամբ», ինչպես հորջորջում էին որոշ նորաթուխ իշխանավորներ, զբաղմունք, հաց, լույս, տաք անկյուն ունենալու մտահոգությամբ և հուսալքված թողեցին մայր երկիրը: Հանրապետությունում ստեղծված իրավայմանները տեղաշարժում են բոլոր նրանց, ովքեր այլ երկրներում հաց վաստակելու և ընտանիքը պատսպարելու թեկուզ շատ չնչին հույս են տածում կամ նույնիսկ այդ հույսն էլ չունեն: Մեր հաշվարկներով 1991—1995 թթ. Հայաստանի բնակչության միգրացիայի բացասական մնացորդը կազմել է շուրջ 1 մլն մարդ[7]: Այսօր հանրապետության բնակչության մի ստվար հատված գոյատևում է նրանց ուղարկած միջոցների հաշվին:

Երկրորդ, բնորոշ է դարձել ժողովրդական տնտեսության շատ ճյուղերում աշխատողների թվակազմի նվազումը:

Պաշտոնական տվյալներով, օրինակ, 1990—1996 թթ. աշխատանքային ռեսուրսների միջին տարեկան թիվը 6,8 տոկոսով ավելանալու պայմաններում տնտեսության բոլոր ճյուղերում զբաղվածները պակասել են 19,2 տոկոսով[8]:

Ինչպես կնկատենք շարադրանքի վերջնամասում, այս տվյալներն իրական չեն: Շատ-շատերը չեն աշխատում, ոմանք նույնիսկ հայրենիքում էլ չեն, բայց որպես աշխատողներ իրենց նախկին աշխատավայրերում մնում են հաշվառման մեջ: Դա առանձնապես բնորոշ է արդյունաբերական այն ձեռնարկություններին, որոնք ապապետականացվում են: Դրա հետ մեկտեղ չպետք է անտեսել այն, որ վիճակագրական այդ տվյալների մեջ չեն արտահայտվում տնտեսության ստվերային օղակներում ընդգրկվածները, իսկ դրանք հարյուր հազարից ավելի են: Շատ մանր արտադրողներ և փոքր գործարքներում ընդգրկվածներ հարկերից խուսափելու նպատակով հաշվառման չեն ենթարկվում: Շատ մանր արտադրողներ և ձեռներեցներ, չդիմանալով հարկային ծանրությանը, պաշտոնական էկոնո-

---

[7] «Էկոնոմիկա» ամսագիր, 1996, հ. 1—3, էջ 13—19:

[8] Հաշվարկները կատարվել են ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչության տվյալների հիման վրա, տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., 24-րդ էջի տվյալները:

միկայից հեռանում են և ընդգրկվում հաշվառման չենթարկվող օղակներում:

Ներկա պայմաններում հանրապետությունում ծանր կացություն է ստեղծվել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Դրանցից ոչ մի բնագավառ լիաթոք չի գործում, որի հետևանքով իրավիճակն անմխիթար է բնակչության սոցիալական պաշտպանվածության ամբողջ համակարգում: Այս ասպարեզում մթնոլորտն օրեցօր շիկանում է: Նման իրավիճակը տնտեսական արագ անկման հետ միասին հետևանք է նաև դրանով փոխպայմանավորված աշխատանքային ռեսուրսների վերարտադրության բնականոն ընթացքի բռնազբոսիկ խաթարման, այն «շոկայական թերապիայի» քաղաքային օրենքներին քմահաճորեն հարմարեցնելու վաղաժամ և անհեռատես քաղաքականության: Արտադրական շատ ոլորտներում, կրթության, գիտության, արվեստի, մշակույթի համակարգում և այլուր անգործության է մատնվել հասարակության գլխավոր հարստության, նրա աշխատանքային ներուժի մի զգալի մասը: Այն բացառապես զրկվել է իր ֆիզիկական ու մտավոր ունակությունները նպատակամետ գործադրելու, ազնիվ մղումով բարիք ստեղծելու և ծառայություն մատուցելու միջոցով ժողովրդի հանապազօրյա նվազագույն պահանջմունքներին անգամ սատար կանգնելու շատ սովորական մարդկային պայմաններից: Արտաքին աշխարհի հետ տնտեսապես սերտաճած և հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ տարիներ առաջ հարկադրաբար փակելու և անցման շրջանում տեղ գտած բազմաթիվ պատճառներով աշխատունակ բնակչության մի մասը չի աշխատում, որոշ մասն էլ իր աշխատունակությունը կիսատ-պռատ է գործադրում, ոմանց ստեղծած արդյունքներն իրենց որակական հատկանիշներով ոչ միայն արտաքին, այլև ներքին շուկայում քննություն չեն բռնում: Սովորական է դարձել գործազուրկների, զբաղմունք չունեցողների, աշխատատեղերում տարվա, ամիսների, օրերի և օրվա ընթացքում թերզբաղված բնակչության անընդհատ ստվարացող մշտական և հոծ զանգվածների գոյությունը[9]: Զբաղմունքի շատ ոլորտներում աշխատատեղերի

[9] Տե՛ս «Էկոնոմիկա», 1993, հ. 9—10, էջ 3—4:

կրճատումը, մեծ մասամբ աշխատուժի անարդյունավետ օգտագործումը լրացուցիչ պատճառ դարձան տնտեսական հետընթացի, արտադրության աճի տեմպերի անկման, վատթարով ապրուստի նվազագույնն անգամ չբավարարելու, վաղվա օրվա նկատմամբ հույսի բացակայության, տնտեսական ու սոցիալական լարվածության աննախադեպ իրավիճակների գոյացման: Հանդես եկավ և աննախադեպ ընթացք ստացավ գործազրկությունը:

2. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Զբաղված բնակչություն հասկացության հետ մեկտեղ, որպես կանոն, ամեն մի երկրում գոյություն ունի նաև աշխատանքային տարիքի զբաղմունք չունեցող բնակչություն, այդ թվում գործազուրկների կատեգորիա: Ելնելով դրանից՝ «ՀՀ բնակչության զբաղվածության մասին» օրենքով սահմանվել է «չզբաղված քաղաքացիների» և «գործազուրկների» կարգավիճակ: Խոսքը, անկասկած, վերաբերում է աշխատանքային տարիքի աշխատունակ բնակչությանը:

Զբաղված քաղաքացիները բաժանվում են երկու խմբի.

1) անձինք, ովքեր զբաղվելու ցանկություն չունեն,

2) անձինք, ովքեր որևէ զբաղմունք չունեն՝ անկախ իրենց կամքից: Նրանք ցանկանում են զբաղմունք ունենալ՝ զբաղմունքի համար ապարեզ լինելու դեպքում:

Սոցիալ-տնտեսական առումով գործազրկությունը աշխատանքի շուկայում աշխատուժի մեծ առաջարկի և փոքր պահանջարկի անմիջական արտահայտությունն է: Այն կարող է հանդես գալ աշխատուժի ինչպես քանակական, այնպես էլ որակական անհամապատասխանությամբ:

Գործազրկությունը ընդգրկում է տնտեսապես ակտիվ բնակչությանը: Դրանք այն անձինք են, ովքեր աշխատանք են փընտրում:

Միջազգային աշխատանքի կազմակերպման (ՄԱԿ) ստանդարտներով գործազուրկները նախկինում աշխատանք ունեցող

բոլոր այն անձինք են, ովքեր գտնվում են աշխատանքային տարիքում, տվյալ պահին չեն աշխատում, եկամտի որևէ աղբյուր չունեն և ակտիվորեն աշխատանք են փնտրում: Աշխատատեղ գտնելու նպատակով այն փնտրող յուրաքանչյուր անձ պետք է գրանցվի զբաղվածության պետական ծառայության մարմիններում: Եթե վերջիններս գործազուրկին նպատակահարմար որևէ աշխատանք են առաջարկում, հրաժարվելու դեպքում գրանցումից հանվում է: Գործազրկության համար նպաստը վճարվում է որոշակի կոնկրետ ժամանակաշրջանի (ամիսների կամ տարվա) համար՝ նայած տվյալ երկրում ընդունված օրենսդրության: Այս ժամկետն ավարտվելուց հետո նպաստի վճարումը դադարեցվում է կամ չափերը կրճատվում են:

Գոյություն ունի գործազրկության բնական մակարդակ հասկացությունը: Այն հիմնականում տատանվում է 4—6 տոկոսի սահմաններում: Հայաստանում գործազրկության իրական մակարդակը բնականից ավելի քան երկու անգամ բարձր է: Գործազրկության բնական մակարդակի պահպանումը երկրի լրիվ զբաղվածության չափանիշն է: Ըստ Օուկենի հայտնի օրենքի գործազրկության բնական մակարդակից նրա փաստացի մակարդակի յուրաքանչյուր մեկ տոկոսի շեղումը երկրի ազգային համախառն արդյունքը նվազեցնում կամ ավելացնում է 2,5 տոկոսով:

Գործազրկության մակարդակը որոշվում է տնտեսապես ակտիվ բնակչության ընդհանուր թվակազմում գործազուրկների տեսակարար կշռով: Տնտեսապես ակտիվ բնակչությունը որոշվում է տվյալ երկրի ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկվածների (բացառյալ աշխատանքային տարիքում արտադրությունից կտրված սովորողների) ցուցակային թվի և գրանցված գործազուրկների թվի գումարով:

Գործազրկության մակարդակը ցածր է Շվեդիայում և Ճապոնիայում, որը բացատրվում է այդ երկրներում աշխատանքի շուկայում պետության վարած նպատակամետ ակտիվ քաղաքականությամբ:

Արդյունաբերական տեսակետից զարգացած երկրներում գործազրկությունը, սովորաբար, արտահայտվում է հետևյալ տե-

սակներով. ֆրիկցիոն (հոսուն), սեզոնային, կառուցվածքային, ցիկլիկ, թաքուն և այլն:

Հայաստանում, ներկա փուլում, գործազրկության այդ բոլոր տեսակները, տնտեսության տվյալ իրավիճակին բնորոշ արտահայտման յուրահատուկ ձևերով, լայն տարածում ունեն և հաճախ լճացած բնույթ են կրում:

Հայաստանում հասուն (ֆրիկցիոն) գործազրկության հիմքում ընկած է աշխատուժի ցածր արժեքը, արժեքից՝ գների տասնապատիկ շեղումը, որը չի ապահովում աշխատուժի նույնիսկ պարզ վերարտադրությունը: Այդ պատճառով շատերը շարունակաբար թողնում են իրենց զբաղեցրած աշխատատեղերը, փնտրում նոքը, և այսպես անընդհատ: Դա ներկայումս ուղեկցվում է նաև տարածքային տեղաշարժերով՝ գերազանցապես փոքր քաղաքներից դեպի գյուղական բնակավայրեր, մեծ ու միջին քաղաքներ, այլ երկրներ: Հոսուն գործազրկությունն առանձնապես ընդգրկում է հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին:

Սեզոնային գործազրկությունը գերազանցապես ընդգրկում է գյուղական բնակչությանը, որոնք հաճախ դիմում են արտագնա աշխատանքների, կամ ուղղակի հեռանում են գյուղից և գյուղատնտեսական աշխատանքներից:

Հայաստանում առանձնապես լայն արտահայտություն ստացավ կառուցվածքային գործազրկությունը, որը, ինչպես հետագա շարադրանքում կնկատենք, բացատրվում է ոչ միայն տնտեսության ճյուղային կազմի փոփոխություններով, այլև որակյալ աշխատուժի նկատմամբ արտադրության կողմից առաջադրվող նվազ պահանջարկով, արտադրությունից որակյալ աշխատուժի արտամղումով և հոսքով:

Աշխատուժի խիստ ցածր արժեքի հետևանքով արդյունաբերության առաջատար ճյուղերից, գիտակրթական, արվեստի և մշակույթի համակարգից բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատուժի մի հատված արտահոսեց ցածր որակավորմամբ բնութագրվող էքստենսիվ աշխատանքի բնագավառներ (գլխավորապես առևտրային համակարգ, գյուղատնտեսություն և այլն):

Ինչպես նկատում ենք, Հայաստանում կառուցվածքային գործազրկությունը պայմանավորված չէ դրա արտահայտման դասական ձևով, որը գերազանցապես գիտատեխնիկական առաջընթացի հետևանքն է: Զարգացած շուկայական հարաբերություններով բնութագրվող երկրներում գործազրկության այդ տեսակը հանդես է գալիս այն պատճառով, որ որոշակի անհամապատասխանություն է ստեղծվում նոր և նորագույն տեխնոլոգիայով բնութագրվող կյանք մտած աշխատատեղերի և դրանց պահանջները չբավարարող աշխատուժի ցածր արհեստավարժ-որակական կազմի միջև: Նման պայմաններում արտադրությունից արտամղված աշխատողների որոշ մասը նոր որակ ձեռք բերելու, վերաորակավորման և պետության կողմից կիրառվող ակտիվ քաղաքականության շնորհիվ ընդգրկվում է այդ արտադրություններում, ոմանք ընդգրկվում են արտադրության ավանդական ճյուղերում կամ օղակներում, իսկ մի մասն էլ համալրում է գործազուրկների շարքերը: Կառուցվածքային գործազրկությունը հատուկ է զարգացած և օրեցօր առաջ ընթացող երկրներին, որոնք զբաղվածության պետական ակտիվ քաղաքականությամբ ինչ որ չափով մեղմում են գործազրկության այդ տեսակը: Զարգացած երկրներում աշխատանքից ազատվողների ավելի քան 40 տոկոսը կապված է կառուցվածքային գործազրկության հետ: Եվ դա առաջընթացի, հասարակության զարգացման կարևորագույն պահանջն է:

Մինչդեռ Հայաստանում կառուցվածքային գործազրկությունն ուղեկցվեց գործազրկության ցիկլիկ տեսակի հետ, որի գլխավոր պատճառը արտադրության համատարած անկումն է, կաթվածահար տնտեսության առկայությունը: Գործազրկության այս տեսակի վերացումը կապված է ոչ թե գործազուրկների սոցիալական խաղիրների լուծման հետ, այլ ճգնաժամային իրավիճակի հաղթահարման, արտադրության աշխուժացման, մակրոտնտեսական մակարդակով նոր աշխատատեղեր ստեղծելու, աշխատուժի մրցունակությունը բարձրացնելու համար պարարտ հող նախապատրաստելու հետ:

Հայաստանում մեծ տարածում ունի նաև թաքուն գործազրկությունը: Այն հանդես է գալիս համապատասխան օղակներում աշխատողների պահանջվող թվաքանակից ավելի շատ

մարդիկ պահելու ձևով: Դրանք, մեծի մասամբ, շատ ցածր վարձատրություն են ստանում: Թաքուն գործազրկությունը հատուկ է նաև ձեռնարկություններում և կազմակերպություններում ոչ լիարժեք աշխատանքային պայմաններում աշխատողների առկայությամբ: Դրանք թեև աշխատավարձ ստանում են, բայց այն նրանց չի բավարարում:

Թաքուն գործազրկությունն ընդգրկում է նաև լրիվ կամ մասնակի վարձատրությամբ հասանելիք արձակուրդից ավելի երկար տևողությամբ արձակուրդի մեջ գտնվող անձանց: Թաքուն գործազրկությունը բացահայտ գործազրկության ռեզերվն է:

Թաքուն գործազրկությունը չպետք է շփոթել ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով աշխատող բնակչության հետ: Թաքուն գործազուրկները չեն մասնակցում ձեռնարկությունների կամ կազմակերպությունների գործունեությանը և փաստորեն դրանց վրա ընկած են որպես ֆինանսական բեռ: Մինչդեռ ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով աշխատանքի ընդգրկվածները իրականացնում են որոշակի գործունեություն: Նրանք վարձատրվում են իրենց կատարած աշխատանքի կամ ոչ լրիվ աշխատանքային օրվա ու ոչ լրիվ աշխատանքային շաբաթվա տևողությանը համապատասխան աշխատանքային գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար:

1991—1996 թթ. Հայաստանից բնակչության բարձր արտագաղթի պայմաններում, թվում էր, թե գործազուրկների թիվը պետք է նվազի: Իրականում այն ավելացավ: Ի թիվս այլ պատճառների գործազրկությունը խթանեց արտագաղթի մասշտաբների ընդարձակումը: Բայց ինչքան մեծացան արտագաղթի չափերը, այնքան ավելացավ գործազուրկների թիվը, երկարեց գործազրկության վիճակում գտնվելու տևողությունը: 1992 թ. ՀՀ գործազուրկների կարգավիճակ ունեին (միջին տարեկան) 56,3 հազ., 1993 թ.՝ 102,6 հազ., 1995 թ.՝ 131,7 հազ., 1996 թ. 147,9 հազ. մարդ: 1996 թ. տարեվերջին գրանցված գործազուրկները կազմում էին 159,3, իսկ 1997 թ. տարեվերջին՝ 174,4 հազ. մարդ:

Գրանցում ունեցող գործազուրկների մեջ մեծ տոկոս են կազմում կանայք, երիտասարդությունը և մինչև 50 տարեկանները: Այդ մասին է վկայում ներքոհիշյալ աղյուսակը:

Աղյուսակ Է

Գրանցված գործազուրկների դասակարգումը ըստ կրթության և տարիքի 1992—1996 թթ.[10]

Գործազուրկների դասակարգումը	Ընդհանուր թիվը հազ. մարդ	Այդ թվում կանայք		
		հազ. մարդ	ընդ. գործազուրկների նկատմամբ %-ներով	գործազուրկ կանանց ընդհանուր թվի մեջ %-ներով
Ընդհանուր թիվը	541,8	367,5	67,3	100,0
Կրթությունը				
այդ թվում՝				
բարձրագույն	73,4	48,8	66,6	13,2
միջն. մասնագիտական	131,4	88,4	67.3	24,1
ընդհանուր միջնակարգ	287,6	200,9	69.9	54,7
թերի միջնակարգ	49,5	29,4	79,5	8,0
Տարիքը				
մինչև 22 տարեկան	105,4	70,0	66.4	19,0
22—30* »	105,0	73,4	69,9	20,0
30—50** »	172,3	124,1	72,0	33,8

Ինչպես նկատում ենք, գրանցված գործազուրկների մեջ որոշիչ դեր է պատկանում կանանց: Ըստ որում 29—30 տարեկան գործազուրկ երիտասարդության տոկոսը գործազուրկների ընդհանուր թվակազմում շատ ավելին է, քան աշխատունակ տարիքի բնակչության մեջ այդ սոցիալ ժողովրդագրական խմբի տեսակարար կշիռը:

Դրանց գերակշռող մասն ընդհանուր միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներն են (78,8 տոկոս): Գրանցված գործազուրկների մոտ 30,0 տոկոսը բանվորներ են, 21,5 տոկոսը՝ որակավորում չունեցողները[11]:

10 Աղյուսակը կազմված է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 29-ի և ընթացիկ վիճակագրության տվյալներով:

* 1994—1996 թթ.:

** 1994—1996 թթ.:

11 Հաշվարկները կատարվել են նույն վարչության տվյալների հիման վրա:

1995—1996 թթ. գործազուրկների ընդհանուր թվակազմում Կանայք 67,8 տոկոս էին:

Թվում էր, թե Հայաստանում աշխատուժի արժեքի ցածր մակարդակը իր վրա պիտի սևեռեր արտասահմանյան ներդրողների ուշադրությունը: Բայց առայժմ այդպես չէ: Տվյալ դեպքում դեր են խաղում հանրապետության ոչ միայն աշխարհաքաղաքական իրավիճակը, արտաքին աշխարհի հետ հաղորդակցության լայն ցանցի բացակայությունը, հանրապետության ներսում ենթակառուցվածքային ճյուղերի ցածր մակարդակը, այլև ներդրումների ճակատագրի նկատմամբ վախը, կառավարող մարմինների կողմից տարվող անգործունակ քաղաքականությունը:

Անկասկած, գործազրկության վերաբերյալ պաշտոնական տվյալները նույնպես երևույթի իրական վիճակը ճիշտ չեն պատկերում: Նախ, զբաղվածության ծառայության պետական մարմինները որպես գործազուրկ գրանցում են ոչ բոլորին: Որպես գործազուրկ հաշվառման չի վերցվում «թաքնված գործազուրկների» անընդհատ վերարտադրվող մի վիթխարի զանգված: Շատ արդյունաբերական ձեռնարկություններ տարվա ընթացքում աշխատում են ոչ լրիվ կարողությամբ, իսկ ճմռանն ուղղակի չեն գործում: Դրանցում ընդգրկվածների մի զգալի մասն աշխատանքից չի ազատվում, ցուցակային թիվ է, և ձևականորեն մնում է որպես կոլեկտիվի անդամ: Նրանք աշխատավարձ չեն ստանում, պարապուրդների համար վճարումներ չեն կատարվում, նրանց որպես գործազուրկ հաշվառման վերցնելու համար բազմաթիվ արգելքներ են հարուցվում: «Թաքուն գործազրկությունը» ավելի զանգվածային բնույթ է կրում, քան բացահայտը:

Երկրորդ, ոմանք խուսափում են հաշվառման համար նման ծառայություններին դիմելուց, «գործազուրկի» պիտակ կրելուց, որպես գործազուրկ անընդհատ վերահաշվառումից և այլն[12]:

Երրորդ, հետաքրքրություն չեն ներկայացնում գրանցված գործազուրկներին աշխատելու համար առաջարկվող տեղերը,

---

12 Նման իրավիճակը հատուկ է նաև Ռուսաստանի Դաշնությանը. տե՛ս «Проблемы теории и практтики управления», 1996, № 1, с. 45.

քաշքշուկ է տիրում գործատուների կողմից գործազուրկներին աշխատանքի ընդունելու գործընթացներում: Լրիվ չեն իրացվում նրանց վերադրակավորումը կամ նոր որակ ձեռք բերելու արտրողությունները: Այդ պատճառով էլ շատ գործազուրկներ իրենք են փնտրում աշխատատեղեր:

Չորրորդ, գրանցման համար գրեթե շահագրգռվածություն չի ընձեռում գործազուրկներին հատկացվող չափազանց ցածր նպաստը: Շատերին ձեռնտու է անլեգալ աշխատանքով պատահական վաստակը, քան որպես գործազուրկ հաշվառման մեջ մնալը: Գործատուներից կախյալ վիճակը խստորեն նեղացրել է ոչ միայն աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքի, այլև աշխատող մարդկանց սոցիալական խնդիրների իրացման հնարավորությունները:

Դեր է խաղում նաև գործազուրկների վերապատրաստման և նոր որակ ձեռք բերելու հարցում պետական ծառայությունների կողմից «Զբաղվածության մասին օրենքի» պահանջների անտեսումը, զբաղվածության պետական ծրագրերի բացակայությունը և այլն: Այս և գործազուրկներին աշխատանքի տեղավորելու հարցերում համապատասխան կապ և համագործակցություն չկա պետական մարմինների և գործատուների միջև:

Հինգերորդ, ի տարբերություն արևմտյան երկրների, Հայաստանում որակավորում ունեցող գործազուրկներն ավելի դժվար և անլուծելի կացության առջև են հայտնվում, քան որակավորում չունեցողները:

ՀՀ-ում գործազրկությունն ավելի սուր է արտահայտվում խոշոր և միջին քաղաքներում, ինչպես նաև այն փոքր քաղաքներում ու գյուղական շրջաններում, որոնք բնութագրվել են արդյունաբերական տեսակետից միակողմանի զարգացմամբ:

ՀՀ-ում աշխատանքի շուկայում լարվածությունն սկիզբ առավ 1990-ական առաջին տարիներին, որը պայմանավորված էր.

1) շուկայական գործընթացների ակտիվացման քաղաքականությամբ (մասնավորեցումներ, ձեռնարկությունների լուծարում, սնանկացում, մրցություն և այլն)[13]: Գործընթացը չուղե-

---

13 «Էկոնոմիկա», 1993, հ. 9—10, էջ 4:

կցվեց արդյունաբերության մեջ նոր աշխատատեղերի ստեղծումով: Դա ծնեց նաև սոցիալական հակասություններ:

2) Արտադրության շարունակվող անկումով, արտադրական կարողությունների շարքից դուրս գալու հետևանքով, որը չուղեկցվեց նոր հզորությունների գործարկմամբ, ակտիվ տնտեսական և մասնավորապես կառուցվածքային փոփոխության մշակմամբ ու կիրառման գործնական նպատակներ հետապնդող ձեռներեցության աջակցմամբ:

Այսպիսով, աշխատանքի շուկայի լարվածությունը, աշխատուժի առաջարկի նկատելի բարձրացումը, որ 1989 թ. սկսած գոյանում էր հասարակական արտադրության մասշտաբների անկմամբ, հաճախ աննարկի կրճատման հետևանքով աշխատանքից ազատվողների թվաքանակի աճի, աշխատուժի պահանջարկի խիստ նվազման և դրանց հետ ուղեկցվող աշխատանքային տարիք մուտք գործող, տնտեսապես ակտիվ տարիքի բնակչության աննախընթաց աճի օբյեկտիվ ընթացքով, Ադրբեջանից բռնագաղթված հոծ զանգվածների առկայությամբ, զարնվեց հետընթաց ապրող և անընդհատ կծկվող հասարակական արտադրության պատնեշին: Աշխատուժի առաջարկը մերթ լճանալով մի պահ ընկրկեց դրա պահանջարկի առջև, մերթ հորդանալով՝ տարերայնորեն դուրս եկավ ափերից՝ տեղի տալով գործազրկությանն ու զանգվածային արտագաղթին:

Երիտասարդությունը բարոմետրի նման սկսեց տատանվել՝ անկախ կատարած աշխատանքի բնույթից, որակավորման աստիճանից, արհեստավարժ մասնագիտական հատկանիշներից: Շատերի համար դեռևս առջևում էին հայրենիքում արարելու ոգևորությունը, ընտանիք կազմելու, նոր մարդ երկնելով՝ ազգը բազմացնելու, սեփական վաստակով ընտանիք պահելու սովորական մարդկային երազանքները, որոնք կարճ ժամանակում ի դերև եղան:

Հայտնի է, որ գենոֆոնդի պահպանությունն իրականացվում է մարդկանց կենսագործունեության նորմալ միջին մակարդակ ապահովելու, այդ մակարդակը բարելավելու և բարձրացնելու միջոցով: Դա համազգային խնդիր է և շոշափում է համապետական շահեր: Մինչդեռ իրականում մարդկանց կենսագործունեության բարելավման մասին խոսք անգամ չկա: Այս վեց-

յոթ տարիների ընթացքում հայ բնակչության գենոֆոնդին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հասցված վնասները տասնամյակներ իրենց զգալ կտան, եթե նույնիսկ այսօրվանից ձեռնարկվեն գենոֆոնդը փրկելու ամենաակտիվ միջոցներ: 1991 թ. սկսած օրեցօր իջնում է ծնունդը, բարձրանում մահացությունը, արտագաղթն ընդունել է աճագնացող չափեր: Իջնում է մարդկանց նորմալ միջին կենսագործունեության մակարդակը: Անընդհատ ավելանում է ապրուստի նվազագույն ֆիզիոլոգիական նորմերից մի քանի անգամ ցածր ապահովվածություն ունեցող մարդկանց բացարձակ թվաքանակը, բնակչության ընդհանուր թվակազմում դրանց տեսակարար կշիռը:

Հրապարակված պաշտոնական տվյալներով բնակչության զգալի մասը գտնվում էր կենսագոյության ընդունելի սահմանից ներքև, կեսից շատ ավելին չունի նվազագույն կենսամակարդակ ապահովելու հնարավորություն: Պաշտոնական վիճակագրության նախնական տվյալներով 1997 թ. տնտեսության մեջ զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 12629 դրամ, իսկ բյուջետային հիմնարկներում՝ 7627 դրամ: Ձնչին գումարներ են կազմում աշխատավարձը, կենսաթոշակը և գործազուրկներին հատկացվող նպաստները:

Գրանցված և բացահայտ գործազուրկների հետ միասին գոյություն ունի «թաքնված» գործազուրկների անընդհատ վերարտադրվող մի վիթխարի զանգված, որոնք որպես գործազուրկ հաշվառման չեն վերցվում: Հարյուր հազարներ կազմող այդ «թաքուն» գործազուրկների բանակը 1992 թ. վերջերից դարձավ հայրենիքից արտագաղթող բնակչության հիմնական կորիզը: Ժամանակի ընթացքում այդ շարքերը համալրեցին և այսօր էլ համալրում են սեփական վաստակով ապրուստի նվազագույնը չապահովող, այդ նվազագույնից տասնապատիկ ցածր վաստակ ունեցողները: Գործազրկությունն ու արտագաղթը անանախընթաց չափերի հասան հանրապետության ոչ միայն տնտեսական հետընթացի, լույսի և հույսի բացակայության, ցրտի առկայության, այլև գների անզուսպ աճի, գների և աշխատավարձի մակարդակների միջև գոյացող վիհի, սոցիալական լարվածության անընդհատ խորացման հետևանքով:

Գործազրկության աճը Հայաստանում մոտ ապագայում նույնպես անխուսափելի է, թեև դրա մասշտաբները, լճացման ասոիճանը, այն հաղթահարելու ժամկետները վճռականորեն կախված են տնտեսական քաղաքականության ընտրությունից: Եվ սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ թելադրվող ուղղվածությունը և արտադրության աճի միտումներն առայժմ անվիճելիորեն վկայում են առաջիկայում գործազրկության մասշտաբների ավելացման մասին:

Բարձրացող գների և վաստակի միջև անընդհատ խորացող տարանջատումն աստիճանաբար կյանքի կոչեց և շատերի մոտ հիմք դարձավ «ինքնակամ» աշխատատեղը լքելու վարքագծի ձևավորման, «թաքուն» գործազրկության մասշտաբների ընդլայնման համար: Այդ վարքագիծը ձևավորվեց տնտեսական հարկադրանքի ազդեցության տակ, թեև երևույթների մակերեսի վրա աշխատատեղը լքելը կրում է «կամավոր» բնույթ, բացակայում է իրավական հարկադրանքը:

Աշխատատեղը կորցնելը ոմանց համար դարձավ ավելի գնդրադասելի, քան այն ունենալը, քանի որ բյուջետային հիմնարկներում աշխատողների աշխատավարձը շատ հեռու է ապրուստի նվազագույն մակարդակն ապահովելուց: Շատ դեպքերում այն չէր փոխհատուցում ճանապարհածախսը և այն մոմի գինը, որ մեկ-երկու ժամ պետք է աղոտ լուսավորեր «քարանձավի» վերածված սառնաշունչ բնակարանը (1991—1994 թթ.):

Աշխատատեղը «կամավոր» լքելու ձևավորվող նոր վարքագիծն էլ ավելի արտահայտիչ դարձավ նաև ոչ միայն տրանսպորտի անընդհատ բարձրացող սակագների, այլև փոխադրամիջոցների պակասի, դրանց անսարքության, որևէ նպատակով տնից դուրս գալու և վերադարձի պայմանների ողբերգական կացության, ձմռան ցրտին, գարնան անձրևներին, կես կուշտ, կես անոթի, կիլոմետրերով ոտքով ճանապարհ կտրելու և կոշիկ մաշելու ամենօրյա տառապանքների և այլ կարգի արտասովոր, բայց 1991—1994 թթ. արդեն առտնին բնույթ ստացած իրավիճակների հետևանքով: Եվ դա այն պայմաններում, երբ 1993 թ. հանրապետությունում արտադրվել է ավելի շատ էլեկտրաէներգիա, քան 1996 թ.: Մնում է զարմանալ՝ որտեղ էր սպառվում այն: Կառավարողներն այդ տարիներին ժողովրդին

ինչո՞ւ մղեցին ծանր փորձությունների: Ո՞ւմ հետ էին հաշվեհարդար տեսնում, ժողովրդի՞, ընդդիմությա՞ն, աստվածային արարչագործության հրաշքի՝ չքնաղ Սևանի, թե՞ անտառազուրկ մի երկրի անտառների հետ:

Այո՛, դա 1992—1993 թթ. ձմռանն էր, երբ հազարավոր մարդիկ ցրտին ու սառնամանիքին լուսացնում էին Զվարթնոց օդանավակայանում, ուր ասեղ գցելու տեղ չկար: Մայր ու մանուկ, կին թե տղամարդ, անել թե ջահել ճամպրուկները կապած, երեխաներին ցրտից պաշտպանելու համար կրծքներին սեղմած կամ անկողնում պարուրած՝ շտապում էին օր առաջ լքել կենսատու մայր հայրենիքը, գլուխներն ազատել ստեղծված դժոխային պայմաններից:

Ովքե՞ր, այդ ովքե՞ր պիտի պատասխան տան, կանգնեն ժողովրդի ու պատմության առջև, գամվեն անարգանքի սյունին՝ ոչ միայն «ալանթալանի», կողոպուտի, կազմավորված տնտեսությունը կազմալուծելու (չէ՞ որ հենց այդ տարիներին շատ արդյունաբերական ձեռնարկություններ փակվեցին, տրանսպորտը գրեթե դադարեց երթևեկելուց, շտապ օգնության մեքենաները՝ հիվանդներին վրահաս լինելուց, մարդիկ փողոց նետվեցին, քանզի բնակարանները անտանելի ցուրտ էին...), այլև գերազանցապես այն բանի համար, որ 3,5 միլիոնանոց ժողովրդից մեկ երրորդը թողեց հայրենիք, տուն ու տեղ, հարազատներին և այսօր դեգերում է օտար ափերում, օտար երկնակամարների տակ: Ո՞վ պետք է պատասխան տա այդ եղեռնի համար, այն բանի համար, որ դրսում ծնված հայ մանուկը ծնված օրից այլևս հայ չէ, նա չի ձևավորվում հայեցի հոգեկերտվածքով ու աշխարհընմբռնումով, սովորույթով, նիստ ու կացով, վարք ու բարքով, կենցաղով, կեցվածքով, չի սնվում հայ գիր ու գրականությամբ, հայ արվեստով, բառ ու բանով, որով էլ փակվում է նրանց տունդարձի ճանապարհը:

Ի՞նչ արեցինք: Այլ երկրների, այլ ժողովուրդների հետ տընտեսապես սերտաճելու (ինտեգրացվելու) փոխարեն, սերտաճեցինք մեր անմեղ մանուկներով, ծնված և դեռևս ապագայում ծնվող նորածիններով, հայ գենոֆոնդը ոչնչացնելով: Եթե դա եղեռն չէ, ապա ի՞նչ է:

Բնակչության ժամանակավոր արտագաղթը անվերադարձ գաղթի հիմք է դառնում: Վերադարձի խնդիրը առնչվում է ոչ միայն մայր հայրենիքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական դրական կամ բացասական տեղաշարժերի, այլև արտագաղթողների ինտեգրացման՝ լեզվի, ազգային մշակույթի, արվեստի, հոգեբանական կերպարի և ազգային նոր արժեքների ձևավորման հետ: Գաղտնիք չէ, որ Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցներին (և ոչ միայն), մասնավորապես աճող սերնդին, սպառնում է ձուլման վտանգը: Դա, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է երեխաներին, նրանց դպրոցական կրթությանը, և ապա՝ խառը ամուսնություններին: Մի դեպքում սերտաճում է արտագաղթողը՝ իր սովորույթներով, ազգային առանձնահատկություններով, մյուս դեպքում՝ ծնվում է արդեն ինտեգրացված քաղաքացին: Նրանք իրենց մանկությունն անց են կացնում և դպրոցական կրթությունն ստանում են այլ միջավայրում: Օրինակ, ԱՊՀ երկրներում հանգրվանած երեխաները հումանիտար կրթությունը ստանում են ռուսական դպրոցներում: Այլ երկրներում հանգրվանածները՝ այլ լեզուներով: Վերադառնալիս, նրանց համար դժվար է այլ լեզվի իմացության հիման վրա Հայաստանում հայերենով բազմաթիվ առարկաների գծով գիտելիքներ յուրացնելը և համապատասխան պաշար ամբարելը: Մտածողության կոդը փոխվում է, լեզվամտածողության բնականոն ընթացքը խաթարվում: Ուստի ներգաղթի քաղաքականության մեջ պարզություն պետք է մտցնել նաև այս հարցում:

Գործընթացը ինչ-որ չափով ձգձգվում է հայերով հավաք բնակեցված բնակավայրերում, բայց միևնույն է. իշխող միջավայրում պահպանելով մշակութային որոշ առանձնահատկությունները, սերտաճումն հարթում է իր ճանապարհը, առանց հարկադրանքի կամ բռնության:

Այո՛, 1993 թ. արտադրվում էր ավելի շատ էլեկտրաէներգիա, քան 1996-ին: Վկան՝ պաշտոնական վիճակագրությունը, որին կանդրադառնանք իր տեղում: Ակամայից վերհիշեցի անցածգնացած մի զրույց, որը տեղի է ունեցել 1990 թ. Հայաստանի Գերագույն խորհրդի երեսփոխանների ընտրությունների օրերին: Ընտրարշավում իմ զրուցակիցը պարտվել էր մրցակցից:

Ընտրությունների ավարտի հաջորդ օրը նա մտավ իմ աշխատասենյակ: Մենք միասին էինք աշխատում: Նա հուզված էր: Իրեն հատուկ զայրույթով հայտարարեց.

— Պարոն Խոջաբեկյան, մենք այլևս համբերել չենք կարող, իշխանությունը պետք է կոմունիստներից վերցնենք:

— Ինչպե՞ս,—հեգնեցի ես:

— Ուժով,—եղավ պատասխանը:

— Ուժո՞վ,—զարմացած վրա բերեցի ես,—իսկ ինչ կլինի ժողովրդի հետ: Չէ՞ որ քաղաքացիական կռիվ կբորբոքվի, «կռվում փլավ չեն բաժանում», անմեղ զոհեր կլինեն:

— Թող 700 հազար մարդ էլ չլինի,—եղավ պատասխանը:

Իշխանությունը ՀՀԾ-ին անցավ բարեբախտաբար անարյուն: Այն նվիրողներն «ընդունումով» մոտեցան խնդրին: Դրանով իսկ երկիրը թեև խուսափեց քաղաքացիական կռիվներից, բայց, միևնույն է, չխուսափեց դրան հավասարազոր մեկ այլ երևույթից՝ հայաթափությունից:

Հայաթափությունն ամենից առաջ սադրիչ քաղաքականությամբ երկրում հրահրվող տխրահռչակ էներգետիկ «ճգնաժամը» և դրա հետևանքների անմիջական ողբերգական արձագանքն էր: Ժողովուրդը շատ թանկ վճարեց, վարձահատույց եղավ գենոֆոնդի մի զգալի մասի կորստով:

Կյանքը ցույց տվեց, որ ժողովրդի ճակատագրի հարցում իրենց վարքագծով և վարած քաղաքականությամբ նման չար ու դաժան կողմնորոշում ունեցողները, որոնք ցավոք տեղեր էին զբաղեցնում երկրի կառավարման վերին օղակներում, մտածում էին հենց զրուցակցիս նման:

Հայաստանում ճգնաժամային իրավիճակը առանձնապես շոշափեց ցածր վարձատրվող, բայց որակավորում ունեցող կանանց (ուսուցչուհիներ, բժշկուհիներ և այլն), ինչպես նաև փոքր տարիքի երեխաներ ունեցող մայրերի, թոշակառուների, թոշակային տարիքին դեռևս չհասած աշխատունակ տարիքի կանանց ու տղամարդկանց շահերը: Նրանց մեծ մասը թեև խիստ կարիքի մեջ է, բայց անիմաստ է դառնում աշխատանք փնտրելը, քանի որ նրանք, նախ, չեն բավարարում գործատուների պահանջները, աշխատաժամանակը նորմավորված չէ, տևողությունը երկար է, և երկրորդ, աշխատանքի պայմաններին

դժվար են վերահարմարվում, ի վիճակի չեն աշխատելու տընտեսության այլընտրանքային ճյուղերում: Մինչդեռ ՌԴ քաղաքացիները վախ են արտահայտում աշխատանքը կորցնելու վտանգի համար:

1993 թ. հուլիսին ՌԴ քաղաքային բնակչության շրջանում պետվիճվարչության անցկացրած ընտրովի հարցումների արդյունքները վկայում են, որ մասնակիցների մեծ մասը՝ 2/3-ը գերադասում է ունենալ թեկուզ քիչ, բայց երաշխավորված վաստակ: Հարցման մասնակիցների 60 տոկոսը չի բացառում մոտ ժամանակներում կորցնել աշխատանքը, 16 տոկոսը գտնում է, որ նոր աշխատատեղ ունենալը փաստորեն իրական չէ: 1994 թ. հունիսին ՌԴ մի այլ հարցման տվյալներով, հարցման ենթարկվածների 56,1 տոկոսը գործազրկության լուրջ վախ է արտահայտում[14]: Ի տարբերություն Հայաստանի, ՌԴ-ում աշխատատեղը կորցնելու համար վախը բացատրվում է նրանով, որ աշխատավարձը ինչ որ չափով ապահովում է ապրուստի նվազագույն մակարդակը: Հենց այդ պատճառով էլ ՌԴ գների ազատ արձակման և աղաճի հարուցած «շոկը» չկարողացավ ի չիք դարձնել սպառման նվազագույնը ապահովելու համար գերադասելի երաշխավորված զբաղվածության ցանկությունը[15]:

Ներկա պայմաններում ՀՀ-ում աշխատանքի շուկայի իրավիճակի սրությունը, «բացահայտ» և «թաքուն» գործազրկության աճի հետ միասին, կապված է զբաղվածության կառուցվածքի ձևախեղման, նոր անհամամասնությունների առաջացման[16], որակավորում պահանջող աշխատանքի ոլորտը նեղացվելու, որակավորում չպահանջող աշխատանքի ոլորտն ընդլայնվելու, ուստի և աշխատանքային ներուժի օգտագործման արդյունավետության նվազման և, ընդհակառակը, դրա բարձրացման հեռանկարների բացակայության հետ:

ՀՀ աշխատանքի շուկայի լարվածությունը սրվեց նաև այն պատճառով, որ խստագույնս ընկավ որակավորում պահանջող աշխատանքի հարգը, նվազեց երիտասարդության հետաքրքրու-

---

[14] «Вопросы экономики», 1994, № 2, с. 145; Рынок труда в России», с. 20.

[15] «Вопросы экономики, 1994, № 2, с. 143.

[16] Российский социально-политический вестник 1995, № 2, с. 5. Проблемы теории и практики управления, 1997, № 1, с. 62—63.

թյունը որակավորում պահանջող արհեստավարժների նկատմամբ։ Այդ հարցում շահագրգռվածություն չի ներկայացնում նաև արտադրությունը։ Ինչու չէ, սեղանիկների ետևում կանգնած և մանրավաճառության մեջ ընդգրկված տարրական գրագիտություն ունեցող անչափահաս տղաներ, համապատասխան կրթություն ու որակավորում չունեցող կանայք օրական վաստակում են ավելի շատ, քան որակավորում ունեցող բանվորը, ինժեները, բժիշկը, ուսուցիչը, դոցենտն ու պրոֆեսորը ամսվա ընթացքում։ Դա բարոյապես ազդեց ոչ միայն աշխատանքի հարգի, այլև հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների վրա՝ իջեցնելով երիտասարդության շահագրգռվածությունը տեխնիկական ու բնական գիտելիքներ ձեռք բերելու բնագավառում։ Ընդսմին, ընդգծված պետք է շեշտել, որ աշխատանքի շուկայում գրանցված գործազուրկների հետ միասին շատ ծանր իրավիճակ ստեղծվեց աշխատանքային տարիք մուտք գործող պատանիների ու աղջիկների համար։ Դա կապված է ոչ միայն աշխատատեղերի պակասի, այլև տնտեսության կողմից արհեստավարժ մասնագիտական որակավորման նկատմամբ ներկայացվող նվազ պահանջների և, ընդհանրապես, մասնագիտական որակավորման բարոյական արժեզրկման հետ։

Բավական է ասել, որ ձեռնարկություններում, հիմնարկություններում և կազմակերպություններում նոր արհեստներ և մասնագիտություններ սովորող բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը, եթե 1990-ին հասնում էր 51 հազ. մարդու, ապա 1994 թ. պակասել էր ավելի քան 9 անգամ և կազմել ընդամենը 5,9 հազար։ Որակավորման բարձրացման ուսուցման փուլով անցածների թիվը այդ ընթացքում 143,1 հազ. մարդուց իջել էր 6,5 հազարի[17]։ Աշխատողների ընդհանուր թվակազմում զգալիորեն պակասել են ինժեներները, գյուղատնտեսները, անասնաբույժները և բարձր որակավորման այլ մասնագետներ։ Գյուղում ամեն մի մեքենատնտես ինքն է հոգում իր կարիքները։ Նման մասնագետների նկատմամբ պահանջը նվազել է։

---

17 Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 1993—1994 թթ., էջ 28։

Բարձր որակավորում ունեցող անձինք սոցիալապես առավել անպաշտպան խավն են, որոնց մասին վկայում են ինչպես վճարվող աշխատավարձի ցածր մակարդակը, այնպես էլ զբաղմունքի հնարավորությունների պակասը: Ամենահարգինը առևտրում ընդգրկվածությունն է, ուր գրեթե չի պահանջվում բարձր կրթական մակարդակ և հատուկ արհեստավարժ պատրաստություն: Զարգացած երկրներում բնակչության այդ խավը ամենացածր վաստակ ունեցողներն են[18]: Աշխատանքային ներուժի արդյունավետությունը տուժում է ոչ միայն այն պատճառով, որ որակավորում ունեցողներին սպառնում է աշխատանքի հեռանկարի բացակայությունը, հասարակության կողմից անուշադրությունը, այլև այն, որ բարձր որակավորման աշխատուժի արժեզրկումը նոր թափ է առնում, որ նրանք տեղափոխվում են իրենց որակավորման հետ կապ չունեցող ցածր որակավորման աշխատանքների ասպարեզ, քանի որ այստեղ վաստակը բարձր է: Իր հերթին տնտեսական բարձր արդյունավետություն ապահովող ներուժի մի մասն անուշադրության է մատնված[19]:

Այսպիսով, այս հինգ-վեց տարիների ընթացքում փոխվեց զբաղվածների որակական կազմը. արտամղված բարձր արհեստավարժ որակավորում ունեցողներին փոխարինեցին արհեստավարժ-մասնագիտական տեսակետից որակավորում չունեցող անձինք:

Ցպետք է անտեսել, որ Հայաստանի բնակչության մեջ մեծ թիվ են կազմում կրթական և արհեստավարժ որակական բարձր մակարդակով օժտված մասնագետները: Նրանք իրենց որակական հատկանիշներով քննություն են բռնում ոչ միայն ազգային, այլև հանախ միջազգային շուկայում: Ծատերը ազգային շուկայում զբաղված լինելով մասնագիտական զբաղվածությունից, կորցնում են կապը աշխատանքային շուկայի հետ: Նման և

---

18 Российский социально-политический вестник, 1995, № 2, с. 5. Проблемы теории и практики управления, 1997, № 1, с. 63—64.

19 Անցման շրջանում աշխատանքի շուկայի պետական միջամտության մասին հետաքրքիր հարցադրումներ կան համաշխարհային բանկի կողմից հրատարակված Рынки труда и социальная политика в Центральной и Восточной Европе, Чехия, 1994. Ն. Բարրի խմբագրությամբ անգլերենից ռուսերեն համառոտ թարգմանված աշխատությունում:

վերը բնութագրված իրավիճակները տնտեսական արագ անկման հետ միասին նաև դրանով փոխպայմանավորված աշխատանքային ռեսուրսների վերարտադրության բնականոն ընթացքի բռնազբոսիկ խաթարման, այն «շուկայական թերապիայի» քաղաքային օրենքներին քմահաճորեն հարմարեցնելու վաղաժամ և անհեռատես քաղաքականության հետևանքն են:

Ուստի նվազել են հասարակության աշխատանքային ներուժի ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշները: Վերջինս պայմանավորված է ոչ միայն աշխատողների ապատրակավորման ընթացքով, այլև աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության կրթական մակարդակով, արհեստավարժ որակական կազմով, զբաղվածության անբարենպաստ ճյուղային կառուցվածքով:

3. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱՌԱՋԱՐԿՆ ՈՒ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

Տնտեսության տարբեր ճյուղերի միջև աշխատանքային ռեսուրսների բաշխումն ու վերաբաշխումն ապահովելու և շուկայական հարաբերությունների հետագա զարգացման ապարեզում չափազանց մեծ դեր ունի աշխատանքի շուկան:

Աշխատանքային շուկայի նմուշօրինակը մշակելու առումով չափազանց կարևորվում են ինչպես աշխատանքի առաջարկի, այնպես էլ պահանջարկի չափանիշների որոշման ու գնահատման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մի՞չդեռ գործնական կյանքում չեն կիրառվում այնպիսի մեխանիզմներ, որոնցով գոնե մոտավոր պատկերացում կազմվի աշխատանքի շուկան կարգավորող գործոնների և աղբյուրների մասին: Ի՞նչ աղբյուրների հաշվին է կազմավորվում աշխատանքի շուկան, ի՞նչքան մարդ է աշխատելու պահանջ ներկայացնում, դրանց մեջ ի՞նչ տոկոս են կազմում առաջին անգամ աշխատելու ցանկություն արտահայտողները, որոնք որակավորման և մասնագիտական պատրաստման կարիք են զգում, որքա՞ն են թերզբաղվածները, արտադրությունից դուրս մղվածները, որոնց մի մասը վերարտակավորման, նոր մասնագիտություն ձեռք բերելու կարիք ունի:

Աշխատուժի առաջարկի որոշման ելակետը ժողովրդագրական և աշխատանքի բորսաներում մշակված տվյալներն են: Օգտագործվում են կոնկրետ ժամանակահատվածի համար բնակչության և աշխատանքային ռեսուրսների թվակազմի վերաբերյալ համապատասխան գիտական օղակներում նախապես կատարված կանխատեսումները, ինչպես նաև աշխատանքի բորսաների տվյալները: Երկրորդ քայլը աշխատուժի պահանջարկի չափերի գնահատումն է: Աշխատուժի պահանջարկի չափերի մեծությունը որոշելու համար ելակետային տվյալ է հասարակական արտադրության մեջ զբաղվածների, ինչպես նաև առկա ազատ աշխատատեղերի թիվը: Դինամիկայում աշխատուժի պահանջարկի չափանիշները որոշվում են սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսված տնտեսության զարգացման տեմպերով և ուղղություններով, ապագայում դրանցում ապասելիք որակական փոփոխություններով: Այդ քայլի էությունը հասարակական արտադրության զարգացման ընթացքի ուղղությունների և մասշտաբների կանխատեսման հիման վրա նոր աշխատատեղերի թվակազմի մասին մոտավոր իրապատկերի ստեղծումն է: Նախքան այդ անհրաժեշտ է որոշել զբաղվածների և թափուր տեղերի թվաքանակը: Դա, անկասկած, կապված է շատ բարդությունների հետ, քանզի վիճակագրական մարմինները ճշգրիտ տվյալներ չեն կարող հավաքել ստվերային օղակներում զբաղվածների, ինչպես նաև թափուր տեղերի վերաբերյալ: Ներկայումս աշխատանք փնտրողների աճն ուղեկցվում է ազատ աշխատատեղերի թվի նվազմամբ: Խոսքը տրվյալ դեպքում վերաբերում է ոչ միայն մասնագիտական և արհեստավարժ որակական ատոիճանին չհամապատասխանող աշխատատեղերի, այլև ընդհանրապես ազատ աշխատատեղերի բացակայությանը: Ելնելով աշխատանքի բորսաների և համապատասխան գիտական ուսումնասիրությունների տվյալներից՝ պետական շահագրգիռ կազմակերպությունները կանխատեսում են տնտեսապես ակտիվ բնակչության շարժի դինամիկան, նպաստում աշխատանքի շուկայի վարքագծի նպատակամետ ձևավորմանը, աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռներ կազմելու միջոցով ծրագրում են զբաղվածության կառուցվածքը:

Տնտեսության զարգացման ծրագրային ուղղությունների հիման վրա այդ կազմակերպությունները կարող են ուսումնասիրել և կանխատեսել աշխատուժի միջպետական, միջշրջանային, միջճյուղային հոսքերի ուղղությունները և դրանց ընթացքը, տնտեսական լծակների միջոցով ինչ-որ չափով կարգավորել այն, նպատակամետ զբաղվածության ոլորտները կանխատեսելու ճանապարհով նպաստել աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության կարգավորմանը:

Կանխատեսումները վկայում են, որ ռեսուրսային ներուժի մյուս բաղադրիչների զգալի մասի սահմանափակության ընդհանուր ֆոնի վրա Հայաստանը ներկայումս բնութագրվում է և մոտ ապագայում նույնպես կբնութագրվի աշխատանքային ռեսուրսների վերարտադրության բավականին բարձր տեմպերով, ինչպես նաև էժան աշխատուժով, ապագայում մի շարք գործոնների ակտիվացման հետևանքով զբաղմունք չունեցող և գործազուրկ բնակչության ստվարացող զանգվածների առկայությամբ:

Այդ գործոնների առաջին խումբը պայմանավորված է.

— սեփականության տարբեր ձևերի գործունեության վրա խարսխվող արտադրությունները շուկայական հարաբերությունների մեջ ներքաշելու ընթացքի հետագա ծավալումով, որը այսուհետև նույնպես կհանգեցնի համապատասխան շահութաբերություն չապահովող և ոչ արդյունավետ արտադրությունների լուծարմանը, դրանց գործունեության մասշտաբների նեղացմանը և նորերի հանդես գալուն,

— գիտատեխնիկական առաջընթացի օբյեկտիվ ընթացքով, այս ասպարեզներում համաշխարհային չափանիշներին մոտենալու ձգտումով, ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինման, վերապրոֆիլավորման, արդիականացման և տնտեսության ճյուղային կառուցվածքի արմատական փոփոխության գործընթացով, գործընթաց, որը դեռևս չի սկսվել,

— մրցության ծավալումով, աշխատանքի արտադրողականության բարձրացումով, արտադրական որոշ օղակների սնանկացման ու շարքից դուրս գալու հետևանքով աշխատողների անընդհատ կրճատման անխուսափելիությամբ,

— գործազուրկների շարքերում տարեց աշխատանքային տարիքի (50 և ավելի) մարդկանց տեսակարար կշռի բարձրացմամբ: Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում գրեթե անլուծելի են այդ տարիքի մարդկանց վերարտադրման, նոր որակ ձեռք բերելու խնդիրները: Այդ տարիքի մարդիկ դուրս կմղվեն նաև ավանդական արտադրությունների մասշտաբների նեղացման, տնտեսության ճյուղային կազմի փոփոխություններին համընթաց,

— գյուղատնտեսության մեջ ֆերմերային տնտեսությունների ձևավորման, արտադրության ինտենսիվ հիմունքներով զարգացման համար գյուղում «ավելցուկ» բնակչության հանդես գալով և դրանց գյուղատնտեսության մեջ ընդգրկելու հնարավորությունների նվազումով,

— գիտությունների, հատկապես բնական գիտությունների զարգացման նկատմամբ ներկայումս պետության ֆինանսական հովանավորչական դերի ոչնչով չարդարացված նվազումով, գիտական փորձարարական լաբորատոր բազայի կրած վնասներով, մտավոր անձնակազմի հոսունությունն ավելանալու հետ և այլն,

— բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցի անհարկի ընդլայնումով, մի կողմից դրանցում պատրաստվող կադրերի մասնագիտական ուղղվածության և թվաքանակի, իսկ մյուս կողմից, տնտեսության ներկայացրած պահանջների միջև անհամապատասխանության խորացումով:

Գործոնների երկրորդ խումբն ընդգրկում է սպասվելիք ժողովրդագրական իրավիճակը: Հանրապետության ժողովրդագրության ասպարեզում սպասվելիք տեղաշարժերը վերը թվարկված գործոնների հետ միասին կհանգեցնեն աշխատուժի պահանջարկի և առաջարկի ներկայումս գոյություն ունեցող անհաշվեկշռվածության ավելի խորացմանը:

1990-ականի կեսերից Հայաստանը թակոխել է ժողովրդագրության զարգացման մի այնպիսի փուլ, երբ.

— ավելանում է աշխատանքային տարիք մուտք գործող և աշխատելու պահանջ ներկայացնող բնակչության բացարձակ թիվը,

— նվազում է թոշակային տարիք մուտք գործող բնակչությունը, որի հետևանքով առաջիկայում նոր աշխատատեղեր քիչ կազատվեն,

— 1996—2005 թթ. ավելանում է տնտեսապես ակտիվ տարիքի (24—44 տարեկան) բնակչությունը:

Այս բոլորի շնորհիվ 1998—2005 թթ. Հայաստանում աշխատանքային տարիքի բնակչությունն աստիճանաբար երիտասարդանալու միտում կդրսևորի, որը 1991—1995 թթ. մեծ արտագաղթի պատճառով զգալիորեն «ծերացել» է: Ծերացումը կսկսվի նաև XXI դարի առաջին տասնամյակի կեսերից սկսած: Այդ փուլում հավանաբար աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությունն իր բացարձակ մեծությամբ քիչ չափերով կգերազանցի թոշակային տարիք թևակոխող բնակչությանը: Դա ինչ-որ չափով կթեթևացնի աշխատանքի շուկայի իրավիճակը՝ կապված կենսաթոշակի անցնողների հաշվին ավելի շատ աշխատանքային տեղեր ազատվելու հետ:

Մեկ տասնամյակ առաջ կատարած մեր կանխատեսումներով ենթադրվում էր, որ 1996—2005 թթ. տարեկան միջին հաշվով աշխատանքային տարիք պետք է մուտք գործեին 75—80 հազ. պատանիներ ու աղջիկներ: Բայց բնակչության նախընթաց տարիների (1991 թ. սկսած) մի գրացիայի բացասական մեծ մնացորդի պայմաններում այդ թիվը տարեկան միջին հաշվով հավանաբար կկազմի 50—55 հազ. մարդ: ՀՀ համար դա նույնպես պատկառազդու թիվ է:

1990-ականի կեսերից աշխատուժի առաջարկի ավելանալը և աշխատանքի շուկայում լարվածությունը կապված են աշխատանքային տարիք մուտք գործող այն սերնդի հետ, որոնք ծնվել են 1980-ականների ընթացքում: Այդ տարիներին տարեկան միջին հաշվով ծնվել են 79—80 հազ. երեխաներ: Ուստի ծննդաբերության մակարդակը աշխատուժի առաջարկի վրա ներգործում է տարիներ անց, երբ նրանք թևակոխում են աշխատանքային տարիք: 2005 թթ. հետո աշխատանքային տարիք մուտք կգործեն 1990-ականին ծնված երեխաները, որոնք իրենց թվաքանակով տարեկան շուրջ 30 հազարով ավելի քիչ էին 1980-ականների յուրաքանչյուր տարվա ընթացքում ծնվողների թվաքանակից: Ուստի XXI դարի առաջին տասնամյակի կեսից սկսած

աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկը նախորդ տասնամյակի համեմատությամբ զգալիորեն կիջնի: Դրա հետ մեկտեղ, այդ ընթացքում թոշակային տարիք մուտք կգործեն 1940-ականներին ծնվածները, որոնք շատ քիչ էին, քանի որ այն ընդգրկում էր հայրենական պատերազմի տարիները: Այսպիսով, 2006 թ. սկսած աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկի թափի կորուստը կուղեկցվի նախորդ տարիների համեմատությամբ ավելի քիչ ազատվող աշխատատեղերով, ուստի և աշխատուժի պահանջարկի նվազումով: Աշխատանքի շուկայում իրավիճակի լարվածությունը, այդուհանդերձ, չի պահպանվի նախկին սրությամբ, թեև մոտ ապագայում աշխատանքի շուկայում ստեղծված իրավիճակի լարվածությունը կարվի ոչ միայն աշխատատեղերի պակասի, այլև տնտեսության կողմից արհեստավարժ-մասնագիտական որակավորման նկատմամբ ներկայացվող նվազ պահանջարկի և, ընդհանրապես, մասնագիտական որակավորման բարոյական արժեզրկման պատճառով:

Սա թե ինչու Հայաստանի տնտեսական զարգացման նպատակային ծրագրերում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել երիտասարդ աշխատունակ տարիքի բնակչության մեծ մասի որակավորման և զբաղվածության խնդիրներին: Պետք է մշակել միջոցառումների մի համակարգ, որ հնարավոր լինի ապահովել նրանց զբաղվածությունը ժամանակակից արտադրություններում, որոնք մրցունակ լինեն աշխատանքի արտադրողականությամբ, աշխատանքի պայմաններով, աշխատանքի ու արտադրության կազմակերպման կուլտուրայով[20]:

XIX—XX դարերի հանգուցակետում աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության աննախընթաց աճը կնպաստի բնակչության ընդհանուր թվակազմում աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշռի աճին, նրա երիտասարդացմանը և ակտիվ աշխատանքային տարիքի (25—44 տարեկաններ) թվի ավելանալուն: Տարիներ առաջ մեր կանխատեսումներով ենթադրվում էր, որ 1996—2005 թթ. ակտիվ

---

20 Российский социально-политический вестник. 1995, № 2. с. 5.

աշխատանքային տարիքի բնակչությունը տարեկան միջին հաշվով պետք է կազմեր 1 մլն 300 հազ. մարդ՝ 1986—1990 թթ. միջին տարեկան մեկ միլիոն մարդու դիմաց: Արտագաղթը պահպանվելու պայմաններում այդ թիվը թեև զգալիորեն կնվազի, բայց միևնույն է, կմնա բարձր մակարդակի վրա:

Այս բոլորը միասին վերցրած ավելի ու ավելի լարված իրավիճակ կստեղծեն աշխատանքի շուկայում և արտագաղթի մասշտաբների ընդլայնման տեղիք կտան:

Միաժամանակ, աշխատանքի շուկայի ներկա և ապագա իրավիճակը գնահատելիս չափազանց կարևորվում է աշխատանքի շուկայի ռեզերվների բացահայտման հարցադրումը: Այդ ռեզերվները կարելի է դասակարգել.

1. Աշխատանքի շուկայի սահմաններն ընդլայնող կամ նեղացնող ռեզերվներ, որոնք կարող են հանդես գալ կամ անհետանալ՝ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության կապակցությամբ:

2. Արտադրությունից կտրված սովորողներ, վարձակալական կամ պայմանագրային վարձակալական հիմունքներով ֆերմերային տնտեսություններում ընդգրկվածներ, աշխատունակությունը դեռևս պահպանած թոշակառուներ ու հաշմանդամներ, անհատական և ընտանեկան աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվածներ: Ընտանիքի շնչային սպառման մակարդակի յուրաքանչյուր փոփոխություն նրանց կարող է դրդել ներքաշվելու աշխատանքի շուկա և ընդհակառակը՝ պահել ռեզերվային վիճակում:

3. Զինուժում զինծառայության հետ կապված աշխատուժի ռեզերվները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության առջև ներկայումս ծառացած գերխնդիրը զբաղվածության պետական քաղաքականության մշակումն է, այդ հարցում պետության կարգավորիչ դերի հստակեցումը: Նման քաղաքականությունը պետք է տարածվի ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կառույցների գործունեության

վրա: Այդ քաղաքականության կենսագործման հիմքում պետք է դրվեն իրավական օրենքները և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, որոնք, ըստ էության, ունակ լինեն նպաստելու աշխատուժի առաջարկի ու պահանջարկի որոշ հավասարակշռության ապահովմանը:

Աշխատանքի շուկան իր հերթին հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և սպառողական շուկայի հետագա զարգացման կարևոր նախադրյալն է: Հայտնի է, որ որոշակի փոխհարաբերական կապ գոյություն ունի աշխատանքի և ապրանքային ու ծառայությունների շուկաների միջև: Խնդիրը այդ փոխադարձ կապի բնույթը բացահայտելն է, դրա հիման վրա մի կողմից աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը կարգավորելը, իսկ մյուս կողմից ապրանքների ու ծառայությունների նկատմամբ բնակչության ներկայացրած պահանջմունքներն ապահովելը: Այս առումով որոշակի տարբերություն գոյություն ունի Արևմտյան երկրների և Հայաստանի Հանրապետության միջև: Արևմտյան երկրներում ապրանքների ու ծառայությունների շուկան գերհագեցած է, վերջիններիս առաջարկը գերազանցում է պահանջարկին , որը հաճախ արտահայտվում է գերարտադրությամբ: Հայաստանում, ընդհակառակը, հայրենական ապրանքների և ծառայությունների շուկայում պահանջարկը գերազանցում է առաջարկին: Դա բացատրվում է ոչ թե Հայաստանում բնակչության սպառման բարձր մակարդակով, այլ հայրենական արտադրության ապրանքների խիստ ցածր որակով և քանակով: Արևմուտքում ապրանքների ու ծառայությունների փաստացի սպառումը գերազանցում է բանական սպառման նորմայի չափերը, Հայաստանում այն սպառման բանական նորմայի չափերից խիստ ցածր է: Դրա հետ մեկտեղ Հայաստանը դարձել է Արևմուտքի և Մերձավոր արևելքի մի շարք երկրների ապրանքային գերհագեցած շուկայի ցածրորակ և էժան սպառարժեքներն իրացնողը:

Վերը շարադրվածից բխում է, որ Արևմտյան երկրներում նոր ապրանքների արտադրություն կազմակերպելու կամ հին արտադրությունների մասշտաբներն ընդլայնելու սահմանափակ հնարավորություններն իրենց հերթին կաշկանդում են նոր աշ-

խատատեղեր ստեղծելու գործընթացը: Խնդիրը լուծվում է առաջադիմական և կենդանի աշխատանք տնտեսող նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիայի կիրառմամբ. դրա շնորհիվ արտադրվում են ավելի էժան և ավելի շատ նոր սպառարժեքներ: Գործընթացն ուղեկցվում է հին աշխատատեղերի արտամղումով, որոնք փոխարինվում են միանգամայն նոր արհեստավարժ և բարձր որակական կազմ ունեցող ավելի քիչ աշխատողներով: Այդ տեսակետից Հայաստանը օժտված է տեղական հանքահումքային ռեսուրսների վերամշակման հիման վրա հանրապետությունում պահանջարկ վայելող և արտահանման մեծ պոտենցիալով օժտված հայրենական արտադրությունների կազմակերպման և հների ընդլայնման միջոցով նոր աշխատատեղեր ստեղծելու պոտենցիալ ռեզերվներով: Անհրաժեշտ է խելամտորեն գործի դնել այդ ռեզերվները: Գոյություն ունի նաև մշտական և հետադարձ կապ. գործարկվող աշխատատեղերն իրենց հերթին, ապրանքների արտադրության և ծառայությունների ոլորտի ընդլայնման նոր պահանջ են առաջադրում:

Ակնհայտ է նաև այն, որ արտադրության ծավալների ընդլայնման հետ մեկտեղ, զբաղվածության աճն ուղիղ համեմատական է միավոր արտադրանքի հաշվով ծախսերի կրճատման, ուստի ապրանքների արժեքի նվազման հետ, եթե այն տեղի է ունենում նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման պայմաններում, տեխնիկա, որ հավաքական աշխատանքի տնտեսման նպատակ է հետապնդում:

Ուստի խիստ անհրաժեշտ է դառնում աշխատանքի շուկան կարգավորող մեխանիզմների մշակումը: Դա առավել ևս անհրաժեշտ է գործազրկության և թերզբաղվածության պայմաններում, քանի որ ժողովրդագրական գործոնի հետ միասին գործազրկությունը շատ բանով կանխորոշում է աշխատանքային շուկայի իրավիճակը և աշխատանքային ռեսուրսների օգտագործման ընթացքը:

Գրականության մեջ զանազանում են աշխատանքի շուկայի իրավիճակի երեք տիպ.

— աշխատուժի առաջարկի նկատմամբ մեծ պահանջարկը, երբ առկա են ազատ աշխատատեղեր,

— աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածությունը, երբ աշխատուժի առաջարկն ու պահանջարկը հավասարակշռվում են,

— աշխատուժի առաջարկը գերազանցում է պահանջարկին, առկա է գործազրկությունը, երբ աշխատունակ տարիքի բնակչության որոշ մասը ցանկանում է աշխատել, փնտրում է համապատասխան աշխատատեղ, բայց այն չի գտնում և ժամանակավորապես հաշվառվում է զբաղվածության պետական ծառայության մարմինների կողմից:

Հայաստանը, ինչպես նկատեցինք, բնութագրվում է վերջին տեսակով:

Սակայն զբաղվածության մասին պատկերացումը չի սկսվում և չի ավարտվում հաշվառման վերցված և «թաքուն» գործազուրկներին աշխատանքով ապահովելով կամ նրանց նպաստ վճարելով:

Զբաղվածության քաղաքականությունն ավելի ընդգրկուն է. գործազուրկներին ցույց տրվող օգնությունը դրա մի մասն է[21]: Այդ քաղաքականության ողջ իմաստը զբաղվածությունը միջոցից նպատակի վերածելն է, արդյունավետ զբաղվածություն և աշխատանքային ներուժի զարգացումն ապահովելը: Առաջինն ապահովվում է հասարակական արտադրության կառուցվածքային առաջադիմական տեղաշարժեր իրականացնելու միջոցով աշխատունակ տարիքի բնակչությանը զբաղվածության համապատասխան ոլորտներում ընդգրկելով: Դրանով իսկ զբաղվածության բանական կառուցվածքի հիմք է դրվում: Երկրորդը՝ իրականացվում է կրթական, արհեստավարժ պատրաստման համակարգի զարգացմամբ կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման միջոցով: Կարգավորվում է հասարակական արտադրությունից արհեստավարժության տեսակետից ոչ պիտանի աշխատատեղերի վերացման, դրանցում ընդգրկված աշխատողներին աշխատանքից ազատելու ընթացքի կարգավորումը, երկարատև կապիտալ ներդրումների քաղաքականությամբ նոր աշխատատեղերի ստեղծումը և

---

21 Մանրամասն տես 16 տողատակի հիշատակվող աղբյուրի համապատասխանաբար 7—9 և 62 էջերը:

դրանք նոր որակավորում ունեցող մարդկանցով համալրելու գործընթացը: Խնդիրը գործընթացին նպաստող օրենսդրական դաշտի ստեղծումն է, տնտեսական լծակների կիրառումը, լծակներ, որոնք դառնան ոչ միայն հին աշխատատեղերի անհետացմանը, այլև նորերի ստեղծմանը նպաստող գործոններ: Նման պարագաներում պետք է պարարտ հող ստեղծել աշխատուժի ազատման և բանական վերաբաշխումն իրականացնելու համար: Պետք է կիրառել հնարավոր ու անհրաժեշտ բոլոր միջոցները՝ իրենց գոյությունը որևէ բանով չարդարացնող աշխատատեղերից ազատվելու համար: Այլապես տնտեսական հետընթացը երկար ժամանակ կհետապնդի մեզ:

Խոսքը, օրինակ, Հայաստանի պայմաններում վերաբերում է արդյունաբերական այնպիսի արտադրություններին, որոնց հետագա գոյությունն անիմաստ է ոչ միայն հնացած արտադրական կարողությունների, այլև որակավորում չպահանջող և ֆիզիկական ծանր աշխատանքի օգտագործման պայմաններում: Նման արտադրությունները չեն կարող ոչ մի կերպ միջազգային մրցակցությանը դիմանալ:

Զբաղվածության ակտիվացման հարցում տեղին կլինի վկայակոչել պետության ակտիվ ֆինանսական քաղաքականության մասին Զ. Մ. Բեյնսի հիմնավոր տեսությունը: Ըստ այդ տեսության զբաղվածությունը խրախուսելու նպատակով պետությունը պետք է իրականացնի երկարատև կապիտալ ներդրումներ, այդ նպատակով ձեռներեցներին տրամադրվող միջոցները պետք է ունենան մարման ցածր տոկոսադրույքներ, դրսևորեն անընդհատ աճի միտում, նպաստեն լրացուցիչ վճարունակ պահանջարկի ստեղծմանը, աշխատուժի և արտադրական կարողությունների օգտագործման մակարդակի բարձրացմանը, շահույթի նորմայի կայունացմանը, դրա հետագա աճին և այլն:

Աշխատանքի շուկայի և զբաղվածության քաղաքականությունը ոչ միայն պետական կառավարման հարաբերականորեն ինքնուրույն ենթահամակարգ է, այլև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջ ռազմավարության անբաժանելի և առաջնահերթային մասը:

Զբաղվածության և սոցիալ աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման բացակայության պայման-

ներում շուկայական տարերքը նույն տարերայնությամբ իր հետ բերում է սոցիալական ցնցումներ, ինչը տեղի ունի Հայաստանում:

Պետությունը իր սոցիալական ֆունկցիայով մեծ դեր է խաղում աշխատանքի շուկայի կարգավորման հարցում: Այդ է վկայում Շվեդիայի օրինակը: Իր սոցիալական ֆունկցիայով Շվեդական պետությունը իրականացնում է ազգային եկամտի վերաբաշխումը, ապահովում քաղաքացիների բարձր կենսամակարդակ, պաշտպանության տակ վերցնում աշխատողների արհեստավարժ պատրաստման և վերապատրաստման գործը: Պետությունն ինքն է ձևավորում աշխատանքի շուկայի ուղղվածությունը, մշակում կարգավորման սկզբունքներ:

Արևմտյան երկրներում պետական մակարդակով մշակվում և ձևակերպվում են տնտեսության կառուցվածքային փոփոխությունների հետևանքով առաջացած կայուն գործազրկության չափերը մեղմելու բազմաթիվ քայլեր: Այդ տեսակետից տարածված է աշխատանքի շուկայի ճկունությունը բարձրացնող այնպիսի միջոցառումների կիրառումը, որոնք իրենց բնույթով հղղված լինեն տնտեսության տարբեր ոլորտների, ձեռնարկությունների և տարածքների միջև աշխատուժի օբյեկտիվ շարժի գործընթացի դյուրացմանը:

Ամբողջ շարադրանքից հետևում է, որ աշխատանքի շուկայում պետությունը կարող է կիրառել պասսիվ և ակտիվ քաղաքականություն:

Պասսիվ քաղաքականության հիմնական նպատակը գործազուրկների դրամական նպաստների վճարման համակարգի մշակման կազմակերպումն է, նպաստի չափերի սահմանումն այն հաշվով, որ դրանով իսկ հնարավոր լինի ապահովել գործազուրկի և նրա խնամքի տակ գտնվող անձանց գոյության նվազագույն մակարդակը (ինչը Հայաստանում լրիվ շրջանցվում է), ոչ դրամական ձևերով նրանց սոցիալական պաշտպանվածության աջակցության կազմակերպումը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում լայնորեն տարածված է գործազուրկների ապահովագրությունը: Դա նույնպես դիտվում է որպես պասսիվ քաղաքականության բաղադրամաս: Հայաստանում մասնավորեցումներն ու ապապե-

տականացումը չուղեկցվեցին մասնավորների կամ բաժնետիրական ընկերությունների կողմից ապահովագրական ընկերությունների հանդես գալով:

Գործազրկությունից մարդկանց ապահովագրությունը հիմնականում ուղղված է բնակչության սպառունակ պահանջարկի խիստ անկման պայմաններում ֆինանսական խթանների ավտոմատ համակարգի միջոցով գնողունակությունը ինչ-որ մակարդակի վրա պահելու նպատակին:

Զբաղվածության պետական ակտիվ քաղաքականության նպատակը աշխատանքի շուկայի ցնցումները տանելի դարձնելու համար աշխատատեղ զբաղեցնելու կամ այն պահպանելու համար մարդկանց մրցունակությունը բարձրացնող միջոցառումների համակարգի մշակումն ու կիրառումն է:

Տվյալ դեպքում նկատի է առնվում կիրառվող պետական քաղաքականությամբ ուսուցման, արհեստավարժ պատրաստման ու վերապատրաստման, այդ նպատակով համապատասխան կոնսուլտացիաների կազմակերպումը, ինչպես նաև մանր գործարարության, ինքնազբաղվածության, անհատական աշխատանքային գործունեության համար մարդկանց մասնակցությանը նպաստող պետական քաղաքականության իրականացումը, բոլորի համար հավասար օրենսդրական դաշտի ապահովումը: Խնդիրը վերաբերում է ոչ թե աշխատանք չունեցող անձանց նկատմամբ դրամական նպաստների ձևով պետության կողմից ցուցաբերվող սոցիալական պաշտպանվածության խնդիրներին, այլ մարդկանց աշխատանքային ակտիվության բարձրացմանը սատար կանգնելուն, այն բանին, որ գիտատեխնիկական հարափոփոխ առաջընթացի պայմաններում մարդը իր և ընտանիքի գոյությունը կարողանա պահպանել միայն ու միայն աշխատանքով:

Փլուզված ՆԽՄ բոլոր հանրապետություններում ընդհանրապես, Հայաստանում մասնավորապես, կիրառվող տնտեսական քաղաքականությունն իր բուն էությամբ չի բխում բնակչության անգամ նվազագույն զբաղվածությունն ապահովելու անհրաժեշտությունից: Իր տնտեսական քաղաքականությամբ պետությունը չի ստանձնում աշխատունակ բնակչությանը համապատասխան աշխատանքով ապահովելու որևէ երաշխիք:

Այդ բնագավառը թողնված է բախտի քմահաճույքին: Չեն մշակվում սոցիալ-տնտեսական զարգացման այնպիսի ծրագրեր, որոնք ըստ էության ունենան բնակչության օգտակար զբաղվածության, տնտեսության տարբեր ճյուղերի, զբաղմունքի տարբեր ոլորտների միջև աշխատանքային ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակներ: Զբաղվածությունը պետք է դիտել որպես տնտեսական առաջընթացի խթանման կարևոր պայման:

Բազմասեփականության հիման վրա իրականում անցումը շուկայական հարաբերությունների ենթադրում է բնակչության զբաղվածության և արտադրողական ուժերի տեղաբաշխման ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության որակական փոփոխություն: Նման փոփոխությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ շուկայական տնտեսության ռելսերի վրա փոխադրվող պետական ձեռնարկությունները պետք է օժտված լինեն աշխատանքային պրոցես ներգրավվող աշխատանքային ռեսուրսների քանակն ու որակը սահմանելու ավելի մեծ ինքնուրույնությամբ, այլև նրանով, որ հետագա զարգացում պետք է ստանան տնտեսական գործունեության ոչ պետական ձևերը: Անցումը շուկայական հարաբերությունների ինքնին ենթադրում է տնտեսության մեջ ազատ և անկախ ապրանքարտադրողների առկայություն: Նման պայմաններում անցումը շուկայական հարաբերությունների թեև անհնարին է առանց աշխատանքային ռեսուրսների ազատ շարժի, սակայն դա բնավ չի նշանակում, որ պետությունը լրիվ հրաժարվելու է աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հաշվեկշռության ապահովման որոշ կենտրոնացված քայլերից, աշխատանքային ռեսուրսների կառավարումից:

Զբաղվածության պետական քաղաքականությունը պետք է որակական փոփոխություն ապրի: Զբաղվածության ուղղակի կարգավորման պետական քաղաքականությունը պետք է զուգակցել դրա անուղղակի ձևերի հետ՝ օգտագործելով տնտեսական լծակները, շուկայական մեխանիզմները, ազատ մրցությունը: Ինչ խոսք, սեփականության ձևերի աստիճանական զարգացումը և տնտեսական ինքնուրույնության հաստատումը արմատապես կփոխեն աշխատողի վարքագիծը աշխատանքի և

արտադրության միջոցների օգտագործման նկատմամբ: Հարկադրանքն իր տեղը կզիջի պահանջարկի ու առաջարկի ազդեցության տակ ձևավորվող աշխատանքի շուկայի գոյացմանը, որը կկարգավորվի զուտ տնտեսական լծակներով: Մինչդեռ աշխատանքի շուկան ձևավորում է միայն իրականացվող սեփականաշնորհումների ազդեցությամբ: Հարկավոր է մշակել զբաղվածությանը նպաստող պետական ռազմավարական ծրագրեր:

Բազմաձևականության պայմաններում աշխատանքի ոլորտում պետության նախկին անմիջական վերահսկողության փոխարեն վճռական նշանակություն պետք է ստանա աշխատանքային հարաբերությունների օրենսդրական կարգավորումը: Վարձու աշխատանքում ընդգրկված քաղաքացիների շահերի իրավական պաշտպանության նպատակով պետությունն օրենսդրական հիմունքներով պետք է մշակի և գործադրի նվազագույն երաշխավորված աշխատավարձի և աշխատօրվա տևողության սահմանները, կանոնակարգի գործառույթների իրավունքները, նրանց կամայականությունները, աշխատանքի պայմանների և սոցիալական ֆոնդերը կազմավորող պարտադիր մասնակցումների նկատմամբ կիրառի վերահսկողության հատակ և ճկուն համակարգ, խախտման դեպքում՝ տույժեր և տուգանքներ: Պետք է իրական պայմաններ ստեղծել արհմիությունների, որպես բանվորների և ծառայողների շահերի կոլեկտիվ պաշտպանի դերի կենսագործման համար, որն իրագործվում է արհմիությունների կողմից ընդունված կանոնադրական սկզբունքներով և հաստատվում է օրենսդրական հիմունքներով:

Արդյունավետ զբաղվածություն ապահովելու նպատակով արտադրողական ուժերի տեղաբաշխմանը, տնտեսության ճյուղային կառուցվածքի նպատակամետ ձևավորման հետագա ընթացքի բարելավմանը, այդ ճանապարհով աշխատանքային ռեսուրսների միջպետական, միջշրջանային, միջճյուղային տեղաշարժերի ընթացքի կարգավորմանը պետությունը կարող է մասնակցել տնտեսության ռազմավարական քաղաքականությամբ, ազդելակող, սահմանափակող կամ խթանող տնտեսական լծակներն ակտիվորեն շարժման մեջ դնելու միջոցով, երկարատև կապիտալ ներդրումների բաշխման, հարկային, վար-

կային, մաքսային, ինչու չէ, նաև աշխատավարձի նպատակային քաղաքականությամբ: Այդ քաղաքականությամբ պետությունը կարող է խթանել կամ արգելակել նոր աշխատատեղերի ստեղծումը:

Աշխատանքի շուկայի և զբաղվածության քաղաքականությունը ոչ միայն պետական կառավարման հարաբերականորեն ինքնուրույն ենթահամակարգ է, այլև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության անքակտելի և առաջնահերթային բաղադրամաս:

Ուստի հանրապետության համար գերխնդիրը նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով պետական ազգային քաղաքականության մշակումն է և կիրառման բարենպաստ պայմանների ապահովումը: Նման քաղաքականությունը պետք է դառնա երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կարևորագույն բաղադրամասը: Խոսքը մասնավորապես վերաբերում է հանրապետության ներքին տնտեսական միջոցների հավաքագրմամբ ազգային տնտեսության ակտիվացմանը, նրա դինամիկայը բնորոշող, պաշտպանական ու ռազմավարական նպատակներ հետապնդող ճյուղերի առաջնահերթ զարգացմանը, նրանց նկատմամբ հովանավորչական քաղաքականության կիրառմանը:

Այդ նպատակով անցման շրջանում առաջին հերթին անհրաժեշտ է[22].

— աստիճանաբար հաղթահարել երկրի տնտեսական վերարտադրողական կառուցվածքի ձևախեղումները,

— միջոցներ ներդնել հանրապետության տնտեսության վերակառուցման, պաշտպանունակ՝ ինչպես նաև բնակչության սպառունակ պահանջները բավարարող առանձին ճյուղերի և արտադրությունների առաջնահերթային զարգացման նպատակով: Դա վերաբերում է արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բարելավմանը, երկրի պաշտպանունակությունն ապահովող ճյուղերի զարգացմանը, պետական պայմանագրային, պատվերային, ինչպես նաև արտոնյալ երկարատև ներդրումա-

---

22 Ավելի մանրամասն տես В. Ходжабекян, Трудовые ресурсы и проблемы занятости, «Проблемы теории и практики управления», 1996, № 1, с. 48—54.

յին քաղաքականությամբ գյուղատնտեսության ներկայումս խորացող ապամասնագիտացումը հաղթահարելուն,

— մշակել և իրականացնել առանձին շրջանների ու գոտիների հատուկ նպատակային ծրագրեր, նպաստել միջգյուղային և ներգյուղային, միջտարածքային և ներտարածքային տնտեսական կապերի ձևավորման ընթացքին, օգտագործելով տեղական հանքահումքային և գյուղատնտեսական ռեսուրսները,

— արտոնյալ պայմաններով վարկ տրամադրել նպատակային ծրագրերում ոչ պետական սեկտորից մասնակցություն ունեցող ձեռներեցներին,

— ապահովել հասարակական արտադրության և զբաղվածության այնպիսի մակարդակ, որն առնվազն դառնա բնակչության կենսամակարդակի նվազագույն չափը պահպանելու երաշխիք[23],

— խթանել տնտեսական աճի երկարատև կապիտալ ներդրումներ չպահանջող գործոնները, օրենսդրական դաշտ և համապատասխան պայմաններ ստեղծել փոքր գործարարության և ինքնազբաղվածության համար,

— պայմաններ ստեղծել ավելցուկ զբաղվածության անհետացման, արհեստավարժ տեսակետից ոչ պիտանի աշխատատեղերն ավելի որակյալներով փոխարինելու համար: Նպաստել ավելի որակյալ աշխատողների թվակազմի ավելացմանը այն ձեռնարկություններում, որոնց արտադրանքն իրացվում է և ունի արտահանման հեռանկար,

— օրենսդրական հիմունքներով ապահովել բոլորի համար հավասար հնարավորություններ, որոնք բխեն բնակչության սոցիալ ժողովրդագրական բոլոր խավերի, առավելապես քիչ ապահովված ընտանիքների շահերից: Հավասարապես պաշտպանել ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների շահերը, նպաստել աշխատանքի լուկայում բոլորի մրցունակության բարձրացմանը,

— աշխատատեղերը քվոտավորել սոցիալական պաշտպանության կարիք ունեցող հաշմանդամների, զորացրված զինծառայողների, բազմազավակ և միայնակ ծնողների, փախստա-

---

23 Հարցադրումը տե՛ս «Вопросы экономики», 1994, с. 148.

կանների և սովորական ճանապարհով աշխատատեղ չճարողների համար,

— նպաստել աշխատանքի շուկան «թափանցելի» դարձնելուն, ստեղծել տվյալների բանկ մի կողմից գործազուրկների և աշխատանք փնտրողների, մյուս կողմից՝ ազատ աշխատատեղերի առկայության մասին՝ իրենց արհեստավարժ որակական տվյալներով,

— կանանց կենսաթոշակի անցնելու տարիքը սահմանել 60 տարեկան դառնալուց հետո, ավելի վաղ տարիքում կանանց կենսաթոշակի անցնելու արտոնություն ընձեռել 3 և ավելի երեխա ունենալու պայմաններում (ներկայիս 4 և ավելիի փոխարեն),

— կանանց համար օրենսդրորեն արգելել օրենքով սահմանված աշխատաժամանակից ավել աշխատելը,

— սահմանափակել մեկ աշխատողի համար աշխատատեղերի թիվը,

— սահմանափակել համատեղությունների հնարավորությունը,

— ժամանակի ընթացքում հող նախապատրաստել թոշակառուների, նախաթոշակային տարիքի բնակչության, հաշմանդամների, բազմազավակ մայրերի նպաստների չափերը բարձրացնելու և նվազագույն կենսամակարդակն ապահովելու համար: Իր սոցիալական նշանակության հետ միասին դա հիմք կդառնա նրանց զբաղեցրած աշխատատեղերն ազատելու համար, պայմանով, որ աշխատատեղերի ազատումն ուղեկցվի նվազագույն սոցիալական կորուստներով, չէ որ աշխատանքի շուկան իր դրական հետևանքներով հանդերձ բացասական ազդեցություն կարող է թողնել հասարակության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Չպետք է մոռանալ, որ տարերային շուկան առաջին հերթին սրբում տանում է սոցիալապես անպաշտպան խմբերի աշխատատեղերը: Ուստի պետությունն իր հստակ վերաբերմունքը պետք է ունենա առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերի նկատմամբ:

5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զբաղվածության պետական քաղաքականություն իրականացնելու համար կպահանջվեն վիթխարի ֆինանսական միջոցներ: Ներկայումս պետության սահմանափակ ֆինանսական միջոցների պայմաններում դրանք կարող են գոյանալ հետևյալ աղբյուրների հաշվին.

— ստվերային տնտեսության բացահայտմամբ գոյացող միջոցներ,

— քրեածին տարրերից առգրավված միջոցներ,

— երկարատև կապիտալ հատկացումներից կայուն տոկոսադրույքներով կատարվող մասհանումներ,

— առևտրական բանկերից գանձվող միջոցներ,

— արտաբյուջետային ֆոնդերից գանձվող միջոցներ, որոնք ներկայումս գործում են բացառապես շրջանառության ոլորտում,

— մասնավոր գործատուներից, վարձու աշխատանքից եկամուտ ստացող այլ քաղաքացիներից պետական բյուջե մուտքագրվող նպատակային հատկացումներ՝ ելնելով դրանց եկամտի մեծությունից, աճող տոկոսադրույքներով,

արտաքին և ներքին առևտրից գոյացող եկամուտներից կայուն տոկոսադրույքներով կատարվող հատկացումներ,

— օտարերկրյա ինվեստիցիաներից պայմանագրային հիմունքներով կատարվող հատկացումներ,

— նվիրատվություններ:

Հարկավոր է ստեղծել.

— զբաղվածության նպատակային հիմնադրամ,

— զբաղվածության ապահովագրական ֆոնդեր,

— զբաղվածության համապետական, մարզային և շրջանային մակարդակներով հատուկ ռեզերվային ֆոնդեր:

Ձևավորվող ֆինանսական միջոցները կարող են հատկացվել ներքոհիշյալ նպատակների համար.

— պետական կառույցներում նոր աշխատատեղերի ստեղծում,

— օրենսդրորեն սահմանված ժամանակամիջոցում գործազուրկների երաշխավորված նպաստի վճարում,

— աշխատանքային տարիք մուտք գործող և աշխատելու ցանկություն ունեցող մարդկանց և գործազուրկների որակավորման, վերաորակավորման մասնագիտական կողմնորոշման, հատկապես նոր մասնագիտությունների ուսուցման, աշխատուժի շարժի ընթացքում ծագող նոր պահանջների համեմատ աշխատողների վերահարմարեցման և այլ նպատակներով,

— արտակարգ իրավայմաններում զբաղվածության հույժ կարևոր հարցեր կարգավորելու, զբաղվածության սուր կարիք ունեցող շրջաններից բնակչության անհարկի տարաբնակեցումը մեղմելու և այլ նպատակների համար: Նման նպատակների հիմնականում կարող են ծառայել համապետական, մարզային և շրջանային մակարդակներով ստեղծված հատուկ ռեզերվային, ինչպես նաև ապահովագրական ֆոնդերը,

— արտոնյալ պայմաններում կանանց աշխատատեղով ապահովելու և աշխատանքային պայմանները լավացնելու համար: Այդ նպատակով.

ա) աշխատող կանանց համար գործունեության բոլոր ոլորտներում օրենսդրական կարգով սահմանել տղամարդկանց համեմատ մեկ ժամով ավելի պակաս աշխատանքային օր,

բ) կանանց համար գործունեության ոլորտն ընդլայնել հատկապես սպասարկման ճյուղերում, նրանց չընդգրկել վնասակար արտադրություններում և ծանր ֆիզիկական աշխատանքում,

գ) խրախուսել տնային պայմաններում, կրճատ աշխատօրով կամ շաբաթով, կանանց զբաղվածության ընդլայնումը,

դ) գյուղական բնակավայրերում փոքր մեքենաների կիրառմամբ նպաստել օժանդակ տնտեսություններում կանանց զբաղվածության հեշտացմանը և ընդլայնմանը, պետական պատվերային և գնման համակարգի միջոցով տնայնագործական և արհեստագործական արտադրությունների զարգացմանը,

ե) աջակցել «մայրության ֆոնդ» հիմնադրամին, որը գերազանցապես կարող է օգտագործվել կանանց աշխատանքային և մայրական պարտականությունների միջև ճիշտ համա-

մասնություն ապահովելու, մայրության և մանկության պաշտպանության, նորածինների խնամքի համար մայրերին հատկացվող ֆիզիոլոգիական արձակուրդների ժամկետները երկարացնելու և սոցիալական այլ արտոնությունների համար: Նման ֆոնդերն ինչ-որ չափով կլրացնեն պետության ժողովրդագրական քաղաքականությունը:

Զբաղվածության պետական քաղաքականության իրականացման գործընթացում մասնավոր գործատուներին, մասնավորապես փոքր և միջին բիզնեսով զբաղվող ձեռներեցներին լայնորեն ընդգրկելու նպատակով հավանաբար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան արտոնություններ ապահովող հատուկ օրենսդրական դաշտ:

Դա հնարավորություն կընձեռի.

— նվազեցնել զբաղվածության նպատակով եկամուտներից պետական բյուջե մուտքագրվող, սոցիալական ապահովությանը հատկացվող մուծումների չափերն այն գործատուներից, ովքեր նոր աշխատատեղեր են ստեղծել, ուր ընդգրկել են առաջին անգամ աշխատելու ցանկություն ունեցող և աշխատանքային տարիք մուտք գործած քաղաքացիներ, ինչպես նաև կանանց և դպրոցի շրջանավարտներին:

— զբաղվածության ոլորտն ընդլայնելու համար **հատուկ ռիսկի** դիմած գործատուներին՝ սատար կանգնել սոցիալական ապահովության ֆոնդերի հաշվին,

— տրամադրել արտոնյալ վարկ ցածր տոկոսադրույքներով, մարման երկարատև ժամկետներով, պետական համակարգի մեջ չմտնող այն ձեռներեցներին, որոնք նոր աշխատատեղեր ստեղծելու համար ներդրումներ են կատարել ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր արտադրություններում,

— այդպիսի մասնավոր ձեռներեցներին ընձեռել համապատասխան պայմաններ և շահագրգռել պետական նպատակային ծրագրերի մեջ ընդգրկվելու համար,

— առանձնահատուկ ուշադրություն նվիրել պետական և մասնավոր ոլորտներում պայմանագրային հիմունքներով պետական պատվերների և գնման երաշխավորված համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, պայմանագրի կետերին համա-

պատասխան զբաղվածությունն ընդլայնող ձեռներեցների ընկատմամբ կիրառել տարբերակված ներդրումային, արտոնյալ պայմաններով վարկային և հարկային քաղաքականություն[24]:

— իջեցնել գանձվող շահութահարկի տոկոսադրույքներն այն ձեռներեցների, ովքեր ստեղծել են նոր աշխատատեղեր, խուսափել են աշխատատեղերի անհարկի հախտոն կրճատումներից: Գանձվող շահույթի նվազման չափերը կախվածության մեջ դնել նոր աշխատատեղերի ստեղծման, դրանցում ընդգրկվողների որակավորման մակարդակի, որակավորում ունեցող աշխատողներին իրենց աշխատատեղերում պահելու չափանիշներից,

— սահմանափակել զանգվածային կարգով աշխատատեղերը կամայականորեն կրճատող գործատուների իրավունքները,

— ապասվելիք ազատումներ ձեռնարկել նախապես համաձայնեցնելով զբաղվածության ծառայության մարմինների և արհմիությունների հետ,

— կիրառել աշխատանքային կոլեկտիվներում բանվորների որակյալ մասի տեղում պահելու քաղաքականություն: Օգտագործել արտասահմանյան երկրների փորձը, երբ տնտեսության ճգնաժամային իրավիճակի պայմաններում հիմնական կադրային կազմի պահպանումը լուրջ հաջողություններ է ապահովում հենց ծախսերը նվազեցնելու իմաստով, եթե նոր կադրերի պատրաստումը կապված է նոր լրացուցիչ ծախսերի հետ, ապա հին կադրերի վերահարմարեցումը նման ծախսեր չի պահանջում[25],

— պետական պատվերների միջոցով նպաստել աշխատուժի միջշրջանային և միջճյուղային բաշխմանը, իրականացնել նպատակային տարաբնակեցումներ,

— առանձնահատուկ պայմաններ ստեղծել պետական համակարգի մեջ չմտնող այն ձեռներեցների համար, որոնք մեծ

---

24 Մանրամասն տե՛ս Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը և միգրացիաները, Գործարար Հայաստան, 1995, հ. 3. էջ 7—12: Концепция женской занятости, с. 28—34, Н. М. Шашкин, Экономическая деятельность женщин и роль в перестройке российской экономики, с: 28—29:

25 Մանրամասն տե՛ս «Рынок труда в России», с. 80.

ռիսկի են դիմել և իրենց տնտեսական գործունեությամբ նպաստում են հանրապետության առանձին տարածքներում զանգվածային գործազրկությունը մեղմելուն, զբաղվածության արդյունավետության բարձրացմանը, կասեցնում են բնակչության անհարկի արտագաղթը, նպաստում տեղում՝ իր բնակավայրում նրա կայունացմանը: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն ձեռներեցներին, ովքեր գյուղատնտեսական փոքր մեքենաների արտադրությամբ աջակցում են գյուղում աշխատանքի ասպարեզի ընդլայնմանը՝ գյուղին մատակարարելով գյուղատնտեսական մեքենաներ, պահեստամասեր, վառելիք, թունաքիմիկատներ և այլն:

Գրականության մեջ առաջարկվում են զբաղվածության պետական կարգավորման համապետական միջոցառումների տարբերակված մեթոդներ, որոնք, մեր կարծիքով, կարող են կիրառվել նաև ՀՀ-ում: Այն ունի հետևյալ սխեմատիկ տեսքը:

Զբաղվածության սոցիալ-տնտեսական կարգավորման ուղղությունների տարբերակումը[26]:

1. Սոցիալ-ժողովրդագրական

ա) բնակչության վերարտադրության կարգավորումը,

բ) որակյալ կադրերի միգրացիոն հոսքերի նվազեցումը,

գ) գաղթողների, այդ թվում փախստականների զբաղվածության աջակցումը,

դ) թոշակառուների և բնակչության թույլ պաշտպանված այլ խմբերին սոցիալական աջակցությունը:

2. Ընդհանուր տնտեսական

ա) աշխատատեղերի պահպանության նպատակով պետական լրավճարներ, տեղական մարմիններին պետական նպաստներ, վարկային և հարկային արտոնություններ և այլ ձևեր,

բ) մանր և միջին գործարարության խթանում ի շահ զբաղվածության,

գ) զբաղվածության պետական երաշխիքներ ձեռնարկությունների սեփականաշնորհումների, ֆինանսական առողջացման և սնանկացումների դեպքերում,

---

26 Նույն տեղում, էջ 81:

դ) պետական երաշխիքներ աշխատողների զանգվածային ազատման վտանգի դեպքում,

ե) առանձին տարածքները, «առաջնահերթային զարգացման» կատեգորիաներին դասելը:

3. Զբաղված բնակչության աշխատանքով ապահովում և աջակցություն սոցիալական դիրքում

ա) զբաղվածության ծառայության ենթակառուցվածքի զարգացումը, չզբաղված բնակչության՝ աշխատանքի ընդգրկելու չափերի ավելացումը,

բ) չզբաղված բնակչության արհեստավարժ վերապատրաստման համակարգի զարգացումը,

գ) գործազուրկների սոցիալական աջակցության համակարգի կատարելագործումը,

դ) աշխատատեղերի քվոտավորումը և զբաղվածության ֆոնդից դրանց ստեղծման ֆինանսավորումը,

ե) հասարակական ժամանակավոր աշխատանքների ծավալումը:

Այսպիսով, պետք է մտահոգվել նոր աշխատատեղերի ստեղծման պետական ազգային քաղաքականության մշակումով, երբ առաջին պլան է մղվում աշխատանքի շուկայի ձևավորման պետական ռազմավարական քաղաքականությունը: Պետությունը տնտեսական լծակների, պետական պատվերների և գնումների, նպատակային երկարատև ներդրումների, տարբերակված և արտոնյալ ֆինանսավարկային քաղաքականությամբ պետք է ներազդի և նպաստի տնտեսության ցանկալի տեղաշարժերի, ուստի և աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքի վրա:

6. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Շուկայական տարերքի պայմաններում սոցիալական ցնցումներն անխուսափելի են: Դա հատկապես վերաբերում է աշխատանքի շուկային: Ինչպես արդեն հիշատակվել է, անցման փուլում սոցիալական ցնցումները մեղմելու և տանելի դարձնելու, ինչպես նաև սոցիալական արդարության շահերը

պաշտպանելու գլխավոր մարմինը ինքը պետությունն է՝ իր վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ: Զբաղվածության ապահովման այդ քաղաքականությունն իրագործելու նպատակով հանրապետությունում ստեղծվել են զբաղվածության ծառայության պետական մարմիններ, ընդունվել «Զբաղվածության մասին» օրենքը: Այդ օրենքով սահմանվել է նաև գործազրկության կարգավիճակ: Զբաղվածության ծառայության պետական մարմինները պետք է զբաղվեն գործազուրկների և ընդհանրապես աշխատանք փնտրող այլ քաղաքացիների հաշվառման ու գրանցման, նրանց համար զբաղմունք և օրենքով սահմանված երաշխիքներ ապահովելու, աշխատուժի առաջարկն ու պահանջարկը կանխատեսելու հարցերով՝ կազմակերպելով գործազուրկ քաղաքացիների մասնագիտական պատրաստումը, որակավորման բարձրացումը և վերամասնագիտացումը՝ սահմանված կարգով վճարելով կրթաթոշակ, գործազուրկներին ցույց տան նյութական օգնություն և այլն: Զբաղվածության ծառայության պետական մարմինների կարևորագույն խնդիրներից մեկը աշխատանքի շուկայի «թափանցելիության» ապահովումն է, համապատասխան տեղեկատվության կազմակերպումը: Այնինչ մեր օրերում աշխատատեղ փնտրողները շատ ու շատ ժամանակ են կորցնում և ջանքեր գործադրում իրենց արհեստավարժ որակավորմանը համապատասխան, որոշակի վաստակ ապահովող և աշխատանքային պայմաններ ունեցող աշխատատեղ, իսկ գործատուներն էլ՝ իրենց շահերին համապատասխանող աշխատողներ գտնելու որոնումների վրա: Խնդիրը տվյալ դեպքում վերաբերում է փնտրտուքի ընթացքում հասարակության մասշտաբով աշխատուժը չօգտագործելու հետևանքով տեղի ունեցած վիթխարի կորուստներին: Վերջինը ոչ միայն անհատական, ընտանեկան կամ խմբային, այլև գլխավորապես հասարակական շահեր ընդգրկող երևույթ է:

Ահա թե ինչու հանրապետության «Զբաղվածության մասին» օրենքով զբաղվածության պետական ծառայության մարմիններն աշխատանքի շուկայի և բնակչության զբաղվածության ընթացիկ իրավիճակն արտացոլող վիճակագրական հաշվետվությունների հետ միասին պետք է.

ա) կատարեն վերլուծական հետազոտություններ, կանխատեսեն աշխատուժի առաջարկն ու պահանջարկը, տեղեկություններ տան աշխատանքի շուկայի վիճակի մասին, բ) աշխատանք փնտրող քաղաքացիներին օգնեն ընտրելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին՝ անհրաժեշտ մասնագիտության և որակավորման աշխատողներ, ապահովեն նրանց համապատասխան խորհրդատվությամբ: Մինչդեռ գործազուրկների հաշվառման, նրանց որակավորման, վերապատրաստվորման, մասնագիտական կողմնորոշման և շատ այլ հարցեր, որոնք տեղ են գտել «Զբաղվածության մասին» օրենքում, գործունակ չեն և իրականության վերածվելու համապատասխան սոցիալական երաշխիքներ չունեն:

Պետությունը գործատուների և արհմիությունների մասնակցությամբ պետք է մշակի և իրականացնի ուսուցման համակարգը կյանքին մոտեցնելու ծրագրեր: Այդ ծրագրերի կազմակերպիչը և ուսուցման գործընթացն իրականացնողը պետք է լինեն պետական ծառայության մարմինները:

Ուստի անհրաժեշտ է.

— ապահովել գործազրկության վերաբերյալ ընդունված օրենսդրական սկզբունքների գործունակությունը,

— զբաղվածության ծառայությունների պետական մարմինների, աշխատանքի բորսաների գործունեությունն ակտիվացնելու և գործունակությունը բարձրացնելու նպատակով խրախուսել այդ մարմինների ծառայությունը՝ աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հաշվառման, դրանց հարաբերակցության կարգավորման համար գործուն միջոցներ ձեռնարկելու, մասնավորապես աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությանը և գործազուրկներին համապատասխան աշխատանքներում ընդգրկելու բնագավառները պարզելու և աշխատանքի տեղավորելու հարցերում:

Զբաղումների ոլորտների և ուղղությունների բացահայտման հստակ և ճկուն մեխանիզմներ մշակելու հետ մեկտեղ այդ մարմինների գործունեության առանցքային հարցը պետք է դառնա աշխատուժի իրական առաջարկի կանխատեսումը,

— ստեղծել իրական պայմաններ՝ արհեստավարժ կողմնորոշման հիմունքներով երիտասարդ մասնագիտական կադրերի

պատրաստման, գործազուրկների վերարտադրման մասին օրենքով ընդունված դրույթները կենսագործելու համար,

— պետական կենտրոնացված միջոցներին զուգահեռ ստեղծել գործազուրկների սոցիալական ապահովության տարողունակ ֆոնդ: Գրանցված գործազուրկներին օրենսդրորեն սահմանված ժամանակամիջոցում երաշխավորված նպաստով ապահովելու հետ միասին այդ ֆոնդերը բաշխել այն հաշվով, որ ապահովվի գործազուրկների խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների ապրուստի նվազագույն մակարդակը,

— ընդունել համապատասխան օրենսդրական ակտեր, որոնք կարգավորեն աշխատանքի շուկայի պետական միջամտության սկզբունքները, ձևերը, իրականացման մեխանիզմները՝ հստակեցնելով աշխատանքի շուկայի նկատմամբ պետության կարգավորիչ դերը,

— մշակել օրենսդրական ակտեր, որոնք վերաբերում են աշխատանքային տեղերի ստեղծման, աշխատանքային տարիք մուտք գործող երիտասարդությանը վարձու աշխատանքում ընդգրկելու պետական միջամտության, զբաղվածության պետական քաղաքականության իրականացման հարցերում գործատուների մասնակցության կարգի և ձևերի հարցերին, աշխատուժի կիրառման լայն ոլորտ ստեղծելու համար գործատուների նկատմամբ պետության վարած հովանավորչական, խրախուսանքի կամ արգելակող քաղաքականության սկզբունքներին:

Շարադրանքից անվերապահորեն բխում է հանրապետության զբաղվածության հարցում պետական վարչական մարմնի ստեղծման հրատապ անհրաժեշտությունը, մարմին, որը լիապես իրավասու լինի ընդգրկելու բնակչության զբաղվածության արդյունավետությունն ապահովելու, աշխատանքի շուկան կարգավորելու և կառավարելու բոլոր խնդիրները:

Ուստի, հավանաբար, անհրաժեշտ է մտահոգվել բավականին լայն լիազորություններով օժտված «Աշխատանքի նախարարություն» ստեղծելու խնդրով:

Նախարարության հիմնական ֆունկցիաները կարող են լինել.

— աշխատանքի և զբաղվածության մասին օրենսդրական ակտերի մշակում,

— իրականացման նկատմամբ հսկողություն,

— աշխատանքի առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, տնտեսապես ակտիվ բնակչության շարժի, դինամիկայի, աշխատուժի միջպետական, ներհանրապետական, միջճյուղային հոսքերի ուսումնասիրում, կանխատեսում և կարգավորում,

— աշխատանքի առաջարկի և պահանջարկի, այդ թվում որակյալ կադրերի հաշվեկշռությունն ապահովող պետական միջոցառումների մշակում,

— ըստ տնտեսության ճյուղերի մասնագիտական կադրերի պատրաստման ու վերապատրաստման ուղղությունների ու չափերի որոշում,

— տնտեսության զարգացման ուղղությունների կանխատեսման հիման վրա հեռանկարում բնակչության զբաղվածության կառուցվածքի մոդելավորում,

— աշխատանքի շուկայի պետական կարգավորման միջոցառումների մշակում,

— աշխատանքի անվտանգության և պայմանների նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում,

— զբաղվածության պետական մարմինների կողմից պաշտոնապես գրանցված գործազուրկների սոցիալական պաշտպանվածության ապահովում,

— արտակարգ իրավիճակներում բնակչության և աշխատանքային ռեսուրսների տարաբնակեցման, աշխատանքի տեղավորման քաղաքականության մշակում և կենսագործում:

Բնակչության սոցիալական այլ խնդիրներ կարող են իրականացնել նաև ուրիշ նախարարություններ, մասնավորապես «սոցիալական ապահովության» նախարարությունը, որը կարող է իրականացնել.

— բնակչության սոցիալապես անապահով մարդկանց հաշվառման սկզբունքների և մեթոդների մշակում և կարիքավորների թվակազմի ճշգրտում,

— կենսաթոշակների, թոշակների, հղի և հեռծննդյան շրջանում կանանց տրվող նպաստների կարգավորում, միայնակ ծնողների, ծնողներից զրկված երեխաների, հաշմանդամների,

պատերազմի մասնակիցների ընտանիքների և այլ կարիքավորների սոցիալական պաշտպանվածության ապահովում,

— ծերերի, հաշմանդամների, թերզարգացած և որբ երեխաների օգնության և նորմալ կենսագործունեության կազմակերպում,

— աշխատելու կարիք ունեցող հաշմանդամներին, թոշակառուներին աշխատանքով ապահովելու հարցերի լուծում:

Նման ֆունկցիաներ իրականացնող աշխատանքի նախարարությունն իր գործունեությամբ կնպաստի ոչ միայն հանրապետական արտադրության արդյունավետության բարձրացմանը, բնակչության արտահոսքի և գործազրկության չափերի մեղմացմանը, այլև անցման շրջանում սոցիալապես թույլ պաշտպանված խավերի սոցիալական օգնության կազմակերպմանը: Այդ նպատակով կարևոր նշանակություն է ստանում արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը՝ զբաղվածության պետական քաղաքականության, աշխատանքի շուկայի պետական կարգավորման և օրենսդրական մեխանիզմների մշակման ասպարեզներում:

7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Զբաղվածության ծառայությունների գծով արտերկրի փորձի ուսումնասիրությունն ակնկալվում է հետևյալ ուղղություններով.

1. Բնակչության զբաղվածության բնագավառում

— անցման պայմաններում ո՞ր երկրների զբաղվածության ճյուղային կառուցվածքը կարելի է օգտագործել Հայաստանում՝ ճյուղային կառուցվածքի շուկայական նմուշօրինակը մշակելիս,

— աշխատունակ բնակչությանն զբաղմունքով ապահովելու համար արտասահմանյան երկրներում պետական ի՞նչ քաղաքականություն է իրականացվում, ցանկալի է իմանալ աշխատանքի շուկայի կարգավորման պետական միջամտության սկզբունքները, ձևերը, իրականացման մեխանիզմները և աշ-

խատանքի շուկայի նկատմամբ պետական կարգավորման ազդեցության դերը,

— մասնավորապես ի՞նչ օրենսդրական ակտերով են կարգավորվում աշխատանքային տարիք մուտք գործող երիտասարդությանը վարձու աշխատանքում ընդգրկելու, նոր աշխատանքային տեղերի ստեղծման հարցում պետության միջամտության դերը որոշակի դարձնելու համար:

— զբաղվածության պետական քաղաքականության իրականացման գործում ի՞նչ մասնակցություն ունեն գործատուները,

— ձեռքի որակյալ աշխատուժի կիրառման լայն ոլորտ ստեղծելու հարցում ի՞նչ հովանավորչական քաղաքականություն է վարում պետությունը. խրախուսո՞ւմ է գործատուներին, թե՞ ընդհակառակը,

— ո՞ր երկրի փորձն է ավելի կիրառելի՝ չաշխատող բնակչությանը և, առաջին հերթին, գործազուրկներին աշխատանքի տարբեր ձևերով ընդգրկելու համար՝ ծանոթանալով պետական կարգավորման օրենսդրական ակտերին, գործող մեխանիզմներին, աշխատանքի բորսաների գործունեությանը,

— ի՞նչ դրական փորձ կա պետական մակարդակով որակյալ աշխատուժի, մասնավորապես ուղեղների արտահոսքը այլ երկրներ ժամանակավորապես արտահանելու համար,

— ինչպե՞ս է կարգավորվում այլ երկրներ և աշխատանքի այլ բնագավառներ ուղեղների արտահոսքը:

2. Զբաղվածության ծառայության բնագավառում

— ի՞նչ սկզբունքներով են կազմավորվում զբաղվածության պետական ծառայության մարմինները, ի՞նչ կառուցվածք ունեն, ի՞նչ ֆունկցիաներով և ի՞նչ լիազորություններով են օժտված, ո՞րն է դրանց իրավասության շրջանակները: Ո՞ր երկրի զբաղվածության ծառայության փորձն է ավելի նպատակահարմար և Հայաստանի պայմաններում ընդունելի:

3. Զբաղվածության իրավունքի բնագավառում

Օրենսդրական ի՞նչ երաշխիքներ են կիրառվում աշխատանքի իրավունքի իրացման համար,

— ի՞նչ լրացուցիչ երաշխիքներ են կիրառվում զբաղվածության բնագավառում բնակչության հետևյալ խմբերի համար.

— անչափահաս երեխաներ խնամող միայնակ ծնողների,

— անչափահաս երեք և ավելի երեխաներ ունեցող ծնողների,

— հաշմանդամների,

— խնամքի տակ հաշմանդամ ունեցող քաղաքացիների համար,

— արհմիությունների դերը աշխատանքի իրավունքի պաշտպանության հարցերում:

4. Զբաղվածության ֆոնդերը որպես ֆինանսական համակարգ ի՞նչ միջոցների հաշվին են ձևավորվում

5. Զբաղվածության հարցում ո՞ր երկրի սոցիալական երաշխիքն է ավելի ընդունելի

6. Գործազրկության կարգավիճակը

— «գործազրկություն» հասկացության էությունն ու կարգավիճակը արևմտյան երկրներում,

— գործազուրկների նպաստների սահմանումն ու վճարման կարգը, նպաստների և նյութական օգնության աղբյուրները, նպաստների վճարման պայմաններն ու ժամկետները, նյութական օգնությունը խնամքի տակ գտնվողների նկատմամբ,

— մասնագիտական ուսուցման, որակավորման բարձրացման և վերաորակավորման, վերահարմարեցման պայմանները:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման իրավիճակը բարելավելու շարժառիթները թելադրում են խորապես մտորել տնտեսության զարգացման ուղղությունների ընտրության և այդ հարցերում անցյալում և մեր օրերում թույլ տրված սխալներն ու վրիպումները չկրկնելու և դրանց հետևանքները վերացնելու մասին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիրն առաջին հերթին վերաբերում է անընդհատ խորացող էներգետիկ ճգնաժամից ելք որոնելուն: Մեծամորի ԱԷԿ-ը վերակառուցելու պայմանով նրա շահագործման հարցում շատերի տածած հույսերը ներշնչող չեն: Վտանգի աստիճանը եթե ընդունենք նույնիսկ մեկ հազարերորդականի չափով, դարձյալ վտանգը մնում է վտանգ և այն էլ այս փոքրիկ տարածքի վրա իրար գլխի կուտակված մի բուռ ժողովրդի համար:

Վտանգը ոչ միայն սեյսմակայունությունն է, օրերից մի օր բնության տարերային ուժերի կողմից հին կառույցը ցնցելու և հանրապետությունը կործանման եզրին կանգնեցնելու իրական վախի զգացումը: Որտեղի՞ց, ի՞նչ միջոցներով ԱԷԿ-ը կապահովվի համապատասխան հումքով: Որտե՞ղ, հանրապետության տարածքի ո՞ր մասում, ի՞նչ խորության վրա կթաղվեն ատոմակայանի թափոնները, որոնք ճառագայթման վտանգով չներազդեն Արարատյան հարթավայրի ստորերկրյա տարածքի, հողա-

լին, ջրային, օդային ավազանի բուսական և կենդանական աշխարհի վրա, չխաթարեն և ոչնչացման վտանգի առաջ կանգնեցնեն ազգի գենոֆոնդը:

Մյուս կողմից էլ Սևանի հաշվին տնտեսություն և ժողովուրդ պահելը ամենասխալ տարբերակն է և շատ ու շատ թանկ կնստի թե՛ ժողովրդի և թե՛ հանրապետության ամբողջ տնտեսության ապագա ընթացքի վրա:

Սևանը ոչ միայն բնության անկրկնելի հրաշք է, բնատուր աստվածային գեղեցկություն, այլև, առաջին հերթին, Հայաստանում հայ ժողովրդի գոյապահպանության ամենաէական երաշխիքներից մեկը: Նրանով է սնվում ոչ միայն Սևանի ավազանի, Հրազդան-Աբովյան-Արարատյան հարթավայրի և նրան հարող նախալեռնային շրջանների գյուղատնտեսությունը, այլև բնակչությունը: Ծիշտ է, Արարատյան հարթավայրի արտեզյան ջրերը լրիվ ու ամբողջությամբ շրջանառության մեջ դնելով, կարելի է փրկել Սևանը, իսկ եթե Սևանի մակարդակն իջնի, կչքանա ոչ միայն ինքը՝ գեղատեսիլ լինը, այլև, հավանաբար, ներկայիս արտեզյան ջրամբարը:

Մինչև վերջին տասնամյակները (հենց մեր օրերում) կիրառվող անհեռատես քաղաքականությունը շատ թանկ նստեց հայ ժողովրդի վրա: Նախորդ սերունդները շատ անհաշվենկատ, շռայլ ու անհեռատես գտնվեցին Սևանի հարցում: Սևանը դիտում էին էներգիայի «էժան» և «անսպառ» աղբյուր: Եվ ընդամենը մեկ-երկու տասնամյակում սպառվեցին նրա ջրերի կուտակված «անսպառ» պաշարները: Այդպես էր անտնտեսաշվարկային և հրամայական տնտեսության պայմաններում:

Այո, այն ժամանակ, երբ քննադատական խոսք էր լինում կամ տարակուսանք, գտնվում էին մարդիկ, որոնք արդարացնում էին Սևանի ջրերի դարավոր պաշարները մեկ-երկու տասնամյակում սպառելու փաստը՝ պատրվակելով Հայաստանի զարգացող արդյունաբերությունն անհրաժեշտ էլեկտրաէներգիայով ապահովելը: Ըստ որում այդ նույն տասնամյակում հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշռող մասը սպառում էր քիմիական արդյունաբերությունը: Ուրեմն Սևանի ջրերը մեծ մասամբ դարձան «քիմիական արտադրանք»: Բայց մի՞թե Հայաստանի քիմիական արդյունաբերու-

թյան արտադրանքը մեծ ծավալ ուներ միութենական ընդհանուր հաշվեկշռում և որի համար հարկ էր զոհել Սևանը:

Ո՞ւմ մեղադրել: Այն ժամանակվա միութենական՞ն, թե՞ հանրապետական կուսակցական ու տնտեսական ղեկավար մարմիններին, գիտության մարդկանց, մեղադրել հանցավոր անհեռատեսության ու անտարբերությա՞ն, թե՞ դիտավորության և անմիտ մոլեռանդության համար: Նույն այդ մեղսագործությամբ, առանց ինքներս մեզ հաշիվ տալու, Արարատյան հարթավայրի արտում, հույժ վտանգավոր սեյսմիկ գոտում, բարձրացրինք ատոմային էլեկտրակայանի աշտարակները՝ վախի ներքին զգացումը ցրելու համար նախապես տարածելով նրա «անվտանգության» մասին վարկածը: Նույն այդ անհիմն վարկածի հետևանք չէի՞ն երկրաշարժից առաջ կառուցված շինությունները՝ կառուցման իրենց որակով:

Ցավոք, Սևանի հարցում երևույթների ընթացքն այդպես եղավ նաև վերջին տարիներին: Փոխանակ միջոցներ ներդնելու և Որոտանի ջրերն արագորեն Կեչուտ-Սևան ջրատար հասցնելու, խնդիրը լուծում էին Սևանի ջրերի հաշվին: Երբեք ինքներս մեզ հաշիվ չենք տալիս՝ սերունդները վաղը մեզ կդրվատե՞ն, թե՞ ընդհակառակը, կգամեն անարգանքի այունին: Ի դեպ, էներգետիկ ճգնաժամի պայմաններում կառավարող այրերի կողմից չէր իրականացվում արտադրված էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման քաղաքականություն: Իսկ ամեն մի անկառավարելի վիճակ իր հետ բերում է անուղղելի հետևանքներ: 1993 թ. հանրապետությունում արտադրվել է 6 մլրդ 311,1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա[1], իսկ 1996 թ.— 6 մլրդ. 210,5 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Էներգիայի այդ քանակությունը ոչ ավել ոչ պակաս կազմում է 1988 թ. հանրապետությունում օգտագործվող էլեկտրաէներգիայի կեսը: Իրոք, 1985 թ. Հայաստանում արտադրվել է 14 մլրդ 911,3 մլն կվտ/ժ, իսկ 1988 թ.՝ 15 մլրդ 304,7 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա[2]: 1988 թ. շուրջ 3 մլրդ կվտ/ժ արտահանվել է Վրաստան և Ադրբեջան: 12 մլրդ կվտ/ժ օգտագործվել է հանրապետությունում:

---

1 Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 115:
2 Նույն տեղում:

Արդյունաբերության մեջ օգտագործվել է դրա 50, գյուղատնտեսությունում և ոչ արտադրական ոլորտի տրանսպորտում՝ 40, կենցաղում՝ 10 տոկոսը: Իսկ այսօր արդյունաբերական շատ ձեռնարկություններ չեն գործում, մի զգալի մասը ձմռանը պարապ կանգնած էր, մնացած ժամանակ աշխատում էր կարողությունների 10—15 տոկոսը, չեն գործում արտադրության էներգատար ճյուղերը: 1994 թ. ըստ պաշտոնական տվյալների (որն այնքան էլ հավաստի չէ) արտադրությունը թողարկել է 1988 թ. արտադրության 1/3-ը: (Իրականում՝ 1/10-ը): Հաջորդ տարիներին արդյունաբերական արտադրության շատ չնչին աճը (մի քանի տոկոսով) 1997 թ. առաջին եռամսյակում ի դերև եղավ: Այդ ընթացքում արտադրվել է 1996 թ. նույն ժամանակահատվածի արդյունաբերական արտադրության 97,2 տոկոսը, համախառն ներքին արդյունքի աճը կազմել է ընդամենը 1,9, իսկ արտադրված ազգային եկամտինը՝ 0,8 տոկոս: Գյուղատնտեսության մեջ համախառն արտադրանքը չի ավելացել և չի ուղեկցվել էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ, կենցաղում էներգիայի սպառումը նվազել է մի քանի անգամ, նույնը տրանսպորտում և այլուր: Ինչպես նկատեցինք, 1996 թ. արտադրվել է ավելի քիչ էլեկտրաէներգիա, քան 1993 թ. անավոր ձմռանը:

Ո՞ւր էր գնում արտադրված էլեկտրաէներգիան, որը ձեռք էր բերվել շատ թանկ գնով: Ուստի էլեկտրաէներգիայի արտադրության ավելացման խնդրի հետ միասին պետք է լրջագույնս մտահոգվել այն խնայողաբար և նպատակային օգտագործելու համար, քրեական պատասխանատվության կանչել չարաշահողներին:

Էներգետիկ ճգնաժամից հանրապետությունը դուրս բերելու հույսը Ռուսաստանի և այլ երկրների հետ տնտեսական ինտեգրացիան է, Ռուսաստանից և Իրանից արտաքին առևտրի միջոցով առաքվող նավթամթերքների, գազի, վառելիքի այլ տեսակների բազայի վրա ջերմաէլեկտրակայանների վերակառուցումը, համաշխարհային գիտատեխնիկական մակարդակի օգտագործումը: Օրինակ, Հրազդանի ՊՇԷԿ-ի վառելիքի օգտակար գործողության գործակիցը ընդամենը 0,24 է: Կայանը հին է, տեխնոլոգիան վաղուց է ապրել իր դարը: Մինչդեռ նույնիսկ Թուրքիայում ԱՄՆ-ի տեխնոլոգիայով գործող նույնատիպ ջեր-

մաէլեկտրակայանում վառելիքի ՕԳԳ-ը երկու անգամ գերազանցում է Հրազդանի ՊՇԷԿ-ին: Մանանգետների տվյալներով ամերիկյան հնամապատասխան տեխնիկայի օգտագործմամբ Հրազդանի ՊՇԷԿ-ը վերակառուցելու միջոցով հնարավոր է կրկնապատկել վառելիքի ՕԳԳ-ը, դրանով իսկ լրացուցիչ ապահովել այնքան էլեկտրաէներգիայի արտադրություն, ինչքան կարող է տալ ԱԷԿ-ը:

Այսպիսով, խնդիրը պետք է լուծել արմատականորեն, ՊՇԷԿ-ի ընդլայնման հետ մեկտեղ կայանն ամերիկյան տեխնոլոգիայով վերակառուցելու և վառելիքի ՕԳԳ-ը բարձրացնելու ճանապարհով: Դա հնարավորություն կընձեռի ոչ միայն մշտնջենապես առավելագույնս զերծ պահել արտանետվող նյութերից, այլև սպառվող վառելիքի չափերը կրճատելու միջոցով բարձրացնել Հրազդանի ՊՇԷԿ-ի տնտեսական արդյունավետությունը և վառելիքի տնտեսման միջոցով փոխհատուցել այն գումարները, որոնք կծախսվեն ամերիկյան տեխնոլոգիա գնելու համար:

Անհրաժեշտ է խորհել (չատ է ասվում, բայց քիչ արվում) հանրապետության տարածքի լեռնային գետերի բնական ուժն առավելագույնս օգտագործելու մասին՝ դրանց ընթացքի վրա հիդրոէլեկտրակայանների ցանցն ընդարձակելու միջոցով: Պետք չէ՞ արդյոք մտահոգվել Շամբի և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների վերազինման, ինչպես նաև Որոտանի ջրերը Կեչուտի ջրամբար հասցնելը արագացնելու մասին, որը կարելի էր անել ավելի վաղ: Ապագայում բացառված չէ նաև արևի և քամու էներգիայի օգտագործումը: Խնդիրը լուրջ հետազոտությունների և այդ ասպարեզում համաշխարհային առաջընթացին ուշիուշով հետևելու կարիք ունի: Իսկ Հայաստանը, բոլորիս հայտնի է, որ արևի երկիր է, քամիներն անսպառ են, ներգետնյա տաք ջրերը՝ շատ: Հարկավոր է սանձել բնության այդ ուժերը և օգտագործել: Այստեղ է, որ կարելի է «անսպառ և անպակաս» արտահայտությունն օգտագործել լիակատար իմաստով: Չէ՞ որ մնացած բոլոր չվերարտադրվող հարստությունները՝ հանքահումքային, վառելիքային և այլն, սպառվող հարստություններ են: Բացառված չէ, որ երկրագունդը օրերից մեկ օր կկանգնի տխուր փաստի առջև: Կսպառվեն ոչ միայն

ցամաքի, այլև ծովերի, օվկիանոսների հատակում առայսօր նիրհած բոլոր տեսակի հանքանյութերի՝ միլիարդավոր տարիների ընթացքում կուտակված պաշարները: Հանձինս գիտատեխնիկական առաջընթացի մարդկությունը կգտնի էներգիայի մեզ համար անհայտ նորանոր աղբյուրներ:

Ուստի մոտ ժամանակներում հանրապետության սահմաններում էներգիայի նոր աղբյուրների (արևի, քամու, ներգետնյա տաք ջրերի և այլն) բացահայտմամբ և բանիմաց օգտագործմամբ հնարավորություն կընձեռվի ինչ-որ չափով հաղթահարել ներկայիս էներգետիկ ճգնաժամը, ապահովել հանրապետության կենսագործունեությունը, հասարակության գլխավոր հարստությունն ակտիվացնելու միջոցով լուծել ազգային եկամուտն ավելացնելու հույժ կարևոր խնդիրները, նպաստել այլ երկրների հետ ապրանքափոխանակման հարաբերությունների զարգացմանը, ուստի ինտենսիվացնել ելքը դեպի արտաքին աշխարհ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոսքը նախ վերաբերում է արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացմանը, նրա ուղղությունների ընտրությանը, ինչպես նաև տնտեսության մեջ զբաղվածության նոր կառուցվածքի ձևավորմանը, որն իր վրա է կրում արդյունաբերական արտադրության աճող դերի ազդեցությունը:

Արդյունաբերության զարգացման ուղղությունների և տեղաբաշխման հարցերում նախկինում թույլ տրված սխալները՝ խիստ կենտրոնացվածությունը, գիգանտամոլությունը, որոշակիորեն ներազդեցին նաև աշխատանքային ռեսուրսների օգտագործման վրա: Առանց վերամշակման փուլեր կազմակերպելու շատ արժեքավոր ռեսուրսների արտահանումը, ներկրվող հումքատեսակների վրա ծանր արդյունաբերության մետաղատար, ջրատար և էներգատար, ինչպես նաև թեթև արդյունաբերության մի շարք ճյուղերի (տեքստիլ, կաշվի, տրիկոտաժի և այլն) աննախընթաց զարգացումը և, ընդհակառակը, տեղական գյուղատնտեսական հումքատեսակների արդյունավետ օգտագործման հիման վրա հանրապետության բնակչությանն անհրաժեշտ ժողովրդական սպառման ապրանքների գծով վերամշակվող ձեռնարկությունների լայն ցանցը իրենց զգացնել տվեցին այս օրերին: Շատ դեպքերում քննություն չբռնեց ԽՍՀՄ մասշտաբով արտադրողական ուժերի տեղաբաշխման քաղաքականությունը: Դա առանձնապես արտահայտիչ դարձավ ԽՍՀՄ-ի փլուզումից և նորանկախ պետությունների կազմավորումից հետո: Հանրապետությունների ու ժողովուրդների միջև «եղբայրությունն» ու «բարեկամությունը» «կոռմ» էին չհիմնավորված և անհարկի տնտեսական կապեր ձևավորելու, միմյանցից կախ-

վածությունն ուժեղացնելու, նորանոր հնարքներ գործի դնելու միջոցով: Ստեղծվում էին խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց հումքային բազաները և սպառման շուկաները գտնվում էին երկրի տարբեր ծայրակետերում: Հաճախ կիսաֆաբրիկատները, հետադարձ հոսանքով նորից կտրելով հազարավոր կիլոմետր տարածք, հայտնվում էին հումքային բազաներին մոտիկ շրջաններում: Այդ իմաստով լրիվ հիմնազուրկ էր Հայաստանում խոշոր քիմիայի, հատոցաշինության և մետաղամշակման որոշ ճյուղերի առաջնահերթային զարգացումը: Թեև գիտությունը շեշտադրում էր հանրապետությունում նման արտադրությունները չծավալելու հարցադրումները, բայց իզուր: Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում դրանց: Հսկա ձեռնարկություններն այսօր առավել ևս դարձան մի ավելորդ բեռ: Այդ ավելորդությունը բացատրվում է ոչ միայն նախկին կապերի փլուզման հետևանքով ներկրվող հումքային պաշարների չափերի հարյուրապատիկ, առանձին դեպքերում նաև հազարապատիկ նվազումով, նախկինում արտադրվող և մեծ ծախսումներ պահանջող ծանրաքարշ արդյունքներն արտադրելու և արտահանելու անհնարինությամբ ու անկատակարարմարությամբ, այլև ներտնտեսական կոոպերացիոն կապերի բացակայությամբ, գործող ձեռնարկությունների միջև այդպիսիք ստեղծելու չափազանց նվազ հնարավորություններով, արտադրվող արդյունքների որակական ցածր ցուցանիշներով, անմրցունակությամբ, արտաքին աշխարհի կողմից ներկայացվող ցածր պահանջարկով, ինչպես նաև այդ պահանջարկը բացահայտող համապատասխան օղակների անգործունակությամբ և այլ գործոններով: Կամ արդյունաբերության մեջ էներգատար ճյուղերի չհիմնավորված զարգացումը, ատոմակայանի առկայության պայմաններում Ադրբեջանի մազութի բազայի վրա Հրազդանի ՊԾԷԿ-ի գործարկումը՝ Ադրբեջանին էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Այդ օրերին Հայաստանի ատոմակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի 40 տոկոսն առաքվում էր Ադրբեջան, 35 տոկոսը՝ Վրաստան և միայն 25 տոկոսն էր մնում Հայաստանում: Կարիք կա՞ր արդյոք տնտեսագիտական բարդ հաշվարկների հետևից ընկնել՝ բացահայտելու համար այդ անտնտեսվար քաղաքականության հետևանքները: Օրական մի

քանի տասնյակ վագոն մազութ էր առաքվում Ադրբեջանից Հայաստան՝ Հրազդանի ՊԾԷԿ, Ադրբեջանի համար էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով: Տնտեսագիտական իմաստով դա անմտություն էր, թե հանցագործություն, ասել հնարավոր չէ: «Բարեկամություն» էինք խաղում, տնտեսական կապեր ստեղծում, սերտաճում էինք՝ միմյանց կախվածությունն ավելի զորու դարձնելու և «իրար ոտք չտորորելու համար»: Չէ՞ր կարելի մազութով գործող այդ ջերմակայանը Ադրբեջանում կառուցել և Հայաստան մազութ առաքելու նպատակներին տրամադրված վագոններն ու մարդկային աշխատանքը ծառայեցնել այլ կարիքների համար: Իսկ այդ կարիքները շատ-շատ էին: Այդ բոլորը, ինչպես նաև հարթավայրային մշակելի հողատարածություններում քաղաքների (մասնավորապես Երևան քաղաքի) ընդարձակումը, նորերի կառուցումը, առանց այդ էլ կանաչապատ և աղքատիկ գոտիներում օդային ավազանն աղտոտող արդյունաբերական հանգույցների հիմնումը, վերը թվարկվածների հետ միասին, իրենց բացասական հետքը թողեցին հողային, աշխատանքային, ջրային ներուժի օգտագործման ուղղությամբ:

Հողասակավ հանրապետությունում, երբ մի թիզ հողակտոր յուրացնելու համար աշխատավոր մարդը կռիվ էր տալիս բնության հետ, հանգիստ խղճով ավերվեցին Արարատյան հարթավայրի բերրի հողերը, հազարավոր հեկտարներով խաղողի այգիները: Դրանցում հիմնականում գործարաններ ու բնակելի զանգվածներ հիմնադրվեցին: Դեռ երեկ էլ Երևանում մնկի համար վեր էին բարձրանում նոր զանգվածներ՝ տասնյակ հազարավոր աշխատատեղերով: Մեր օրերում հողի մասնավորեցումով սկիզբ դրվեց Արարատյան հարթավայրը բնակելի զանգված դարձնելու մի նոր քաղաքականության, որն օրեցօր թափ է առնում և շարքից հանում վիթխարի մշակելի հողատարածություններ:

Հանրապետության կառավարող մարմինները բռնում էին դիմադրության թույլ և ոչնչով չհիմնավորված ուղի: Մայրաքաղաքում գործարաններ կառուցելը ձեռնտու էր միութենական ենթակայության նախարարություններին, թեև հասարակական տեսակետից այն չէր արդարացվում: Միութենական նախարա-

ռությունները ելնում էին նրանից, որ Երևան քաղաքում առկա էր համապատասխան ենթակառուցվածք, կառույցը համեմատաբար էժան էր նստում, և ինչ-որ չափով հեշտ էին լուծվում բնակարանային խնդիրները: Բայց չէ որ այդպիսի ամեն մի սխալ քայլ իր հետ բերում էր նորանոր ավելի մեծ սխալներ: Գահավիժող ձնագնդի նման սխալների կույտը մեծանում էր, և ընթացքը կարգավորելը դառնում էր անհնար: Այսինքն՝ դրանով իսկ լայնանում դարձան ասես լեռներից Երևան գահավիժող բնակչության միգրացիոն վտակները՝ թույլ տալով այնպիսի մի նոր սխալ, ինչ եղավ Սևանի հարցում:

Հայաստանում արդյոք կգտնվի՞ գեթ մեկ քաղաք, որը հիմնադրվեր ու ընդարձակվեր ձորերի ափերին, կիրճերում, դեռ-ում, մշակվելու հեռանկարից զուրկ տարածքներում: Չէ, չի գտնվի:

Անա թե ինչու ցանկացած քաղաքում առողջության որևէ չափով վնաս հարուցող ձեռնարկություն նախագծելիս, այն պետք է հիմնադրել այնպիսի վայրում, որ 100—200 տարվա ընթացքում քաղաքը զարգացման ինչ հեռանկար էլ ունենա, ձեռնարկությունն ի հայտ չգա նրա շրջագծում:

Հողազուրկ, էական ջրային ու էներգետիկ ռեսուրսներով, ինչպես նաև ներկայումս սև մետաղներով բնութագրություն չունեցող Հայաստանը ծանր հասատցաշինության և մետաղատար շատ ձեռնարկությունների, ծանր քիմիայի* մի շարք ար-

---

* Երբեք չի կարելի համաձայնել ծանր քիմիայի նակատագրի նկատմամբ ազգային-ազատագրական շարժման օրերին դրսևորված վարքագծի առթիվ: Խոսքը վերաբերում է «Նաիրիտ» գիտաարտադրական միավորմանը, Կիրովականի քիմիական կոմբինատին, Ալավերդու պղնձաձուլական և այլ ձեռնարկություններին: Միավորման միայն թունավոր և խիստ վտանգավոր արտադրությունները նորագույն տեխնիկայով վերազինելու կենսրեան վճիռներ կայացնելու փոխարեն (մանավանդ նման առաջարկություններ եղան ԽՍՄ կառավարության կողմից) խնդրի բուն էությանը ոչ լավատեղյակ, բայց արդեն թունոր ինֆորմացիայի ազդեցության տակ շարժման ղեկավարների նողոդությամբ ոտքի կանգնած ժողովրդական զանգվածների ճնշման ներքո ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ոչ միավորումը և մյուս ձեռնարկությունները փակելու տնտեսապես իրեն չարդարացնող և հանրապետության մեծ վնաս բերող սխալ քայլին: Մինչև պետք է տիրապետել ժողովրդական զանգվածների բորբոքված զգացմունքները զսպելու, ճշմար-

տադրություններ վերափոխելու հույժ կարևոր խնդիրներ լուծելու հետ մեկտեղ, պետք է ապահովի գիտատեխնիկական առաջընթացի հիմք հանդիսացող գիտատար համալիրների զարգացումը: Ըստ ամենայնի պետք է իրականացնել մի այնպիսի ծրագիր, որով Հայաստանը դառնա ինքնատիպ, անկրկնելի տնտեսությամբ մի երկիր, որի կարիքը զգան այլ երկրներ, արտահանի գիտատար մշակումներ ու մտահղացումներ, զարկ տա սակավ ծախսատար և բարձր որակավորում պահանջող արտադրություններին, ստեղծի ծրագրող ու կառավարող մեքենաների ու ծրագրավորողների նորանոր սերունդներ և մանավանդ ապահովի ընդերքի խնայողական օգտագործման հիման վրա կառուցված կիրառական արտադրությունների լայն թողարկում: Խոսքը վերաբերում է նաև ճշգրիտ մեքենաշինությանը, ճշգրիտ և գերճշգրիտ կիսահաղորդիչային սարքերի ու ավտոմատացման հաստոցների, բարձր ճշգրտության գործիքների, բժշկական, դեղագործական սարքերի ու կենցաղային քիմիայի և գիտատար այլ արտադրություններին, ինչպես նաև ոսկերչությանը, ձեռքի որակյալ աշխատանքի ոլորտի ընդլայնմանը: Խիստ մտահոգիչ է արտադրանքների քաշը:

Նման չափանիշներով պետք է մոտենալ թեթև և սննդի արդյունաբերության զարգացման հարցերը վճռելիս: Արտադրության անկման մասշտաբներն այս ճյուղերում աննախընթաց են: Թեթև և սննդի արդյունաբերության համար ներկրվող հումքի մասշտաբներն ատոմնանաբար չափավորելու և ցանկալի մակարդակի հասցնելու ամենահուսալի երաշխիքը տեղական գյուղատնտեսական հումքային ռեսուրսների մի զգալի մասը արդյունաբերական վերամշակման մեջ ընդգրկելն է: Ինչ վերաբերում է բերովի հումքի օգտագործմամբ ձեռնարկությունները վերափոխելու, վերազինելու կամ ուղղակի փակելու հարցերին, ապա այն կարգավորում է ինքը՝ կյանքը, շուկայական հարաբերությունները, դրանից բխող շահութաբերության ապահովման սկզբունքները: Այստեղ մանրերելու մեծ ասպարեզ կարող է բացվել փոքր գործարարության հետագա զարգացման համար

տության մեջ նրանց հասոզելու և երևույթներն իրենց բնականոն ընթացքով առաջնորդելու վսեմ արվեստին (Վ. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Ե., 1991, էջ 29):

իրավական օրենսդրական դաշտ ստեղծելու շնորհիվ: Մոր-ցակցային պայքարը ճանապարհ կհարթի գործարար և ձեռնե-րեց մարդկանց համար, մյուսները դուրս կգան ասպարեզից: Արտադրության մասշտաբները կկարգավորվեն նաև այդ ապ-րանքների նկատմամբ ներկայացվող պահանջարկի ու առա-ջարկի տնտեսական օրենքով, թեև պետք է ասել, որ Հայաս-տանի արդյունաբերության շատ ճյուղեր կյանքի էին կոչվել և զարգանում էին օրվա հրամայականով, դրանց մեծ մասը ան-հիմն ազատականացման անհեռատես և հախուռն շուկայական քաղաքականության զոհ դարձավ: Իր հայրենիքում մերժված արևմտյան գայդարական շուկայական անպտուղ քաղաքա-կանությունը փորձադաշտ դարձավ Հայաստանում, իր հետ բե-րելով ավերմունք, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացումը հետ մղելով մի քանի տասնամյակներով, խար-խլելով առողջապահական, գիտակրթական և ժամանակի ըն-թացքում պատշաճորեն ձևավորված այլ համակարգեր:

Գաղտնիք չէ, որ ՆԻՍՄ տարիներին աշխարհի բազում եր-կրներ սպառում էին Հայաստանի արդյունաբերական ար-տադրանքի տասնյակ տեսակներ, գիտական նվաճումները թա-փանցել էին համաշխարհային ասպարեզ, առողջապահական, կրթական համակարգը զարգանում էր ակտիվ սոցիալական կողմնորոշման արդարացված քաղաքականության սկզբունքնե-րով:

Ինչպես հայտնի է, Հայաստանը հարուստ է բազմաթիվ հանքահումքային ռեսուրսներով: Դրանց մի զգալի մասն ար-տահանվում էր որպես հանքատեսակներ՝ առանց հետագա ար-դյունաբերական վերամշակման:

Ավելորդ չէր լինի հիշատակել, որ դարերի ու հազարամ-յակների ընթացքում ամեն մի ժողովրդի բախտ է վիճակվել զբաղեցնել երկրագնդի մի կոնկրետ տարածք: Ոմանց բաժին է ընկել լայնարձակ ու բերրի տափաստաններ, անծայրածիր մշակելի հողատարածքներ, բնական արոտավայրեր, անտառ-ներ, ծովեր, ջրավազաններ, տարածքով հոսող մեծ գետեր և այլ վերարտադրվող հարստություններ: Դրանց վրա բնակվող ժողովուրդներն իրենց կենսագործունեությամբ համապատաս-խան կենսամիջոցների արտադրությունն ապահովում են հա-

զարգացումների ընթացքում՝ հարատև: Մարդու ակտիվ և արդյունավետ գործունեությունից է կախված հողից, ջրից, անտառներից և այլ վերարտադրվող հարստություններից հավերժորեն բարիք քամելու տեխնիկան և հաջողությունը:

Ժողովուրդներից ոմանց էլ բաժին են ընկել հիմնականում լեռներ, քարեր, սարեր ու ձորեր (ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը) և փոխարենը՝ ընդերքում միլիոնավոր տարիների ընթացքում գոյացած ինչ-որ հարստություն: Ի տարբերություն հողի, ջրի, անտառների, ընդերքում հիրհող հարստությունները չեն վերարտադրվում և ժամանակի ընթացքում սպառվում են: Մինչդեռ դրանք գոյանում են միլիոնավոր տարիների ընթացքում և պետք է բավարարեն բազում սերունդների: Դրանց պաշարները արդյունաբերական վերամշակման մեջ ընդգրկվելու համեմատ պակասում են: Շատ է արդյունահանվում՝ ամբարված հանքանյութի պաշարները շուտ են սպառվում, քիչ է արդյունահանվում՝ այդ պաշարները սերունդներին երկար են ծառայում:

Մեր լեռնաշխարհի ընդերքում ամբարված շատ թե քիչ հարստությունները երկրորդ աշխարհամարտից հետո, եթե արդյունահանվեին նրա վրա ապրող բնակչության պահանջարկի համեմատ, այն կբավարարեր շատ սերունդների: Բայց արդյունահանվել է մի վիթխարի երկրի պահանջները բավարարելու հատար (հատկապես ոսկի, պղինձ, մոլիբդեն), այն էլ հետամնաց տեխնիկայով: Հենց այդ պատճառով հանքանյութը լրիվ չի կորզվել, շատ հումքատեսակների թափոններից գոյացել են հանքանյութով հարուստ լեռնաբլուրներ: Չեն կորզվել նաև ուղեկից հանքանյութերը, որոնք աղետաբեր ազդեցություն են թողել շրջակա միջավայրի ու բուսական աշխարհի վրա: 20—25 տարի առաջ երկրի զարգացման ընթացքը շատ թե քիչ չափով կռահող մարդիկ գտնում էին, որ եթե ոչ այսօր, ապա վաղը երկրում սկզբունք դարձած անտնտեսավարությանը վերջ կտրվի, տարբեր հանրապետությունների ու ժողովուրդների տնտեսական կապերի հիմքում կդրվեն ապրանքափոխային հարաբերությունները, ամեն մի ժողովուրդ իր կյանքը կկազմակերպի իր աշխատանքի, իր ստեղծած հոգևոր ու նյութական բարիքների սպառման և ուրիշ ժողովուրդների հետ հավասար արժեքային

կամ շուկայական հիմունքներով փոխանակային հարաբերությունների մեջ մտնելու ճանապարհով: Ելնելով դրանից, ոմանք խորհուրդ էին տալիս մտածել հանքավայրերը խնայողաբար շահագործելու մասին, հումքի արդյունահանությունը կազմակերպել ոչ թե մի վիթխարի երկրի բոլոր պահանջները բավարարելու, այլ հոգ տանել հանույթի տեմպերը չափավորելու, հանքանյութի կորզման օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու մասին: Բայց ինչ օգուտ՝ արդյունահանության տեմպերն անընդհատ ավելանում էին: Ավելացող տեմպերին դեմ արտահայտվողներն արժանանում էին տնտեսական ու կուսակցական վերին օղակներում աթոռներ զբաղեցնող մարդկանց անհիմն կշտամբանքին: Նրանք պատրվակում էին, որ մեր հայրենիքն ահռելի Խորհրդային Միությունն է, և ամեն մի հանրապետության ընդերքի հարստությունները բոլորինն են, հավասար: Պատրվակում էին նաև ապրանքափոխային հարաբերությունների վերացման մասին կոմունիզմի «հաղթանակի» տեսությամբ:

Ոմանք էլ պնդում էին, որ հարկավոր է շտապել. ընդերքի հարստությունները լրիվ արդյունահանել: Չէ՞ որ վերահաս գիտատեխնիկական առաջընթացը վյանքի է կոչում փոխարինիչների, որոնք «արժեզրկում» են մեր բնական հարստությունները՝ ոսկին, մոլիբդենը, պղինձը և մնացած հազվագյուտ մետաղները:

Հանքահումքային ռեսուրսները չվերարտադրվող և սպառվող ռեսուրսներ են, կոչված են հոգալու ոչ թե մի քանի, այլ շատ ու շատ սերունդների կարիքները: Ուստի խելամիտ կլինի, որ զարգացումն ընթանա ոչ թե այդ ռեսուրսների արդյունահանության տեմպերն ու չափերն անընդհատ ավելացնելու ուղիով, ինչ կատարվել է մինչև այժմ, այլ մի կողմից հանքանյութի կորզման օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու, իսկ մյուս կողմից՝ այդ հումքատեսակներից վերջնական պատրաստի արդյունք ստանալու համար արտադրության հաջորդաբար իրար լրացնող տեխնոլոգիական ցիկլեր ստեղծելու ճանապարհով: Դա կապահովի հանրապետությունում արտադրվող հումքատեսակների ելքը արտաքին շուկա շատ ավելի բարձր գներով, քան ներկայումս է, երբ դրանք արտահանում

են որպես կիսաֆաբրիկատներ կամ խառնյութի ձևով: Ի դեպ հանրապետությունում տնտեսական ճգնաժամը հաղթահարելու առիթով մեծ հույսեր են կապվում հանքահումքային ռեսուրսների հետագա արդյունաբերական վերամշակումը հանրապետության տարածքում կազմակերպելու և կիսաֆաբրիկատների կամ խառնյութի փոխարեն դրանցից ստացվող պատրաստի արտադրանք արտահանելու հետ: Նման տեսակետը թեև նոր չէ, ունի տասնամյակների պատմություն, բայց առայսօր մնացել է լոկ որպես հեքրգադրում: Դրա հետ մեկտեղ, ներկայումս էլ առանց հիմնավոր հաշվարկներ կատարելու, շատ է գերագնահատվում դրանց դերը արտահանության ընդհանուր հաշվեկշռում: Ըստ լատավարության ղեկավարների հրապարակումների (Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1991 թ., հ. 1, էջ 10, Հայաստանի էկոնոմիկայի հեխարար Հ. Բագրատյանի հոդվածը), խնդիր էր դրվում առաջիկա 2—3 տարում (1991 թ. սկսած) հանրապետության տարածքում գործող հանքահումքային ձեռնարկությունները վերակառուցելու և վերազինելու միջոցով ավարտել հումքի վերամշակման, իսկ 5—6 տարում տնտեսության կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու միջոցով ստացված հումքը վերջնական պատրաստի արտադրանքի վերածելու գործընթացը: Երկու փուլով հիշատակվող միջոցառումների իրականացման շնորհիվ առաջիկա 2—3 տարում (առաջին փուլ) հանքահումքային ռեսուրսների արտահանման պոտենցիալը ենթադրվում է հասցնել 5—6 մլրդ, իսկ 5—6 տարում (երկրորդ փուլ) դրանցից ստացվող պատրաստի արտադրանքի արտահանման պոտենցիալը հասցնել մինչև 12—15 մլրդ դոլարի: Այսինքն, ստացվում է, որ 5—6 տարում (1992 թ. սկսած) հանրապետության ամեն մի բնակչի հաշվով տարեկան կարտահանվի հանքահումքային ռեսուրսներից ստացվող պատկառելի մի գումարի՝ 4 հազար դոլարի հասնող արտադրանք, այդ, յուրաքանչյուր շնչի հաշվով 4 հազար դոլար: Ի՜նչ երազանք: Արդեն անցել է վեց տարի: Բայց մեջտեղում մնացել են միայն ամսագրում տպագրված «բարի» ցանկությունները:

Մյուս կողմից կատարվե՞լ են հիմնավոր հաշվարկներ, թե նման պարագաներում հանքահումքային ռեսուրսները բարձր

տեմպերով արդյունահանելու պայմաններում դրանց պաշարները քանի՞ տարի կդիմանան:

Դրանով իսկ նախկինի նման չե՞նք շարունակում վնասակար քաղաքականությունը: Վիթխարի չափերի հասնող հանքային ռեսուրսների արդյունահանումն ու արտահանումը կարճ ժամանակամիջոցում (հաշված տասնամյակներում, 10—15 տարվա ընթացքում) հանրապետությունը կկանգնեցնեն ընդերքի հարստություններն իսպառ և հավերժ չքացնելու աներևակայելի փաստի առջև: Ներշնչող չէ նաև շատ կարճ ժամանակամիջոցում այդպիսի վիթխարի վերափոխումներ իրականացնելու հարցադրումը: Զմոռանանք, որ անհրաժեշտ է օգտագործել գիտության և տեխնիկայի վերջին խոսքը, արտասահմանյան տեխնիկան և տեխնոլոգիան, այլապես անխուսափելի է էկոլոգիական կործանարար ալիքը, որը կցնցի այս փոքրիկ հանրապետությունը:

Հումքատեսակների համալիր մշակման ընթացքում, թեկուզ արտասահմանյան առաջնակարգ տեխնիկան և տեխնոլոգիան կիրառելու պայմաններում, անխուսափելի են թունավոր նյութերի արտանետումները, ջրային ավազանի պաշարների աղտոտման վտանգը: Ինչպես ոսկու, այնպես էլ մոլիբդենի և շատ հազվագյուտ մետաղների հարստացման ընթացքում օգտագործվում է վիթխարի քանակությամբ ջուր: Իսկ ջուրը ներծծվում ու շարքից հանում է հողը, բուսական աշխարհը, շրջապատը: Ուստի պետք է շատ զգուշավոր մոտեցում ունենալ հանքահումքային ռեսուրսների արդյունահանման, խտացման, դրանք պատրաստի արտադրանքի վերածելու և արտահանության չափերը որոշելու հարցում: Այստեղ է, որ պետք է «յոթ չափել և մեկ կտրել», թե չէ տասնյակ անգամ ավելի կկրկնենք այն սխալները, ինչ ճակատագրական են եղել մինչև օրս:

Արդյունաբերության մեջ աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության չափանիշ կարող է դառնալ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական աշխատանքի բաժանման ու կոոպերացման բոլոր հնարավոր տարբերակներից լավագույնի ընտրությանն ու կենսագործման պետական ակտիվ քաղաքականությամբ սատար կանգնելը, որը.

1. ապահովի երկրի տնտեսական վերարտադրողական կառուցվածքի ձևախեղումների ամբողջական հաղթահարման գործընթացը,

2. հանգեցնի արդյունաբերության և տնտեսության մյուս ճյուղերի տեխնիկական վերազինմանը, արտադրության առաջադիմական ճյուղային կառուցվածքի ձևավորմանը, ապասարկող ճյուղերի և ենթակառուցվածքների զարգացմանը,

3. ապահովի նախկին ռազմաարդյունաբերական և գիտաարտադրական որոշ կառույցների (որոնք ապասարկում էին Խորհրդային Միության ռազմաարդյունաբերական և գիտատար հանձնարարները) վերստին վերակողմնորոշման գործընթացը՝ քաղաքացիական արտադրության,

4. հանրապետությունում տեղական բնական հանքանյութային և ոչ հանքային ռեսուրսների համալիր օգտագործման հիման վրա ստեղծի արդյունաբերական արտադրության ավարտուն ցիկլեր՝ չխաթարելով էկոլոգիան, հիմնական բաղադրամասերի կորզման գործակիցը բարձրացնելու միջոցով նվազեցնի հանքանյութերի կորուստը,

5. արտադրության հետ գիտության և մտավոր կապերն ամրապնդաբար ուժեղացնելու միջոցով խթանի մշակող արդյունաբերության այնպիսի աշխատատար և գիտատար ճյուղերի ու արտադրությունների զարգացումը, որոնք պահանջում են բարձր որակավորման աշխատուժի գործադրում, չեն աղտոտում շրջակա միջավայրը, արդյունքները ֆոնդատար ու ջրատար չեն, ունեն բարձր արժեք, թեթև քաշ, փոքր չափեր, արտահանության մեծ ապարեզ, ենթակա են տրանսպորտային դյուրին փոխադրումների (էլեկտրոնային, ռադիո և միկրո էլեկտրոնային, մաթեմատիկական հաշվիչ, չափիչ տեխնիկա, ռոբոտատեխնիկա, էլեկտրատեխնիկա, բարձր ճշգրտության գործիքներ, ճշգրիտ և գերճշգրիտ կիսահաղորդիչային սարքեր և ավտոմատացման հաստոցներ, գործիքաշինական, ոսկերչական իրերի, դեղագործական արդյունաբերություն և այլն):

6. Երկարատև կապիտալ ներդրումների ճկուն քաղաքականությամբ խթանի արդյունաբերության այն ճյուղերի արագացված զարգացումը, որոնք արտահանման ռազմավարության պա-

հանջների հետ մեկտեղ բավարարում են տեղական հումքի արդյունաբերական վերամշակման նոր ցիկլերի ստեղծման միջոցով հանրապետության բնակչության սպառման պահանջմունքները և բնակչության տնտեսական ակտիվության բարձրացումը,

7. առաջիկա տարիներին պայմաններ ստեղծի ձեռքի որակյալ աշխատանքի ոլորտի ընդլայնման համար, խթանի կոոպերատիվների, մասնավոր ձեռներեցության, խառը, համատեղ և փոքր ձեռնարկությունների (ընդհուպ մի քանի աշխատողներով) շուկայական կառուցվածքների գործունեության ծավալմանը, ստեղծելով իրավական օրենսդրական դաշտ՝ դրանց անկաշկանդ գործունեության և հստակ ու ճկուն հարկային քաղաքականություն կենսագործելու համար,

8. տնտեսական լծակների օգնությամբ խթանի սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված այնպիսի ձեռնարկությունների գործունեությունը, որոնք զբաղվածության ոլորտն ընդլայնելու հետ մեկտեղ կնպաստեն աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը,

9. գյուղատնտեսությունից պետական գանձարան մուտք գործող միջոցների հաշվին ապահովի արդյունաբերության մեջ գյուղատնտեսական փոքր մեքենաների, սարքավորումների, դրանց պահեստամասերի արտադրության կազմակերպումը: Տվյալ դեպքում պետք է նկատի առնել, որ այդ նպատակի համար տրամադրվող միջոցները մեծ վտանգի հետ չեն կապված և արագորեն կփոխհատուցվեն: Խոսքն այնպիսի փոքր մեքենաների արտադրության մասին է, որ մի կողմից գյուղացիներն ի վիճակի լինեն գնելու, իսկ մյուս կողմից դրանք պիտանի լինեն լեռնային պայմաններում օգտագործելու համար (հողակտորների փոքր մակերես, զառիվայր ու թեք լանջեր),

10. վարկ չտրամադրելու, հարկային, վարչական և այլ սահմանափակող քաղաքականությամբ չխրախուսի խոշոր և միջին քաղաքներում գյուղատնտեսական հումքի վերամշակման և ընդհանրապես փոքր քաղաքներում և գյուղական շրջաններում (մասնավորապես սահմանամերձ գոտում) նպաստավոր պայմաններով վարկեր տրամադրելու, հարկային և այլ հովա-

նավորչական քաղաքականությամբ խրախուսի արտահանման մեծ պահանջարկ վայելող գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական վերամշակման բոլոր տեսակների փոքր ձեռնարկություններ (կաթնավերամշակման գործարաններ, կոնյակի, քաղցրահամ գինիների բազմաթիվ տեսակներ, խորդենու, փշատմավի եթերայուղեր, լոլիկի մածուկ և հյութ, ծիրանի, խնձորի, դեղձի հյութ, կոմպոտներ և այլն) և ագրոարդյունաբերական հնամալիրներ ստեղծելու համար:

11. Վարկ չտրամադրելու ապառնալիքով նպաստի արդյունաբերությունը խոշոր քաղաքների արվարձաններ կամ գյուղական բնակավայրեր փոխադրելու գործընթացին: Արբանյակ և փոքր քաղաքներում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու նպատակով մասնավոր ձեռնարկատերերին հնարավոր շատ արտոնությունների հետ միասին տեսական կապիտալ ներդրումների քաղաքականությամբ աջակցի լավ ենթակառուցվածք ձևավորելու գործընթացին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

1. ՀՈՂԻ ԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՍԵՓՆՈՐՀՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանում ներկա տնտեսական ճգնաժամի հաղթահարման ասպարեզում չափազանց մեծ դեր ունի գյուղատնտեսությունը: Վերջինիս զարգացումը, նախ, ինչ-որ չափով կնպաստի գյուղատնտեսական մթերքներով բնակչության պահանջմունքների բավարարմանը: Երկրորդ, կնպաստի գյուղատնտեսական մթերքները վերամշակող արդյունաբերության ճյուղերի աշխուժացմանը և հետագա զարգացմանը: Երրորդ, դրանով իսկ կխթանի բնակչության զբաղվածության ընդլայնմանը ինչպես բուն գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության ճյուղերում և բնակչության ծառայությունների ոլորտում:

Գյուղատնտեսությունն օժտված է նաև աշխատուժի օգտագործման ասպարեզի ընդլայնման և արդյունավետության բարձրացման մեծ հնարավորություններով: Սակայն ներկայումս այն տեղի է ունենում միակողմանի, այսինքն՝ ուղեկցվում է ոչ թե արտադրության աշխատատար պրոցեսները մեքենայացնելու, այլ աշխատաժամանակը լարված օգտագործելու ճանապարհով, որը չի ապահովում տնտեսական մեծ արդյունավետություն: Խնդիրն այն է, որ մի շարք օբյեկտիվ բնույթ կրող գործոնների հետ միասին (պատերազմ, շրջափակումներ, ժառանգած տեխնիկայի ցածր մակարդակ և այլն) գյուղատնտեսական մեքենայացման խիստ ցածր մակարդակի պայմաններում հողի, անասունների և գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների չնախապատրաստված և անժամանակ մասնավորեցումները գյուղատնտեսության մեջ աշխատուժի էքստենսիվ օգտագործման

հիմք դրեցին, որը գնալով դարձավ գերիշխող: Ծյուղը բնութագրվում է զարգացման էքստենսիվ ուղղվածությամբ:

Այլ կերպ լինել չէր կարող: Մասնավորեցման հետևանքով 1994 թ. գործում էին 312909 գյուղացիական փոքրաչափ, 1244 կոլեկտիվ և 129 պետական տնտեսություններ[1]: Դրանք փոքրաչափ ոչ ապրանքային բնույթ են կրում:

Ներկայումս գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը շատ գյուղացիական տնտեսություններում ավելի ցածր է, քան անգամ 1920—30-ական թվականներին էր: Դա բացատրվում է նրանով, որ գյուղացիների մի զգալի մասն այն ժամանակ գյուղատնտեսական աշխատանքները կատարում էր լծկան անասուններով՝ օգտագործելով գութան, արոր, սայլ, մասամբ տրակտոր, կոմբայն և այլն: Իսկ այսո՞ր: XXI դարի նախաշեմին հայ գյուղացիների մի զգալի մասը հարկադրված է գյուղատնտեսական աշխատանքները կատարել ձեռքով, այսինքն՝ վերադառնալ հողամշակման նախնադարյան ձևերին: Տվյալ դեպքում փոքր դեր չխաղաց նաև մեքենայական պարկի մասնավորեցումը: Ըստ որում, եթե դաշտավայրային շրջաններում ընտանիքներին հատկացված քիչ հողաբաժինները մեծ մասամբ հնարավոր է մշակել, ապա լեռնային և նախալեռնային շրջաններում հողատարածքներն ամբողջությամբ շրջանառության մեջ դնելն առժամանակ կմնա մեծագույն պրոբլեմ: Նման պարագաներում գյուղացու աշխատանքը ինչքան էլ լարված ու նպատակամղված լինի, հիմնականում կբավարարի իր պահանջները: Ցածր կլինի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնությունը: Մինչդեռ քաղաքներում էր ապրում հանրապետության բնակչության 70 տոկոսը: Դա նշանակում է, որ պահանջարկի ու առաջարկի հայտնի տնտեսական օրենքի գործողության հետևանքով գյուղատնտեսական մթերքների ներկայիս առանց այդ էլ չափազանց բարձր գները կշարունակեն բարձրանալ ու բարձրանալ:

Անհրաժեշտ էր հողի մասնավորեցումն իրականացնել նախապատրաստական որոշ շրջան անցնելուց հետո և այն էլ փուլ առ փուլ՝ չափավորելով գյուղատնտեսության համար փոքր մե-

---

1 Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 129:

քենաների զանգվածային արտադրության և արտասահմանյան երկրներից դրանց ներմուծման մասշտաբները:

Մինչ սեփականաշնորհումը, անհրաժեշտ էր կազմակերպել նաև հանրային հոտի անասունների հաշվառումը: Չէ՞ որ դրանով իսկ կկանխվեր անասունների ոչ միայն հանրային հոտի կողոպուտը, այլև անհարկի և մասսայական մորթը, որը տեղի ունեցավ 1990—1991 թթ. և հանրապետությունը կանգնեցրեց դժվար կացության առջև: Այս բոլորի հետևանքով այսօր գյուղական շատ շրջաններում պետությանը կաթնամթերք կամ չի հանձնվում, կամ հանձնվում է չնչին չափերով, վերացել է նաթնավերամշակման ձեռնարկությունների մեծ մասը:

Այդ մասին են վկայում ներքոհիշյալ տվյալները:

Աղյուսակ 1

ՀՀ մթերված գյուղատնտեսական մթերքները 1988—1994 թթ. (հազ. տոննա)[2]

	1985	1990	1992	1993	1994
Հացահատիկ	68,2	43,9	63,4	31,4	39,4
կարտոֆիլ	111,0	76,5	2,0	5,1	2,0
բանջարեղեն	381,6	164,5	80,6	5,6	11,8
խաղող	250,7	125,4	41,2	48,7	56,1
պտուղ	101,4	88,5	29,4	18,4	29,7
անասուն և թռչուն (կենդանի քաշով)	131,5	89,6	16,1	2,4	1,7
կաթ և կաթնամթերք	339,0	231,8	37,8	11,3	7,5
ձու (մլն հատ)	387,1	363,6	75,4	47,3	28,2
բուրդ (մաքուր մազաթել), տոննա	2040	1219	390	241	26

Անշուշտ պետական մթերումների նման նվազումը բացատրվում է այն պատճառով, որ մթերք արտադրողներն իրենք են այն իրացնում և շատ քիչ քանակություն են վաճառում պետությանը: Դեր է խաղում նաև արտադրության մասշտաբների կրճատումը, որի հետևանքով խստորեն նվազել են շուկա առաքվող մթերքների չափերը:

---

2 Նույն տեղում, էջ 132:

Այնմ գյուղացու աշխատանքի արդյունավետության բարձրացման միակ երաշխիքը խիստ լարուն աշխատանքն է: Արտադրամիջոցների (գերազանցապես հողի և անասունների) տեր դարձած աշխատավորը ետ է սովորում նախկինից ժառանգած և հասարակական չարիք դարձած աշխատանքային ծուլությունից: Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ երիտասարդությունը խորշում էր գյուղատնտեսության մեջ մեծ նվիրումով աշխատելուց ոչ միայն այն պատճառով, որ ցածր էր գյուղատնտեսական արտադրության մեքենայացման մակարդակը, այլև գերազանցապես այն պատճառով, որ նա չէր կարողանում ապահովել իր աշխատուժի պարզ վերարտադրությունը, այսինքն՝ մարդը պարզապես արտադրության մեջ ծախսած մտավոր և ֆիզիկական էներգիան վերականգնելու համար համապատասխան հատուցում չէր ստանում: Աշխատանքը կազմակերպվում էր հարկադրանքի ազդեցության տակ: Պետությունը, նրա ներկայացուցիչները, կուսակցական հիերարխիան, հանրայնքի գլխին կանգնած անձինք գյուղացուց գանձում ու խլում էին ոչ միայն նրա ստեղծած ամբողջ հավելյալ, այլև անհրաժեշտ արդյունքի մի զգալի մասը: Խլելու այս մեթոդները նոմենկլատուրայի կողմից անընդհատ կատարելագործվում և օրինական բնույթ էին ստանում գրված ու չգրված այն օրենքներով, որոնք իր հետ բերել էր կոլտնտեսային և սովխոզային տնտեսությունների համակարգը: Հանրային տնտեսության մեջ իբրև թե պետք է գործեր ըստ աշխատանքի բաշխման սկզբունքը, բայց այն հանդես եկավ մերկապարանոց ձևով: Այդ սկզբունքը ոչ միայն զավեշտ էր, այլև զրկված էր գործելու տնտեսական հիմքից, թեև պրոպագանդվում էր որպես գոյություն ունեցող փաստ: Իրականում այն չէր կարող կիրառվել տնտեսական հիմքեր չունենալու պատճառով: Մինչդեռ տնտեսական օրենքները օբյեկտիվ են և գործում են համապատասխան տնտեսական պայմանների հիմքի վրա: Ըստ աշխատանքի բաշխման տնտեսական օրենքի գործունեության համար համապատասխան տնտեսական լիիրավ հիմք չգոյացավ: Իր հերթին իրական կյանքում ըստ աշխատանքի քանակի ու որակի բաշխումը խեղաթյուրվում էր սուբյեկտիվ պատճառներով, որը հանգեցնում էր աշխատանքի դիմազրկության:

Խեղաթյուրումը տեղի էր ունենում երկու ուղղությամբ: Մեկն այն էր, որ աշխատավորը չէր կարողանում օրենքով նախատեսվող իր աշխատանքային վաստակը լրիվ տնօրինել: Իսկ մյուսն այն էր, որ գյուղում աստիճանաբար ձևավորվող և աճող բյուրոկրատիան (սանդղակի բոլոր աստիճաններում, նաև տնտեսական ու կուսակցական ղեկավար մարմիններում), ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները, կտրվելով նյութական բարիքների արտադրությունից, դրանցից օգտվում էին ավելի շատ, քան ստեղծողները: Երևույթը տիպական էր նաև հանրային տնտեսության մյուս բոլոր ոլորտներին: Հանրային սեփականությունը ժամանակավորապես տնօրինողները դրանից օգտվելու մեծ հնարավորություն ունեին: Իրոք, արտադրողները թեև հանրային սեփականության տնօրինողներն էին (դա երևույթի արտաքին կողմն էր), բայց բաշխումը հօգուտ նրանց չէր կատարվում: Մեծապես շահում էին արտադրության մեջ հրամանատարական օղակները ղեկավարողները, դրանց հարողների և արտադրության ու սպառման փուլերի միջև բաշխման ու փոխանակությամբ զբաղված մարդկանց մի զգալի մասը: Դրանք, անկասկած, տեր էին դառնում ոչ միայն այն արժեքներին, որոնք պետք է ստանային աշխատավորները, այլև նաև այն արժեքներին, որոնք պետք է դառնային հասարակական սեփականություն:

Բաշխման այս արատավոր մեթոդներն իրենց հետ բերեցին արտաքնապես չարտահայտվող անբարյացակամ վերաբերմունք դեպի ֆիզիկական աշխատանքը: Այդ վերաբերմունքը բացատրվում էր ոչ միայն ըստ աշխատանքի վարձատրության շինծու սկզբունքներով, այլև եղածն էլ ոտնահարելու արատավոր մեթոդներով: Մինչդեռ շրջապատում ֆիզիկական աշխատանքում չընդգրկված որոշ մարդկանց միջավայրում անաշխատ եկամուտի, հեշտ ու հանգիստ կյանքի, վայելքների հնարավորությունները բացառված չեն:

Ֆիզիկական աշխատանքի նման դիմազրկությունը հանգեցրեց այն բանին, որ կյանք մտնող երիտասարդության մի մասի համար ֆիզիկական աշխատանքից խուսափելը որոշակի միտում ձեռք բերեց, նույնիսկ ինչ-որ չափով օրինաչափության երանգներ դրսևորեց: Չէր օգնում մամուլում, գեղարվեստական

գրականության, ինֆորմացիայի բոլոր ձևերով ֆիզիկական աշխատանքի փոխարինումը, դրա առանձին ներկայացուցիչներին խրախուսանքի ու մեծարանքի արժանացնելը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա երիտասարդությունն այնտեղ երկար ժամանակ չէր կարողանում մեծ նվիրումով աշխատել ոչ միայն այն պատճառով, որ չէր կարողանում ապահովել իր աշխատուժի պարզ վերարտադրությունը, այլև կար հարկադրանք: Անհատի պաշտամունքի տարիներին այդ հարկադրանքից շատերը ստիպված թողնում էին գյուղը, թեև քաղաքը նույնպես աչքի չէր ընկնում նյութական լավ պայմաններով:

Մի կողմից աշխատանքի վարձատրության ու խրախուսման արատավոր մեթոդների, իսկ մյուս կողմից սեփականատիրության բացակայության պայմաններում ծուլությունն ատիճանաբար հասարակական չարիքի վերածվելու միտում էր դրսևորում՝ ճանապարհ հարթելով հասարակական տեսակետից բազմաթիվ այլ անհարիր երևույթների համար:

Ավելորդ չի լինի ասել, որ հանրային սեփականությունը դարձել էր որոշ մարդկանց անաշխատ եկամուտների կարևոր աղբյուր: Պետությունը ձգտում էր գների որոշակի քաղաքականությամբ հետ բերել իրենից յուրացված միջոցների մի մասը: Այդ նպատակով պերճանքի առարկաների, անձնական օգտագործման ավտոմեքենաների, ոգելից խմիչքների, արտասահմանից ներմուծված ապրանքների համար սահմանվում են արժեքից խիստ բարձր գներ, ինչպես նաև գների բարձր վերադիրներ՝ ռեստորաններում վաճառվող ապրանքների, ռեստորանային արտադրանքի ու որոշ այլ ծառայությունների համար: Բայց փորձը ցույց էր տալիս, որ ինչքան բարձրանում էին գները, այնքան ավելանում էին պետությունից հափշտակվող միջոցների, անաշխատ եկամուտների, ստվերային տնտեսության չափերը: Վերջին հաշվով տուժում էր ինքը՝ աշխատավորը: Զի՞ որ այդ ապրանքներից ու ծառայություններից, թեև հազվադեպ, օգտվում էին նաև աշխատավորության ոչ լայն խավերը, ովքեր ոչ միայն անաշխատ եկամուտ չունեն, այլև նրանց վաստակի որոշ մասը շրջրոում են առևտրի, ծառայությունների և այլ ոլորտներում: Աշխատավոր մարդն իր աշխատանքային եկամու-

տով ի վիճակի չէր օգտվելու կենսական անհրաժեշտության շատ բարիքներից:

Գաղտնիք չէ, որ այդ համակարգի պայմաններում գյուղատնտեսության կառավարման ստորակարգման ցանցի միջոցով, առանց հողի վրա բարիքներ ստեղծողի կամքը հարցնելու, վերևից իջեցվող հատուկ հրահանգներով ցուցում էր տրվում՝ ինչ և ինչպես մշակել, ինչպիսի ցանքաշրջանառություն կիրառել, թերքը չամբարված, մեծ մասը բնեղենով, չնչին գներով հանձնել պետությանը: Ոտնահարվում էին արտադրանքն ստեղծողների իրավունքները, խախտվում ապրանքային արտադրությանը հատուկ տնտեսական օրենքի համարժեքային փոխանակության պահանջները: Արդյունաբերության և գյուղատնտեսության միջև գործում էր տնտեսապես ոչնչով չհիմնավորված անհամարժեքային փոխանակությունը: Վերջինս իր արտահայտությունն էր գտնում, մի կողմից, պետության մթերած գյուղատնտեսական արդյունքների խիստ ցածր գների, տնտեսական հիմքեր չունեցող հարկային քաղաքականության և ռենտավճարումների, իսկ մյուս կողմից, կոլտնտեսություններին վաճառվող արտադրամիջոցների համար սահմանված մենաշնորհային բարձր գների, հողա- և ջրաշինարարության, մելիորատիվ բնույթ կրող և այլ աշխատանքների դիմաց կոլտնտեսություններից գանձվող բարձր վճարների մեջ: Ինչ վերաբերում է խորհտնտեսություններին, ապա այստեղ արտադրված ամբողջ արտադրանքը պետությանն էր:

Ըստ մասնագետների տվյալների մինչև 1954 թ. իրենց գոյության բոլոր տարիներին ԽՍՀՄ կոլտնտեսությունները մթերքները պետությանն են հանձնել արժեքից ցածր գներով: Պետության մթերած մթերքների մեկ քառորդ մասը նրա վրա ձրի է նստել: Դրա հետ մեկտեղ մինչև 70-ական թվականները գյուղատնտեսական մթերքները գնելով արժեքից ցածր գներով պետությունը եկամտահարկի և շրջանառության հարկի ձևով ԽՍՀՄ բյուջե է կենտրոնացրել տարեկան 43-ից մինչև 54 մլրդ ռուբլի*: Բացի դրանից, կոլտնտեսություններին վաճառվող արտ-

---

* «Литературная газета», 1988, 3 августа.

դյուրաբերական արտադրամիջոցների գների մշտական բարձրացումից պետությունը լրացուցիչ ստացել է 8—12 մլրդ ռուբլի:

Այսպիսով, մինչև 1950-ական թվականները գյուղատնտեսության մեջ ստացված բերքի ճնշող մասը զանազան նանապարհներով հանձնվում էր պետությանը՝ դիմացը չատանալով որևէ շոշափելի փոխհատուցում: Հետագայում դրանք պետությանն էին «վաճառվում» ցածր գնման գներով: Այդ գները ոչ մի առնչություն չունեին արտադրված մթերքների իրական արժեքի հետ: Պետությունը տեր էր դառնում մսի, կաթի, յուղի, հացահատիկի, բանջարեղենի, մրգերի մեծ մասին: Այդ պատճառով էլ խորհրդատնտեսությունների մի զգալի մասը աշխատում էր վնասով: Ճիշտ է, պետությունն այդ վնասի մի մասը փոխհատուցում էր զանազան նպատակներով կատարվող երկարատև կապիտալ ներդրումներով, բայց միևնույն է, աշխատավորի գրպանը քիչ բան էր մտնում:

Այդ տարիներին գյուղացու համար ինչ-որ չափով հեռանրան էր իր անձնական օժանդակ տնտեսությունը: Նա ջանադրաբար մշակում էր տնամերձ հողամասը, պահում անասուններ: Թեև այստեղ նա հողակտորի յուրաքանչյուր միավորի հաշվով ապահովում էր ավելի բարձր եկամուտ, քան կոլեկտիվ տնտեսությունում էր, բայց անձնական օժանդակ տնտեսությունից ստացված այդ եկամուտները նույնպես չէին ապահովում նրա աշխատուժի ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ ծախսերը: Դրանք լավագույն դեպքում ապահովում էին պարզ վերարտադրություն:

Ուստի ներկա պայմաններում գյուղատնտեսության մեջ բարեփոխումների իրականացումը ժամանակի հրամայականն էր: Բայց ոչ թե այդպես հապշտապ և զանգվածային կարգով և այդ եղանակով, այլ ժամանակի ընթացքում: Նախ, նոր պայմաններում կարելի էր նպաստել նոր հիմունքներով գյուղացիական համայնքի կազմավորմանը: Այստեղ բնորոշը պետք է դառնար 1) համայնքի անդամների աշխատանքային կոոպերացիան, 2) արտադրված արդյունքները տնօրինելու հավասար իրավունքը, որն իր հիմքում ունենար համայնքի անդամների աշխատանքային մասնակցությունը, ընտանիքի անդամների հաշվով հողատարածությունը, 3) մեքենայական կայանի նկատմամբ

համայնքի սեփականությունը. տվյալ դեպքում համայնքը ի վիճակի կլիներ հոգալ կայանը ֆիզիկապես կանգուն պահելու, մեքենաները նորոգելու, պահեստամասեր և վառելիք ձեռք բերելու, այն նոր մեքենաներով համալրելու և այլ խնդիրներ լուծելու մասին, որոնք փոշիացած տնտեսություններն իրենք լուծել չէին կարող, 4) ապրանքադրամական հարաբերությունների հատուկ համակարգի առկայությունը պետության հետ՝ նկատի առնելով պետական նախնական պատվերների միջոցով գյուղատնտեսական մթերքների գնման մեխանիզմի զարգացումը, հարկային և ռենտային քաղաքականության հստակեցումը:

Հողասեփականատեր դարձած համայնքների, խոշոր տընտեսությունների առկայությունը կպայմանավորեր տնտեսության եկամուտների և ծախսերի ճիշտ հաշվապահական հաշվառումը, որը կդյուրացներ կապը պետության հետ: Նման իրապայմաններում համայնքը կկարողանար հոգալ արտադրության մեքենայացման մակարդակը բարձրացնելու, գյուղի սոցիալական ենթակառուցվածքը բարելավելու, բնակչության սոցիալական բազմաբնույթ խնդիրների համար միջոցներ տրամադրելու և այլ հարցերում: Վկան այն, որ այսօր շահեցին այն տնտեսությունները, որոնք մերժեցին մասնավորեցումները և նախկին կոլտնտեսային սեփականությունը վերափոխեցին նոր հիմունքներով:

Ինչևէ, հավանաբար անհրաժեշտ էր նպաստել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման այնպիսի մեթոդների ձևավորմանը, որը, խրախուսելով արտադրողին, խթանի նաև նրա աշխատանքի մեքենայացման մակարդակի բարձրացմանը, գործող մեքենայական կայանը չփոշիացնելուն և նպատակամետ օգտագործմանը: Դրանով իսկ հնարավոր կլիներ ապահովել գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրությունը ոչ թե աշխատողների թվաքանակի ավելացման, այլ նվազման պայմաններում:

Մինչդեռ մասնավորեցումից հետո գյուղատնտեսական համախառն արտադրանքի ընդհանուր չափերը 1990 թ. նկատմամբ ավելանալու պայմաններում (մինչև 1994 թ. այն նվազել է: Օրինակ, 1990 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 1148 մլն, 1991 թ. 1101 մլն, 1992 թ. 1123 մլն,

1993 թ. 1068 մլն, 1994 թ. 1103 և 1995 թ. 1154 մլն ռուբլի): Ըստ որում 1995 թ. այն կազմել է 1985 թ. գյուղատնտեսության համեմատաբար արտադրանքի մոտ 82 տոկոսը[3]:

Գների ոչ ճկուն քաղաքականության, գյուղատնտեսության մեջ մեքենագիտակցվածության օրեցօր վատթարացող վիճակի և վառելիքի սուր պակասի հետևանքով խստորեն ավելացել է գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության թվաքանակը: Ըստ որում գյուղատնտեսական մթերքների արտադրության աճը առաջիկայում եթե տեղի ունենա, ապա այն մեծ մասամբ ձեռք կբերվի ոչ թե աշխատանքի արտադրողականության, այլ աշխատօրվա տևողությունը երկարելու և աշխատանքի լարունությունը բարձրանալու հաշվին: Այսինքն՝ հողի մասնավորեցումը չի տվել այն արդյունքը, ինչ հաճախ քարոզվում էր: Դա տեղի է ունեցել անասունների բոլոր տեսակների հոտի խիստ անկման, խոզաբուծության ու թռչնաբուծության ճյուղերի գրեթե վերացման, մշակվող օգտահողերի չափերի կրճատման, որոշ մշակաբույսերի իսպառ վերացման պայմաններում:

Պետությանը վաճառվող մսամթերքների չափերի խիստ պակասելը, ինչպես հիշատակվեց, բացատրվում է նաև անասունների գլխաքանակի նվազումով: Այդ մասին համապատասխան պատկերացում է տալիս թիվ 2 աղյուսակը.

Աղյուսակ 2

Անասունների գլխաքանակը Հայաստանում 1916—1997 թթ.
(հունվարի 1-ի դրությամբ. հազար գլուխ)[4]

	1916	1951	1961	1986	1991	1997
Խոշոր եղջերավոր	708,0	494,0	599,1	860,7	640,0	509,1
այդ թվում՝						
կովեր	231,0	140,6	237,3	319,3	250,9	277,8
խոզեր	16,0	81,2	126,9	344,3	310,9	53,3
ոչխարներ և այծեր	1217,0	1309,2	1983,5	1902,8	1186,3	578,8

3 Հայաստանը թվերում 1990 թվականին, Ե., 1990, էջ 103, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 131, և ընթացիկ վիճակագրության հաղորդումները:

4 Խորհրդային Հայաստանը 50 տարում, Ե., 1970, էջ 139, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թ., էջ 206, 207, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 140:

Ահա այս պատճառով էլ նվազել են անասնապահական մթերքների արտադրության չափերը (տե՛ս թիվ 3 աղյուսակը)։

Աղյուսակ 3

ՀՀ մսի, կաթի, ձվի արտադրության չափերը 1985—1997 թթ.[5]

	1985	1990	1992	1993	1997
Միս հազ. տոննա (կենդանի քաշով)	169,5	145.1	110,9	81,1	82,6
կաթ, հազ. տոննա	545.7	431,9	394,7	397,5	429,4
ձու, մլն հատ	572,6	517.9	252,5	189.0	192,5
բուրդ (ֆիզիկական քաշով) տոննա	4425	2831	2115	2057	1368

Եթե ոչխարների և այծերի թվի կրճատումը բխում է նաև հանրապետության հողատարածքները հետագա էռոզիայի չենթարկելու շահերից, ապա անասունների մյուս տեսակների նման անհավոր չափերով կրճատումը որևէ արդարացում չունի։ Հաճախ, դա պատճառաբանվում է անասնակերի և արոտավայրերի պակասով։ Բայց չէ՞ որ 1916 թ. նույնպես բացակայում էին խտացված կերերը, և ընդհանուր հողատարածքները չեն փոխվել։ Ավելին, այդ ընթացքում ընդարձակվել են բազմամյա ճյութալի անասնակերի տարածքները։ Դրա հետ մեկտեղ վիթխարի հողատարածքներ չեն մշակվում, որոնք դարձյալ ծառայում են անասնապահական նպատակներին։

1995 թ. հունվարին արոտավայրերի ընդհանուր տարածությունը կազմում էր 691,8 հազ հեկտար, որը գյուղատնտեսական օգտահողերի 50,0 տոկոսն է։ Գյուղատնտեսական օգտահողերի ընդհանուր տարածությունը 1391,4 հազ. հեկտար է[6]։ Ըստ որում արոտավայրերը չեն մասնավորեցվել։ Նրանց մի մասը կազմում է գյուղական համայնքների հողային ֆոնդը (415,7

5 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993—1994 թթ., էջ 141։
6 Նույն տեղը, էջ 135, 136։

հազ. հեկտար), իսկ մի մասն էլ՝ 275,1 հազ. հեկտար ծավալով, պետական հողային ֆոնդն է: Վերջինս հիմնականում բարձրլեռնային արոտավայրերն են, որոնք բաժանված են բոլոր գյուղերի միջև:

Էքստենսիվ հիմունքներով գյուղատնտեսություն վարելու պայմաններում, երբ իշխում է ձեռքի աշխատանքը, ընտանիքին պատկանող ամբողջ հողատարածքը շրջանառության մեջ ընդգրկելը անհնար է դառնում: Լեռնային և նախալեռնային շրջաններում վիթխարի հողատարածություններ չեն մշակվում: Բավական է ասել, որ 1994 թ. մշակվել է հանրապետությունում 1988 թ. մշակվող ցանքատարածությունների (խոսքը վերաբերում է պետական պաշտոնական տվյալներին, որոնք ներկայացվում են բավականին ուռճացված, տեղերից վիճակագրական մարմիններին հաղորդվում են պատահական տվյալներ) 79,5 տոկոսը:

Այդ ընթացքում վերացել է ծխախոտի, շաքարի ճակնդեղի, խորդենու մշակությունը, պտղատու այգիները կազմել են 1988 թ. 38,5, կերային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 45,4 տոկոսը: 6,2 հազար հեկտարով պակասել են խաղողի այգիները: Դրանց փոխարեն Արարատյան հարթավայրում ավելացել են հացահատիկի ցանքատարածությունները (տե՛ս թիվ 4 աղյուսակը):

Հողի մասնավորեցումը տեղի ունեցավ գյուղատնտեսական արտադրության մեքենայացման համեմատաբար ցածր մակարդակի պայմաններում: Ավելին, այն ուղեկցվեց մեքենայական կայանի փոշիացմամբ: Նման պայմաններում գյուղացիների մի զգալի մասը, ի վերջո, համարյա հայտնվել է նախնադարյան աշխատապայմաններում՝ հիմնականում ապավինելով իր ֆիզիկական կարողություններին: Գյուղմեքենաներ չունեցող հողաստեղծականատերերի մի վիթխարի զանգված կանգնել է հող մշակելու դժվար լուծելի խնդրի դեմ հանդիման: Չկա համապատասխան տեխնիկա, եղածն էլ արդեն ֆիզիկապես մաշվել ու շարքից դուրս է գալիս, լինելու դեպքում՝ չի հերիքում վառելիքը, չկան պահեստամասեր, բարդություններ են ստեղծվել առկա մեքենաներն ու գյուղգործիքներն օգտագործելու առումով: Գաղտնիք չէ, որ կոլտնտեսություններին ու սովխոզներին

պատկանող մեքենայական կայանը «մասնավորեցման» քողի տակ խորհրդանշական գներով նվիրվեց առանձին մարդկանց:

Աղյուսակ 4

ՀՀ-ում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները (հազ. հեկտար)[7]

	1913	1950	1960	1988	1990	1996
Ամբողջ ցանքատարածությունը	345,7	471,2	414,9	450,3	437,1	346,6
— հացահատիկ	308,5	318,9	222,3	133,0	138,2	183,9
— բանջարեղեն	3,3	8,0	8,3	18,0	17,9	21,8
— կարտոֆիլ	7,0	22,8	16,0	21,1	22,4	32,6
— խաղողի այգիներ	...	19,2	30,9	31,7	24,6	21,9
— պտղատու այգիներ	...	15,5	24,3	51,4	50,2	34,4
2. Կերային մշակաբույսերի ցանքատարածություններ	4,4	76,7	139,1	264,8	251,7	—

Մինչև գյուղատնտեսական մեքենաների մասնավորեցումը հանրապետության մեքենայական պարկը հետևյալ պատկերն էր ներկայացնում (տե՛ս թիվ 5 աղյուսակը):

Այդ պատճառով գյուղացիների մեծ մասը կանգնել է մշակելի հողատարածությունների մի զգալի հատված անմշակ թողնելու փաստի առջև: Ի՞նչ անեն մեքենա չունեցող գյուղացիները: Վիթխարի միջոցներ են անհրաժեշտ հողը վարելու, ցանելու և բերքահավաքի համար: Գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցրեց գյուղատնտեսական տեխնիկան ոչ միայն քչերի ձեռքում կենտրոնացնելու քաղաքականությունը, այլև մեքենայական կայանի ֆիզիկական վիճակը, մաշվածության արագ ընթացքը, այն համալրելու անհնարինությունը, պահեստամասերի պակասը, թանկությունը և այլն: Դրան են գումարվում վառելիքի պակասը և բերքը վաճառքի առաքելու չափազանց սուղ

7 Սովետական Հայաստանը 50 տարում, էջ 116, 133—134, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993—1994 թթ., էջ 135—137:

Աղյուսակ 5

Մասնավորեցված մեքենայական կայանը 1993 թ. հունվարի 1-ի դրությամբ[8]

Մեքենաների տեսակները	Հատերով 1991 թ. հունվարի 1-ին	Մասնավորեցված են հատերով	Մասնավորեցված է կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններին	Մասնավորեցված անհատներին
տրակտորներ	12508	6682	2667	4015
կոմբայններ	2245	871	434	437
ավտոմեքենաներ	11464	6250	2463	3787
ցանող մեքենաներ	2335	1063	514	549

տրանսպորտային հնարավորությունները: Լեռնային և նախալեռնային շրջաններում այդ պատճառով չեն մշակվում վիթխարի բերրի հողատարածություններ, որոնք զգալի չափով կարող են ավելացնել հացահատիկի, կարտոֆիլի և բոստանային կուլտուրաների առաջարկը: Մինչդեռ հարթավայրային շրջաններում բանջարաբոստանային կուլտուրաների աշխատատարության պատճառով գյուղացին դրանք ի վիճակի չէ ձեռքով մշակել: Աճեցված բերքի մի զգալի մասը փչանում է՝ շուկա առաքելու անհնարինության պատճառով: Այս բոլորին գումարվում են նաև ոռոգման հետ կապված հարցերը: Ոմանք ոռոգման համար հարկերը վճարել չեն կարողանում: Հանգույցը օրենքի ուժով լուծելու փոխարեն կառավարող մարմինները դիմում են մասնավոր միջոցների. բաց չեն թողնում ոռոգման համար ջրանցքով հոսող ջուրը: Այդ պատճառով վիթխարի ցանքատարածություններ, պտղատու և մրգատու այգիներ ջուր չեն ստանում: Նման պայմաններում հողի գերի դարձած գյուղացու աշխատանքով ստեղծված շատ բարիքներ հիմնականում բավարարում են միայն ընտանիքի պահանջները: Հողը անմշակ թող-

8 Աղյուսակը կազմված է գյուղատնտեսության նախարարության սեփականաշնորհման վարչության տվյալներով:

ելով հանդերձ, շատ-շատերը չեն հրաժարվում հողակտորից: Հոգ չէ, որ այդ հողակտորը չի մշակվի և կմնա երեսնիվայր ընկած: Յուրաքանչյուրը հողը դիտում է որպես մի յուրահատուկ կապիտալ, այնպիսի հարստություն, որ վաղը կդառնա առք ու վաճառքի օբյեկտ:

Բարձր աշխատատարության և իրացման հետ կապված դժվարությունների, արտադրության մեծ ծախսերի պատճառով գյուղացին շահագրգռված չէ ավելցուկի արտադրության և եղածն էլ վաճառքի դուրս բերելու հարցում: Խստորեն նվազել են սպառողներին և արդյունաբերական վերամշակման համար քաղաքներ առաքվող գյուղատնտեսական մթերքների չափերը: Խզվել է գյուղի և քաղաքի տնտեսական կապը, կրճատվել գյուղատնտեսական մթերքների ապրանքայնությունը: Ապրանքային արտադրությունը զգալիորեն տեղի է տվել: Մանր ապրանքային արտադրության հետ միասին որոշակիորեն աշխուժացել է բնամթերային տնտեսաձևը... դրան են նպաստում նաև վառելիքաէներգետիկ ճգնաժամը, տրանսպորտային փոխադրամիջոցների պակասը, 1991—1993 թթ. փողի ժամ առ ժամ տեղի ունեցող անզուսպ արժեզրկումը: Մեծ բարդություններ են ծագել արտադրված գյուղատնտեսական մթերքները սպառման շուկաներ առաքելու և իրացնելու հարցում: Վիթխարի քանակությամբ մրգեր, բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր են փչանում, նեխում ու թափվում: Դա էլ իր հերթին է թուլացնում շուկայի համար հավելյալ արդյունք արտադրելու շահագրգռությունը:

ՀՀ վիճակագրության և գյուղատնտեսության էկոնոմիկայի ինստիտուտի 1996 թ. մարտ-հունիս ամիսներին մարզերում անցկացրած ընտրանքային միանվագ հարցման արդյունքներով պարզվում է, որ գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց արտադրանքը դժվարանում են իրացնել հիմնականում ցածր գների և տրանսպորտի պատճառով: Այդ մասին մանրամասն պատկերացում է տալիս միանվագ հարցման արդյունքներն ամփոփող ներքոհիշյալ աղյուսակը:

Աղյուսակ 5

Գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարություններն ըստ պատճառների (տոկոսներով)[9]

Մթերքների անվանումը	Վճարումների ձգձգումներ	Ցածր գներ	Գնորդի բացակայություն	Տրանսպորտային	Չկան պրոբլեմներ, դժվարություններ
Հացահատիկ	21,8	69,9	31,0	63,0	18,1
կարտոֆիլ	10,0	46,2	31,4	53,2	28,4
բանջարեղեն	15,5	66,4	34,1	67,1	14,5
խաղող	46.7	70,8	36,4	55,2	9,1
միրգ	17,5	50,8	28,9	62,8	18,8
խոտ	20,1	52,6	26,0	47,4	24,7
մսա	14,0	48,7	33,0	31,8	26,6
կաթ	10,5	46,2	28,0	30,9	35,0
ձու	9,3	35,1	18,6	24,7	49,5
բուրդ	11,1	41,7	52,8	25,0	25,0
Միջինը հարցված ԳՏ-ով	17,7	52,8	32,0	46,1	25,0

Գյուղացին հաճախ իր մթերքների վաճառքը ձգձգում էր ոչ միայն ինֆլյացիայի, փողն անիմաստ կուտակելու, տրանսպորտի և վառելիքի պակասի, այլև այն պատճառով, որ դրա դիմաց առաջին հերթին չէր կարողանում ձեռք բերել ամենաանհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաները: Պետությունն իր ուսերից թոթափել է անգամ փոքր մեքենաներով և համապատասխան պահեստամասերով գյուղացու հոգսերին սատար կանգնելու իր առաքելությունը: Պետությունն այդ ավելցուկին տեր դառնալու և քաղաքային բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով և արդյունաբերությանը հումքով ինչ-որ չափով ապահովելու համար ապրանքափոխանակային հիմունքներով գյուղացիներին պետք է առաջարկի փոքր մեքենաներ,

[9] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1997, 03. 18, էջ 3:

պարարտանյութ, դեղամիջոցներ, լավ սերմացու, ցեղական անասուններ, տնկիներ և այլն:

Զարգացած կարճ ժամանակամիջոցում տեղի ունեցավ գյուղատնտեսության ապամասնագիտացման դժվար հարթահարելի ընթացք, որն իր հերթին հանգեցրեց գյուղատնտեսական շատ մթերքների ապրանքային չափերի նվազմանը:

Այս բոլորի հետ միասին, մասնավորապես լեռնային ու նախալեռնային գոտիներում չմշակվող վիթխարի օգտահողերի առկայության պայմաններում, հացահատիկի արտադրության չափերը խստորեն նվազելու հետևանքով Արարատյան հարթավայրում փոշիացած ամեն մի մանր ընտանիք, ինչպես հարյուրավոր տարիներ առաջ, իր գոյության երաշխիքը տեսնում է ոչ միայն էքստենսիվ ֆիզիկական աշխատանքի, այլև իր բարեբեր հողերի որոշ մասը հացահատիկի, կարտոֆիլի և ընտանիքի հանապազօրյա կարիքները բավարարող այլ կենսաբերքների մշակությանը հատկացնելու մեջ: Երբեմն խաղողի և մրգատու այգիները քարուքանդ են արվում, քանի որ ընտանիքի պահանջները հացով բավարարելու ուրիշ միջոց չկա: Ամեն մի ընտանիք մեծ մասամբ մտահոգված է առաջին անհրաժեշտության գյուղատնտեսական մթերքների իր պահանջները բավարարելով: Նման մոտեցումն ավելի է ուժեղացնում անցումը հողամշակման էքստենսիվ եղանակին: Մինչդեռ մասնագիտացված գյուղատնտեսություն վարելու պայմաններում հնարավոր է ավելի քիչ աշխատանքային ծախսումներով արտադրել ավելի եկամտաբեր գյուղատնտեսական մթերքներ:

Դրան մեծապես վնասում է տրանսպորտի զարգացման ցածր մակարդակը: Զմոռանանք, որ ցածրադիր գոտիների մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածություններից 1990 թ. հացահատիկին բաժին էր ընկնում ընդամենը դրա 10, նախալեռնային գոտիներին 28 և լեռնային գոտիներին՝ 33 տոկոսը:

Այդ ցանցի առողջացման պայմաններում Արարատյան հարթավայրում հիմնականում կարտադրվեն բարձր եկամտաբեր մշակաբույսեր, իսկ հացահատիկի մշակությամբ զբաղված հիմնական շրջաններն իրենց ավելցուկը կարող են տրամադրել շուկային:

Համեմատաբար լավ է կարտոֆիլի ապրանքայնության վիճակը: Կարտոֆիլի ավելցուկն ամբողջությամբ ապրանքային տեսք է ստանում: Ի տարբերություն բանջարաբոստանային այլ կուլտուրաների և մրգերի, կարտոֆիլը գյուղացին կարող է ամբարել և վաճառքի հանել ավելի հարմար պահի: Մինչդեռ բանջարաբոստանային կուլտուրաները և մրգերը ավելի շուտ են փչանում, երկար պահելու հնարավորություններն ավելի նվազ են: Գյուղացին հարկադրված է վաճառքի ճանապարհով, որքան հնարավոր է, այդ մթերքներից շուտ ազատվել:

Իրացման հետ կապված ծագում են նաև այլ բարդություններ: Դա փողի արժեզրկման անընդհատ ընթացքն է, որը հարկադրում է գյուղացուն գյուղատնտեսական մթերքները վաճառքի հանել միայն ու միայն խիստ կարիքի դեպքում, դրանք չփչանալու վտանգից փրկելու մտահոգությամբ: Փողը կուտակելու փոխարեն գյուղացին գերադասում է ժամանակավորապես ամբարել մթերքները, վաճառքը հետաձգել, որքան հնարավոր է: Նա լավ գիտի, որ փողի արժեզրկումն ուղիղ համեմատական է ամբարած մթերքների գների թռիչքների հետ: Ինչո՞ւ կորցնել:

Դրանից մեծապես տուժում է նաև գյուղատնտեսական մթերքները վերամշակող արդյունաբերությունը՝ մասնավորապես գինեգործությունը, սղվում են կոնյակի արտադրության մասշտաբները: Իսկ դրանք արտադրության այն ճյուղերն են, որոնց արդյունքների արտահանությունն ապահովում է բարձր եկամուտ և տարադրամ: Հիշեցնենք, որ 1986—1988 թթ. տարեկան միջին հաշվով Հայաստանն արտահանում էր 3076 հազ. դեկալիտր գինի և շամպայն, 885 հազ. դեկալիտր կոնյակ, 99 հազ. տոննա վաղահաս թարմ բանջարեղեն, 218 մլն տուփ մրգի պահածոներ, 84 մլն տուփ բանջարեղենի պահածոներ: Իսկ այսօր դրանց չափերը մի քանի անգամ կրճատվել են: Այդուհանդերձ, Արարատյան հարթավայրում 1994 թ. խաղողի լավ բերքի պայմաններում ինչ-որ չափով ընդլայնվեցին խաղողի արտադրության մասշտաբները: Սակայն պետության կողմից կիրառվող ոչ ճկուն գնման և մաքսային քաղաքականությունը մեծապես վնասեց հայրենական խաղողագործության հետագա զարգացմանը: Մի կողմից դրան վնասեց Իրանից ներմուծվող էժան

ապիրտի վերամշակումը, թեև վերջինս չի ապահովում գինու և օղու այն որակը, ինչ ստացվում է Հայաստանի հումքի վերամշակումից: Դա մեծապես ազդում է նաև հանրապետությունում կոնյակի արտադրության չափերի և որակի վրա, որի արտահանումը այլ պայմաններում կարող է ապահովել վիթխարի տարադրամի մուտքը Հայաստան: Մյուս կողմից գինու իրացման, մասնավորապես այն ռուսական շուկա առաքելու հարցերում առկա են որոշակի բարդություններ: Իսկ այդ շուկան Հայաստանի գինու կարևոր սպառողն է: Երրորդ, պետությունը գնման գներով և նախնական պատվերների միջոցով խաղողի արտադրության չափերը խթանելու փոխարեն, ոտնահարում է արտադրողների շահերը խաբեությամբ: 1994 թ. մեծ քանակությամբ մթերած խաղողի դիմաց արտադրողներին գումարներ չվճարեցին, ճիշտ այնպես, ինչպես 1992 թ. լեռնային շրջաններից հացահատիկ մթերվեց, դիմացը մեքենաներ հատկացնելու պայմանով: Բայց պետությունը պայմանազանց եղավ՝ չվճարեց ոչ մեքենա, ոչ էլ դրամ:

Ապամասնագիտացման, ցածր տեխնիկայի և մանր փոշիացած տնտեսությունների պայմաններում սահմանամերձ և լեռնային շրջաններում, անգամ Արարատյան հարթավայրում, վիթխարի հողատարածություններ մնում են անմշակ, անասնակեր չհայթայթելու և այլ պատճառներով մարդն ի վիճակի չէ թուծել և խնամել անասուններն այն չափով, որ իր պահանջմունքների հետ մեկտեղ մտահոգվի ապրանքային արտադրությամբ, որով էլ կարողանա հոգալ իր այլ կարիքները:

Հողը համազգային սեփականություն է, սեփականատեր դարձած ամեն մի գյուղացիական տնտեսություն հարկային և ռենտային քաղաքականությամբ օրենքով պատասխանատու է պետության առջև:

Այդ առումով անմխիթար է վիճակը պետական հողային ֆոնդի օգտագործման հարցում: Դրանք ամենալավ հողակտորներն են, որ տնօրինում են գյուղական իշխանությունները: Վարձակալական սկզբունքներով այդ հողակտորները նրանք հատկացնում են յուրայիններին: Արդյունքում թաքցվում է ստացված բերքի մի մասը: Վարձակալության դիմաց պետական բյուջե մուծվում են չնչին միջոցներ: Նրա մի մասը գրպանում

են գյուղի իշխանավորները: Իրականում արտադրված արդյունքն այդ չափերով պետական վիճակագրական հաշվեառվությունների մեջ չի արտահայտվում:

Մանր, փոշիացած տնտեսությունները հիմնականում խոչընդոտում են պետությանը վճարել համապատասխան հարկեր: Խմբային սեփականության պայմաններում եկամուտների և ծախսերի հաշվապահական հաշվառման առկայությունը կդյուրացներ այդ տնտեսություններից հարկերի գանձումները: Խնդիրը շատ կարևոր է, բայց միայն դա չէ: Մանր, փոշիացած տնտեսությունների պայմաններում մեքենաներն օգտագործելիս տեղի են ունենում վառելիքի կրկնակի, եռակի, անգամ ավելի շատ ծախսեր, մեքենաների ավելորդ վազք, այն էլ այս սուղ պայմաններում:

Գյուղից 10—15 կմ հեռավորության վրա գտնվող փոքր հողակտորը մշակելու (վար ու ցանք, հունձ ու այլ աշխատանքներ) նպատակով ամեն մի սեփականատեր վարձում է տրակտոր, ծախսում վառելիք: Մեքենան մի քանի ժամ աշխատելուց հետո գյուղ է վերադառնում: Եվ այսպես, յուրաքանչյուր սեփականատեր կրկնում է նույն գործողությունը: Խմբային սեփականության պայմաններում մեքենան կաշխատեր օրն ի բուն և ամեն անգամ ավելորդ գնալ-գալու հետևանքով վառելանյութ չէր ծախսի, իսկ մաշվածքն էլ չափավոր կլիներ:

Գյուղատնտեսությանը մեծ վնաս են պատճառում վնասատուները: Սկսերն ուղղակի ավերում են դաշտերը: Դրանց դեմ հատատարած պայքար չկա: Դա հնարավոր էլ չէ հենց մանր տնտեսությունների պատճառով: Եթե ոմանք փորձեն կազմակերպել նման պայքար, ապա դա ուղղակի կդառնա ավելորդ, քանի որ հարևան հողակտորից մկները նորից կլցվեն այդ հողակտորը:

Մանր ապրանքային արտադրության պայմաններում չգործեց պետության կողմից մշակված հարկային քաղաքականության մասին օրենքը: Այն չէր կարող գործել ոչ միայն ճկունության ու հստակության բացակայության, փոշիացած տնտեսությունների հետ առնչություն ունենալու, այլև բուն կյանքի պահանջներին չբավարարելու պատճառով:

Գյուղատնտեսության ապարեզում հստակ, ճկուն, գործունակ հարկային և ռենտային քաղաքականությամբ և այլ աղբյուրների հաշվին բյուջե մուտք գործող միջոցներով պետությունը պետք է իրականացնի գյուղատնտեսության լայնամասշտաբ ներդրումային քաղաքականություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ գոտիներում գյուղատնտեսության զարգացմանը, գյուղում ենթակառուցվածքի ճյուղերի օբյեկտների ձևավորմանը, պետության ակտիվ տնտեսական քաղաքականությամբ այդ գոտիներից բնակչության արտահոսքի մեղմացմանն ու կասեցմանը:

2. ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԾՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՄԵՂՄԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մինչև 1980-ական թվականների վերջերը բնակչության ներհանրապետական միգրացիոն հոսքերը հիմնականում ուղղվում էին գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային բնակավայրեր: Այն խթանվում էր քաղաքներում ժողովրդական տնտեսության, մասնավորապես արդյունաբերության զարգացման բարձր տեմպերով, ինչպես նաև միջին ու բարձր որակավորման մասնագետ կադրերի պատրաստումը խոշոր քաղաքներում կենտրոնացնելու փաստով: Դրան նպաստում էին նաև գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակը, կոլտնտեսային և սովխոզային համակարգի պայմաններում իր իսկ արտադրողի ձեռքով ստեղծված գյուղատնտեսական արդյունքներից գյուղացուն բաժին հանելու վերևից սահմանված կաշկանդող հնարավորությունները, արտադրության աշխատատար պրոցեսները մեքենայացնելու համեմատ «ավելցուկ» բնակչության հանդես գալը և այլն: Միակողմանի միգրացիան նպաստում էր նաև քաղաքային բնակչության բնական աճին: 1988 թվին գյուղական բնակավայրերից արտագաղթողների ընդհանուր թվաքանակի 68,4 տոկոսը մեկնում էին քաղաքներ, իսկ մնացած 31,6 տոկոսը՝ գյուղական այլ բնակավայրեր:

1991 թ. սկսած բնակչության միգրացիոն հոսքերը որոշակիորեն փոխել են իրենց ուղղությունները. քաղաքային բնա-

կավայրերից դեպի գյուղական բնակավայրերը: Նախկինում արտագաղթի աղբյուր հանդիսացող գյուղը 1991—1995 թթ. դարձավ բնակչության զանգվածներ ընդունող, իսկ քաղաքը, ընդհակառակը, փոխելով նախկինում խաղացած իր դերը, դարձավ բնակչության արտագաղթի աղբյուր:

Միգրացիոն հոսքերի ցուցանիշների փոփոխության ընթացքին մեծապես նպաստել է գյուղատնտեսության մեջ մեքենազինվածության օրեցօր վատթարացող վիճակը, որի հետևանքով, ինչպես նկատեցինք, խստորեն ավելացել է գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության թվաքանակը, գործընթացն ուղեկցվել է քաղաքներ առաքվող գյուղատնտեսական կենսամթերքների բացարձակ չափերի նվազումով: Քաղաքներում սկիզբ առած գործազրկությունը, կենսապայմանների վատթարացումը, գների ազատ արձակումը, թանկացումը, ցուրտը, կիսաքաղց վիճակը և այլ պատճառներ տեղահան արեցին քաղաքային բնակչությանը: Դրանց մի մասը 1991 թ. բնակություն հաստատեցին հանրապետության գյուղական բնակավայրերում: Այս բոլորի հետևանքով 1988 թ. համեմատությամբ 1991 թ. միգրացվող բնակչության հաշվին քաղաքային բնակավայրերում բնակություն հաստատողների բացարձակ թիվը նվազեց 27,5 տոկոսով, իսկ գյուղական բնակավայրերում բնակություն հաստատողների թիվն ավելացավ ավելի քան 2 անգամ: Նման իրավիճակը պայմանավորված էր նաև հողի սեփականաշնորհման ընթացքով, երբ գյուղում հողասեփականատեր դարձան նաև որոշ քաղաքային բնակիչներ: Բավական է ասել, որ 1991 թ. գյուղական բնակավայրեր ներգաղթող բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ քաղաքներից եկածները կազմել են 74,8 տոկոս:

Բանն այն է, որ սահմանամերձ գրեթե բոլոր գոտիներից 1992 թ. սկիզբ առավ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակչության մինչ այդ աննախադեպ արտագաղթը: Ընտ որում սահմանամերձ գոտիների մեծ մասում մինչ այդ բնակություն էին հաստատել նաև Ադրբեջանից բռնագաղթված փախստականները:

Սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթը 1989 թ. սկսած, առաջին հերթին, պայմանավորված էր հարե-

վան հանրապետության կողմից չհայտարարված պատերազմական իրավիճակով: Սահմանամերձ մի շարք շրջաններում (Իջևան, Նոյեմբերյան, Կրասնոսելսկ, Ծամշադին, Կապան, Գորիս և այլն) 1988—1993 թթ. գյուղատնտեսական աշխատանքներն իրականացվում էին պատերազմական պայմաններում: Զինված հրոսակախմբերի մշտական բնույթ կրող հարձակումները, ռմբակոծությունները, բնակչության տեղահանության և բռնագաղթի հետ միասին գյուղացիներին կտրում էին վար ու ցանքից, բերքահավաքից, ամռան ամիսներին անասունների խնամքը ամառանոցներում արդյունավետ կազմակերպելու աշխատանքներից: Դրա հետ մեկտեղ հողի և անասունների անժամանակ սեփականաշնորհումների բացասական հետևանքները սահմանամերձ գոտիներում ավելի արտահայտիչ էին: Մանավանդ այդ գոտիներում փախստականների որոշ մասի հնամար չստեղծվեցին աշխատանքի և բնակության շատ թե քիչ տանելի պայմաններ: Սահմանամերձ գոտիներից արտագաղթի երրորդ պայմանը բացատրվում էր շրջկենտրոններում արդյունաբերական ձեռնարկությունների փակման շարժառիթով: Այդ շրջաններն իրենց արտադրության բնույթով թեև մեծ մասամբ գյուղատնտեսական թեքում ունեին, բայց շրջկենտրոններում գործում էին նաև արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանցում մեքենաշինական (ժամացույցի, էլեկտրատեխնիկական և այլն) մասնաճյուղերի հետ միասին գործում էին գյուղատնտեսական հումքի վերամշակման (կաթնավերամշակման, գինու, պահածոների, մրգահյութերի) փոքր ձեռնարկություններ, գորգագործարաններ և այլն:

Սահմանամերձ շրջաններից արտագաղթողները հիմնականում բնակություն են հաստատել հանրապետության հարթավայրային շրջաններում, ոչ սահմանամերձ գյուղական և քաղաքային բնակավայրերում, Հյուսիսային Կովկասում, Կենտրոնական Ռուսաստանում, Ուրալում, Ուկրաինայում և այլ երկրներում: Երևույթների հետագա ընթացքը կախված է Արցախյան հիմնահարցը լուծելու եղանակից:

Առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում հանրապետության գյուղերի մեծ մասում հարաբերական գերբնակչությունը մեծ մասշտաբներ չի ընդունի, բայց քաղաքից գյուղ արտա-

գաղթի չափերը խստորեն նվազելով կհավասարվեն զրոյի, իսկ ժողովրդագրական գործոնը՝ աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության թվաքանակի աճը, հարաբերական գերբնակչության ավելացման որոշակի պայման կդառնա: Հետագայում, տնտեսությունների խոշորացման, արտադրական պրոցեսների մեքենայացման և վարձու աշխատանքի կիրառման ընթացքի համեմատ, Հայաստանում հարաբերական գերբնակեցումը շոշափելի տեսք կընդունի: Կյանքն առաջ է գնում: Թե երբ, բայց կգա այն օրը, երբ Հայաստանում նույնպես գյուղատնտեսության մեջ աշխատանքի շատ ոլորտներում ձեռքի աշխատանքը իր տեղի կզիջի մեքենաների համակարգի կիրառմանը: Երկարատև հեռանկարում գյուղատնտեսական արտադրության աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակի բարձրացումը (մոտ ապագայում հատկապես փոքր մեքենայացման միջոցով), փոխսերտաճման գործընթացների ծավալումը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները աստիճանաբար կհանգեցնեն աշխատուժի օգտագործման ինտենսիվ գործոնների դերի աճին, գյուղատնտեսական մթերքների արտադրության մեջ ընդգրկված բնակչության թվի նվազմանը: Սակայն հարկ է նշել, որ այդ գործընթացն ապագայում գլխավորապես կախված կլինի այն բանից, թե որչափ հետևողական ու ճկուն կլինի հողի տնօրինման, յուրացման և օգտագործման ուղղությամբ հանրապետությունում կիրառվող քաղաքականությունը, որը կապիտալ ներդրումների միջոցով կապահովի նաև գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը: Այդ է վկայում նաև համաշխարհային զարգացման փորձը: Բոլոր զարգացած կապիտալիստական երկրներում գյուղատնտեսության մեջ է ընդգրկված զբաղմունք ունեցող բնակչության 3—10 տոկոսը՝ նայած երկրի: Այդքան քիչ աշխատողներ իրենց երկրում բնակչությանն առատորեն ապահովում են գյուղատնտեսական մթերքներով, վերջիններիս որոշ մասը թափանցում է միջազգային առևտրի ասպարեզ: Մինչդեռ Խորհրդային Միությունում 1990 թ. գյուղատնտեսության մեջ ընդգրկված էր զբաղմունք ունեցող բնակչության 19, Հայաստանում 18 տոկոսը (ինչպես նկատել ենք, ներկայումս կրկնակի անգամ ավելի): Բայց դրանով հանդերձ աշխատանքի 5 և ավելի անգամ ցածր արտադ-

բողականության պատճառով պարենային ճգնաժամից երկիրն այդպես էլ դուրս չեկավ: Վիճակն ավելի է վատթարացել: Ուստի ներկա պայմաններում գերազանցապես փոքր հզորության գյուղատնտեսական մեքենաների և դրանց պահեստամասերի արտադրության կազմակերպումը օրվա հրամայականն է:

Գյուղատնտեսության մեջ աշխատուժի կրճատման ընթացքին կնպաստեն նաև մշակելի հողատարածությունների սահմանափակությունը, նոր ընտանիքների ձևավորման հետ ընտանիքների հողաբաժինների չափերի փոքրացումը, անասնաբուծության բնագավառում արտադրության կենտրոնացումը և համակցված կերերի արտադրության արդյունաբերական եղանակին անցումը:

Կարճ ժամանակի ընթացքում գյուղում վերստին կաշխուժանա դեպի քաղաքներ բնակչության միգրացիան, և գյուղը նորից կդառնա բնակչության արտագաղթի աղբյուր: Դրան կնպաստի նաև քաղաքներում երիտասարդ աշխատող ձեռքերի պահանջարկի անը: Միաժամանակ կյանք է մտնում նաև գյուղից միգրացիան թուլացնող այնպիսի գործոն, ինչպիսին քաղաքաշինությունն է, որ ավելի կարի ու կբարդացնի մի շարք պրոբլեմներ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են դժվար լուծելի: Դա վերաբերում է քաղաքներում բնակարանային անապահովվածությանը, էներգիայի, վառելիքի, ջրի զգացվող պակասին, ջեռուցման և հիգիենիկ համակարգին և դրանցով բնակչության պահանջմունքների բավարարմանը, գյուղատնտեսական մթերքներով քաղաքային բնակչության մշտական կարիքները բավարարելու խնդիրներին:

Նման և այլ կարգի բարդություններ ծագել են կապիտալիստական շուկայական հարաբերությունների անցում կատարող ցանկացած երկրում: Բայց այդ երկրներում մասնավոր երկարաժամկետ կապիտալ ներդրումներ կատարողների նկատմամբ պետությունը կիրառել է տնտեսական խրախուսման տարբեր մեթոդներ, հատկապես հարկային արտոնություններ: Շատ երկրներում գործադրվել է նաև վարչական հարկադրանք: Օրինակ, վարկ չտրամադրելու սպառնալիքով նպաստել են արդյունաբերությունը քաղաքներից արվարձաններ կամ գյուղական բնակավայրեր փոխադրելու գործին: Ամեն կերպ խրախուս-

վել է արբանյակ քաղաքների աճը: Այդ քաղաքներում բացի հնարավոր շատ արտոնություններից, որից օգտվում են մասնավոր ձեռնարկատերերը, նոր օբյեկտներ կառուցելու համար կատարած կապիտալ ներդրումների հետ միասին պետությունը ստեղծում է կանոնավոր ենթակառուցվածք: Դրա հետ մեկտեղ գյուղական բնակավայրերում կառուցվում են գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական վերամշակման փոքր ձեռնարկություններ, ստեղծվում են ագրոարդյունաբերական համալիրներ: Պետությունը տնտեսական լծակների օգնությամբ սահմանափակում է բնակչության արտագաղթը գյուղական վայրերից դեպի քաղաքներ և խրախուսում խոշոր քաղաքներից դեպի քիչ բնակեցված և փոքր քաղաքներ:

Սահմանամերձ գոտիներին բնակչությանը գյուղում պահելու և հողի հետ կապելու նպատակով պետությունը պետք է նպաստի գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման և բնակչության տարաբնակեցման խնդիրների համակողմանի լուծմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում հետևյալ մասնակի խնդիրները.

1. սահմանամերձ գոտիներում պետք է իրականացվի բնակչության սպասարկման հատուկ քաղաքականություն,

2. երկարատև կապիտալ ներդրումների միջոցով պետությունը պետք է մտահոգվի սահմանամերձ գոտիների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի ոլորտի ձևավորման հարցերով: Դա կնպաստի.

— գյուղատնտեսության մեջ չընդգրկված բնակչության զբաղվածության կարգավորմանը,

— բնակչության սպասարկման և ծառայությունների ոլորտի աշխուժացմանը,

— տրանսպորտային ցանցի այնպիսի զարգացմանը, որը գյուղերի բնակիչներին հնարավորություն ընձեռի.

ա) օգտվելու մարզկենտրոնների սպասարկման և ծառայության օջախներից,

բ) մարզկենտրոնում կամ խոշոր գյուղերում ազատ աշխատատեղերում աշխատանքի ընդգրկվելուն,

գ) մի քանի փոքր գյուղերի դպրոցական տարիքի երեխաների ուսումնասիրությունը գյուղերից մեկում կազմակերպելուն,

3. Նկատի առնելով, որ սահմանամերձ գոտիներում բնակեցված են նաև Ադրբեջանից բռնագաղթած բնակչության հոծ զանգվածներ (Սևանի ավազանի հյուսիսարևելյան շրջաններ, Զանգեզուր, Վայք, Իջևան, Նոյեմբերյան, Վարդենիս և այլն) պետական միջոցներով՝

ա) բարեկարգել փախստականների և պատերազմի հետևանքով տուժած այլ բնակիչների բնակարանները, կարիքավորների համար կառուցել նոր բնակարաններ (նույնը՝ աղետի գոտում),

բ) կոոպերատիվ և անհատական հիմունքներով բնակարաններ կառուցողներին հատկացնել երկարաժամկետ վարկ՝ առանց տոկոսը մարելու պայմանի,

գ) նույն հիմունքներով վարկ հատկացնել՝ գյուղատնտեսական մեքենաներ, գյուղգործիքներ, անասուններ, տնկիներ, շինանյութ ձեռք բերելու համար,

դ) էժան գներով տրամադրել վառելիք,

ե) պետության հետ կնքվող նախնական պայմանագրով սահմանել բերքի գնման և իրացման երաշխավորված ավելի արտոնյալ պայմաններ, քան յուրաքանչյուր տվյալ պահին սահմանվում է ոչ սահմանամերձ գոտիների բնակիչների համար,

զ) պետությանը հանձնվող մթերքների դիմաց ավելի էժան գներով հատկացնել գյուղատնտեսական մեքենաներ և վառելիք,

է) տնամերձ տնտեսություն վարելու համար հատկացնել կրկնակի չափերով ավելի շատ հողակտորներ՝ չգանձելով հարկեր.

4. սահմանամերձ քաղաքներից փախստականների արտագաղթը մեղմելու համար առանձին քաղաքներ կառուցելու անհրաժեշտություն չկա: Այդպիսի քաղաքներ կառուցելը պահանջում է մեծ միջոցներ և երկար ժամանակ, որի ընթացքում փախստականները չեն ապահովվի ո՛չ բնակարանով, ո՛չ էլ զբաղմունքով: Խնդիրը կարելի է լուծել գերազանցապես սահմանամերձ փոքր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում վարկերի օգնությամբ նոր թաղամասերի կառուցումով: Նման մոտեցումն ավելի նպատակահարմար է համեմատաբար կարճ ժամկետում մարդկանց բնակարանով և զբաղմունքով ապահո-

վելու տեսակետից, քան մի նոր քաղաք կամ բանավան կառուցելը: Նոր քաղաքների կառուցումը, բացի բնակաբանաշինությունից, կպահանջի վիթխարի կապիտալ ներդրումներ նաև ենթակառուցվածքի մի նոր համակարգ ձևավորելու համար: Մինչդեռ գոյություն ունեցող քաղաքներում ավելի քիչ կապիտալ ներդրումներով հնարավոր կլինի ընդլայնել աշխատատեղերի ցանցը, բարձրակարգել ենթակառուցվածքային օջախները: Խառը բնակեցմամբ, առանց լրացուցիչ հոգսերի հնարավոր կլինի հաղթահարել մաքուր հայերենին տիրապետելու դժվարությունները, նպաստել փախստականների ու տեղացի բնակչության նիստուկացի, վարքուբարքի, կենցաղի, հոգեբանական ընդհանուր մթնոլորտի ձևավորմանն ու սովորույթների փոխներարատացմանը.

5. ընդհանուր առմամբ նպատակահարմար է խորհել նաև այդ մարզերից յուրաքանչյուրում որևէ քաղաք հզորացնելու, դրանք սոցիալական համակարգի իրական կենտրոն դարձնելու մասին: Այդպիսի քաղաքը միջմարզային տրանսպորտային կանոնավոր ցանցի պայմաններում տվյալ մարզի բնակչության կենտրոնաձիգ պրոցեսը կզուգակցի կենտրոնախույսի հետ: Կենտրոնաձիգ՝ այն իմաստով, որ հարևան գյուղերի բնակչությունը կապահովվի համապատասխան զբաղմունքով և դրանով իսկ խիստ կմեղմացնի բնակչության արտագաղթը դեպի խոշոր քաղաքներ, այլ երկրներ: Կենտրոնախույս՝ այն իմաստով, որ քաղաքի ագլոմերացիայում գյուղական բնակչությունը կապահովվի ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատանքով: Գյուղական բնակիչը, աշխատելով հարևան քաղաքում, հանգույցով կապրի իր նախկին բնակավայրում, իր տանը, որն ունի տնամերձ հողամաս, ուր կան պայմաններ հանգստի, գյուղատնտեսական բնույթի աշխատանքը ոչ գյուղատնտեսականի հետ զուգակցելու համար:

Այս առումով նպատակահարմար է ինվեստիցիոն և հարկային քաղաքականությամբ ինչպես այդ, այնպես էլ փոքր քաղաքներում ստեղծել բնակվելու և աշխատանքի այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք դեպի իրենց ձգեն ոչ միայն խոշոր քաղաքների աշխատանքային տարիք մտնող երիտասարդության որոշ մասը, այլև պատսպարեն բռնագաղթված հայերին:

Այս բոլորը չէին կարող իրենց ազդեցությունը չգործել գյուղի սոցիալ-կենցաղային կառուցվածքի մյուս տարրերի վրա: Գյուղում նախկին հասարակական սննդի առանց այդ էլ ոչ պատշաճ մակարդակ (1989 թ. գյուղական վայրերում գործում էր հասարակական սննդի 1643 ձեռնարկություն) ունեցող հասարակական սննդի օբյեկտները հիմնականում փոխարինվել են փողոցներում տեղ գտած խորովածանոցներով, սեղանիկների առևտրով, ուր չափազանց ցածր է սպասարկման կուլտուրան, վատթար է սանիտարական վիճակը, աղքատ է սննդի տեսականին, և, որ կարևոր է, բնակչությունը մեծ մասամբ չի կարող օգտվել աներևակայելի գների պատճառով:

Բնակչության կենցաղ-սպասարկման պայմանները գյուղում բարվոք չեն: 1987 թ. գյուղական վայրերում բնակչության մեկ շնչի հաշվով մատուցված կենցաղծառայությունների գումարը կազմել է ընդամենը 15 ռ. 76 կոպ.: Այսօր այդ չնչին ծառայությունն էլ չի իրականացվում:

Գյուղի սոցիալական զարգացման համար կարևոր նշանակություն ունի ճանապարհային հաղորդակցության և կապի կանոնավոր ցանցի առկայությունը: Ճանապարհային հաղորդակցությունը զարկերակի դեր է տանում և կարևոր սոցիալական նշանակություն ունի: Դրանց հետ են կապվում ժողովրդագրական իրավիճակը, գյուղում մասնագետ կադրերի ամրացումը, բնակչության սոցիալական պահանջների լուծումը, ապրանքաշրջանառության ծավալումը հանրապետության տարբեր մարզերի միջև և այլն:

Հայտնի է, որ 1980-ական թվականներին գրեթե բոլոր գյուղերն ունեին ասֆալտապատ ճանապարհային կապ շրջկենտրոնների և քաղաքների հետ: Թեև դրանք հաճախ անորակ էին և կարճ շահագործումից հետո վերանորոգման կարիք էին զգում: Գոհացուցիչ չէ միջգյուղական ճանապարհային ցանցը: Դա բացատրվում է նրանով, որ միջգյուղական ճանապարհների բարեկարգումը, նախ, իրականացնում էին հասարակական տնտեսությունները, որոնք մեծ մասամբ այդ նպատակների համար բավարար միջոցներ չունեին: Երկրորդ, նրանք որևէ պա-

տանսխանատվություն չէին կրում: Այժմ այդ մասին մտահոգվողներ չկան:

Անհանգստանալի է գյուղական բնակչությանը մատուցվող կապի ծառայությունների վիճակը: Տրանսպորտի, փոստատարների պակասի և շատ այլ պատճառներով բնակչությանը հասցեագրված նամակները, հեռագրերը, օրաթերթերը օրերով տեղ չեն հասնում, տրանսպորտի անկանոն երթևեկության պատճառով որոշ շրջկենտրոններ և շատ գյուղեր օրաթերթեր չեն առաքվում:

Կանոնավոր չեն գործում ռադիոն, հեռուստատեսությունը: Շատ գյուղերում տեղեկատվության կատարյալ սով է տիրում: Դրա հետ մեկտեղ ցածր է գյուղական բնակչության ապահովվածությունը հեռուստաընդունիչ միջոցներով: 1990 թ. գյուղական բնակավայրերի յուրաքանչյուր 1000 շնչին ընկնում էր 131 ռադիոընդունիչ և 143 հեռուստացույց: Քչերն են ապահովված հեռախոսային ապարատներով: 1000 մարդու հաշվով դրանից օգտվում են 48-ը: Ցածր է կապի որակը, հին են փոխարկիչները, դրանք հաճախ չեն գործում ոչ միայն էներգետիկ սնուցում չունենալու, այլև հնամաշության պատճառով: Ճանապարհատրանսպորտային ցանցը մեծապես տուժեց նաև երկրաշարժի հետևանքով:

* * *

Գյուղատնտեսության վերաբերյալ վերը շարադրվածը թույլ է տալիս անելու հետևյալ սկզբունքային եզրակացությունները և առաջարկությունները.

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

Գյուղատնտեսության մեջ որոշակի հաջողության հասնելու համար, հավանաբար, պետք է խորհել հետևյալ ուղղությամբ.

1. գյուղատնտեսության ապագա զարգացումը գործունակ հարկային և ռենտային քաղաքականությամբ և այլ աղբյուրների հաշվին պետական բյուջե մուտք գործող միջոցներով իրականացնել հանրապետության գյուղատնտեսության լայնամասշտաբ եր-

կարատև ներդրումների պետական քաղաքականություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ գոտիներում գյուղատնտեսության զարգացման, գյուղում սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի օբյեկտների ձևավորման, պետության կողմից տնտեսական քաղաքականության կիրառման միջոցով բնակչության արտահոսքի կասեցման խնդիրներին.

2. փոշիացած մանր տնտեսությունների փոխարեն նպաստել գյուղում խմբային սեփականության հիման վրա խոշոր ֆերմերային տնտեսությունների կազմավորման, այսինքն՝ գյուղատնտեսության կենտրոնացման ընթացքին: Դա որոշակիորեն կնպաստեցնի գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և աշխատանքի կոոպերացիայի, հետևաբար աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացմանը, կդյուրացնի պետության կողմից գյուղատնտեսական մթերքների նախնական պատվերների, դրանց գնումների, ճկուն հարկային և ռեսուրսային քաղաքականություն մշակելու և կենսագործելու միջոցով հավելյալ արդյունքի որոշ մասը պետության ձեռքում կենտրոնացնելու, ավելցուկը շուկայում իրացնելու գործընթացին.

3. գյուղացիական տնտեսություններից գանձվող հարկերի տարբեր ձևերը փոխարինել «հաստատագրված հողային հարկով» (որը տարբերակված՝ պիտի լինի ըստ գյուղատնտեսական գոտիների)՝ հիմքում դնելով հողի կադաստրային արժեքը.

4. խրախուսել հողակլիմայական առանձնահատկություններից բխող գյուղատնտեսության տնտեսապես գերադասելի մասնագիտացումը և տեղաբաշխումը:

Այդ նպատակով պետք է մշակել և կիրառել պետական նախնական երաշխավորված պատվերների, գնման գների և իրացման գործուն մեխանիզմ, հարկային արտոնյալ քաղաքականություն, գործադրել ցածր տոկոսադրույքներով վարկեր տրամադրելու, հատուկ նպատակներով էժան գներով մեքենաներ, սարքավորումներ, պահեստամասեր, գյուղգործիքներ, վառելիք, սերմերի լավ տեսակներ, անասունների մատղաշ, պարարտանյութ, տնկիներ վաճառելու ընթացքը կարգավորող, ինչպես նաև հարկային և ռենտային հատուկ քաղաքականություն:

Նման քաղաքականությունը պայմաններ կստեղծի.

— գյուղատնտեսության զարգացման առաջնահերթային ուղղությունը ներկայացնող բարձր եկամտաբեր և աշխատատար մշակաբույսերի արտադրության մասշտաբների ընդլայնման, արդյունավետ մասնագիտացման և տեղաբաշխման համար,

— ցածր եկամտաբեր ճյուղերից դեպի բարձր եկամտաբեր ճյուղեր աշխատուժի հոսքի ուղղվածության կողմնորոշման,

— ապագայում գյուղական բնակչության արտահոսքի չափերի մեղմացման,

— գյուղատնտեսության մեջ ստեղծված հավելյալ արդյունքի որոշ մասը բնեղենով պետության ձեռքում կենտրոնացնելու,

— ավելցուկը շուկայում իրացնելու,

— գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և աշխատանքի կոոպերացման միջոցով աշխատուժի գործադրման էքստենսիվ եղանակից ինտենսիվին անցման, հետևաբար աշխատանքի արտադրողականության բարձրացման,

— պետության կողմից գյուղատնտեսական մթերքների արտադրության խթանման և գնման նախնական պատվերների դյուրացման,

— լեռնային շրջանների, սահմանամերձ և աղետի գոտու ենթակառուցվածքային համակարգերի ձևավորման համար.

5. պետության ակտիվ միջամտությամբ խրախուսել մերձքաղաքային ջերմոցային տնտեսության զարգացումը՝ քաղաքային բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով և առաջին հերթին վաղահաս և ջերմոցային բանջարաբոստանային մշակաբույսերով, արագ արժեզրկվող մթերքներով, հատկապես մրգերով, ծաղիկներով բավարարելու համար: Այդ նպատակով ձեռնարկեց մարդկանց տրամադրել մարման ցածր տոկոսադրույքով երկարատև վարկ, վառելիք, շինանյութ, տրանսպորտային փոխադրամիջոցներ, ինչպես նաև ընձեռել հարկային որոշ արտոնություններ.

6. վարկ չտրամադրելու, հարկային, վարչական և այլ սահմանափակող քաղաքականությամբ չխրախուսել խոշոր և միջին քաղաքներում գյուղատնտեսական հումքի վերամշակման, իսկ փոքր քաղաքներում և գյուղական շրջաններում (մասնավորա-

պես սահմանամերձ գոտիներում) նպաստավոր պայմաններով վարկեր տրամադրելու, հարկային և այլ հովանավորչական քաղաքականությամբ խրախուսել արտահանման մեծ պահանջարկ վայելող գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական վերամշակման բոլոր տեսակների փոքր ձեռնարկություններ (կաթնավերամշակման գործարաններ, կոնյակի, քաղցրահամ գինիների բազմաթիվ տեսակներ, խորդենու, չիչխանի եթերայուղեր, լոլիկի մածուկ և հյութ, ծիրանի, դեղձի, խնձորի հյութ, կոնպոտներ և այլն) և ագրոարդյունաբերական համալիրներ ստեղծելու համար.

7. ինվեստիցիոն քաղաքականությամբ նպաստել գյուղական վայրերում սոցիալական և արտադրական ենթակառուցվածքի ճյուղերի զարգացմանը, որը կարևոր երաշխիք կդառնա ապագայում գյուղատնտեսական արտադրությունից ազատվող աշխատանքային ռեսուրսների և աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության մի զգալի մասին հենց գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղմունքներում ընդգրկելու համար:

8. գյուղական վայրերում ստեղծել իրավական օրենսդրական դաշտ կոոպերատիվների, մասնավոր ձեռներեցության, շուկայական կառուցվածքների ծավալման և անկաշկանդ գործունեության, ինչպես նաև նրանց նկատմամբ հստակ և ճկուն հարկային քաղաքականություն կենսագործելու համար: Այս վայրերում անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվողներին և կոոպերատիվներին վարձակալության համար հող տրամադրել ավելի արտոնյալ պայմաններով, այսինքն՝ հողօգտագործման, անասնապահությամբ զբաղվելու համար սահմանել եկամտահարկ և ռենտավճար՝ նվազագույն չափերով.

9. լեռնային, մասնավորապես սահմանամերձ շրջաններում տարբերակված հարկային և ժողովրդագրական քաղաքականություն կիրառելու, ցածր տոկոսադրույքներով վարկ տրամադրելու, զեղչված գներով գյուղատնտեսական մեքենաներ, շինանյութ, վառելիք վաճառելու, սոցիալական արտադրական ենթակառուցվածքի օբյեկտների ձևավորմանը խթանելու պետական ակտիվ միջամտությամբ և այլ գործուն միջոցներով նպաս-

տել բնակչության արտահոսքի մեղմացմանը և դրանով իսկ գյուղատնտեսական մթերքների արտադրության աճին.

10. սահմանամերձ և լեռնային շրջաններում, հարթավայրային հատվածների համեմատությամբ օժանդակ տնտեսություն վարելու համար հատկացնել իր չափերով կրկնակի անգամ ավելի շատ հողատարածք, անկախ ընտանիքին՝ սեփականաշնորհմամբ հատկացված ընդհանուր հողատարածքի չափերից.

11. կարգավորել տրանսպորտային ցանցը՝ գյուղատնտեսական մթերքների պետական գնումները իրացման վայրեր, արտադրված ավելցուկը՝ շուկա փոխադրելու համար:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ

Անցումը շուկայական տնտեսության, առանց իրական տնտեսական բազա ստեղծելու, իր բացասական ազդեցությունն է թողել նաև նյութական արտադրության մյուս ճյուղերում զբաղվածության արդյունավետության կտրուկ անկման վրա: Անշուշտ, գլխավորը միայն զբաղվածությունը չէ, այլ բարիքների ստեղծումը, դրանց բաշխումը և սպառողներին հասցնելը, կարիքների մեջ թաղված բնակչության կենսական պահանջմունքների բավարարումը:

Առանձնահատուկ մտահոգության տեղիք է տալիս շինարարության մասնագետ կադրերի գրեթե զանգվածային անգործությունը, որին հարկադրաբար մատնվել են հանրապետության լավագույն շինարարները: Նրանց մի զգալի մասն արտագաղթել է: Լայնամասշտաբ շինարարության բացակայության պատճառով հետին պլան է մղվել շինարարական ինդուստրիան, զգալիորեն նվազել են շինարարական ինդուստրիայի մասշտաբները:

Վերջին տարիների ընթացքում ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում կառուցողական աշխատանքը տեղի տվեց, ինչ-որ չափով աշխուժություն է ապրում մասնավոր բնակարանաշինարարությունը: Հատկապես քաղաքային բնակավայրերում վեր են խոյանում գեղեցիկ առանձնատներ, որոնց մի մասը հիշեցնում են պալատներ, ամրոցներ ու դղյակներ: Կառուցողների մեջ քիչ չեն օտարերկրացիներ: Սակայն այդ կառույցների տերերը մեծ մասամբ բնակարանի կարիք չունեցող քաղաքացիներ են: Բնակարանազուրկ զանգվածը մեծ մասամբ այդպես էլ մնում է առանց բնակարանի, թե՞րբ նրանք

կապրեն բնակարանամուտի բերկրանքը, անհայտ է: Գյուղական բնակավայրերում, հատկապես Արարատյան հարթավայրում, մշակելի և բարեբեր հողատարածքները վերածվում են բնակելի զանգվածների: Լեռնային և նախալեռնային շրջաններում բնակարաններ քիչ են կառուցվում:

Պետությունը մտահոգ չէ կրթական, գիտական, առողջապահական օջախների կառուցմամբ: Ավելին, այդ համակարգի, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների գոյություն ունեցող կառույցներում շարունակում են բուն դնել փոքրաչափաբ, բայց բազմազան առևտրական, բաժնետիրական, ՍՊ և այլ ընկերություններ: Ժամանակի ընթացքում արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի աշխուժացումը, հավանաբար, կարթնացնեն ժողովրդական տնտեսության այդ շատ կարևոր բնագավառը:

Շինանյութերի արդյունաբերության և բուն շինարարական ինդուստրիայի նկատմամբ ներկայացվող պահանջների իրագործման շնորհիվ ինչ-որ չափով կարող է մեղմանալ գործազրկությունը: Այդ պահանջը թելադրվում է նախ, աղետի գոտին վերականգնելու, փախստականների բնակարանազուրկ ընտանիքների չափազանց մեծ զանգվածների խնդիրները հոգալու առումով:

Երկրորդ, Հայաստանի շինանյութերի նկատմամբ արտերկրի ներկայացրած հայտով:

Հրաշալի նշանակություն է ստանում հանրապետությունում շինանյութերի հազվագյուտ տեսակների հարուստ հանքավայրերի, բարձր որակավորման մասնագետ կադրերի առկայությունը: Մինչդեռ, ինչպես ասենք, այս բնագավառում նույնպես բարձիթողի վիճակը, տեխնիկայի պակասը, աշխատանքի կազմակերպման իրենց չարդարացնող ձևերը, մի կողմից, հանգեցնում են թանկարժեք շինանյութերի ավելորդ թափոնների գոյացմանը, իսկ մյուս կողմից, աշխատուժի ոչ արդյունավետ օգտագործմանը: Արտաքին աշխարհի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող շինանյութերի չափազանց հազվագյուտ տեսակներ արտահանվում են որպես հումքային ռեսուրսներ: Դրանց հետագա մշակման և պատրաստի արտադրանք ստանալու նպատակով նոր արտադրությունների ստեղծումը որա-

կավորում ունեցող մասնագիտական կադրերի նոր պահանջ կառաջադրի:

Հասկանալի է, որ շինարարության, ինչպես նաև շինանյութերի արդյունաբերության նկատմամբ հասարակական նախկին մեծ պահանջարկն այլևս կրկնվել չի կարող: Խոսքը վերաբերում է արդյունաբերության, առողջապահության, լուսավորության, կրթության, գիտության, մշակույթի, առևտրի, գյուղատնտեսական համակարգում, ինչպես նաև բնակարանային և այլ ասպարեզներում իրականացվող լայնամասշտաբ շինարարությանը: Այսօրվա մասնավոր բնակարանաշինությունը, առևտրի օբյեկտների, փոքր և խառը ձեռնարկությունների, բաժնետիրական ընկերությունների, դեսպանատների կողմից ապագայում սպասվելիք շինարարությունը չի կարող ապահովել շինարարության մասնագետ կադրերի ընդլայնված վերարտադրությունը: Այդուհանդերձ, ներկայումս հանրապետության ներսում շինանյութերի նկատմամբ ներկայացվող նվազ պահանջարկն անգամ չի բավարարվում:

Ներքին պահանջները բավարարելու հետ միասին անհրաժեշտ է երկարատև ներդրումներով խթանել շինանյութերի լայնամասշտաբ արտահանման գործի կազմակերպումը: Այս բնագավառում ներդրված միջոցների փոխհատուցումը կապված չէ մեծ վտանգի հետ: Փոխհատուցումը շատ արագ կլինի, եթե հումքի փոխարեն արտահանվի պատրաստի արտադրանքը: Ուստի անհրաժեշտ է պետական հոգածություն՝ շինարարական ինդուստրիան զարգացնելու նպատակով իրավական դաշտ ստեղծելու, Հայաստանում բազմահարուստ շինանյութերի արտադրության ավարտուն ցիկլեր կազմակերպելու համար: Դա կապահովի ոչ միայն կայուն տարադրամի մուտքը Հայաստան, այլև կստեղծի զբաղվածության նոր բնագավառներ, որոշակիորեն կնպաստի նրա արդյունավետության բարձրացմանը:

Ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը կախված է նաև նյութատեխնիկական մատակարարման, տրանսպորտի, կապի, առևտրի կազմակերպման մակարդակից: Դրանք այն բնագավառներն են, որոնց զարգացումը բնականոն ընթացքի մեջ մտնելու պայմաններում, լրջորեն կնպաստեն արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, ինչ-

պես նաև բնակչության ապասարկման բարելավմանը: Որքա՞ն ավելորդ աշխատանք է կորչում պետական հսկողությունից բաց թողնված, անկազմակերպ և չկարգավորված մատակարարման, երկրից երկիր քառնային բնույթ կրող բեռնափոխադրումների, արտահանվող և ներմուծվող ապրանքատեսակների, տրանսպորտի անկանոն երթևեկության (այդ թվում բնակչության երթևեկության) պատճառով:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Զբաղվածության արդյունավետության բարձրացման ընթացքի վրա էական ազդեցություն են թողնում գիտակրթական համակարգը և, ընդհանրապես, հոգևոր ոլորտը (գիտություն, կրթություն, արվեստ, մշակույթ): Այս ոլորտում, առավել քան արտադրական և ծառայությունների ոլորտներում, աշխատանքային ռեսուրսների պահանջարկն անցման շրջանում մեծապես ձևավորվում է պետության մշակած և կիրառած քաղաքականությամբ՝ բյուջեից կատարվող հատկացումների միջոցով: Մտավոր սեփականության պահպանումն ու զարգացումը պետության հովանավորության խիստ կարիք է զգում: Տվյալ դեպքում անհրաժեշտ է խթանել այդ բնագավառներում զբաղված աշխատանքային ռեսուրսների որակական ամի ընթացքը՝ ելնելով այն սկզբունքից, որ դրանցում զբաղված աշխատանքային ռեսուրսների որակական փոփոխությունները որոշակիորեն նպաստում են տնտեսության բոլոր ճյուղերում զբաղվածության արդյունավետության բարձրացմանը: Ավելին, վերջիններիս զարգացման վրա հոգևոր ոլորտի հակադարձ ազդեցությունն ավելի արտահայտիչ է:

Նախ, այդ ոլորտում են լուծվում արտադրական օղակները տեխնիկական նոր հիմքի վրա փոխադրող սարքավորումների, կիրառվող տեխնոլոգիաների մշակման և գիտատեխնիկական առաջընթացի ապահովման խնդիրները: Հայաստանի բնական գիտությունների ասպարեզում տասնամյակներում ստեղծված և գործող համակարգի լիաթոք գործունեությունն ապահովելու պայմաններում կստեղծվեն ավելի կատարյալ արտադրամիջոցներ: Պետք է նպաստել հանրապետության գիտական առաջըն-

թացին, որ ավելի արագորեն և հիմնավոր ձևով այն դառնա գիտատեխնիկական առաջընթացի կրողը: Հայաստանի բնական գիտությունները պետք է կողմնորոշել ժողովրդական տնտեսության ճյուղերի տեխնիկական վերազինման, հատկապես գյուղատնտեսության փոքր մեքենայացման, անասունների նոր ցեղեր և բուսաբուծության նոր տեսակներ բուծելու, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և այլ ճյուղերում աշխատանքային ռեսուրսների ինտենսիվ գործունեությունն ապահովող տեխնոլոգիաների մշակմանը: Գիտության ձեռքբերումները արտադրության մեջ արմատավորելու շնորհիվ հնարավոր կդառնա ժամանակի ընթացքում Հայաստանում արդյունաբերության մեջ առավել աշխատատար տեխնոլոգիական ցիկլերից անցում կատարել արտադրապրոցեսների մեքենայացման ավելի բարձր համակարգերի:

Եվ երկրորդ, հոգևոր ոլորտը պատրաստում ու ժողովրդական տնտեսությունը համալրում է որակյալ կադրերով, այդ թվում այնպիսի մասնագետներով, որոնք կոչված են սպասարկելու նոր կյանք մտած տեխնոլոգիական համալիրները:

Հենց այդ պատճառով էլ գիտակրթական համակարգը անընդհատ որակյալ աշխատուժի լրացուցիչ պահանջ է առաջադրում: Դրա հետ մեկտեղ ինչպես գիտակրթական,այնպես էլ ծառայությունների ոլորտները աշխատուժի նկատմամբ իրենց պահանջները կարող են ապահովել արտադրական ոլորտից արտամղված միջոցներով, քանի որ գիտակրթական համակարգի և ծառայությունների ոլորտի բյուջետային հատկացումների և, ընդհանրապես, երկարատև կապիտալ ներդրումների աղբյուրը արտադրությունն է:

Գիտատար ճյուղերի գծով արդյունաբերական արտադրության զարգացման ուղղվածությունը սկզբունքային նշանակություն ունի հատկապես գիտության և դրա սպասարկման ճյուղերում զբաղված մտավոր աշխատանքի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև այդ ճյուղերում զբաղվածության նոր պահանջարկը խթանելու առումով: Ուստի արտադրական ոլորտի աճից, զարգացման ընթացքից ու մակարդակից է կախված գիտակրթական համակարգի և ծառայությունների ոլորտի աճը, ընթացքն ու ձեռք բերած մակարդակը:

Մինչդեռ, ինչպես նկատեցինք նախորդ բաժիններում, նյութական արտադրության բոլոր ճյուղերում արտադրության մասշտաբները կծկվել, գերություն ունեցող արտադրական կարողությունները թերբեռնվել, տեխնոլոգիական համակարգերը խաթարվել, նախկինում բարձր որակավորում ունեցող արտադրական անձնակազմը կազմալուծվել է:

Գիտակրթական համակարգում են լուծվում բնակչության կրթական մակարդակի խնդիրները: Դրա գործունեությունից է կախված կադրերի որակավորման, մասնագիտական պատրաստման, գիտատեխնիկական առաջընթացի պահանջների համեմատ նրանց վերարտակավորման գործի կազմակերպման ընթացքը: Բնակչության կրթական մակարդակը աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքն է: Մինչդեռ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում չի ապահովվում մեկ աշխատողի հաշվով աշխատանքի արտադրողականության այն աստիճանը, ինչ գոյություն ունի որևէ զարգացած երկրում: Իսկ դա բացատրվում է, մի կողմից, արտադրության տեխնիկական հագեցվածության, տեխնոլոգիայի, իսկ մյուս կողմից, կադրերի որակավորման, կրթական, աշխատանքի կանոնավոր միջին ինտենսիվության ցածր մակարդակներով:

Ժողովրդական տնտեսության համար մասնագետ կադրերի պատրաստումն առ այսօր չի բխել նրանց նկատմամբ ներկայացվող իրական պահանջից: Երիտասարդության առկայությունն այսուհետև չի կարող դառնալ այնքան և այնպիսի մասնագետ կադրեր պատրաստելու գրավականը, որը գերազանցի ժողովրդական տնտեսության կողմից ներկայացվող պահանջները, ինչ տեղի է ունեցել ոչ վաղ անցյալում: Մասնագետների պատրաստման նախկինում և այժմ տիրապետող սխալ պրակտիկան հանգեցրել է որակավորում ունեցող կադրերի նկատմամբ անուշադիր վերաբերմունքի: Այլապես ինչով բացատրել նախկինում ստեղծված այն իրավիճակը, երբ ժողովրդական տնտեսության մեջ որակավորում չպահանջող աշխատանքներում ընդգրկված բանվորներն ավելի բարձր էին վարձատրվում (խոսքը համեմատության մասին է, այն այստեղ ևս ցածր էր), քան բարձրագույն կրթության ինժեներն ու տնտե-

ապագետը, բժիշկն ու մանկավարժը, նույնիսկ դոցենտն ու պրոֆեսորը: Ի՞նչ հրաշքով տեղի ունեցավ այն կերպարանափոխությունը, որ ԽՍՀՄ-ում գիտության բնագավառում ընդգրկվածների միջին աշխատավարձը զբաղեցրեց այն հորիզոնականը, որն ընկած էր ժողովրդական տնտեսության նյութական արտադրության գրեթե բոլոր և ոչ արտադրական ոլորտի ճյուղերի ամենավերջին շարքում: Կարի՞ք կար, արդյոք, այդ բնագավառում աշխատողների թիվն ուռճացնել այնքան, որ այն ԽՍՀՄ-ում կազմեր աշխարհի գիտության բնագավառում աշխատողների 1/4-ը:

Վաղուց ի վեր անժամանակ մտցված տասնամյա ընդհանուր պարտադիր կրթությունը նույնպես իր հետ բերեց ոչ քիչ վտանգավոր երևույթներ: Տասնամյա ընդհանուր կրթության սկզբունքներին համապատասխան ամեն մի պատանի ու աղջիկ, անկախ այն բանից, ցանկանում էր, թե չէր ցանկանում, ի վիճակի էր, թե ոչ, տիրապետում էր որոշակի գիտելիքների, թե չէր տիրապետում, պետք է ձևականորեն ընդգրկվեր ուսումնառության համակարգում և ստանար հասունության ատեստատ: Բնական է, որ հասունության ատեստատ ունեցողը, անկախ այն բանից, տիրապետում է պարտադիր դասընթացով նախատեսվող գիտելիքների պահանջվող մակարդակին, թե ոչ, կրթություն պահանջող աշխատատեղը զբաղեցնելու հայտ էր ներկայացնում: Մինչդեռ գործնականում չէին վերացել ցածր որակավորման ձեռքի ծանր աշխատանքները, դրանք ամենուրեք դեռևս լրիվ չէին մեքենայացվել: Գաղտնիք չէր, որ ժողովրդական տնտեսության շատ ճյուղերում աշխատանքների մի զգալի մասը կատարվում էր ձեռքով: Իսկ տասնամյա ընդհանուր պարտադիր կրթության կիրառումը երիտասարդության մեջ խեղել էր այդ աշխատատեղերն զբաղեցնելու ցանկությունը: Ժողովրդական տնտեսությունն ամենուրեք այդպիսի աշխատատեղեր զբաղեցնելու կեղծ պահանջ էր ներկայացնում: Պահանջարկի և առաջարկի հենց այս կարծեցյալ անհամապատասխանությունը պայմանավորել էր որակավորում չունեցող և ձեռքի աշխատանքում ընդգրկված աշխատատեղերում աշխատանքի ավելի բարձր վարձատրությունը, այլապես այդ տեղերը կմնային թափուր: Գաղտնիք չէր, որ բարձր որակավորման,

հետևապես մեծ ծախսեր պահանջող կադրերի պատրաստման համար առաջարկն ավելի մեծ էր, քան պահանջարկը: Դա վերաբերում է ինժեներական, բժշկական, գիտական, մանկավարժական (որոշ բնագավառների), գյուղատնտեսական բարձր որակավորման, բանվորական որոշ մասնագիտությունների գծով կադրերին: Այս պատճառով էլ բարձրացել էր որակավորում չունեցող աշխատողների հարգը, ուստի՝ վարձատրությունը, իջել՝ բարձր որակավորում ունեցողներինը: Դա բացատրվում էր նաև աճող կեղծ պահանջների համեմատ բարձր որակավորման կադրերի փաստացի պատրաստման մակարդակով, որն իր արտահայտությունն էր գտել նաև այդ աշխատանքներում ընդգրկված մարդկանց վարձատրության համակարգում: Օրինակ, բժիշկների թիվը կարող էր ավելի քիչ լինել, սպասարկման մակարդակը՝ բարձր: Դա կարող էր տեղի ունենալ ոչ միայն բժշկի մասնագիտական որակի նկատմամբ ներկայացվող պահանջը բարձրացնելու, այլև սպասարկող անձնակազմի թիվն ավելացնելու, այդ բնագավառում գիտության ու տեխնիկայի նվաճումներն արմատավորելու և օգտագործելու միջոցով: Նույնը վերաբերում է գիտությանը, ուսումնական համակարգին: Տարեցտարի ընդլայնվում էր հեռակա և երեկոյան ուսուցման ցանցը: Դա ոչնչով չէր արդարացվում, և դրանցում պատրաստված մասնագետներն իրենց որակով գրեթե չէին բավարարում արտադրության պահանջները:

Այսպիսով, էքստենսիվ զարգացման և մասնագիտական ուսումնական ցանցի անհարկի ընդլայնման միտումները հանգեցրին որոշակի անհամապատասխանության, մի կողմից արտադրություն մուտք գործող պատանիների ու աղջիկների ստացած գիտելիքների մակարդակի և արտադրության որոշ օղակներր դեռևս տեխնիկական ցածր հագեցվածության միջև: Իսկ մյուս կողմից, ընդհակառակն, արտադրության շատ օղակներում արտադրության տեխնիկական բազայի բարձր մակարդակի և կյանք մտնող երիտասարդության զգալի մասի մասնագիտական ցածր պատրաստականության միջև: Հայտնի է, որ այսօր էլ հանրակրթական միջնակարգ դպրոցների շրջանավարտների մեծ մասն իր աշխատանքային գործունեությունն սկսում է՝ չունենալով ոչ մի մասնագիտություն: Դրա հետ մեկտեղ, արտադ-

թության մեքենայացման և որոշ դեպքերում ավտոմատացման պայմաններում դեռևս մեծ էր ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը:

Այս երևույթն առավել ցայտուն արտահայտվեց գյուղում, մասնավորապես լեռնային շրջաններում: Ստեղծվեց որոշակի անհամապատասխանություն պատանիների ու աղջիկների ստացած գիտելիքների մակարդակի ու գյուղական վայրերում արտադրության մեջ այդ գիտելիքները ներդնելու սահմանափակ հնարավորությունների միջև: Երկար ժամանակ նաև դրանով էր բացատրվում լեռնային գյուղերում բնակչության նվազելու փաստը:

Ուստի, այսուհետև, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության ուսումնական համակարգի մասշտաբները հարկ կլինի չափավորել և հիմնականում կարգավորել՝ ելնելով ժողովրդական տնտեսության կողմից ներկայացվող պահանջարկից, իսկ հանրակրթական դպրոցներում տասնամյա պարտադիր կրթությունն իր տեղը պետք է զիջի կամավոր հիմունքներով ուսումնառության կազմակերպման համակարգին:

Չի կարելի աննկատ թողնել վերջին մի քանի տարիների ընթացքում մասշտաբային բնույթ ստացած այն միտումը, ըստ որի աշակերտները չեն ուզում սովորել, ուսուցիչները դրսևորում են նվազ շահագրգռվածություն աշակերտներին հիմնավոր գիտելիքներ մատուցելու հարցում: Չի փայլում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգը: Այս ասպարեզում շղթայի խոտորումը մշուշապատ է դարձնում հասարակության ապագան:

Փողոցային առևտուրը, կեղծ բիզնեսով և հեշտ ճանապարհով փող վաստակելու մոլուցքը թուլացնում է հանրապետության երիտասարդության ներուժը հասարակական առաջընթացի շահերին ծառայեցնելու գործընթացը: Ավելին, նսեմանում է բարոյական արժեքների դերը: Հենց այդ պատճառով, նախ, տարեկիցների մոտ մարում է աշխատանքային եռանդը, փոխվում կողմնորոշումը դեպի աշխատանքը և ուսումնառությունը: Որոշակի օժտվածություն ունեցող շատ երիտասարդներ, որոնք ուսումնառության պայմաններում կարող էին ապագայում հրաշքներ գործել, շատ դեպքերում մնում են յեթուս: Երկրորդ, երի-

տասարդության մի մասը փողի քսակն է մեծացնում, մյուս մասը կյանքի գնով հայրենիք է պաշտպանում: Այս հակասությունն անհետևանք չի մնում, մանավանդ վերջիններիս ընտանիքները խիստ կարիքի մեջ են:

Հասարակության ապագայի համար խիստ վտանգավոր հետևանքներով է հղի կրթական համակարգի նկատմամբ պետական հոգածության դերի նսեմացման ուղղությամբ կյանք մտնող քաղաքականությունը: Դա վերաբերում է կրթական համակարգում վճարովի ուսուցմանը:

Այն, ինչ ձեռք է բերվել տասնամյակներով անգրագիտության վերացման ասպարեզում, մեկ հարվածով ոչնչանում է: Անգրագիտությունը չպետք է հասկանալ ուղղակի իմաստով, բառացի: Ներկա դարում անգրագիտությունը որոշվում է ոչ թե տառաճանաչությանը տիրապետելու չափանիշներով, այլ գիտելիքների նվազագույն պաշարով, որը կուտակել է մարդկությունը՝ գիտատեխնիկական առաջընթացի ինչ-որ պահանջների ի սպաս դնելու համար: Դա վերաբերում է թե՛ բանվորին, թե՛ գյուղացուն, թե՛ զինվորին, որը հայրենիք է պաշտպանելու ոչ միայն նվիրվածությամբ, այլ զենքերի և տեխնիկայի այսօրվա բարդ համակարգին՝ տիրապետելու կարողությամբ, թե՛ գործարար մարդկանց՝ բոլորին, բոլորին: Ստացվում է, որ տարրականից բարձր դասարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական համակարգում սովորել կարող են միայն նյութապես ապահովված ընտանիքի երեխաները՝ անկախ գիտելիքների, ընդունակությունների և օժտվածության աստիճանից: Հասարակության համար խոստումնալից ինչքան շնորհաշատ և ձիրքի ու տաղանդի տեր երեխաներ հատակից վեր չեն բարձրանա կամ կընկղմվեն կյանքի գորշ հորձանուտի մեջ լոկ այն պատճառով, որ նրանց ծնողները փողատերեր չեն և զուրկ են միջոցներից: Եվ քանի-քանիսը իրենց նեղ մտահորիզոնով, բայց թխած դիպլոմով կդառնան դրության տերը և պատուհաս՝ հասարակության համար: Մի՞թե այդպես է կազմակերպվում ուսուցման համակարգը այլ երկրներում: Մի՞թե մասնագետ դառնալու համար օժտվածության փոխարեն առաջին պլան է մղվում ուռճացած գրպանը:

Նման քաղաքականություն կիրառելու համար հանախ է վկայակոչվում պետական հյուծված բյուջեն: Բայց ինչո՞ւ է այն հյուծվել: Ի՞նչ անել, որ բյուջեն տկարանալու փոխարեն վերակենդանանա, հոգ տանի թե՛ որակյալ ուսուցիչներ պահելու, թե՛ դասագրքեր հրատարակելու, թե՛ դպրոցներ կառուցելու մասին: Ուսումնառության նպատակով մարդկանց մեջ ընտրություն կատարվի ոչ թե փող ունենալու կամ չունենալու, այլ օժտվածության առումով: Բյուջեի գոյացման աղբյուրների մասին հանգամանորեն խոսվել է նախորդ շարադրանքում, թերևս նորից կարելի է շեշտադրել, որ հասարակությունը կանգուն է իր արարչագործությամբ, իրավական խոհուն համակարգով, ընտրակ հարկային մեխանիզմով, որն ապահովում է բոլորի աշխատանքային եկամուտներից բյուջե մուտքագրվող միջոցները՝ հավասար հիմունքներով:

Մասնավոր սկզբունքներով կոոպերատիվ «համալսարանների» ցանցի աճհարկի ընդարձակումը չի բխում կյանքի տրամաբանությունից: Հոգ չէ, որ դրանցում շատ հանախ ընդգրկվում են նույնիսկ դպրոցական տարրական գիտելիքներ չունեցող անձինք, իսկ պատրաստվող մասնագիտությունների գծով ժողովրդական տնտեսությունը մեծ մասամբ պահանջ չի ներկայացնում: Դարձյալ նսեմացվում է հասարակական աշխատանքային ներուժի դերը: Չէ՞ որ պատանիներից ու աղջիկներից յուրաքանչյուրն օժտված է որոշակի ունակությամբ ու շնորհքով, խնդիրը արհեստավարժ ճիշտ կողմնորոշումն է: Ինչ պարտադիր է, որ դրանք անպայման ձևական բարձրագույն կրթություն ստանան և հասարակությանն ի սպաս չբերեն իրենց ունակությունները: Դրա հետ մեկտեղ ուսումնական այդ ցանցը ընդգրկել է նաև հանրապետության փոքր քաղաքները, նույնիսկ գյուղական բնակավայրերը: Դրական նշանակության հետ միասին անժխտելի են դրա հետ կյանք մտնող բազմաթիվ հոգսեր, որոնց հետևանքով թերի գիտելիքների տեր անձինք դատնում են բարձրագույն կրթության դիպլոմակիրներ: Դա առաջին հերթին բացատրվում է դասավանդող մասնագետ կադրերի, համապատասխան գրականության և ուսումնական ձեռնարկների պակասով, գրադարանների բացակայությամբ, սովորողներին հրամցվող գիտելիքների և պահանջկոտության ոչ փայ-

լուն մակարդակով: Այս առումով քիչ են տարբերվում նաև խոշոր և միջին քաղաքներում սնկի նման օրավուր աճող, շատ կոոպերատիվ, ինչպես նաև պետական բուներ:

Երևույթների այսօրվա ընթացքը ժողովրդական տնտեսության, մասնավորապես գիտության ու գիտատեխնիկական առաջընթացի ասպարեզում իրենց զգացնել կտան տարիներ անց, երբ փողոցային առևտուրը չի փայլի իր այսօրվա «շքեղությամբ», իսկ գիտության կաճառ մուտք գործողները գրեթե չկան՝ այս ասպարեզի նկատմամբ այսօրվա անհարկի վերաբերմունքի պատճառով:

Միևնույն ուսուցման համակարգը ատիճանաբար վերափոխելու և պետական հովանավորչական քաղաքականությունն ակտիվացնելու միջոցով կրթության, մասնագետ կադրերի և գիտության հարգը բարձրացնելու շնորհիվ հնարավոր կդառնա դեպքերի հնարավոր զարգացման ընթացքը նպատակաուղղել հօգուտ հասարակության և գիտատեխնիկական առաջընթացի: Դրա համար առկա է նաև մեկ այլ, չափազանց կարևոր նախադրյալ՝ երիտասարդությունը, որի ջանքերը պետք է ուղղել դեպի հասարակության առաջընթացն ապահովող բնագավառները:

Աշխատունակ տարիքի բնակչության երիտասարդանալու բնական ընթացքը, որը, ինչպես նկատեցինք, հատուկ կլինի առաջիկա տարիներին, չափազանց մեծ երաշխիք է հանրապետության աշխատանքային ներուժի որակական աճի համար: Որակական առումով երիտասարդությունը, հանրապետության աշխատանքային ներուժը բազմապատկում է ոչ միայն իր առողջությամբ, ֆիզիկական օժտվածությամբ, այլև, առաջին հերթին, համաշխարհային պահանջներից բխող մասնագետ դառնալու, որակավորում ստանալու, վերաորակավորելու և վերամասնագիտանալու, գիտության ու տեխնիկայի հիմունքներին տիրապետելու իր հեռանկարով: Առաջին պլան է մղվում ոչ միայն ուսուցման համակարգի բոլոր օղակներում ուսումնառության գործի այնպիսի արմատական վերափոխումը, որն ապահովի կյանք մտնող մարդկանց մտավոր ունակությունների ձևավորման, զարգացման, կատարելագործման և համաշխարհային հնչին համաքայլ ընթանալու բնականոն ընթացքը, լիա-

կատար պայմաններ ստեղծի նրանց օժտվածությունը, հմտությունը, նախաձեռնությունը և պատասխանատվությունը ստեղծագործաբար դրսևորելու համար, այլև արտադրության տեխնիկական հիմքերի արմատական վերազինումը, աշխատանքային ներուժի օգտագործման արդյունավետությունն ապահովող նորագույն ճյուղերի զարգացման հույժ կարևոր խնդիրը: Հետևաբար հանրապետության առջև ծառացած դժվարհաղթահարելի ճանապարհը ինչ-որ չափով հնարավոր է դյուրացնել համաշխարհային պահանջներից բխող մասնագետ կադրեր պատրաստելու միջոցով: Ուսուցման համակարգի բարեփոխման շնորհիվ կադրերի որակավորման մակարդակի և արհեստավարժ կազմի փոփոխությունը ժամանակի ընթացքում հնարավորություն կընձեռի համապատասխան մասնակցություն ունենալ աշխատանքի միջազգային բաժանմանը. այստեղից էլ՝ աշխատանքային ներուժի որակական մակարդակը համաշխարհային միջին մակարդակին մոտեցնելու այնպիսի պայմանների ապահովումը, որը հնարավորություն կընձեռի արտահանել բարձր որակավորում պահանջող աշխատատար և գիտատար արտադրությունների, փորձաշրջան անցած ստեղծագործական մտքի արգասիք հանդիսացող յուրօրինակ արդյունքներ՝ տեխնիկական նախագծեր, տեխնոլոգիական մտահղացումներ, մշակումներ, գյուտեր ու հայտնագործություններ, մարդու բարձր մտավոր կարողություններն ու հմտությունը բնութագրող այլ արտադրատեսակներ:

Մտավոր աշխատուժի վերարտադրությունն ապահովելու և այդ ասպարեզում գործազրկության մասշտաբները հետագայում մեղմելու համար պետք է լուրջ քայլեր ձեռնարկել հենց այսօրվանից: Այդ նպատակով անհրաժեշտ է.

— պետական հովանավորչական քաղաքականությամբ և օրենսդրական երաշխիքներով ապահովել մտավոր սեփականության պահպանումը, զարգացումն ու արդյունավետ օգտագործումը,

— նպաստել ուղեղների արտահոսքի կասեցմանը դեպի մտավոր զբաղմունքի հետ առնչություն չունեցող այլ բնագավառներ և արտասահմանյան երկրներ, փոխարենը խթանել դրանց արարումների արտահանությունը, մանավանդ

մտավոր աշխատանքի պտուղները ցանկացած պահի, առանց արհեստականորեն հարուցվող դժվարությունների կարող են անարգել արտահանվել աշխարհի ամեն մի երկիր՝ զերծ մնալով շրջափակումներից,

— պետական հովանավորչական քաղաքականությամբ նպաստել կրթական համակարգի առողջացմանը, արդի պահանջներին համեմատ կրթական պետական համակարգի գործընթացի կազմակերպմանը, ինչպես նաև պայմաններ ստեղծել ամեն մեկի օժտվածությանը համապատասխան արհեստավարժ մասնագիտական ուսուցման համար: Չէ՞ որ այս ապարեզում է հասարակության գլխավոր հարստության վնոորոշ բաղադրամասը, նրանք են գիտատեխնիկական առաջընթացի ջահակիրները, ապագան կողմնորոշողները, նրա անվերջանալի շղթայի բոլոր հաջորդական օղակների շարքն ամբողջականացնող բարձր որակավորման սերունդների վերարտադրությունն իրականացնողները,

— բուհերում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության չափերը հավասարակշռել ժողովրդական տնտեսության կողմից ապագայում ներկայացվող պահանջների համեմատ,

— բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ավելացնել հեռանկարային մասնագիտությունների գծով ընդունելության չափերը՝ իրենց դարն ապրած մասնագիտությունների գծով ընդունելությունը (գերազանցապես պետպատվերով) դադարեցնելու հաշվին,

— ընդհանրապես կրճատել բարձրագույն դպրոցում ընդունելության չափերը: Կադրերի պատրաստման էքստենսիվ ձևը փոխարինել ինտենսիվ ձևով, փոխել դասավանդման մեթոդները, դասավանդվող առարկաների ցանկը համապատասխանեցնել տվյալ մասնագիտության գծով կյանքի ներկայացրած պահանջներին,

— բոլոր մակարդակներում պատրաստվող և վերապատրաստվող որակյալ կադրերի քանակն ու որակը համապատասխանեցնել հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղություններին, մասշտաբներին, կառուցվածքին,

— վերարտադրության ողջ ընթացքի կառավարումն արմատապես ձևափոխել կառավարման նոր ձևերին ու մեթոդներին համապատասխան:

Հայ ժողովուրդը XXI դար է թևակոխում ուժերի գերլարումով, երբ առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հոգևոր արժեքները և դրանց կրողներին բարոյական արժեզրկման վտանգից փրկելու մտահոգությունը: Բավական է ասել, որ 1996 թ. գիտության և գիտական սպասարկման ոլորտում զբաղվածների թիվը 1990-ի նկատմամբ նվազել է 3,5 անգամ:

Նյութական կորստի վերականգնումը ժամանակի խնդիրն է, հոգևոր արժեզրկման վտանգն անվերադարձ է: Ավելին, այսօրվա ամեն մի հոգևոր կորուստ հեռանար է՝ հղի սերունդներին գիտելիքներով, մտավոր ու հոգևոր զարգացման մակարդակով տաղանդավոր հեռանկարներով ետ շպրտելու անհավատ վտանգով:

Քաղաքակիրթ երկրները նոր դար մուտք են գործում որպես սպասվելիք հուժկու գիտատեխնիկական առաջընթացը մարմնավորողներ, դրանցում փութաջանորեն կերտվում է գիտելիքներով զինված դարի քաղաքացին: Հայաստանը թմբիրի մեջ է. հոժարակամ հաշտվեցինք նման վեհ ու վսեմ «հոգսերից» ձերբազատվելու՝ պետության որդեգրած քաղաքականության հետ:

Պետք է փրկել համաշխարհային ճանաչում գտած հոգևոր արժեքները, դրանց կրողներին և արարողներին, կյանք մտնող և XXI դարին տեսք ու կերպարանք հաղորդելու պատրաստակամ սերնդին: Այն պետք է անել բանիմաց քաղաքականությամբ, հոգևոր և նյութական արժեքներ ստեղծելու մտածված և ոչ թե երկիրը միայն սպասարկման լայն հրապարակի վերածելու թողտվությամբ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի զարգացումն օբյեկտիվորեն թելադրում է զբաղվածության արդյունավետության բարձրացումը ծառայությունների ոլորտում: Հասարակական վերարտադրության ընթացքում ծառայությունների նկատմամբ նոր պահանջներ են առաջադրվում: Դրան համապատասխան էլ այս բնագավառում աշխատուժի նկատմամբ ներկայացվող պահանջարկը և՛ քանակական, և՛ որակական առումով անընդհատ փոփոխվում է: Ծառայությունների ոլորտում զբաղվածության ընդլայնումն, իր հերթին, նոր հայտ է ներկայացնում նյութական արտադրության ճյուղերի ընդլայնման, հետևաբար, դրանցում աշխատուժի կիրառման նոր բնագավառների ստեղծման նկատմամբ: Ճիշտ այդպես, բնակչության զբաղվածության կառուցվածքային փոփոխությունները, այդ թվում հասարակական արտադրության բոլոր բնագավառներում կիրառվող աշխատուժի որակի նկատմամբ պահանջների աճը, հանգեցնում է ծառայությունների ոլորտի աճին, որը, իր հերթին, նպաստում է հասարակական արտադրության արդյունավետության ընդհանուր մակարդակի և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ծառայությունների ոլորտի բոլոր ճյուղերի զարգացումով միայն հնարավոր կլինի բարձրացնել բնակչության ծառայությունների որակը:

Ի տարբերություն զարգացող երկրների, կապիտալիստական զարգացած երկրների նման, մինչև 1980-ականի վերջերը, Հայաստանում ծառայությունների ոլորտում զբաղվածության աճին նախորդել է ինդուստրիալ զարգացման բավական երկարատև ժամանակաշրջան, երբ արդյունաբերության մեջ զբաղ-

վածների բացարձակ թիվը և ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվակազմում դրա տեսակարար կշիռը գերազանցել է ծառայությունների ոլորտում զբաղվածների համապատասխան ցուցանիշներին: 1990-ականների սկզբներից արդյունաբերության մեջ զբաղվածությունը խստորեն նվազել է: Այդ նվազումը տեղի է ունեցել ոչ թե ինտենսիվ զարգացման, այլ արտադրության մասշտաբների կրճատման հետևանքով:

Գերազանցապես արդյունաբերության մեջ զբաղվածության անկման հաշվին (թեև այդ տվյալները երբեք էլ իրական չեն, բայց արտահայտում են որոշակի կողմնորոշում զբաղվածության ճյուղային կառուցվածքը փոփոխությունների օրինաչափությունների միտումների մասին) փոխվել է ճյուղական արտադրության և ոչ արտադրական ոլորտների միջև զբաղվածության հարաբերակցությունը: Եթե 1990 թ. ճյուղական արտադրության ճյուղերում զբաղված էր ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկվածների 30,1 տոկոսը, ապա 1996 թ. այն կազմել է 26.1 տոկոս: Նման պատկերը բացատրվում է այդ ընթացքում գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը կրկնապատկվելու հետևանքով: Օրինակ, եթե քննարկվող ժամանակահատվածի երկու տարիների ընթացքում բացառում ենք գյուղատնտեսությունը, ապա ճյուղական արտադրության և ոչ արտադրական ոլորտների ճյուղերում զբաղվածության հարաբերակցությունը համապատասխանաբար արտահայտվում է մոտ 37,0 և ավելի քան 44,0 տոկոսով:

Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա պաշտոնական տվյալներով 1990—1996 թթ. արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին տարեկան թվաքանակը նվազել է ավելի քան 250,0 հազար մարդով: Ըստ որում, այդ ընթացքում ծառայողների թիվը ավելի քիչ է նվազել, քան բանվորներինը:

Արդյունաբերաարտադրական անձնակազմի թվաքանակի նվազումն իր բացարձակ մեծությամբ գրեթե բաժին է ընկնում սեքենաշինության և մետալամշակման ու թեթև արդյունաբերության ճյուղերին: Զբաղվածության անկումը խիստ նկատելի է հիմնանյութերի, քիմիական և սննդարդյունաբերության ճյուղերում:

Սակայն զբաղվածությունն ըստ նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտների բաժանման արմատացած մոտեցումը չի արտահայտում զբաղված բնակչությունն ըստ արտադրական և ծառայությունների ոլորտների բաժանման իրական պատկերը: Դրանից խույս տալու համար ստորև զբաղվածության ճյուղային կազմը քննարկվում է միանգամայն նոր խմբավորմամբ ու դասակարգմամբ: Այդ իմաստով զբաղվածությունը դասակարգվում է արտադրական, ծառայությունների և հոգևոր ոլորտների բաժանումով:

Ըստ ներկայացվող խմբավորման **արտադրական ոլորտը** միավորում է արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը, շինարարությունը, արտադրությունը սպասարկող կապը և տրանսպորտը: 1990 թ. այս ոլորտում ընդգրկված էին ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների 64,4, իսկ 1996 թ. 66,1 տոկոսը:

Ծառայությունների ոլորտի մեջ ընդգրկվել են առևտրի, հասարակական սննդի, նյութատեխնիկական մատակարարման, առաքման և մթերումների, առողջապահության, բնակարանային կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային սպասարկման, կառավարման ապարատի, տեղեկատվական հաշվողական, ֆինանսա-վարկային և ապահովագրական ծառայությունների և ընդհանրապես ծառայությունների ոլորտը սպասարկող տրանսպորտի ու կապի ճյուղերը: 1990 թ. այս ոլորտում աշխատում էին ընդհանուր զբաղվածների 20,8, իսկ 1996 թ. 20,9 տոկոսը:

Հոգևոր ոլորտը ամփոփում է գիտակրթական, մշակույթի և արվեստի համակարգի ճյուղերը: Այս ոլորտում 1990 թ. զբաղված էին ընդհանուր զբաղվածների 14,8, իսկ 1996 թ. 13,0 տոկոսը:

ՀՀ բնակչության զբաղվածությունն ըստ հիշատակվող ոլորտների ներկայացվում է թիվ 7 աղյուսակում (խոսքը պաշտոնական վիճակագրական տվյալների մասին է):

1991—1996 թթ. հանրապետությունում իրականացված ապապետականացման և մասնավորեցման գործընթացներն իրենց անմիջական արտահայտությունն են գտել նաև ըստ սե-

Աղյուսակ 7

ՀՀ աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի և ոլորտների 1990 և 1996 թթ.

Ժողովրդական տնտեսության ճյուղերն ու ոլորտները	Զբաղվածների բացարձակ թիվը (հազ. մարդ)		Տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվի մեջ (տոկոսներով)	
	1990	1996	1990	1996
1	2	3	4	5
Տնտեսության մեջ զբաղվածները, ընդամենը	1630,1	1435,6	100,0	100,0
այդ թվում				
1. Արտադրական ոլորտ	1051,0	948,7	64,4	66,1
— արդյունաբերություն	494,8	255,0	30,3	17,8
— գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն	289,1	586,0	17,7	40,8
— շինարարություն	184,1	68,0	11,3	4,7
— տրանսպորտ և կապ (արտադրական նշանակության)	48,9	26,7	3,0	1,9
— արտադրական ոլորտի այլ ճյուղեր	34,1	13,0	2,1	0,9
2. Ծառայությունների ոլորտ	336,8	300,1	20,8	20,9
— առևտուր, հասարակական սնունդ, նյութատեխնիկական մատակարարում, առաքում և մթերումներ	100,7	110,2	6,1	7,8
— առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սոցիալական ապահովություն	94,0	81,7	5,8	5,7
— բնակարանային-կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղային սպասարկում	66,0	50,6	4,4	3,5
— բնակչությանը սպասարկող տրանսպորտ և կապ	36,0	21,3	2,2	1,4
— ֆինանսա-վարկային և ապահովագրական ծառայություններ	7,9	6,4	0,4	0,4
— տեղեկատվական սպասարկում	4,4	1,3	0,2	0,1
— կառավարման օրգանների ապարատ	27,8	28,6	1,7	2,0
3. Հոգևոր ոլորտ	242,3	186,8	14,8	13,0

1	2	3	4	5
— գիտության և գիտական սպասարկման ճյուղեր	46,6	13,0	2,8	0,9
— կրթության, մշակույթի և արվեստի բնագավառ	195,7	173,8	12,0	12,1

փականության ձևերի զբաղվածության կառուցվածքի արմատական փոփոխության մեջ: Հիմնականում նախկին պետական և կոլեկտիվ տնտեսություններում զբաղվածության չափերի նվազման համեմատ ավելացել է գյուղացիական տնտեսություններում, հատուկ ձեռնարկություններում, անհատական աշխատանքային գործունեության մեջ, մասնավոր կոոպերատիվներում, ՍՊԸ-ում, ԼՏԸ-ում և այլն: Տե՛ս աղյուսակ թիվ 8:

Աղյուսակ 8

Զբաղված բնակչության բաշխումն ըստ սեփականության ձևերի 1996 թ. հազ. մարդ (միջին տարեկան)

Ա. Զբաղված բնակչություն	1435,6
այդ թվում	
պետական տնտեսություններում	489,4
խառը սեփականությամբ	161,5
գյուղացիական տնտեսություններում	572
անհատական աշխատանքային գործունեության մեջ	23,1
սպառողական կոոպերացիայի ճյուղերում	11,3
մասնավոր տնտեսություններում (կոոպերատիվներ, ՍՊԸ, ԼՏԸ և այլն)	165,7
հասարակական կազմակերպություններում և ֆոնդերում	6,5
հատուկ ձեռնարկություններում	6,1
Բ. Գործազուրկներ	147,9
Գ. Աշխատունակ տարիքի տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	570,2
այդ թվում	
արտադրությունից կտրված ուսուցմամբ սովորողներ	113,8
Դ. Աշխատունակ տարիքի տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, առանց ուսուցման	456,4
Գործազրկության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ (տոկոսներով)	9,3
Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը աշխատանքային ռեսուրսների նկատմամբ (տոկոսներով)	73,5

Պետական սեփականության ձևն առանձնապես պահպանվել է արդյունաբերության մեջ և ոչ արտադրական ոլորտի շատ ճյուղերում:

Նախորդ շարադրանքում բազմիցս հիշատակվել է, որ ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչության տվյալները այնքան էլ հավաստի չեն:

Դա կարելի է ցույց տալ հետևյալ չափազանց պարզ մոտեցմամբ:

Պաշտոնական վիճակագրությամբ 1996 թ. Հայաստանի բնակչության միջին տարեկան թիվը ընդունվել է 3773,6 հազ. մարդ: Եվ ամեն ինչ պտտվում է այս թվերի շուրջը՝ դառնալով ոչ ճիշտ հաշվարկների սկզբնաղբյուր:

Հիմք ընդունելով բնակչության ընդհանուր թվի սխալ ելակետային տվյալները, աշխատանքային ռեսուրսների 1996 թ. հաշվեկշիռը ներկայացվում է շատ մեծ շեղումներով, և հետագայում զբաղվածության ճյուղային կազմը համապատասխանեցվում է հենց այդ շեղումներին: (Տես թիվ 9 աղյուսակը):

Աղյուսակ 9

ՀՀ աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռը 1990 և 1996 թթ.

	հազ. մարդ	
	1990 թ.	1996 թ.
Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ այդ թվում	2031,2	2153,7
ա) աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչություն	1944,8	2054,5
բ) տնտեսության մեջ զբաղված աշխատունակ տարիքից բարձր բնակչություն	83,9	98,7
գ) տնտեսության մեջ զբաղված դեռահասներ	2,5	1,4

Մեր կողմից կատարված հիմնավոր հաշվարկներով 1996 թ. Հայաստանում բնակվում էր շուրջ մեկ միլիոնով ավելի քիչ բնակչություն՝ այսինքն 2800 հազար մարդ, որը բացատրվում է 1991—1996 թթ. Հայաստանից միգրացվող բնակչության բա-

ցասական մնացորդով*: Վիճակագրական մարմինները հաշվի են առնում միայն գրանցումից դուրս եկած արտագաղթողներին և գրանցվող ներգաղթողներին: Մինչդեռ մերձավոր և հեռավոր արտասահման արտագաղթող մեր հայրենակիցների մեծ մասը այդ երկրներում դեգերում է անլեգալ և ՀՀ հանրապետության բնակիչ է: Դրա հետ մեկտեղ ՀՀ-ում բնակվում են նաև զգալի թվով փախստականներ, որոնք ՀՀ քաղաքացիներ չեն, բայց օգտվում են աշխատանքի իրավունքից և զբաղված են տնտեսության տարբեր ճյուղերում:

Հետևաբար վերը հիշատակվող թիվ 8 աղյուսակում ուռճացած են նաև աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռում ներկայացված տվյալները:

Եթե հիմք ընդունենք, որ ՀՀ աշխատանքային տարիքի բնակչությունը ընդհանուր բնակչության 57,0 տոկոսն է, ապա իմ տվյալներով 1996 թ. աշխատանքային տարիքի բնակչության ընդհանուր թիվը կկազմի մոտ 1600 հազ. և ոչ թե 2122 հազ. մարդ: Տարբերությունը տվյալ դեպքում 0,5 մլն է: Անշուշտ, տնտեսության մեջ զբաղմունք ունեցողների պաշտոնական վիճակագրության ներկայացրած թիվը 500 հազարով պակասեցնելը, ելնելով մի շարք նկատառումներից, ճիշտ չի լինի: Դա առաջին հերթին բացատրվում է փախստականի կարգավիճակով տնտեսության մեջ ընդգրկվածությամբ, դրանք ՀՀ քաղաքացիներ չեն և բնակչության ընդհանուր թվակազմի մեջ չեն հաշվվում: Երկրորդ, ստվերային տնտեսության մեջ ընդգրկված հազարավոր մարդկանցով, որոնք հաշվառման չեն վերցվում: Երրորդ, 1990-ականների համեմատությամբ, 1996 թ. տնտեսության մեջ զբաղված աշխատունակ տարիքից բարձր տարիքի ավելի մեծ թվով:

---

* Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Միջպետական միգրացիաները և դրանց ազդեցությունը բնակչության բնական վերարտադրության ընթացքի վրա, Էկոնոմիկա, 1996, հ. 1—3, էջ 15—20, Ինչո՞ւ է նվազում ծնունդը, ավելանում մահացությունը, ի՞նչ անել, Պայքար, 1996, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 31—32, ՀՀ բնակչության զարգացման օրինաչափություններն արդի փուլում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1996, հ. 3, էջ 29—31, Миграционные процессы в Армении, Миграция, М., 1997, № 4, с. 31.

Տարակուսանք է հարուցում նաև տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի թիվ 9 աղյուսակում բերվող հաշվարկը՝ գործազուրկների թիվը շատ պակաս ներկայացնելու հետևանքով:

Ըստ որում, տնտեսապես ակտիվ բնակչության թիվը (զբաղմունք ունեցողների և գրաղվածության պետական ծառայության մարմինների կողմից գրանցված գործազուրկների գումարը) զբաղմունք ունեցողների հաշվին նվազում, իսկ գրանցված գործազուրկների հաշվին ավելանում է:

Այսպիսով, մեր հաշվարկներով զբաղմունք ունեցող բնակչության պաշտոնական թիվն առնվազն պետք է 300 հազարով պակաս ցույց տալ:

Նման հարցադրումն ինչ-որ չափով կարելի է հիմնավորել արդյունաբերության օրինակով: Իմ հաշվարկներով 1996 թ. արդյունաբերության մեջ արտադրական անձնակազմը հաշվվում է ոչ թե 255 հազարով, այլ դրա 40—45 տոկոսի չափով, նկատի ունենալով նաև ստվերային տնտեսությունը:

Այսպիսի մոտեցումը կարելի է մեկնաբանել հետևյալ դատողությամբ, մոտեցում, որը փոխառել եմ այլ հետազոտողներից: Հրապարակված տվյալներով 1985 թ. Հայաստանում արտադրվել է 7793,7 մլն ռուբ., իսկ 1996 թ. 227459,4 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք: Դրանք համեմատելի դարձնելու համար ռուբլով և դրամով արտահայտված ցուցանիշը պետք է վերահաշվարկել ամերիկյան դոլարին համապատասխանող փոխարժեքներով: Մինչև 1985 թ. ռուբլու և դոլարի փոխարժեքը ընդունում են իրար հավասար: Դրա մեջ ճշմարտություն կա: Բայց ավելորդություններից խուսափելու համար, պետք է ընդունել 1985 թ. ռուբլու և դոլարի պաշտոնական փոխարժեքը, ըստ որի, մեկ ռուբլին հավասարեցվում է 0,6 դոլարի (60 ցենտ): Ինչ վերաբերում է դրամին, ապա 1996 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ ամերիկյան դոլարի փոխարժեքը գնահատվում էր 435,07 դրամով: Համադրելով այս ցուցանիշները, ստացվում է, որ 1985 թ. Հայաստանի արդյունաբերությունը թողարկել է 4676 մլն և 1996 թ. 522,8 մլն ամերիկյան դոլարին համարժեք արդյունաբերական արտադրանք: Այսինքն 1996 թ. թողարկվել է 1985 թ. արդյունաբերության արտադրան-

քի ծավալի 11,2 տոկոսը: Եթե 1985 թ. համար ռուբլու և ամերիկյան դոլարի փոխարժեքը ընդունենք հավասար (1 ռուբլին հավասար 1 դոլարի, ինչպես վարվում են ուրիշ հետազոտողներ), ապա 1996 թ. արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը կկազմի 1985 թ. արտադրվածի ծավալի 6,7 տոկոսը:

Արդյունաբերական արտադրանքի և զբաղվածների պաշտոնական տվյալների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ արտադրության ծավալների նվազմանը չհամապատասխանող զբաղվածության թվի կրճատումը տեղիք է տալիս թաքուն գործազրկության: Հետևաբար, 1985—1996 թթ. արդյունաբերական արտադրության ծավալը մոտ 9,0 անգամ կրճատվելու պայմաններում, զբաղվածությունը չէր կարող նվազել ընդամենը 45,4 տոկոսով:

Ասենք նաև, որ հանրապետությունում գործազուրկների իրական թիվը շուրջ երեք անգամ գերազանցում է ծառայության պետական մարմինների կողմից գրանցված գործազուրկների թվին:

Գյուղատնտեսության մեջ ցածր օրգանական կազմը շատ կարճ ժամանակամիջոցում պայմանավորել է զբաղվածության մեծ անը, որը, ինչպես նկատել ենք, բնութագրվում է ցածր արդյունավետությամբ, ինչպես նաև թաքուն գործազուրկների առկայությամբ:

Այսուհետև ևս զբաղվածության ճյուղային կառուցվածքում ծառայությունների ոլորտը կշարունակի պահպանել աճի գերակայությունը: Դա պայմանավորված կլինի նախ, արտադրական ոլորտի որոշ ճյուղերի և առաջին հերթին գյուղատնտեսության մեջ զբաղվածության կրճատումով: Երկրորդ, պայմանավորված կլինի հասարակության զարգացման օբյեկտիվ ընթացքով՝ արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի հետագա զարգացման անհրաժեշտությամբ, քաղաքակենտրոնացման բարձր մակարդակով, առևտրի մասշտաբների ընդլայնումով: Երրորդ, ձման միտումը ժամանակավորապես թելադրվում է նաև պետական վարչական ապարատի ֆունկցիաների ընդլայնումով: Ծառայությունների ոլորտը մեծապես ազդում է բնակչության եկամուտների, գների մակարդակի, գործազրկության

չափերի, աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների վրա: Մինչդեռ այս ասպարեզում բնակչությանը սպասարկող գրեթե բոլոր ճյուղերը, նախ, բնութագրվում են ելակետային չափազանց ցածր ցուցանիշներով: Համապատասխան ենթակառուցվածքները բացակայում են թե քաղաքներում, թե գյուղական բնակավայրերում:

Ծառայությունների ոլորտում զբաղվածության ընդլայնումը կպայմանավորվի նաև աշխատատարության մեծ գործոնով և այդ բնագավառում տեխնիկայի կիրառման սահմանափակ հնարավորություններով: Եվ քանի որ այդ ոլորտի որոշ ճյուղեր աշխատուժի որակի հնգատմամբ մեծ պահանջարկ չեն ներկայացնում, պետք է երկարատև ներդրումներով նպաստել արտադրական ոլորտից արտաքսվածաշխատանքային ռեսուրսների մի մասը ծառայությունների ոլորտի ընդարձակվող ճյուղերում ընդգրկելու օբյեկտիվ ընթացքին: Դա քիչ հնգատելի չափերով կնպաստի գործազրկության մեղմացմանը, աշխատանքային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի հաշվեկշռության որոշ կարգավորմանը: Դրա հետ մեկտեղ ծառայությունների ոլորտում ապապետականացումն ու մասնավորեցումները (մասնավորապես առևտրի և հասարակական սննդի ոլորտում) հանգեցրին այդ ոլորտի մասնատմանը, որի մերթենայացման անհրաժեշտությունը թուլանում է:

Ծառայությունների ոլորտում զբաղվածության աճը ինչպես զարգացող երկրներում, Հայաստանում նույնպես, տեղի է ունենում նաև առևտրի ու մանր ծառայությունների ուռճացման՝ ընդհանրապես չարդարացված ձևի հաշվին: Դա վեր է ածվում ոչ լրիվ զբաղվածության էպիկենտրոնի, որը սոցիալական զսպանակի դեր է տանում և ինչ-որ չափով իջեցնում է հիմնախնդրի սրությունը: Սակայն ի տարբերություն Հայաստանի, զարգացող երկրներում ծառայությունների, մասնավորապես շրջանառության և ամենից առաջ առևտրի ոլորտում զբաղվածության աճն ուղեկցվում է առևտրի ձեռնարկությունների կտրուկ աճով: Խոշոր առևտրական ֆիրմաներն իրենց ուժերը կենտրոնացնում են արտաքին առևտրի մեջ, ներքին շուկայում իշխում են մանրավաճառները: Մինչդեռ Հայաստանում մանրավաճառներն արտամղեցին առևտրի կենտրոնացված օբյեկտները: Դա երևույթի շատ սովորդ արտահայտությունն է:

Հայաստանում այս գործընթացն, անկասկած, տեղի ունեցավ նաև այն պատճառով, որ պետությունը ձեռքերը լվաց ու մի կողմ քաշվեց. կենտրոնացված խանութները չեն մատակարարվում տեղական ապրանքներով, իսկ մանրավաճառները հիմնականում վաճառում են արտասահմանյան ապրանքներ: Եվ եթե արտասահմանյան երկրներում մանրավաճառների հետևում կանգնած բյուրավոր խոշոր խանութները մեծապես ազդում են մանրավաճառների վաճառքի գների վրա (վերջիններիս վաճառքի գներն ավելի էժան են), ապա Հայաստանում մանրավաճառները ապրանքներն իրացնում են բարձր գներով: Չի արդարացնում մանրավաճառությամբ զբաղվածների երիտասարդ տարիքը, ինչպես նաև այն, որ մի փոքրիկ սեղանի հետևում վաճառքով են զբաղված մի քանի երիտասարդ մարդիկ:

Մանրավաճառները փոխարինել են գրեթե ամբողջ պետական առևտրին: Սրանց ձեռքին է սննդի և արդյունաբերական ապրանքների մեծ մասը: Սննդի ապրանքատեսակների վաճառքով են զբաղված փողոցներում, մայթերի վրա, ուր պատահի: Բացակայում են նաև հիգիենիկ պայմանները: Սննդի հմասնավոր վաճառքի շատ ապրանքներ (պանիր, միս, թռչվածքներ) հիվանդությունների (բրուցելյոզ) տարածման աղբյուր են:

Պետական առևտրին դուրս են մղել ոչ միայն քաղաքների և գյուղական բնակավայրերի փողոցներում իրականացվող առևտուրը, այլև տոնավաճառները: Միայն Երևան քաղաքում գործում են 4—5 մեծ տոնավաճառներ: Դրանցում արտասահմանից բերվող արդյունաբերական ապրանքների վաճառքով են զբաղված մի քանի տասնյակ հազարավոր մարդիկ: Այդ ապրանքներն արտասահմանյան երկրներից (ԱՄՆ, Ֆրանսիա, Լեհաստան, Իրան, Թուրքիա, Սիրիա, արաբական երկրներ և այլն) մեծ մասամբ բերում են վաճառողներն իրենք: Խոշոր ֆիրմաներ գրեթե չեն գոյացել և նման հեռանկար էլ չկա: Նման ֆիրմաները կարող էին գործել հենց այսօր՝ նախկին պետական առևտրի սասնագիտացված և կենտրոնացված խոշոր ցանցի միջոցով, ուր կարող էին ընդգրկվել ոչ թե տասնյակ հազարավոր, այլ ընդամենը մի քանի հազար մարդ: Տվյալ դեպքում

խնդիրը միայն ծախսերը չեն, այլ բնակչության պահանջմունքները լայն տեսականու ապրանքներով ապահովելը: Իսկ ծախսերը շատ ու շատ են, որոնք յուրաքանչյուր առևտրականի մոտ գոյանում են արտերկիր գնալ-գալու, գիշերելու, սնվելու, ներքաղաքային երթևեկության և այլ նպատակներով կատարվող ծախսեր: Այդ ծախսերը բաժանվում են քիչ քանակությամբ ապրանքների վրա և բարձրացնում գները: Մինչդեռ պետական հովանավորության տակ գտնվող առևտրական ֆիրմաների ապրանքների գները համեմատաբար ցածր են, ոչ միայն ապրանքային մասավորին բաժին ընկնող համեմատաբար քիչ ծախսերի հետևանքով, այլև մեծավաճառ առևտրի շնորհիվ: Այդ ֆիրմաները արտերկրից ապրանքները կարող են գնել մեծածախ գներով:

Հայաստանում ծառայությունների ոլորտի զարգացումը, մոտ ապագայում, առավել ևս հեռանկարում դրանցում զբաղված բնակչության աճի անխուսափելիությունը թելադրվում է ոչ միայն բնակչության սպասարկման գրեթե բոլոր ճյուղերի զարգացման ելակետային չափազանց ցածր ցուցանիշներով, շատ քաղաքներում և, հատկապես գյուղական վայրերում, համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ, այլև հանրապետության ժողովրդագրական զարգացման առանձնահատկություններով, բնակչության կազմում նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների մեծ թվով, որը ենթադրում է զբաղվածության աճը նաև առողջապահության համակարգում: Մինչդեռ անցման շրջանում այս համակարգում զբաղվածությունը խստորեն նվազել է: Դա բացատրվում է ոչ միայն սոցիալական լարվածության ուժեղացումով, առողջապահության համակարգի վատթարացող իրավիճակով, այլև արտագաղթով և ծննդի նվազումով: Գաղտնի և բաբահայտ վճարովի մեթոդների ազատականացումը, օրենքով հովանավորումը, դեղորայքի չափազանց բարձր գները, ինչպես նաև բարձր որակավորման բուժաշխատողների, հատկապես բժիշկների ցածր վարձատրությունն ունեցան անդառնալի հետևանքներ: Բարձր որակավորում ունեցող բժիշկների մի զգալի մասն ընդգրկվեց առևտրական կառույցներում, գնաց այլ երկրներ: Հիվանդները բուժվելու համար միջոցներ չունեն: Խիստ նվազել է պոլիկլի-

նիկա հանախողների թիվը, հիվանդանոցից օգտվում են ծայրահեղ կարիքից դրդված: Հիվանդանոցներում հիվանդները չեն ապահովվում անհրաժեշտ դեղամիջոցներով, վիրակապերով, սննդով, սպիտակեղենով և առաջին անհրաժեշտության այլ առարկաներով: Փող չունես, մի հիվանդացիր, այլապես բուժվել չես կարող և ժողովրդի ասած՝ «բանդ բուրդ է»:

Առողջապահության բնագավառում նույնպես շուկայական հարաբերությունների արևմտյան չափանիշների «պատվաստումը» վաղաժամ էր: Դա ավելի ու ավելի խորացրեց սոցիալական անարդարության ու բնակչության ծայրահեղ բևեռացումը, այն էլ կենաց և մահու հարցում: Ստեղծում ենք «ընտանեկան բժշկի» ինստիտուտ: Ո՞ւմ համար, ժողովրդի՞, թե՞ մասնավորեցմամբ նրա ունեցվածքով միլիոնատեր դարձած երեկվա «ծակ գրպանավորների» համար:

Արևմուտքում վճարովի բուժումը շատ կարևոր չափանիշ է: Բայց չպետք է անտեսել, որ դրա հետ մեկտեղ տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի և սոցիալապես թույլ պաշտպանվածների նկատմամբ օրենսդրորեն այլ մոտեցումներ են կիրառվում: Եվ, որ չափազանց կարևոր է, այդ երկրներում գործում է առողջապահության պաշտպանության ապահովագրական համակարգ՝ տասնամյակների ընթացքում գոյացած վիթխարի ապահովագրական ֆոնդերով: Հենց դրա հաշվին էլ կարիքավորները բուժվում են, վիրահատվում, վերականգնում կորցրած առողջությունը:

Դպրոցական տարիքի երեխան գրանցանաչությունը սովորում է տառ առ տառ՝ սկսելով «Ա»-ից ու «Բ»-ից, հայերենում ավարտելով «Ֆ» տառով: Շուկայական այբուբենը ժողովրդի վզին փաթաթվեց միանգամից, շրջանցելով աստիճանական անցումը՝ չապահովելով անցման համար տնտեսական ու սոցիալական որոշակի նախադրյալ:

Ծառայությունների ոլորտում զբաղվածությունն ավելացնելու լայն հնարավորություններ կան Հայաստանի կենսավերարտադրողական ռեսուրսների օգտագործման բնագավառում: Դա վերաբերում է միջազգային նշանակության առողջարանների, հանգստյան գոտիների ստեղծման և հների լայն ցանցի արդյունավետ օգտագործման խնդիրներին: Տասնամյակների ըն-

թացքում ստեղծված առողջարանները տարվա ընթացքում գրեթե ամբողջությամբ են մատնվել, դրանցում հանգստացողները և բուժվողները շատ քիչ են (բացառությամբ Ջերմուկի մի քանի առողջարանների, այն էլ ամռան 2—3 ամիսներին)։ Առողջարանային շենքերը, բուժարքավորումները քարուքանդ, իսկ բուժանձնակազմը ցիրուցան են լինում։ Սոցիալական ենթակառուցվածքի նման օբյեկտների գործունեությունը կանոնավոր հունի մեջ դնելու միջոցով հնարավոր կդառնա ակտիվ աշխատանքի մեջ ընդգրկել ոչ միայն արհեստավարժ բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետներին, այլև որակավորում չունեցողների, հատկապես կանանց և ոչ աշխատանքային տարիքի (դեռահասներ, թոշակառուներ) անձանց։ Հանրապետությունում առկա մշակութային և պատմական հուշարձանների սեպտությունը, դրանց անկրկնելիությունը, բնական, գեղեցիկ և բազմազան գոտիների առկայությունն անհրաժեշտ հիմք են նաև միջազգային տուրիզմի զարգացման և սպասարկման ոլորտում զբաղվածության էական և նպատակային աճի համար։

Միջազգային նշանակություն ունեցող առողջարանային ցանցի, տուրիզմի և հանգստյան գոտիների նպատակային օգտագործումը կապահովի նաև տարադրամի մուտքը հանրապետություն։

Ծունչալական հարաբերությունների հետագա ծավալումը, արտաքին առևտրատնտեսական կապերի զարգացումը, խառը և համատեղ ձեռնարկությունների ստեղծումը կյանքի են կոչել և ավելի ու ավելի ընդլայնել ծառայությունների այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ ենթակառուցվածքային բանկա-վարկային, տեղեկատվության հաշվիչ համակարգի ցանցը, որոնցում ընդգրկվել են բազմաթիվ որակյալ մասնագետներ։ Այդ ոլորտում աշխատողների թվակազմի աճն ուղեկցվել է նրանց տեխնիկական հագեցվածության բարձրացմամբ, ուսոի և աշխատանքային ներուժի որակական ցուցանիշների բարելավմամբ։

Այս բոլորից հետևում է, որ առանց բացառության նյութական արտադրության ոլորտի բոլոր նյուղերում, արհեստավարժ բարձր որակավորման մասնագետ կադրերի նկատմամբ պահանջարկի խիստ նվազումն անցման շրջանում ուղեկցվում է կառավարման օղակներում, ֆինանսաբանկավարկային հա-

մակարգում նոր արհեստավարժ բարձր որակավորման մասնագետների մեծ պահանջով: Դրա հետ մեկտեղ, այդ բնագավառներում ընդգրկված են երիտասարդ մասնագետներ, որոնք օժտված են մարքետինգի, միջազգային իրավունքի, համակարգչային տեխնիկայի արդի միջազգային պահանջներին համապատասխան գիտելիքներով, ազատորեն տիրապետում են օտար լեզուների: Կյանքի կողմից առաջադրվող հենց նույն պահանջներով էլ բացատրվում է նույնիսկ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում այդ մասնագիտությունների գծով պատրաստվող կադրերի առատությունը:

Հայաստանում ինքնուրույն պետության կայացումն ուղեկցվել է նաև պետական ապարատում զբաղվածության աճով, որն անշուշտ բնական է և կապված է պետական ու կառավարման նոր օղակների ձևավորման, արտաքին աշխարհի հետ դիվանագիտական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ոլորտի ստեղծման և ընդլայնման հետ: Դրանք կհանգեցնեն այդ ցանցում ընդգրկվածների թվաքանակի ավելացմանը, ինչպես արտերկրում, այնպես էլ երկրի ներսում: Ծիշտ է, որոշ նախարարությունների միավորումը, դրանց վարչական-ավարչական ապարատի չափավոր կրճատումը կհանգեցնեն պետական ապարատում ընդգրվածների բացարձակ թվի նվազմանը: Սակայն պետական ապարատի անհարկի ուռճացումը, որ արդեն նկատելի է նախարարություններում, մարզերում և այլուր, ոչնչով չի հիմնավորվում: Ինքնուրույն պետականությունը պայմանավորում է նաև զբաղվածության մի շարք ոլորտների ընդլայնում: Դա վերաբերում է ոստիկանությանը, զինվորական ծառայությանը, սահմանապահ ջոկատներին և այլն: Թեև այս երևույթը աշխատանքային շուկայի վրա Հայաստանում շոշափելի ազդեցություն ունենալ չի կարող:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՈՒՄԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Ամեն մի երկրի հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման երաշխիքներից մեկը արտաքին աշխարհի հետ փոխադարձ տնտեսական կապերի հաստատումն է: Նման քաղաքականության մշակումն ու կենսագործումը դիվանագիտական ճկուն լուծումների հետ միասին Հայաստանի համար անշուշտ կպահանջի անցման տևական ժամանակահատված, ազգի ստեղծագործական մտքի մեծ թռիչք, ուժի և ջանքերի անհրաժեշտ լարում և այդ բոլորի առավել նպատակամղված կիրառություն: Նպատակամղվածությունն առաջին հերթին պետք է բխի աշխարհի մասշտաբով աշխատանքի բաժանման ընդհանուր տնտեսական համակարգում Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունից: Դրա իրական նախադրյալներն են հանրապետության ռեսուրսային հերուժի բոլոր բաղադրամասերը, մասնավորապես հանքահումքային, աշխատանքային, արդյունաբերական, հողային և ջրային ռեսուրսները տնտեսական շրջանառության մեջ ակտիվորեն ընդգրկելու համար պայմանների ստեղծումը:

Արտաքին աշխարհի հետ տնտեսական փոխներտաճում ծավալելու համար ներկայումս լուրջ խոչընդոտ են ոչ միայն տնտ-

տեսության անկայուն և ճգնաժամային իրավիճակը, ընդհանրապես զարգացման աստիճանը, նյութական և աշխատանքային, այդ թվում մտավոր ներուժի թերօգտագործումն ու դրանց հետևանքով տնտեսության բոլոր բնագավառներում աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը, այլև կողմերի հարաբերությունները կարգավորելու նպատակով ընդունված իրավական չափանիշների, օրենքի և օրինականության պահանջները պաշտպանելու երաշխիքի բացակայությունը, այդ չափանիշներն ուժի դիրքերից կոպիտ կերպով խախտողներին միջազգային օրենքների ամբողջ ուժով պատասխանատվության չենթարկելու վարքագիծը, որը հաճախ դրսևորվում է միջազգային ատյանների կողմից:

Խոսքը Հայաստանի շրջափակումների, գազատարի ու երկաթուղու, կամուրջների պայթեցումների, հանրապետություն ներկրվող և հանրապետությունից արտերկիր առաքվող ապրանքների թալանի հետ կապված՝ մեղավորների նկատմամբ միջազգային իրավական նորմերով նախատեսվող տնտեսական և իրավական համապատասխան սանկցիաներ չկիրառելու մասին է: Ահա թե ինչու, Հայաստանը, դասեր քաղելով անցյալից, ինչպես նաև այս բոլորից, պետք է տնտեսությունը ինչոր չափով հարմարեցնի ճգնաժամային պայմաններում հանրապետության կենսագործունեությունն ապահովող արտադրությունների հետագա զարգացմանը: Էներգիայի, տեղական ռեսուրսների նպատակամետ օգտագործման հետ միասին, դա, առաջին հերթին, վերաբերվում է բնակչության անմիջական սպառման պահանջները բավարարող այնպիսի ճյուղերի զարգացմանը, որոնք պետք է հիմնված լինեն տեղական հանքահումքային ռեսուրսների և գյուղատնտեսական հումքի վերամշակման վրա:

Պետական հովանավորչական քաղաքականությունը թելադրվում է ոչ միայն հայրենական կարևոր արտադրությունների, այլև ամբողջական ճյուղերի գոյատևման և հետագա զարգացման անհրաժեշտությամբ: Գաղտնիք չէ, որ արտասահմանյան ապրանքների չվերահսկվող հոսքը մեծ վտանգ է ներկայացնում ազգային արտադրության առանձին ճյուղերի գոյատևման համար:

Երկրի գլխավոր շարժիչ ուժը պետական ազգային շահերն են, հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը: Այս առումով Հայաստանում պետական հովանավորչական քաղաքականություն պետք է կիրառել հատկապես մեքենաշինության այն ճյուղերի նկատմամբ, որոնք, բնորոշելով հանրապետության դիմանկարը և զարգացման ուղղվածությունը, ներկա վիճակով չեն կարող դիմանալ միջազգային շուկայի մրցունակությանը: Մեքենաշինության առանձին ճյուղեր միջազգային մրցության մեջ պետք է ներքաշվեն աստիճանաբար: Պետական հովանավորչությունը, իր ներքին, համապատասխան տնտեսական լծակների օգնությամբ ոչ թե պետք է կաշկանդի տեխնիկական առաջընթացը, այլև խթանի այն: Նման քաղաքականության կարիք են զգում գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնց արդյունքների արտադրությունը, դրանց արդյունաբերական վերամշակման կազմակերպումը պետք է զերծ պահել արտաքին աշխարհի մրցունակությունից: Հակառակ պայմաններում երևույթը հղի է վտանգավոր հետևանքներով: Արտաքին աշխարհի առջև իրենց դռները լայնորեն կարող են բացել միայն հզոր պետությունները, այն էլ ոչ միշտ: Գիտատեխնիկական և ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ճանապարհով սեփական երկրի արտադրության զարգացումը խթանելու միջոցով պետությունը պետք է նպաստի համազգային ներքին շուկայի ձևավորմանը, ուղղություն և ընթացք հաղորդի այդ շուկային: Դա, իր ներքին, ոչ թե բացառում, այլ պայմանավորում է նաև արտաքին աշխարհի հետ տնտեսական փոխներառնման համապատասխան նախադրյալների ստեղծման և հետագա զարգացման պետական քաղաքականության իրականացումը:

Հարցադրումը, իհարկե, բնավ էլ չի նշանակում, որ դրանով իսկ Հայաստանը պետք է վարի արտաքին աշխարհից տնտեսապես մեկուսանալու և ներփակ տնտեսություն զարգացնելու քաղաքականություն: Ընդհակառակը, այդ հարցադրումը ոչ թե բացառում, այլ պայմանավորում է արտաքին աշխարհի հետ տնտեսական փոխներառնման համապատասխան նախադրյալների ստեղծման հետագա զարգացման պետական քաղաքականության իրականացումը: Հանրապետությունում ներ-

քին տնտեսական կապերի հետագա զարգացումն ու խորացումը և այդ ասպարեզում գոյություն ունեցող բոլոր հնարավորությունների առավելագույնս օգտագործումը կնպաստի ոչ թե տնտեսության մեկուսացմանը, այլ արտաքին աշխարհի հետ նոր տնտեսական կապերի ստեղծման հիման վրա լայնամասշտաբ տնտեսական փոխներտաճման ծավալմանը: Տնտեսական մեկուսացումը ոչ մի երկրի ազգային շահերին չի համապատասխանում: Ներպետական և միջպետական փոխներտաճումը մեկը մյուսով փոխպայմանավորված և իրար լրացնող գործընթացներ են: Պետությունն իր հովանավորչական քաղաքականությամբ պետք է նպաստի արտահանող ճյուղերի զարգացմանը:

Ներպետական տնտեսական փոխներտաճումը անհրաժեշտ նախապայման է աշխատանքի միջազգային բաժանման մեջ Հայաստանի մասնակցությունը որոշակի դարձնելու և արտաքին աշխարհի հետ փոխշահավետ տնտեսական փոխներտաճման կապեր ծավալելու համար: Հայրենական արտադրողների, ձեռներեցության, արտադրության ու փոխանակության, ինչպես նաև գիտության ու կրթության համակարգի նկատմամբ պետական հովանավորչական քաղաքականությունն անհրաժեշտ է զուգակցել փուլ առ փուլ բաց էկոնոմիկային անցնելու հետ: Հենց այդ նպատակով պետությունը պետք է տնօրինի հասարակության արտադրության միջոցների և ռեսուրսային ներուժի մի զգալի մասը, իր տնտեսական քաղաքականությամբ կանխորոշի տնտեսության համապատասխան հատվածի ծավալները, ստեղծի համապատասխան օրենսդրական միջավայր՝ բազմաձևիականության պայմաններում ազատ մրցության անկաշկանդ ծավալման, այլ տնտեսական լծակների կիրառմամբ ուղղություն և ընթացք հաղորդի երկրի շահերից բխող տնտեսական քաղաքականության կենսագործման համար: Արտաքին տնտեսական քաղաքականության ռազմավարությունն իր հիմքով պետք է բխի ռեսուրսային ներուժի բանական օգտագործման քաղաքականությունից: Ուստի շուկայական հարաբերությունների զարգացումը և հետագա կայացումը ենթադրում է ոչ թե միջազգային մեկուսացման, այլ նոր տնտեսական կապերի ձևավորման միտում:

Տնտեսական զարգացման մակարդակով, ռազմական հզորությամբ, աշխարհագրական դիրքով, հարևանների հետ ունեցած տնտեսական փոխներտաճման և քաղաքական կապերով, մի այնպիսի փոքրիկ հանրապետություն, ինչպիսին Հայաստանն է, իր տնտեսական, այո՛, նաև քաղաքական անկախության երկար ու ձիգ ճանապարհը չի կարող կտրել ու անցնել մեն-մենակ, առանց արտաքին աշխարհի մեծ կամ փոքր պետությունների հետ տնտեսական ու քաղաքական սերտ հարաբերությունների մեջ մտնելու: Ընդհանրապես աշխարհում տնտեսապես, նաև քաղաքականապես, մեկուսի երկիր գոյություն չունի: Համաշխարհային տնտեսական զարգացման փորձը ցույց է տալիս, որ ներկայումս ոչ մի երկիր, անկախ զարգացման մակարդակից, չի կարող սեփական բոլոր պահանջներն ապահովել հայրենական արտադրության արտադրատեսակներով: Ամեն մի երկիր, ելնելով իր դարավոր փորձից, համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի համեմատ տնտեսությունը զարգացնելու ձեռք բերած մակարդակից և ռեսուրսային ներուժի (այդ թվում աշխատողների որակական հատկանիշներ, մասնագիտական մակարդակ և ուղղություն, հմտության աստիճան և այլն) առկայությունից մասնագիտացնում և զարգացնում է արտադրության այն ճյուղերը, որոնք իրենց արդյունավետությամբ ապահովում են երկրի մասնակցությունը համաշխարհային մասշտաբով աշխատանքի հասարակական բաժանման ընդհանուր տնտեսական համակարգում: Երևույթների նման ընթացքի մասին են վկայում տնտեսական, ինչպես նաև քաղաքական բնույթ կրող վերջերս ստեղծված զանազան միջազգային միավորումները, որոնց մեջ մտնում են աշխարհի առանձին երկրներ, այդ թվում գերտերություններ:

XXI դարի նախաշեմին, ի թիվս առկա միջազգային տնտեսական-քաղաքական միավորումների, կստեղծվեն նորերը, որոնք կնպաստեն այդ երկրների միջպետական տնտեսական կապերի զարգացմանը: Նման միավորումները տնտեսական խնդիրների հետ միասին, միտում են նաև քաղաքական նպատակներ: Ինչպես ամեն մի երկիր, Հայաստանը նույնպես, միջազգային միավորումների մեջ մտնելու համար (ամենից առաջ Ռուսաստանի և Իրանի հետ) առաջին հերթին պետք է

մտահոգվի արտաքին աշխարհի հետ առևտրական կապերի, տրանսպորտային հաղորդակցության, կապի, ճանապարհների, ենթակառուցվածքային և ծառայությունների, ընդհանրապես հաղորդակցության հստակ համակարգ ստեղծելու մասին: Մինչդեռ Հայաստանում այդ նպատակին խոչընդոտում է ոչ միայն թվարկված զարգացած համակարգերի, այլև իրավական համապատասխան դաշտի բացակայությունը: Գումարվում է նաև երկարատև կապիտալ ներդրումների պակասը: Պետական ինվեստիցիոն քաղաքականությունը պետք է ուղեկցվի մանր գործարարության, փոքրածավալ ֆինանսավորման համար պետական հովանավորչությամբ, վերջիններիս ազատ գործունեությունն ապահովող իրավական դաշտի առկայությամբ:

Արևմուտքից թելադրվող «շոկայական թերապիան», որին, առաջին հերթին, ընդօրինակեց Ռուսաստանը, ապա մյուս նորանկախ պետությունները, տնտեսության մեջ պատվաստի դեր են տանում՝ արմատապես վնասելով նրա զարգացման ներքին տրամաբանական ընթացքին:

2. ՓՈԽՍԵՐՏԱՃՈՒՄԸ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՊՀ) ՀԵՏ

Արտաքին աշխարհի ցանկացած երկրի հետ ուղղակի տնտեսական կապերի հաստատումը, դրանց հետագա ծավալումը Հայաստանում նախ պետք է իրականացնել նախկինում քննություն բռնած կապերը նոր հիմունքներով, փոխշահավետության սկզբունքներով վերահաստատելու, հարևանների և աշխարհի շատ երկրների հետ նոր սերտ կապեր ձևավորելու հիման վրա՝ բացառելով փոխսերտաճվող կողմերից մեկի թելադրող, մյուսի ակամա կամակատար իրավիճակում հանդես գալու դերը: Մինչդեռ նման քաղաքականության իրականացումը միայն մասնավոր ձեռներեցության հույսին թողնելը սխալ է և անհեռանկար: Այն միշտ էլ կունենա միակողմանի բնույթ: Տվյալ դեպքում մեծ է պետական քաղաքականության կարգավորիչ դերը, նրա ակտիվ միջամտությունը:

Անհրաժեշտ է գործիմացորեն նորոգել ԱՊՀ երկրների հետ տնտեսական փոխսերտաճման նախկին համակարգը: Դա տասնամյակների ընթացքում այնքան էր խորացել ու ճյուղավորվել,

որ դրա ջլատումը հանրապետությանը պատճառել է անդառնալի հետևանքներ: ԱՊՀ-ն փաստորեն փոխշահավետ հիմունքներով նրա մեջ անդամագրված երկրների տնտեսության փոխներտաճման ձևն է: Նախկինում կապը արտաքին աշխարհի հետ իրականացվում էր կենտրոնի միջոցով: Ռուսաստանը շատ հանրապետությունների համար դոնոր էր: Հարկավ, նա տնօրինում էր մյուս հանրապետությունների հանքային հարստություններին: Դրա համար էլ ծայրամասերում կատարվող կապիտալ ներդրումները հարաբերականորեն գերազանցում էին Ռուսաստանում ներդրվող կապիտալի չափերին: Տիրում էր անհամարժեքային փոխանակությունը:

Հայաստանը և, ընդհանրապես, նախկին Խորհրդային Միության ցանկացած հանրապետություն, արտերկրի հետ տնտեսական նոր կապեր արագորեն ստեղծել, առավել ևս բազմակողմանի տնտեսական կապեր հաստատել և միանգամից հաջողության հասնել չի կարող ոչ միայն վերը թվարկված պատճառներով: Պահանջվում է ժամանակ՝ տնտեսական նոր հարաբերություններ և համարժեքային փոխանակության սկզբունքներ մշակելու, միմյանց պայմաններն ու հնարավորությունները հետախուզելու համար: Կաշկանդում են ոչ միայն սովորության ուժը, նախկինից ժառանգած շատ գործոններ, խոչընդոտում է արտադրության տեխնիկայի ու տեխնոլոգիայի գործող համակարգը, տեղակայված սարքավորումների տեխնոլոգիական ուղղվածությունը, աշխատողների մասնագիտական որակն ու հմտության մակարդակը, այլև դրանցով փոխպայմանավորված արտադրվող արդյունքների տեսականին, դրանց բարձր արժեքը, ցածր որակը, համաշխարհային միջինականացված չափանիշներից մեծ շեղումները, միջազգային շուկայում անմրցունակությունը: Այդուհանդերձ, նման պայմաններում նախկին խորհրդային համակարգում Հայաստանի հանքահումքային ռեսուրսների ներմուծման և արտահանման հաշվեկշռում 1980-ական թվականներին գերակշռում էր ներմուծումը, մինչդեռ ներմուծման և արտահանման ընդհանուր հաշվեկշռում, արժեքային արտահայտությամբ, գերակշռում էր արտահանության բաժինը: Դա բացատրվում էր ոչ այնքան հանքահումքային ռեսուրսների արտահանության մասշտաբների անընդհատ մեծացումով (երե-

վույթ, որ դարձյալ բնորոշ է եղել), որքան ներկրովի հումքային ռեսուրսների վերամշակման բազայի ընդարձակմամբ ու խորացմամբ: Դա ՆԽՄ մի շարք հանրապետությունների նկատմամբ Հայաստանի արդյունաբերության զարգացման բարձր մակարդակի արտահայտությունն էր: Հանրապետության մեքենաշինության, թեթև և, մասամբ, սննդի արդյունաբերության վերամշակող շատ ճյուղեր, շինարարության մեջ օգտագործվող մետաղե կոնստրուկցիաներ խարսխված էին ներկրովի հումքի վրա: Արդյունաբերության այդ ճյուղերի կենսագործունեությունն ապահովելու համար 1981—1985 թթ. յուրաքանչյուր տարի միջին հաշվով ԽՍՀՄ այլ տնտեսական շրջաններից հանրապետություն է ներկրվել շուրջ 1 մլն տոննա սև մետաղ, հանրապետությունում վերամշակվող գունավոր և հազվագյուտ մետաղների մի զգալի մասը, ամբողջ պողպատե և գունավոր մետաղների գլանվածքը, խողովակները, այրվող բնական գազը և նավթամթերքները: 1981—1985 թթ. տվյալներով տարեկան միջին հաշվով ներմուծվել է 400 մլն ռուբլու բնական այրվող գազ և նավթամթերքներ: Ներկայիս գներով հաշված դրանք միլիարդներ են կազմում: Այդ տարիներին տարեկան միջին հաշվով ներկրվել է 415 հազ. տոննա քարածուխ: Հանրապետությունում շինարարությունը չէր կարող ծավալվել այն մասշտաբներով, եթե տարեկան չներկրվեր ավելի քան 1 մլն մ³ փայտանյութ, մետաղներ և շինանյութերի այլ տեսակներ: Նույնը վերաբերում է թեթև արդյունաբերությանը, որի ճյուղերի մեծ մասը (տեքստիլ, կաշվի, կոշիկի և այլն) հիմնված էին ներկրովի հումքի վերամշակման և դրանից պատրաստի արտադրանք ստանալու վրա: Տարեկան միջին հաշվով ներկրվել է ավելի քան 2000 մլրդ ռուբլու պարենային և ոչ պարենային արտադրանք. այդ թվում հանրապետությունում սպառվող ալյուրը, շաքարը, թեյը՝ ամբողջությամբ, կաթնամթերքների՝ 80, մսամթերքների՝ 60 տոկոսը: Տարեկան միջին հաշվով ներկրվել է 90—95 հազ. տոննա միս և մսամթերք, 950 հազ. տոննա կաթնամթերք, 50 հազ. տոննա կենդանական յուղ, 1,2—1,3 մլն տոննա հացահատիկ, 356 հազ. տոննա ձավարեղեն, 432 հազ. տոննա ալյուր, 85 հազ. տոննա շաքարավազ, 1000 տոննա թեյ, 60 տոննա ծխախոտ և պարենային ու ոչ պարենային արտադրանքի այլ տեսակներ:

Ուստի, նախկին խորհրդային համակարգի փլուզումով Հայաստանը կորցրեց վիթխարի շուկա: Այդ շուկայում նա բնութագրվում էր տնտեսական հզորությամբ, քանի որ ներմուծված ռեսուրսների մի զգալի մասը Հայաստանում վերամշակվում էր, և ստեղծված նոր ապրանքներն աճած արժեքներով, հակադարձ հոսանքով, ապրանքային նոր կերպարանքով, թափանցում էին Միության այլ վայրեր: Հասկանալի է, որ այդ շուկան կորցնելը բացասաբար ազդեց Հայաստանի տնտեսական ուղղվածության (ինդուստրիալ զարգացման առումով), ինչպես նաև սոցիալական զարգացման վրա, մանավանդ, երբ այդ երևույթը նախկինում զուգակցվում էր ներմուծվող հումքի վերամշակման միջոցով նոր արժեքների ստեղծման հետ, այսինքն՝ ազգային եկամտի ավելացմամբ: Դա նաև բնակչության արդյունավետ զբաղվածություն էր:

Սակայն թե ինչու շուկայական հարաբերությունների հետագա ծավալման պայմաններում Հանրապետությունում հանքահումքային ռեսուրսների հետագա վերամշակման փուլերի կազմակերպումն ու դրանց շնորհիվ պատրաստի արտադրանքի արտահանության չափերի ավելացումը պետք է խելամտորեն զուգակցել ԱՊՀ երկրներից ներկրվող հումքատեսակների չափերի ավելացմանը: Դա ոչ միայն կմեղմացնի հանրապետության համար արդեն անխուսափելի դարձած մեծամասշտաբ թերզբաղվածությունն ու գործազրկությունը, կակտիվացնի աշխատանքային ներուժը, այլև ներկրվի հումքի վերամշակմամբ՝ կավելացնի հանրապետության ազգային եկամուտը:

Հայաստանում արտադրված շատ արտադրատեսակներ նախկին միութենական շուկայում սպառում էին գտել: Դրանք ապահովում էին նաև համապատասխան որակ: Նման պայմաններում շատ տարածաշրջաններ պատրաստ են առժամանակ վերականգնել նախկին կապերը՝ իրենց պահանջները բավարարող արտադրատեսակներ ստանալու համար: Պետք է շեշտադրել, որ Հայաստանը ի վիճակի է և կարող է փոխշահավետ տնտեսական կապերի մեջ մտնել ցանկացած երկրի, առավել ևս իր հարևանների հետ: ԱՊՀ-ի երկրների, մասնավորապես Ռուսաստանի հետ տնտեսական փոխներտաճման հեռանկարը թելադրվում է ոչ միայն ռազմաքաղաքական նկատառումներով,

այլև դրանց տնտեսության հետ Հայաստանի տնտեսության ներառման ներկա իրավիճակով: Գաղտնիք չէ, որ արդյունաբերության շատ ճյուղեր իրենց տեխնիկական և տեխնոլոգիական համակարգով ծառայում են դրանց: Այն միանգամից վերափոխելը և արտադրությունը արդիականացնելը չի բխում ոչ միայն տնտեսական, այլև բազմաթիվ այլ նկատառումներից: Չպետք է անտեսել նաև այն, որ առայժմ Հայաստանում արտադրվող շատ ապրանքատեսակներ թեև իրենց որակական հատկանիշներով և աշխատանքային ծախսումներով չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, բայց բավարարում են ԱՊՀ և մի շարք այլ երկրների պահանջները:

3. ՓՈԽՍԵՐՏԱՑՈՒՄԸ ԻՐԱՆԻ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Տնտեսական փոխներտացման հեռանկարներով փոխշահավետության մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իրանի և Մերձավոր արևելքի մի շարք երկրների հետ տնտեսական կապերի հետագա զարգացումը: Հաճախ մեր այս հարևանների հետ տնտեսական կապերի ծավալումը խիստ միակողմանի է պատկերացվում, այսինքն՝ ներկայացվում է Հայաստանի վառելիքի պահանջարկն ինչ-որ չափով բավարարելու առումով: Այս երկրները, մասնավորապես Իրանը, կարող են Հայաստանին ապահովել Պարսից ծոց դուրս գալու ուղի, իսկ Հայաստանը՝ դառնալ դրանց համար տարանցիկ գոտի Արևմուտքի, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի հետ կապեր ստեղծելու առումով: Անդրօվկիանոսյան և Հեռավոր արևելքի երկրների հետ Հայաստանը կարող է առևտրական կապեր հաստատել, բայց այդ կապերն ինչքան էլ զարգանան, տնտեսական փոխներտացման չեն կարող վերածվել: Մինչդեռ Իրանը Հայաստանի համար հետաքրքրություն է ներկայացնում հենց այդ փոխներտացման առումով:

Մերձավոր արևելքի, մասնավորապես Իրանի հետ տնտեսական փոխներտացման հիմքերը նոր-նոր են ձևավորվում: Ներկա փուլում երկու երկրների միջև առևտրական կապերը թեև սահմանափակ են, բայց տեսանելի հեռանկարում ունեն ծավալվելու լայն հնարավորություններ: Ներկայումս Հայաստանի

ձեռներեցները, ելնելով ավելի բարձր շահույթ ապահովելու ձգտումից և Հայաստանի բնակչության վճարունակության (գնողունակություն) չափազանց ցածր մակարդակից, ներմուծում են գերազանցապես էժան և ցածրորակ սննդամթերք և կենցաղային իրեր: Փոխարենն արտահանում են մետաղյա ձուլածո զանգվածներ, չուգուն, երկաթ, խտանյութեր, պոլիմերներ, էլեկտրաշարժիչներ, տրանսֆորմատորներ, զանազան հաստոցներ, քիմիական արտադրանք և այլն: Նման գործընթացը զուրկ է հեռանկարից: Այն էլ նկատենք, որ 1997 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության մեջ (բացառությամբ հացահատիկի և էներգակիրների) Իրանն զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանի Դաշնությանը: Այդ ընթացքում Իրանի հետ Հայաստանի առևտրային հաշվեկշռում, դրամական արտահայտությամբ, ներմուծումն արտահանությանը գերազանցել է ավելի քան 2,0 անգամ, այսինքն՝ Հայաստանն ունեցել է բացասական մնացորդ (սալդո):

Նախորդ շարադրանքում արդեն հիշատակվել է գյուղատնտեսության նկատմամբ պետական հովանավորություն իրականացնելու մասին: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է մաքսային քաղաքականությամբ դրսից ներմուծվող որոշ գյուղատնտեսական մթերքների չափերի կարգավորմանը և դրանով իսկ Հայաստանում արտադրվող այդ մթերքների վերարտադրության հետագա ընթացքը սպառնացող վտանգից վնասազերծելուն: Դա լրացուցիչ միջոցներ չի պահանջում: Օրինակ, Իրանից անարգել ներմուծվող ճակնդեղի սպիրտը, բանջարաբոստանային մշակաբույսերի (ձմերուկ, սեխ, վարունգ, լոլիկ, կարտոֆիլ, սխտոր և այլն), մրգերի (խնձոր, տանձ, չամիչ, նուռ և այլն) որոշ տեսակների ներմուծումը հանգեցրել է և ժամանակի ընթացքում կհանգեցնի հանրապետությունում այդ մթերքների արտադրության ոլորտում զբաղվածության կրճատմանը: Խնդիրը, իհարկե, միայն բնակչության զբաղվածությունը չէ, թեև դա նույնպես չափազանց կարևոր է: Չէ՞ որ հանրապետության զբաղված բնակչության մի վիթխարի զանգված ընդգրկված է խաղողի, կարտոֆիլի, մրգերի, բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրության մեջ: Բանն այն է, որ ներմուծվող

այդ մթերքներն ավելի էժան են, քան Հայաստանում արտադրվող համանուն արտադրատեսակները: Արտաքուստ կարծեք ամեն ինչ լավ է, նույնիսկ հրապուրիչ: Ուստի ինչո՞ւ վտանգել Հայաստանի սպառողների շահերը:

Այո, դա այդպես է: Բայց, առաջին հայացքից: Վաղը, մյուս օրը, մոտ ապագայում, քիչ թե շատ հեռավոր գալիքում, օրերից մեկ օր, երբ այդ էժան մթերքները կարտամղեն հայրենական արտադրողներին, կնվազեն դրանց արտադրության մասշտաբները, շատ անհուն և աստիճանաբար կբարձրանան ներմուծվող մթերքների գները: Չէ՞ որ պահանջարկն ավելանում է, հանրապետությունում այդ արտադրատեսակների արտադրության կրճատման հետևանքով՝ առաջարկը նվազում:

Ժամանակի ընթացքում կարող են ծագել նաև այլ բարդություններ: Իր տնտեսական հնարավորություններն առավելագույնս օգտագործելով՝ երկիրը միշտ պետք է պատրաստ լինի ցանկացած անակնկալների, բնակչության գոնե նվազագույն պահանջները սեփական արտադրությամբ բավարարելու համար, հատկապես ճգնաժամերի և անկանխատեսելի այլ պայմաններում: Այլապես, կարող է կրկնվել այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանի արդյունաբերության հետ՝ խորհրդային համակարգի փլուզումով: Գերազանցապես ներկրվող հումքային ռեսուրսների վրա խարսխված և այլ տնտեսական շրջանների հետ փոխներտաճած արդյունաբերությունը, խորհրդային համակարգի փլուզումից հետո, հայտնվեց անօգնական վիճակում:

Ինչ խոսք, Հայաստանում արտադրվող նույնանուն գյուղատնտեսական մթերքների տեսականու ներմուծումը չափավորելիս, սպառողը այսօր չի շահի: Սպառողները սեփական արտադրության համար ավելի թանկ կվճարեն: Բայց շուկայական հարաբերությունների ծավալման պայմաններում գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկի անը կշահագրգռի արտադրողներին: Մրցակցությունը նրանց կստիպի անընդհատ մտահոգվել արտադրության տեխնիկական զինվածության, ուստի աշխատանքի արտադրողականության բարձրացման բոլոր հնարավորություններն օգտագործելու ուղղությամբ: Դաժան մրցությանը դիմանալու համար, առանց աչք թարթելու, նրանք կավելացնեն արտադրության չափերը, կգործադրեն ամեն ջանք՝

ծախսերը կրճատելու և էժան արտադրելու համար: Առայժմ, մաքսային քաղաքականությամբ, հովանավորելով սեփական արտադրողներին, պետք է խթանել բոլոր օգտահոդերը լրիվ շրջանառության մեջ ընդգրկելու, մրցության ասպարեզն ընդլայնելու, սեփական երկրի գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու միջոցով՝ նրանց սպառնացող անխուսափելի և վտանգավոր անակնկալները շրջանցելու համար:

Ավելորդ չէր լինի անդրադառնալ նաև մեկ այլ հարցի: Դա հանրապետության շուկայում այդ մթերքների վաճառքով զբաղվող օտարերկրյա քաղաքացիների ընդգրկվածությունն է:

Շատ երկրներում, այդ թվում ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա, Ֆրանսիա, Իտալիա, Սկանդինավիա և այլ երկրներ, ազատ աշխատատեղերում, առաջին հերթին, ընդգրկում են իրենց քաղաքացիներին: Դա ամրագրվում է օրենսդրությամբ: Այլ երկրների քաղաքացիներին աշխատանքի են ընդունում միայն այն ժամանակ, երբ ազատ աշխատատեղերում ընդգրկվելու համար իրենց երկրի քաղաքացիները հայտ չեն ներկայացրել:

Այսօր Հայաստանի աշխատանքի շուկայում տեղեր են զբաղեցնում Իրանի քաղաքացիները: Նրանք զբաղեցնում են առևտրական կետերը, խանութները, պահեստները, այն դեպքում, երբ շրջապատը լեցուն է որևէ զբաղմունք ակնկալող՝ Հայաստանի քաղաքացիներով: Դրանց մի մասը, թերևս, վերավաճառողներ են: Հարցադրումը որևէ չափով չի հակասում այլ երկրների հետ քաղաքակիրթ տնտեսական հարաբերությունների և բարիդրացիական կապերի սկզբունքներին:

Հայաստանում մասնավոր ձեռներեցության խողովակով արտահանության համար համապատասխան օրենսդրական դաշտ ապահովելու, դրա նկատմամբ պետական հովանավորչություն իրականացնելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է ընդլայնել երկկողմանի պետական համաձայնագրերի մակարդակով առևտրական շրջանառության ծավալները, որոնք իրական պայմաններ կստեղծեն երկու երկրների տնտեսության առանձին ճյուղերի փոխներտաճման համար:

Այդ նպատակով Հայաստանը, ցանկացած երկիր, այդ թվում մերձավորարևելյան երկրներ կարող է արտահանել 1. հանքահումքային ռեսուրսներ, հատկապես գունավոր և ազնիվ մե-

տաղներ, բնական հանքային կլանիչներ, քարաղ, գիպս, կավագիպս, բնական երեսպատման քարեր, գունավոր քարաձուք, հանքային ջրեր, 2. արդյունաբերական ապրանքներ, առանձնապես գունավոր մետաղաձուլության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, սարքաշինության, ռադիոէլեկտրոնային մեքենաշինության, գործիքաշինության, քիմիական, շինանյութերի արդյունաբերության, բազմատեսակ և բազմապրոֆիլ արտադրատեսակներ, 3. արտահանության իմաստով հետաքրքրություն են ներկայացնում նաև բուժիչ նպատակներով օգտագործվող, վիտամիններով հարուստ փշարմավի յուղը, հիդրոպոնիկ արտադրությամբ եթերայուղատու, դեղահումքի և ներկատու բույսերը և այլն:

Հայաստանը Իրանից կարող է ակնկալել գազ, նավթ և վառելիքի այլ տեսակներ: Դա կբավարարի ոչ միայն բնակչության կենցաղային պահանջները, այլև կհետապնդի տնտեսական փոխներտանման հույժ կարևոր նպատակներ: Նման հումքի մշակման վրա կարող են վերագործարկվել նախկինում բնական գազի վրա խարսխված արտադրական հզորությունները: Խոսքը վերաբերում է ջերմակայաններին, քիմիական և թեթև արդյունաբերության որոշ արտադրատեսակների, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել ԱՊՀ, Մերձավոր և Միջին արևելքի երկրների համար: Դա իր հերթին որոշակի պայմաններ կընձեռի Հայաստանի էներգետիկ ճգնաժամը հաղթահարելու, չգործող կարողությունների գործարկման և բնակչության զբաղվածության ոլորտի ընդլայնման համար: Այդ երկրները կարող են Հայաստան առաքել գյուղատնտեսական մթերքներ, սննդի և թեթև արդյունաբերության ապրանքներ, կենցաղային առարկաներ և այլն:

4. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ

Եթե ԱՊՀ, Իրանի և Մերձավոր արևելքի բազմաթիվ երկրների հետ Հայաստանը կարող է վարել տնտեսական սերտաճման որոշակի քաղաքականություն, ապա Թուրքիայի հետ այդ հարաբերությունները կարող են կրել առևտրական ապրանքափոխանակության բնույթ: Ներկա փուլում և մոտ ապա-

գայում չպետք է տարվել Թուրքիայի հետ տնտեսական այնպիսի խոր և համակողմանի կապերի հաստատմամբ, որը ժամանակի ընթացքում հանգեցնի մեր փոքրիկ հանրապետության տնտեսության ներտաճմանը Թուրքիայի տնտեսությանը: Նման միտումը հղի է Թուրքիայից կախվածության, քմահաճույքի և թելադրանքի վտանգի ամով, իսկ ամեն կարգի քմահաճույքի դրսևորում խորքային հետք կթողնի ոչ միայն տնտեսության, այլև քաղաքականության, մասնավորապես ազգային քաղաքականության, անկախության և ազատության վրա: Չմոռանանք, որ Թուրքիան իր կամքը թելադրում է հենց այսօրվանից, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև շփման եզրերը ծավալված չեն, երբ խորքային տնտեսական կապերը բացակայում են: Հետագա ստրկական կախվածության մասշտաբները և դրանով հարուցվող երևույթները տեսանելի են Թուրքիայի հենց այսօրվա դիրքորոշումից:

Գաղտնիք չէ, որ Թուրքիան անազդու ապառնալիքով թելադրում է պահանջատիրության, ընդհանրապես պատմությունը վերհիշելու մասին ոչ մի խոսք, այլապես քանակցությունների սեղանի շուրջ նստել և Թուրքիայի հետ տնտեսական, առևտրական, դիվանագիտական որևէ հարաբերություն ստեղծվել չի կարող, եղած թույլ կապերն էլ կխեղդվեն սաղմնային վիճակում:

Թուրքիայի հետ հարաբերություններում, եթե այսօր խաղաքարտի վրա է դրվում Հայ Դատից և պահանջատիրությունից հրաժարվելու հարցը, վաղը դիվանագիտական խաղի մեջ կներքաշվի Զանգեզուրից, Սևանի ավազանից, Գարդմանաց աշխարհից հրաժարվելու հարցը:

Հայտնի է նաև, որ իր ներկա տարածքային աշխարհագրական, տնտեսական կացությամբ և ռազմական հզորությամբ Հայաստանը միայնակ չի կարող լուծել նաև Հայ Դատի և պահանջատիրության խնդիրները: Բայց դա չի նշանակում, որ հարևանների հետ դիվանագիտական հարաբերությունների, առևտրի ևս տնտեսական կապերի կառույցը պետք է բարձրանա պահանջատիրությունից հրաժարվելու փլատակների վրա: Թուրքիայի հետ այսօրվա հարաբերություններում Հայ Դատը չպետք է դառնա շահարկման թեմա: Պետք է ընդմիշտ հիշել, որ պա-

հանջատիրությունը ոչ միայն Հայաստանում ապրող հայ ժողովրդի, այլև սերունդների, ամբողջ աշխարհում ափված հայ ժողովրդի համազգային խնդիրն է, որի լուծումը մնում է պատմությանն ու սերունդներին և այն էլ ոչ թե ուժի դիրքերից՝ առճակատմամբ, այլ պատմական տրամաբանական զարգացման ընթացքում դիվանագիտական ճանապարհով մարդկային առողջ բանականությամբ լուծելու համար: Ո՞վ գիտե, կգա ժամանակը (թեև քիչ է հավանական), որ Թուրքիայում իշխող ուժերը և թուրք ժողովրդի ապագա սերունդները կդատապարտեն իրենց պապերի ու ապուպապերի վարքագիծը, հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանության, նրա պատմական տարածքներին ապօրինաբար տեր դառնալու համար:

Կասկած չի հարուցում, որ Թուրքիայի հետ առևտրատնտեսական, դիվանագիտական, քաղաքական հարաբերությունների բնույթը այլ կերպարանք կստանա, եթե Հայաստանն իր մասնակցությունը բերի ԱՊՀ-ի և, առաջին հերթին, Ռուսաստանի հետ սերտ կապերի ստեղծմանը կամ, ինչու չէ, կոնֆեդերատիվ հիմունքներով նրանց հետ մտնի տնտեսական, ռազմաքաղաքական հարաբերությունների մեջ: Խոսքը վերաբերում է այն Ռուսաստանին, որը դեռևս ծանրակշիռ դեր ունի խաղալու համաշխարհային պատմության զարգացման ընթացքի մեջ: Դրանով իսկ Հայաստանը ոչ միայն իր տնտեսությունը կփրկի Թուրքիայի տնտեսության հետ սերտաձելու և ստրկության շղթաներն անընդհատ կռելու վտանգից, այլև կապահովի Թուրքիայի հետ առևտրական, տնտեսական, դիվանագիտական հարաբերությունների հետագա ծավալումը, կապահովի սահմանային անվտանգությունը:

Զմոռանանք՝ ինչ-որ երանելի պայմաններում տնտեսական զարգացման մակարդակով Հայաստանը որքան էլ առաջադիմի, բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքով անգամ եթե գերազանցի զարգացած երկրների մակարդակը, դարձյալ մնում է մի փոքրիկ պետություն, փոքրիկ իր բնակչությամբ ու տարածքով, տնտեսական ու ռազմական ներուժով, ազգային էկամտից պաշտպանության համար միջոցներ հատկացնելու և սահմանն անվտանգ պահելու հնարավորությամբ:

Չի կարելի անտեսել, որ նման պայմաններում Հայաստանի Հանրապետությունը, որպես մի կղզի, շրջափակված է այնպիսի հարևաններով, որոնք փոխշահավետությունն ընկալում են միմիայն իրենց կամքը թելադրելու դիրքերից:

Հաճախ, որպես երաշխիք, վկայակոչվում է այն անհիմն վարկածը, որ իբր թե Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի է ունեցել բեկում: Եվրոպական շուկայի ընկերակցության մեջ մտնելու նպատակով նա ընդունել է արտաքին քաղաքականություն վարելու բարեկիրթ կեցվածք, իսկ այդ ընկերակցության անդամ դառնալուց հետո կամա-ակամա ենթարկվելու է այն քաղաքականությանը, ինչը կթելադրվի ընդհանուր շուկայի երկրների մշակած արտաքին քաղաքականությամբ: Այսինքն՝ Թուրքիան ևս կվարի եվրոպական քաղաքակրթությանը հատուկ արտաքին քաղաքականություն:

Դեչպիսի՞ պատրանք:

Թեև բարդ է ապագա ռազմաքաղաքական ուժերի փոխհարաբերությունները կանխորոշելը, բայց մի բան պարզ է, որ Թուրքիան միշտ էլ ժամանակի ոգին լավ է ըմբռնել և իր համար ստեղծված ամենաբարդ իրավիճակներում խուսանավելով կարողացել է ոչ միայն փրկվել, այլև, առաջին հերթին, ապահովել ամենաշահեկան ելքը: Պանթուրքիզմը և պանիսլամիզմը ինչպան էլ քողարկվեն եվրոպական քաղաքակրթության դիմակով, երբեք չեն հաղթահարի իսլամական ժողովուրդների հարևանությամբ՝ տարածաշրջանում մերձված և այդ ամբողջականությունը խաթարող քրիստոնյա Հայաստանի գոյությունը: Հայաստանի հետ ունեցած հարաբերություններում Թուրքիայի թելադրող կեցվածքը բխում է ուժի դիրքերից: Դրանք նրա աշխարհագրական բարենպաստ պայմաններն են, Արևմուտքի հետ շահավետ տնտեսական ու ռազմաքաղաքական սերտ ինտեգրացիան, արևմտյան տերությունների և իր հարևանների հետ ունեցած հարաբերություններում խուսանավելու մեծ հնարավորությունները: Արևմուտքի տերությունների և ԱՄՆ-ի ռազմական միջուկային բազաները կիպ կապած են ԱՊՀ երկրների սահմաններին՝ հենց շնորհիվ Թուրքիայի ընձեռած պայմանների: Այս իմաստով արևմուտքի երկրներին միշտ էլ ավելի շատ հետաքրքրել է Թուրքիան, քան Հայաստանը: Աշխարհագրական դիրքը որոշիչ է

եղել նաև խորհրդա-թուրքական հարաբերությունների ձևավորման ընթացքում, թեև շատ էական էր մուսուլմանական աշխարհի նկատմամբ Խորհրդային Միության դիրքորոշումը: Պատահական չէր, որ 1915 թ., 1918—1921 թթ. Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի հարաբերություններում, ինչպես նաև ղարաբաղյան շարժման այս օրերին ո՛չ արևմտյան տերությունները, ո՛չ էլ Խորհրդային Միության կենտրոնը գործնականում հանդես չեկան Արցախի հայ ժողովրդի արդարացի խնդրի պաշտպանությամբ: Արևմտյան ոչ մի տերություն կարեկցանքից բացի, ըստ էության, պետական մակարդակով լրջորեն չանդրադարձավ ղարաբաղյան հարցին, Ադրբեջանում հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող ցեղասպանությանն ու հայաջինջ բարբարոսական քաղաքականությանը:

Այդոսհանդերձ, անհերքելի ճշմարտություն է նաև այն, որ Թուրքիայի ճիրաններից Հայաստանը փրկեցին Ռուսաստանը, Խորհրդային Միությունը: Թշնամիներով օղակված Հայաստանը, Խորհրդային Միության կազմում զբաղեցնելով շուրջ 30 հազ. քառ. կմ տարածք, դարձավ համայն հայության համահավաք կենտրոնը, յոթ տասնամյակում նրա բնակչությունը ինքնապատկվեց: Մինչդեռ, բացառությամբ ԱՄՆ-ի, հայ բնակչությունը նվազեց աշխարհի մնացած բոլոր հայ գաղութներում: Եվրոպական այդ ո՞ր տերությունն էր, որ սատար կանգնեց Հայաստանին, այդ ո՞ր երկիրն էր, որ 1915 թ., 1918—1920 թթ. բռնեց թուրքերի ձեռքը:

Բայց չմոռանանք նաև ամենադժվար կացությունից դուրս գալու դիվանագիտական լուծումներ որոնելու և ճիշտ վճիռներ կայացնելու համար հանախ մեր կողմից թույլ տրվող վրիպումները:

5. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Խորհրդային համակարգի փլուզումը առաջին հերթին ջլատեց ՀՀ արտաքին տնտեսական կապերը, հանգեցնելով ներմուծվող ու արտահանվող ապրանքների չափերի նախադեպը չունեցող կրճատմանը:

1990-ականների սկզբներին արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառությունը հիմնականում ընդգրկում էր բնակչության ապառման ապրանքների (հացահատիկ և հացամթերք, կարտոֆամթերք, մսամթերք. շաքարավազ և այլն), ինչպես նաև էներգակիրների (նավթամթերք, գազ) ներմուծումը, և որն ուղեկցվում էր ներմուծվող ապրանքների չափերի ելևէջներով և պարբերաբար ընդհատումներով:

Խստորեն փոխվեց ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին: Այլևս անհնար էր արտաքին աշխարհ առաքել խոշոր արդյունաբերության և, առաջին հերթին, Հայաստանին բնորոշ այնպիսի արտադրատեսակներ, ինչպիսիք էին մեքենաշինության, քիմիական, գունավոր մետաղաձուլության, մասամբ նաև շինանյութերի ու թեթև արդյունաբերության բազմազան արտադրատեսակներ, որոնք նախկինում աշխուժորեն և մեծ ծավալներով արտահանվում էին աշխարհի շատ երկրներ, մասնավորապես խորհրդային հանրապետություններ: Պատճառը ոչ միայն վերամշակման նպատակով ներմուծվող հումքի հազարապատիկ նվազումն էր, արտաքին աշխարհի կողմից մեր արտադրատեսակների նկատմամբ պահանջի բացակայությունը, այլև բեռնափոխադրումների անհնարինությունը՝ դրանց բարձր քաշի, ծավալների մեծության, անմրցունակության և այլ պատճառներով: Սա այսօր էլ շրջափակված երկիրը իր բեռնափոխադրումները հիմնականում իրականացնում է օդային երթուղով: Շատ թանկ են նստում նաև Վրաստանի տարածքով բեռները Բաթումիից Հայաստան տեղափոխելու հետ կապված ծախսերը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում, մասնավորապես 1995—96 թթ. արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառության ծավալը փոքր ինչ աճի միտում է դրսևորում (թեև 1997 թ. 1996 թ. նկատմամբ նվազումն ակնհայտ է), բայց աճը տեղի է ունենում արտահանվող ապրանքների ծավալի համեմատությամբ ներմուծվող ապրանքների ծավալների ավելացման պայմաններում: Դրա հետևանքով տարեցտարի մեծանում է ապրանքաշրջանառության հաշվեկշռի ճեղքվածքը՝ ի վնաս հանրապետության:

Ինչպես, արտաքին աշխարհի հետ ՀՀ ապրանքաշրջանառությունը հետևյալ պատկերն է ներկայացնում: Նկատի է առնվել նաև բնակչության առևտրատուրիստական ուղևորությունների միջոցով կատարվող ապրանքաշրջանառությունը (տես թիվ 10 աղյուսակը):

Աղյուսակ 10

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 1995—1997 թթ. (մլն դոլար)*

	1995 թ.	1996 թ.	1997 թ.
1. Ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալը	944,8	1151,8	1126,0
այդ թվում			
— հեռավոր արտասահմանի հետ	441,2	719,3	731,1
— ԱՊՀ երկրների հետ	503,0	426,8	394,9
2. Ընդհանուր արտահանության ծավալը	270,9	296,0	232,6
այդ թվում			
— հեռավոր արտասահման	101,3	161,9	137,8
— ԱՊՀ երկրներ	169,6	134,1	94,8
3. Ընդհանուր ներմուծման ծավալը	673,9	855,8	893,4
այդ թվում			
— հեռավոր արտասահմանից	339,9	560,5	593,3
— ԱՊՀ երկրներից	334,0	295,3	300,1
4. Ապրանքաշրջանառության հաշվեկշռի մնացորդը	—403,0	—559,8	—660,7
— հեռավոր արտասահմանի հետ	—238,6	—398,6	—455,4
— ԱՊՀ երկրների հետ	—164,4	—161,2	—205,3

Աղյուսակից բխում են հետևյալ կարևոր եզրակացությունները.

1. 1995—1996 թթ. արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ավելացել է 21,9 տոկոսով՝

* Աղյուսակը կազմված է ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչության «Հայաստանի Հանրապետության սոցիալտնտեսական վիճակը», 1996 թ. տեղեկագրքի, Ե., 1997, 29—30 և 1997 թ. տեղեկագրքի, Ե. 1998, 26—27 էջերի տվյալներով:

1996—1997 թթ. 2,3 տոկոսով նվազելու պայմաններում: Ըստ որում քննարկվող ժամանակահատվածի վերջին տարում հեռավոր արտասահմանի հետ առևտրի միտումը պահպանվել է, իսկ ԱՊՀ երկրների հետ զգալիորեն նվազել է:

2. Արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառությունը հիմնականում կատարվում է հեռավոր արտասահմանի հետ:

1995—1997 թթ. հեռավոր արտասահմանի հետ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ավելացել է 165,8, իսկ ԱՊՀ երկրների հետ նվազել է 21,6 տոկոսով:

Ըստ որում ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ այդ երկրների բաժինը 1995 թ. 46,7 տոկոսից բարձրացել և 1997 թ. կազմել է 65,0 տոկոս, համապատասխանաբար իջել է ԱՊՀ երկրների բաժինը:

3. Աղյուսակի տվյալներից բխում է, որ քննարկվող ժամանակահատվածում արտաքին աշխարհի հետ ապրանքաշրջանառության ծավալը ավելացել է ներմուծման հաշվին:

Այսպես, օրինակ, ընդհանուր արտահանության ծավալը 1995—1997 թթ. 14,2 տոկոսով նվազելու պայմաններում ներմուծման ծավալն ավելացել է 132,6 տոկոսով: 1996—1997 թթ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 21,4 և 104,4 տոկոս:

Նկատելի է նաև այն, որ հեռավոր արտասահմանյան երկրների բաժինն ավելանում է ՀՀ հետ թե արտահանման, թե ներմուծման ընդհանուր ծավալում: 1995 թ. հեռավոր արտասահման է առաքվել ՀՀ արտահանության 37,4, իսկ 1997 թ. 59,2 տոկոսը: Դա նշանակում է, որ ԱՊՀ երկրների բաժինը խստորեն նվազել է: Ըստ որում երևույթները տեղի են ունենում ԱՊՀ երկրների հետ ընդհանուր արտահանության ծավալների ավելի արտահայտիչ կրճատման պայմաններում:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա տվյալ դեպքում էլ դրսևորվել է նույն միտումը: 1995—1997 թթ. ընդհանուր ներմուծման ծավալը 132,6 տոկոսով ավելանալու պայմաններում հեռավոր արտասահմանի հետ առը կազմել է 174,6, իսկ ԱՊՀ երկրների հետ նվազել է 10,2 տոկոսով: Դրա հետևանքով ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ հեռավոր արտասահմանի բաժինը եթե 1995 թ. կազմել է 50,4, ապա հետագայում բարձրանալով

դարձել է 66,4 տոկոս: Ներմուծվող ապրանքները, ինչպես նշվեց է, սպառման ապրանքներ են, որոնց մեծ մասը իրենց որակական հատկանիշներով արտադրվող երկրում արժեք և բնակչության կողմից հետաքրքրություն չեն ներկայացնում:

5. Վերջապես աղյուսակից բխող ամենատհաճ եզրակացությունը ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի ոչնչով չարդարացվող բացասական մեծ մնացորդի առկայությունն է և ընդամենը 3 տարում այդ մնացորդի աճն է 163,7 տոկոսով:

Բավական է ասել, որ արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բացասական մնացորդը, ձնագնդի նման գլորվելով, թափ է հավաքել և 1995 թ. 403,0 մլն դոլարից դարձել է Հայաստանի համար մի պատկառելի գումար՝ 660,8 մլն դոլար: Այսինքն ավելացել է 164,0 տոկոսով: Զմոռանանք, դա հանրապետության արդյունաբերության արտադրանքի մեկ տարվա ընդհանուր ծավալը զգալիորեն գերազանցող թիվ է: 1995 թ. հեռավոր արտասահմանին բաժին էր ընկնում այդ մնացորդի 52,9, իսկ 1997 թ.՝ 68,9 տոկոսը: Այսինքն դրա մեջ չեն մտնում էներգակիրների, մասամբ նաև հացահատիկի և ալյուրի ծախսերը, որոնք հիմնականում ներմուծվում են ԱՊՀ երկրներից:

Դրա հետ մեկտեղ 1997 թ. վերջին երկիրը շուրջ 694,0 դոլարի պատկառելի գումար կազմող արտաքին պարտքերի մեջ է:

Արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի այդպիսի մեծություն կազմող բացասական մնացորդը և մեծ արտաքին պարտքերը, երկրում կիրառվող չմտածված, անհեռատես, գուցե և ապիկար տնտեսական քաղաքականության հետևանքն է: Անխոս, դա իր վրա է կրում նաև արևմտյան տարբերակով և վալյուտային ֆոնդի ու էմիսիոն վարկի կնքահայրությամբ Հայաստանին հատկացված միջոցներով հանրապետության տնտեսությունը շուկայական հարաբերությունների փոխադրելու թեյադրանքի կնիքը: Մի բան պարզ է, որ վալյուտային ֆոնդի միջոցները փոշիացվեցին՝ իր բուն նպատակին չծառայելով և մասամբ էլ սրա ու նրա գրպանը մտնելով: Այն ավելացող տոկոսներով կվճարեն սերունդները:

Հասարակական տնտեսության, մասնավորապես արդյունաբերության ու գյուղատնտեսության նկատմամբ հոգատար վերաբերմունքի, այն հանիրավի քար ու քանդ չանելու պայմաններում, հնարավոր կլինեն ապահովել նրա արտադրանքի որոշակի տեսակների արտահանությունը՝ ապահովելով արտահանության ու ներմուծման բարենպաստ հաշվեկշիռ:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՈՒՄԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՍԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այլ երկրների հետ Հայաստանի արտադրական-տնտեսական փոխսերտաճումը պետք է բխի փոխշահավետության սկզբունքներից և ձերբազատվի այլ երկրների հետ միակողմանի սերտաճումից ու ավելորդ կախվածությունից: Նման պայմաններում հասկանալի է, որ իր աբտաքին տնտեսական քաղաքականությամբ Հայաստանը պետք է կողմնորոշվի դեպի համաշխարհային շուկան, դիմանա նրա մրցակցությանը, ինչպես արժեքային, այնպես էլ որակական ցուցանիշների առումով:

Այդ նպատակով համապատասխան տնտեսական լծակների օգնությամբ պետությունը պետք է նպաստի.

1. միջազգային մասշտաբով արտահանման և ներմուծման այնպիսի խելամիտ ռազմավարական ծրագրի մշակմանը, որը բացառիկ պայմաններ ստեղծի այլ երկրների հետ հնարավոր, նպատակամետ և փոխշահավետ տնտեսական փոխսերտաճման համար,

2. հանրապետության բնական հանքահումքային ռեսուրսների և գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական վերամշակման ավարտուն փուլերի ստեղծմանը, դրանով իսկ խթանելով հումքատեսակների և խտանյութերի փոխարեն առավելապես պատրաստի արտադրանքի արտահանումը,

3. ժողովրդական տնտեսության և բնակչության կենսագործունեությունն ապահովող վառելիքի հումքատեսակների (գազ, նավթ, բենզին, ածուխ, էլեկտրաէներգիա և այլն) և սննդամթերքների (հացահատիկ, մսամթերքներ, կաթնամթերքներ, շաքար և այլն) ներկրման, բաշխման և իրացման նկատմամբ անցման շրջանում պետական մոնոպոլիայի իրականացմանը:

4. պետական հովանավորչական քաղաքականությամբ այնպիսի հումքատեսակների ներկրումը խթանելում, որոնց հետագա արդյունաբերական վերամշակումը համապատասխանում է արհեստավարժ մասնագիտական, արդյունաբերության և շինարարության մասնագիտական ուղղվածությանը,

5. ուղեղների արտահանման փոխարեն դրանց գործունեության՝ ստեղծագործական մտքի յուրօրինակ արդյունքների, փորձաշրջան անցած տեխնիկական նախագծերի, տեխնոլոգիական մշակումների արտահանությանը,

6. արտահանության կողմնորոշում ունեցող ճյուղերում մինչև առավել արդիականացված և բարձր արտադրողականություն ունեցող տեխնոլոգիական ցիկլերին անցնելը, տնական կապիտալ ներդրումների միջոցով առաջիկա տարիներին ձեռքի որակյալ աշխատանքի ոլորտի ժամանակավոր ընդլայնմանը, նկատի առնելով, որ նախ, աշխատուժն էժան է, և երկրորդ, նոր աշխատատեղեր ստեղծելու կամ հները պահպանելու ծախսերը համեմատաբար քիչ են:

Տվյալ դեպքում պետք է նկատի առնել.

արտահանության կողմնորոշում ունեցող որոշ ճյուղերում նաև արտադրության ցածր տեխնիկական բազայի օգտագործումը: Այդ արտադրություններում աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը կհատուցվի զարգացած երկրների հասանելիությամբ բազմապատիկ ցածր աշխատավարձով և զբաղվածության ոլորտի ընդլայնմամբ: Բայց դա ժամանակավոր բնույթ կկրի: Ինտենսիվ զարգացումն աստիճանաբար իր համար ճանապարհ կհարթի: Արտահանող ճյուղերի զարգացումը որոշակիորեն կնպաստի զբաղվածության ավելացմանը ոչ միայն հենց այդ, այլև հարակից բոլոր ճյուղերում: Օրինակ, դրա շնորհիվ նոր աշխատատեղեր կստեղծվեն ծառայությունների ոլորտում: Վերջինս թելադրվում է արտահանող ճյուղերում զբաղվածների եկամուտների աճով, որի շնորհիվ ավելանում է բնակչության պահանջարկը ինչպես որոշակի ծառայությունների, այնպես էլ սպառման առարկաների նկատմամբ:

Երկար ժամանակ նման քաղաքականություն վարել են շատ զարգացող երկրներ: Օրինակ, Հարավային Կորեան, ուր հետոեֆորմյան շրջանում երկրում զբաղվածների 29 տոկոսը

այս կամ այն տարբերակով կապված է եղել արտահանող ճյուղերի հետ, այն դեպքում, երբ այդ արտադրանքի բաժինը ճյուղի համախառն արտադրանքի մեջ շուրջ 2 անգամ ցածր էր: Պետությունն արտահանող ճյուղերում ինվեստիցիոն քաղաքականությամբ խթանել է ձեռքի էժան աշխատանքի կիրառման ոլորտների ընդլայնումը:

Ուստի անհրաժեշտ է մշակել արտահանման իրական ռազմավարություն, որով ինչ-որ չափով կարողանալով բանական դարձնել զբաղվածության նմուշօրինակը և դրանով իսկ նպաստել բնակչության արտագաղթի նվազմանը և ներգաղթը խթանելուն:

Այսպիսով, այլ երկրների հետ Հայաստանի տնտեսական փոխներտաճումը, արտադրական ու առևտրական հարաբերությունների հետագա զարգացումը, ԱՊՀ երկրների և, առաջին հերթին, Ռուսաստանի Դաշնության հետ նախկին փլուզված կապերը նոր հիմունքներով վերահաստատելը կդառնա Հայաստանի տնտեսության վերարտադրողական կառուցվածքի ձևախեղումների, էներգետիկ և, ընդհանրապես, տնտեսական ճգնաժամի հաղթահարման, սոցիալական լարվածությունը մեղմացնելու, և միգրացիոն գործընթացները կարգավորելու, հետևապես զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու կարևոր պայմաններից մեկը: Դրանով իսկ կընդլայնվի բնակչության զբաղվածության ոլորտը, կխթանվի մասնակցց արարչագործությունը, կմեղմանա բնակչության, հատկապես երիտասարդության և ուղեղների արտահոսքը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԱՇԽԱՏՈՒԺԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆ Է

Հայաստանի շահերը թելադրում են ընդգրկվել արտաքին աշխատանքի շուկայում և շուկայի հետ փոխներտաճել պետական հիմունքներով: Դա աշխատանքի շուկայի գերլարված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն է:

Պետական մակարդակով աշխատուժի ժամանակավոր արտահանման ուղին չափազանց կարևոր է նաև երկրի ներսում աշխատանքի շուկան ձևավորելու և կարգավորելու առումով:

Արտաքին աշխատանքային միգրացիայի կազմակերպումը, զանգվածային հոսքերի ուղղությունների որոշումն ու կարգավորումը Հայաստանի միգրացիոն քաղաքականության ոլորտից գրեթե դուրս է թողնված, այն կարող է լինել միանգամայն նոր երևույթ: Հանրապետության համար աշխատուժի ժամանակավոր արտահանության քաղաքականության առանցքը պետք է դառնա արտագաղթող բնակչության հավաքագրումը, ուղղվածության ապահովումը, որը բացառապես հետապնդի ազգային խնդիրների և շահերի լուծման նպատակ: Նման արտագաղթը հանախ դիտվում է «ավելցուկ» բնակչությունից ազատվելու միջոց: Ինչ-որ իմաստով, իհարկե, դա ճիշտ է: Բայց հարկավոր է նորից ու նորից շեշտադրել, որ ընդհանուր առմամբ երկիրը տուժում է ցանկացած արտագաղթից: Ինչքան լավ կլիներ, որ մարդիկ արարեին իրենց երկրում, մանավանդ շատ մեծ են անկազմակերպ արտագաղթի թողած հետևանքները: Վերջին հաշվով արտագաղթի վճիռը կայացնում է անհատը, մասնավորապես եթե նա այլ ելք չունի:

Տվյալ դեպքում պետությունն իր միգրացիոն քաղաքականությամբ պետք է նպաստի երկու կարգի խնդիրների լուծմանը:

Առաջին, չոտնահարելով անձի ազատության իրավունքը, տնտեսական լծակների օգնությամբ կանխարգելիչ միջոցներ հարուցի և ստեղծի համապատասխան տնտեսական ու սոցիալական պայմաններ բարձր որակավորման մասնագետների և գիտական կադրերի արտահոսքը ինչ-որ չափով կասեցնելու, ընդհանուր առմամբ կարգավորելու համար:

Երկրորդ, արտագաղթը հարկավոր է իրականացնել պետական աշխատանքային միգրացիայի հանապարհով, այլ երկրների հետ կնքված պայմանագրերով և որոշակի ժամկետներով: Տվյալ դեպքում պետք է ելնել ոչ միայն մայր երկրի աշխատանքի շուկայի նվազ տարողունակությունից, այլև այն կարևորությունից, որ այդ հանապարհով կարելի է ներազդել մայր երկրում աշխատանքի շուկայի, գործազրկության և սոցիալական լարվածության ընթացքի վրա՝ այն մեղմելու համար:

Ելնելով իր երկրի ընթացիկ և հեռանկարային շահերից՝ պետությունը (ինչպես վարվում են շատ երկրներ) կարող է միջամտել, համապատասխան ընթացք հաղորդել և սատար կանգնել աշխատանքային պայմանագրերով երկրից ժամանակավոր արտագաղթած բնակչությանը: Դա կարող է արտահայտվել.

Նախ, հավաքագրել արտագաղթելու ցանկություն ունեցողներին և նրանց առաքել համապատասխան երկրներ, խրախուսել կամ ընդհակառակը փոխել հոսքերի ուղղությունները:

Երկրորդ, հետևել ժամանակավոր աշխատողներ ընդունող երկրում նրանց կրթության, արհեստավարժ պատրաստման և որակավորման բարձրացման համար պայմանագրով նախատեսվող պահանջների կատարմանը:

Երրորդ, հետևել արտասահման գործուղված ուսանողների ուսումնական գործի կազմակերպմանը, պայմանով, որ նրանք ավարտելուց հետո վերադառնան հայրենիք:

Չորրորդ, ապահովել արտագաղթողներ ընդունող երկրում նրանց քաղաքացիական իրավունքների և սոցիալական շահերի պաշտպանությունը:

Հինգերորդ, կազմակերպել արտասահմանյան երկրներում իր քաղաքացիների վաստակից երկիր տարադրամի մուտքը (նկատի է առնվում ինչպես հարկային քաղաքականությամբ պետական բյուջեին հատկացվող, այնպես էլ նրանց ընտանիքներին ուղարկվող միջոցները):

Վեցերորդ, պայմանագրի ժամկետն ավարտելուց հետո կազմակերպել միգրանտների վերադարձը հայրենիք:

Արտասահմանյան շատ երկրների փորձը վկայում է, որ բացի պետությունից (ազգային հատուկ ծառայություններ, նախարարություններ և այլն) այլ երկրներ աշխատուժի ժամանակավոր միգրացիան կարող են կազմակերպել և իրականացնել ազգային մասնավոր գործատուները, ընկերությունները, ինչպես նաև նման գործունեությամբ զբաղված արտասահմանյան ներկայացուցչությունները:

Հարկ կլինի աշխատուժի արտահանությունը կազմակերպող գրասենյակները արտոնագրել: Արտագաղթողներ ընդունող որոշ երկրներում ՀՀ դեսպանատներում կարող են կազմակերպվել ներգաղթաձներով զբաղվող հատուկ բաժիններ, առանձին երկրներում՝ դիվանագիտական ներկայացուցչություններ:

Աշխատանքի միջազգային միգրացիային պետք է տալ լեգալ և կազմակերպված բնույթ, որը թույլ արտասահմանյան երկրների հետ փոխադարձ շահերը հարգելու սկզբունքներից: Այս առումով պետք է կարևորել ՀՀ համապատասխան միգրացիոն ներկայացուցչությունների կողմից ՀՀ և արտասահմանյան գործատուների միջև կնքված համաձայնագրերի պահանջների կատարումը, հատկապես պետք է հետևել.

— պայմանագրերի ժամկետներին,
— աշխատավարձի չափերը պահպանելուն,
— ապահովագրության պայմաններին,
— աշխատաժամանակի և հանգստի տևողությանը,
— աշխատանքի անվտանգության պայմաններին,
— աշխատավարձից գանձվող մասհանումների չափերին, հավաքագրման աղբյուրներին և հայրենիք ուղարկվող տարադրամի մեծությանը,
— մայր երկրում ինվեստիցիաները խթանելու նպատակով հարկային արտոնություններ տրամադրելուն,

Այդ կազմակերպությունները միաժամանակ պետք է.

— մասնակցեն գործատուների և աշխատանքային միգրանտների միջև ընթացքում ծագած աշխատանքային վեճերի լուծմանը,

— հոգան արտասահման մեկնելու և հայրենիք վերադառնալու համար անհրաժեշտ ծախսերը:

Ինչպես նկատում ենք, աշխատուժի կարգավորված արտահանության պայմաններում աշխատողների սոցիալական խնդիրների հետ միասին չի անտեսվում աշխատուժ արտահանող երկրի պետական շահերի պաշտպանությունը: Տվյալ դեպքում նկատի է առնվում մայր երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը արտագաղթող բնակչության մասնակցությունը: Այդ աշխատանքային պայմանագրով ցանկացած արտագաղթող պատասխանատվություն է կրում իր երկրի առջև՝ ընդունված օրենդրության սահմաններում և հարկային քաղաքականությամբ իր վաստակից պետությանը միջոցներ հատկացնելու հարցում: Վերևում արդեն հիշատակվել է, որ ներկայումս հայ միգրանտները նյութական միջոցներով օգնում են միայն հարազատներին: Այդ միջոցները գերազանցապես ծախսվում են սպառման նպատակներով և ինչ-որ չափով էլ փոքր բիզնեսում: Խնդիրը պետական քաղաքականությամբ երկարատև կապիտալ ներդրումների իրականացումն է: Պետության կողմից արտասահմանում աշխատող իր քաղաքացիներից գանձվող միջոցները կարևոր խթան կարող են դառնալ տնտեսական ներդրումների (ինվեստիցիաների) բնագավառում:

Աշխատուժի արտահանության համաշխարհային փորձը վկայում է, որ տարբեր երկրներ այն իրականացնում են առանձին եղանակներով: Միգրացիոն հարցերին նվիրված գրականության մեջ այդ երկրները բաժանվում են երեք խմբի.

1. Երկրներ, որոնցում արտաքին աշխատանքային միգրացիոն հոսքերը (ԱԱՄ) հարյուր տոկոսով վերահսկում են ազգային հատուկ ծառայությունները և նախարարությունը (Թուրքիա, Կորեա):

2. Երկրներ, որոնցում արտասահմանում աշխատելու համար աշխատուժը հիմնականում հավաքագրում են մասնավոր

գործատուները (Ինդոնեզիա, Մալազիա, Ֆիլիպիներ, Թաիլանդ).

3. Երկրներ, որոնցում օգտագործվում են կազմակերպական խառը համակարգեր (Բանգլադեշ, Պակիստան):

Որոշ հեղինակներ գտնում են, որ ԱԱՄ մասնավոր ձեռնարկության կազմակերպումը չափազանց արդյունավետ է սպասարկման տեղավորման գործունեության նկատմամբ պետական կարգավորման և հսկողության համապատասխան միջոցների իրացման պայմաններում:

Հայաստանն առայժմ համաշխարհային շուկայի մրցունակությանը կարող է դիմանալ էժան աշխատուժով (այդ թվում՝ մտավոր), որի հետևանքով արտադրված արդյունքների միավորի մեջ կենդանի աշխատանքային ծախսումները զարգացած երկրների համեմատությամբ մեծ չեն, թեև այն հարաբերականորեն մեծ է աշխատանքի չափազանց ցածր արտադրողականության և ընդհանրապես, աշխատուժի անարդյունավետ ծախսման հետևանքով: Ինչպես նկատեցինք, Հայաստանը բնութագրվում է բնակչության կազմում աշխատանքային ռեսուրսների մեծ ներուժով: Դրանք արդյունաբերության և շինարարության տարբեր բնագավառները ներկայացնող բարձրորակ ինժեներներ, տեխնիկներ, արհեստավարժ մասնագիտական որակավորում ունեցող բանվորական կադրեր են: Ինչ խոսք, նրանց մեծ մասը պետական խողովակով, երկկողմանի համաձայնագրերով կարող են ժամանակավորապես ընդգրկվել այլ երկրների ժողովրդական տնտեսության մեջ և ընդհակառակը:

Հայաստանն օժտված է նաև գիտական մեծ ներուժով և կարող է դիտարկվել լավ գործընկեր այլ երկրների համար: Ցանկացած երկիր կարող է Հայաստանի հետ փոխանակել գիտնականներ, գիտական ծրագրեր, տեխնոլոգիաներ, գիտական արտադրանք (արտոնագիր և ներմուծման ու արտահանման թույլտվության փաստաթուղթ): Ինստիտուտների գիտական մշակումների հիման վրա ստեղծել համատեղ ձեռնարկություններ, մշակել համատեղ գիտական ծրագրեր, փոխադարձաբար ծանոթանալ գիտատեխնիկական ձեռքբերումներին, կազմակերպել ուսումնական համագործակցություն՝ կադրերի որակի բարձրացման նպատակով:

Այսպիսով, աշխատանքի միջազգային բաժանման ասպարեզում Հայաստանը կարող է հանդես գալ նաև իր աշխատանքային ներուժով, բայց ոչ այն չափով, ինչ տեղի է ունենում: Այդ չափերը կարգավորելու նպատակով հանրապետության սահմաններում պետական քաղաքականությամբ մարդկանց զբաղմունքի արդյունավետության բարձրացմանը սատար կանգնելու հետ միասին, ի թիվս վերը դիտարկված բազմաթիվ այլ հիմնախնդիրների, պետությունն իր վարած տնտեսական քաղաքականությամբ պետք է նպաստի նաև.

— պետական մակարդակով բարձր որակավորում ունեցող աշխատուժի ժամանակավոր արտահանությունն ապահովելու գործընթացին,

— աշխատանքային ներուժի որակական մակարդակը ապահովելուց հետո, ինչ-որ չափով միջազգային չափանիշներին մոտեցնելու համար համապատասխան նախադրյալների ստեղծմանը,

— միջազգային մասշտաբով աշխատուժի ժամանակավոր արտահանման և ներմուծման այնպիսի խելամիտ ռազմավարական ծրագրի մշակմանը, որը բացառիկ պայմաններ ստեղծի այլ երկրների հետ հնարավոր, նպատակամետ և փոխշահավետ աշխատանքային և տնտեսական փոխսերտաճման համար:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Աշխատանքի շուկայում լարվածությունը խորանում է նաև պետական և տեղական մարմինների, գիտական համապատասխան օղակների անպատրաստության, տնտեսական ու սոցիալական կյանքում բուն շուկայական կարգավորման մեխանիզմների գործունեության համար որոշակի պայմանների բացակայության, անցման գործընթացում թույլ տրված սխալների և անհարկի շտապողականության հետևանքով: Շուկայական հարաբերությունների անցման համար տնտեսական պարարտ հող նախապատրաստելու և էվոլյուցիոն ճանապարհով անցում կատարելու փոխարեն գործընթացը թելադրվեց վերևից, խնդիրներն «իրականացվեցին» հրամանագրերով, մեկ ակնթարթում: Չկան նաև աշխատանքի շուկան կարգավորելու մի շարք նպատակամետ օրենսդրական ակտեր, եղածներն էլ կատարյալ չեն:

Վաղը, մյուս օրը, երբ կյանքն իր պահանջները կթելադրի, ջրի երես կհանի պետական մարմինների վարած քմահաճ քաղաքականության շատ կողմեր, հոսանքի հետ կարբի և կտանի այնօրվա չափանիշներով հարցերը «լուծելու» կամային մեխանիզմներն ու մոտեցումները: Կիշխեն իրավական օրենքները. նրա առջև հավասար պատասխանատվություն կկրեն բոլորը՝ վերից վար, հասարակությունը կմտնի իր զարգացման բնականոն հունի մեջ: Անշուշտ, դա պահանջում է ժամանակ, միջոցներ, հասարակության և տնտեսության կառավարման ժողովրդավարական հիմունքների լիակատար հաղթանակ, այսինքն՝ տնտեսական գործունեության ազատություն, տնտեսության զարգացման ներքին օրինաչափությունների տրամաբանական զարգացման ընթացքը բացահայտելու և դրանց պահանջներից բխող տնտեսության կառավարման քաղաքակիրթ վարվելաձև, խելամիտ մոտեցում և գործելակերպ:

Անցման շրջանում պետությունը պետք է համապատասխան վարքագիծ մշակի, կարգավորի և ընթացք տա զբաղվածության արդյունավետության հետ կապված անխուսափելիորեն երևան եկող սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների լուծմանը: Սոցիալական այդ խնդիրներից առաջնահերթայինը աշխատանքի շուկայի պետական կարգավորման մասին մտածողությունն է:

Դրա հետ մեկտեղ անցման շրջանում աշխատանքային ռեսուրսների օգտագործման ակտիվացման կարևորագույն պայմանը ազատ մրցության համար օրենսդրական դաշտի ապահովման հիման վրա տնտեսության բոլոր ճյուղերի աշխուժացումն է, ազատ և քաղաքակիրթ ներքին շուկայի ձևավորումը, երկրի ներսում գոյություն ունեցող ներուժի բոլոր տարրերի նպատակամետ օգտագործումը: Այդուհանդերձ, հարկավոր է նկատի ունենալ, որ զբաղվածության հիմնահարցը իր սրությունը կպահպանի նույնիսկ տնտեսական աճի վերահաստատման պայմաններում: Դա բացատրվում է ոչ միայն սպասվելիք ժողովրդագրական իրավիճակով, այլև աշխատանքային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման անանց անհրաժեշտությամբ, մրցության պայմաններում աշխատանքային տարիք մուտք գործելու համար նախապատրաստվելու, համապատասխան որակավորում ձեռք բերելու, աշխատանքից ազատվելու, աշխատողների վերաբաշխման մշտապես ընթացող իրավիճակով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ առաջին

ԱՆՊՏՂԱԲԵՐ ԿԱՄ ՉԱՐԳԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆ 15

Գլուխ երկրորդ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ . 36

1. Աշխատուժի վերարտադրության փուլերը 36
2. Աշխատուժի վերարտադրության տեսակները 45
3. Հասարակության աշխատանքային ներուժը 49
4. Աշխատանքի շուկայի ձևավորման նախադրյալները . . . 58

Գլուխ երրորդ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 66

1. Աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը 66
2. Գործազրկությունն արդի փուլում 73
3. Աշխատուժի առաջարկն ու պահանջարկը 90
4. Աշխատանքի շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունը 96
5. Զբաղվածության ֆինանսական աղբյուրները և դրանց օգտագործման ուղղությունները 103
6. Զբաղվածության ծառայության պետական մարմինների գործունեության բարելավումը 113
7. Զբաղվածության ծառայությունների գծով այլ երկրների փորձի ուսումնասիրման անհրաժեշտությունը 118

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ

Գլուխ չորրորդ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ . 121

Գլուխ հինգերորդ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 127

Գլուխ վեցերորդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ 140

1. Հողի և անասունների սեփականաշնորհման հետևանքները . . 140
2. Սահմանամերձ շրջանների բնակչության արտագաղթը մեղմելու և տարաբնակեցման մի քանի հարցեր 160
3. Սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակը գյուղում . . 168
4. Գյուղատնտեսության զարգացման մի շարք խնդիրներ . . . 169

Գլուխ չորերորդ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ 174

Գլուխ հինգերորդ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 180

Գլուխ յոթերորդ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ . . 190

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՈՒՄԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ տասներորդ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՍԵՐՏԱՃՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 205

1. Նեոպետական տնտեսական փոխսերտաճումը որպես արտաքին տնտեսական փոխսերտաճման նախադրյալ 205
2. Փոխսերտաճումը նորանկախ պետությունների (ԱՊՀ) հետ . . 210
3. Փոխսերտաճումն Իրանի և Մերձավոր արևելքի երկրների հետ . 214
4. Առևտրատնտեսական հարաբերությունները Թուրքիայի հետ . . 218
5. ՀՀ արտաքին տնտեսական կապերը ներկա փուլում . . . 222
6. Հայաստանի տնտեսական փոխսերտաճումը և զբաղվածության արդյունավետության բարձրացման հնարավոր ուղղությունները . . 227

Գլուխ տասնմեկերորդ

ԱՇԽԱՏՈՒԺԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆ Է 230

Վերջաբանի փոխարեն 236

ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻՇԻ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հրատ. խմբագիր **Ա. Լ. Սահակյան**
Տեխ. խմբագիր **Լ. Ա. Ազիզբեկյան**

Հանձնված է շարվածքի 21. 01. 98 թ.: Ստորագրված է տպագրության 25. 02. 98 թ.: Չափը 60×84 1/16: Թուղթ № 1: Տառատեսակ «Նորքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 13,75 մամ., տպագր. 15 մամուլ: Հրատ. № 8044: Պատվեր № 3: Գինը պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375010, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Издательство «Гитутюн» НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г.

Типография Издательства «Гитутюн» НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջը	Տողը	Տպված է	Պետք է լինի
7	21 վ.	Հողատերերը	փողատերերը
20	7 ն.	Ձեռախեղումները	Ձնախեղումները
27	1 վ.	Ժողովրդական	Ժողովրդագրական
41	7 վ.	կեսերին	սկզբին
67	5 ն.	Հաշմանդամների	Շաշխատող Հաշմանդամների
75	7 վ.	Հասուն	Հոսուն
73	15 ն.	Ջրազված	Ջրազված
104	8 ն.	Ձևավորում	Ձևավորվում
102	11 վ.	տեղի	տեղը
165	1 ն.	ուսումնասիրությունը	ուսումնառությունը
189	3 ն.	մտածված	մտածված քաղաքականությամբ
191	11 վ.	կառուցվածքը	կառուցվածքի
221	10 ն.	2000	2,0

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0214751

[450դ]

Ա II
84813

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻՇԻ ԽՈՋԱԲԵԿՅԱՆԸ 1,5 տասնյակ մենագրությունների, 300 գիտական հոդվածների հեղինակ է: Դրանք հայերեն, ռուսերեն, անգլերեն ու գերմաներեն լեզուներով լույս են ընծայվել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում, Դելիում, Թեհրանում, Վիեննայում և այլուր՝ նրան բերելով արժանի ճանաչում: 1960-ականներից մինչև օրս նա բազմաթիվ գիտական բանախոսություններով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում, որոնք զետեղվել են միջազգային և հայրենական պարբերականներում:

Անվանի տնտեսագետի ուսումնասիրությունները նվիրված են Հայաստանի բնակչության, աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, գյուղվածության պատմական զարգացման օրինաչափությունների ընդհանրացմանը, երկարատև հեռանկարում դրսևորվող միտումների բացահայտմանը, արդի փուլում աշխատանքային շուկայի ձևավորման, քաղաքակենտրոնացման, ժողովրդագրության (ծնունդ, մահ, գաղթ, տարաբնակեցումներ) և սոցիալ-տնտեսական կանխատեսման բազմաբնույթ այլ խնդիրների, երկրաշարժի գոտում և Արցախում ժողովրդագրական քաղաքականության հարցերին: Վ. Խոջաբեկյանը գիտական շրջանառության մեջ է դրել և մերկացրել Նախիջևանի ԻՀ-ում և ընդհանրապես Ադրբեջանում տասնամյակներ շարունակ ծրագրված և պետական մակարդակով իրականացվող հայաթափության քաղաքականությունը՝ այն դրակելով որպես ցեղասպանություն:

Վ. Խոջաբեկյանի աշխատություններին յուրահատուկ են արդիական շունչը, գիտական նորույթը, խելամիտ հարցադրումները, ապագան կանխատեսելու ոգին, հիմնավոր լուծումներ պահանջող եզրահանգումները:

Հեղինակը հրատարակության է պատրաստել նաև **«Հայաստանի բնակչությունը (ածը և տեղաշարժերը XIX—XX դդ. և XXI դ. միտումները)»** ծավալուն ուսումնասիրությունը: